

Գիրքը յուսադատճեհահանվել է

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՐ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՍ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ  
ԼՈՒՄԻՆՈՍԿԵՆԱՆՈՒՆԵԼ ԳՐԵՐ:

Ք-ՈՒՅՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆՈՍՄԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄՈՒՍԱՆ "ՏԱՄԱԼՅԱՅԱՎԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ԵՆԴՐՈՒՄ ԵՒՐ, ՈՐ ԾԳՆԱԼԻՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ  
ՏԱՎԱԼՈՒՄ ԵՒՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՍՈՒՆԹՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՐ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

# ՄՈՒՇԵՂ ԳԱՆՇՈՅԱՆ

---

ՔԵՐ ՎԵՐԵՎՈՒՅ  
ԶՊԵՏՐԷՆԱՅԵՂ

# ՄՈՒՇԵՂ ԳԱՇՏՈՅԱՆ

---

**ՔԵՐ ՎԵՐԵՎՈՒՅ  
ԶՊԵՏՐԷՆԱՅԵՂ**



ԱԿՆԱՐԿՆԵՐ



Կազմեց և խմբագրեց՝  
Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆԸ

Գալշոյան Մ. Հ.

Գ 192 Քեզ վերևից շպետք է նայել: [Գրակ. ակնարկների ժողովածու] / Մուշեղ Գալշոյան.— Եր.: Նաիրի, 1990.— 288 էջ:

Ակնարկների ժողովածուն ընդգրկում է Մ. Գալշոյանի՝ մամուլում տպագրված գրական ակնարկները, որոնք նախանշում են գրողի ստեղծագործական առաջին շրջանը:

4702080201 (47)  
Գ 705(01) 90 5—90  
ISBN 5-550-00439-9

ԳՄԴ 8427-4

© «Նաիրի»  
Տրատարակչություն, 1990

## ԱԿՆԱՐԿԱԳՐԻ ԱՇԽԱՐՀԸ

Մուշեղ Գալշոյանը (Մանուկյան), 1957 թվականին ավարտելով Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործական բաժինը, մասնագիտությամբ աշխատանքի է անցնում Մեղրիի շրջանում (կարճ ժամանակով), այնուհետև Աշտարակի շրջանի Կոշ գյուղում, հետո տեղափոխվում է հայրենի՝ Քալինի շրջանի Արագած նորաստեղծ սովխոզ:

Դեռևս 50-ական թվականների վերջերին, տեղի շրջանային թերթի խմբագիրը Մուշեղ Մանուկյանից խնդրում է որևէ նյութով թղթակցել թերթին: 1959 թ. շրջանի մի քանի գյուղերի մասին գրում է իր անդրանիկ անգիջում ու քննադատական խոսքը: (Մինչ այդ նա գրել է մի շարք բանաստեղծություններ, խոհ-մտորումներ, որոնք հետագայում ոչնչացրել է):

Մի քանի տարի մասնագիտությամբ աշխատելուց հետո նա իր բնածին հակվածությամբ բռնում է լրատվական ապարեզը՝ աշխատելով տեղի շրջանային, այնուհետև Աշտարակի ու Հոկտեմբերյանի թերթերում: Երբ հետևում ենք նրա աշխատած տարիների լրագրերին, տեսնում ենք Մանուկյան-ակնարկագրին իր խոհուն, սրափ ու թարմ ջունջ ունեցող ակնարկներով:

1960-ական թվականների սկզբներից «Ավանգարդ» երիտասարդական թերթի վաստակաշատ խմբագիր Լուիս Կոսյանը հեռվից հեռու զգալով ու հեռանելով երիտասարդ ժառանգախափն, հրավիրում է խմբագրություն՝ աշխատելու: Վարելով «Գյուղատնտեսության» բաժինը, ջրջելով համարյա ողջ Հայաստանը, մոտիկից ծանոթանում է աշխատավարմարդուն, նրա առօրյա հոգսերին: Ավանգարդյան տարիները

Մանուկյան-ակնարկագրի ամենաքեղմնավոր տարիներն են: Նրա յուրաքանչյուր տողը ոտեղծվել է տֆնանֆով ու անկոտրում հավատով, հավատ՝ ֆարից հող ոտեղծողի նկատմամբ, հավատ՝ որ միշտ կանգուն է հողը հայրենի: Մտի թրթիռ ու խանդավառություն է ապրել նա, երբ հայրենի տարածությունները ընդարձակվել են, երբ շենացել է գյուղը, երբ նոր կառույցի հիմք է դրվել, երբ նոր ծուխ է ծխացել... բայց և այնպես թախիծ ու տրտմություն է պատել նրան, երբ պատերազմի դաշտից շի վերադարձել հայ շինականը, փոռտատարի հետ միասին մորմոխ է ապրել, նրա բերած յուրաքանչյուր «սև թղթի» համար...

«Քեզ վերևից շպտոք է նայել» ակնարկների ժողովածուն իր մեջ ընդգրկում է յուրովի տեղած ու ապրված գալչոյանական Հայաստանը, ուր տարրալուծվում են հողը, մարդը, ոները, կարոտը, անկոտրում կամքը, գտածն ու գտնվելիքը:

Վավերագրողի նրա մտածողությունը տառապանքի մեջ վառվողի մեծ ցավը ունի: Որքան մեծ անհանգստություն է ապրել ակնարկագիրը, երբ հայ մարդը, լքելով տուն ու գյուղ, դառնում է ֆաղաֆաբնակ կամ բռնում է օտարության նանապահիր:

Գալչոյանը, ունենալով գյուղատնտեսի մանուկատություն, հիանալի գիտեր հողի գաղտնիքները: Ակնարկներից երևում են, թե ինչպես են վազի արմատները դժվարությամբ թափտնցում ֆարերի ու խութերի միջով մինչև հողի շերտերին հառնելը, այդպես էլ խոշրնդոտներով ու տֆնությամբ է հայ մարդը բացում և հաղթահարում ֆարաշատ հողի համառ ու կամակոր դոները:

Ակնարկների այդ գրքում կա հեղինակի և՛ ցավը, և՛ անհանգստությունը, և՛ ուրախությունը: Հայրենիքը գորեղ ու հզոր տեղնելու ձգտումն է այդ ցավը, հայրենիքն շիքելն է այդ անհանգստությունը, իսկ ուրախությունը՝ մի ծառ տնկելը, մի բուռ հող արարելը, մի դպրոց կամ շեն կառուցելը և, վերջապես, յուրաքանչյուր մարդու իր տեղում նիշտ գտնվելը: Ահա այս հուզող հարցերն են Գալչոյանի մտատանջության բնեռագծերը, որոնք հեղինակի կողմից նիշտ ու առողջ մեկնաբանություններ են ոտացել:

Գրքում տեղ գտած ակնարկները ունեն գեղարվեստա-

կան բարձր մակարդակ, որոնք մինչև այժմ չեն կորցրել իրենց քարմուքյունն ու վաղեմությունը:

Անսահման է Գալշոյանի սերը դեպի Հայաստան աշխարհը: Երբ 1985 թ. առաջին անգամ նշվեց եղեռնի 50-ամյակը, նա իր սրտի խոսքն ասաց «Քեզ վերևից շպտոք է կայել» ակնարկով: Հայրենասերի մեծ մորմոք է ապրում, երբ ինքնաթիռի բարձրությունից Հայաստանը ընդգրկում է իր տեսադաշտում: Բայց և այնպես ակնարկը վերջացնում է սյուսպես. «Ինքնաթիռում ես ավելի լավ հասկացա՝ «Դու փոքր ու մեծ Հայաստան» բառերի իմաստը: Հասկացա, որ դու սրտի շափ փոքր ես, աշխարհի շափ մեծ»:

Այո, այս մեծ ու փոքր աշխարհում հանգրվանում են հայի քափառիկ ոտները, որ առատ բերք է տալիս խոսրով մեռու այգին, որ Բաբունց տափը խամհատել են միայն Բաբունց մեծերը, որ բժշկի ձեռքում դանակը կյանք է, որ հայ հորովելին ու կալի երգին վերջ չկա, որ երկրաբանները լեռների որդեգիրներն են, որ... այսպես կարելի է թվարկել հեղինակի ցանկություն-երազանքները հայրենին միշտ կանգուն ու շեն տեսնելու նրա մեծ ձգտումները:

Գալշոյանի ներուները, լինելով իրական անձնավորություններ, կարծում ենք, կհետաքրքրեն ընթերցողներին իրենց հոգսերով, խոհերով ու նակատագրերով:

Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

## ՔԵՁ ՎԵՐԵՎԻՑ ԶՊԵՏՔ Է ՆԱՅԵԼ

Կես ժամ առաջ ինքնաթիռը լողում էր քո բարձրիկ երկրնքում: Քո երկնի կապույտ հերկում արև կար ցանված և կար ճերմակ-ճերմակ ամպ:

Հիմա նստած եմ գրասեղանի առջև, և դու, երկիր Հայաստան, աչքերիս հայելու մեջ ես: Քս ձորերը՝ ոլորապատույտ, խորը, հիմա՝ լցված ձնհալի ջրերով: Ձորերը, որ այդպես՝ հազար տեղից, հազար թևերով գրկել են քեզ:

Ինքնաթիռը ամեն բոպե նոր բարձրություն էր վերցնում. Բազումի, Փամբակի, Գեղամա, Սևանի, Զանգեզուրի... քո լեռնաշղթաները թև-թևի տված «Բերդ պար» էին բռնել արեգակի հետ, թաշկինակի փոխարեն ամպի ճերմակ ծվեններն էին խելահեղ թափահարում: Ինքնաթիռը խուսանավում էր. քո սարերը, Հայաստան, կանգնած էին ինքնաթիռի երկնային ճանապարհին: Սարերը՝ պրկված բուսնցքների պես ցցված դեպի երկինք: Սարերը՝ քարակոփ: Սարերը գանգուրների մեջ արևի շողեր քամող: Սարերը՝ աշխարհի արևածագը առաջինը տեսնող: Քո սարերը... ժայթքել են հոգու հարստությունից. Բացել էին կուրծքը աշխարհի առաջ՝ ոսկեփայլ, պողպատափայլ:

Ինքնաթիռը լողաց Սևանի վրայով: Սևանը ավեհափ ծնծղաց, և մտածեցի. «Աշխարհի ջրերի կողքին անձրևի մի կաթիլ է: Անձրևի մի կաթիլ՝ պոկված երկնքից՝ դրա համար կապույտ, դրա համար արևափայլ, թաց ծիածանով լեռները իրար կապող: Բայց մենք Սևանին ծով ենք անվանում»:

Սևանը: Ծովը հայոց:

Եվ ծով էր՝ արևն էր սուզվել ջրի մեջ և չէր հասել հատակը, լողում էր, որ չխեղդվի: Լողարկող նավեր կային:

Ափերը համբուրող սպիտակաբաշ ալիքներ: Գետեր էին լրջվում Սևանի գիրկը: Գետե՞ր: Լճին՝ ծով, առվակներին ու գետակներին անվանում ենք գետ՝ երևում էին արծաթյա ժայավենների պես, բարակ, զուլալ: Եվ ես հիշեցի մեր էպոսի այն բարակ առուն, որ հեռվից գալիս, պղտոր, մեծ գետը թրատում-անցնում է և նույն մաքրությունը, նույն անլուելի երգով շարունակում իր ճամփան: Ձնհալով լցված Ձկնագետը, Մասրիկը, Վարդենիսը, Դաշտաձորը, Զրահորը, Արծիճին... մեր գետերը խենթի պես գլխիվայր նետվում էին Սևանի գիրկը:

Ինքնաթիռը նորից բարձրություն է վերցնում. Վարդենիսի լեռնաշղթան պետք է անցնել: Լեռնաշղթա՝ խրոխտ ու գեղեցիկ: Երկնասույզ գլխի վերև՝ սավառնող մի ինքնաթիռ, ընդերքում՝ մարդիկ: Լեռնաշղթայի ընդերքը սուզվածները, ինքնաթիռի պատուհանից ներքև չէ, վերև նայեցի և տեսա նրանց իրենց սլացքի մեջ: Նրանք որձաքարերի փոշով կրնքված տաք ճակատ ունեին, պնդապինդ ուսեր: Նրանք նման էին նետին սլացք տվող պրկված աղեղի... Ճամփա էին բացում Արփայի համար, որ թափվի Սևան՝ մեր օջախների լուսազբյուրը, արմատները հողում խորացրած մեր որթատունկի սրտախորշը...

Սևան, ինքնաթիռի պատուհանից մենք փոխանակեցինք մեր աչքերի հայելիները: Կապույտ քո հայելուց բարձրացող գոլորշին մշուշ է կապում իմ աչքերի առջև, քո թասից պակասող ամեն մի կաթիլը ազդում է իմ տեսողության վրա:

«Բարձրություն»—հրահանգ օդաչուին: Դժվար է քո երկրնքով թռչող օդաչուի գործը, Հայաստան: Ամեն բոպե հրահանգ՝ «բարձրություն»: Ճամփին լեռնագագաթ կա: Այս անգամ՝ Մաղկունյաց, ոտքերին արծաթյա գոտու նման փաթաթվել է Քասախը: Մի տեղ գետը ծունկ էր տվել, հալվել էր արծաթը, լճացել, հետո կտրվել էր «գոտին»... Անհասկանալի ոչինչ չկար, թունելախորշի բացման, գետի հունը փոխելու օրը այդտեղ էի՝ Քասախի ափին, Ապարանի ջրամբարն էր այդ: Զրամբա՞ր: Կվիրավորվեն ապարանցիները, լիճ է կառուցվում: Եվ այն տարածությունը, որը ապագա լճի երկարությունը պետք է լինի, ինքնաթիռը ակնթարթում

յանցավ: Եվ ակնթարթում շանցավ Մանթաշի ջրամբարի կառուցի վրայով: Լճեր են կառուցում:

Մենք ջրամբարներին անվանում ենք լիճ:

«Բարձրություն»— Արայի լեռն է, ստորոտում Արզնի-Շամիրամ ջրանցքը՝ բանուկ ձեռքի կապտափայլ երակի պես:

«Բարձրություն»— Նոյեմբերյանի ջրհան կայանն է... Դեռափ-Աղավնաձորի, Կապսիի, Գյուլիբուլաղի, Արևշատի ջրհան կայաններն են: Երևում են մագլցող-մագլցող խողովակաշարերը: Մագլցում են՝ երկնի հերկը պիտի ջրեն, պիտի ցնցուղեն արևի դեմքը:

Ջրվեժները վերից վար են գահավիժում, բայց մենք խորախոր ձոր ու կիրճից ջուր հանող կայաններին ասում ենք ջրվեժ:

«Ջրային այդ կառույցների ավարտումից հետո, մոտ ապագայում, մեր հանրապետությունում ոռոգելի կդառնա շուրջ 88 հազար հեկտար հողատարածություն,— հիշում եմ ամիսներ առաջ արված այս հաղորդագրությունը և ժրպտում,— զարմանալի թևավոր և արագընթաց են «շոր» թվերը, ինքնաթիռի ետևից նույնիսկ հասնում են»:

«Բարձրություն»... Ոչ, այդքան հնարավոր չէ, խուսանավել է պետք. Ջանգեղուրի լեռների որձաքար գագաթները չէին էլ երևում ամպերի միջից: Ներքևում Որոտանի փրփրաբաշ ջրերն էին, և այն ժայռերը, որոնց մամռոտ կրճերի վրա Որոտանի փշրվող ալիքները տեսել էի մի օր: Ներքևում Ագարակն էր:

Ինքնաթիռի ստվերը սահում է Թալինի դռերի վրայով: Ղռերը՝ խոժոռ դեմքով, օղակված ծառերի ու վազերի ջահել «զինվորներով»: Ղռերը՝ կուշ եկած թիկունքը ծառերի ու վազերի գրոհող «զինվորներին»: Հիշում եմ խմբագրության ապրիլ ամսվա աշխատանքային պլանում եղած կետերից մեկը. «Անապատի շունչը կտրվում է: (Ռեպորտաժ)»:

Միրանենու ծաղկած մի ճյուղ եմ գցում, ճերմակ թերթիկները թող սփռվեն երկնքում, պսակի պես իջնեն անապատների վրա...

Փախչող էկրանները հաջորդում են իրար և... Այստեղ արդեն «բարձրություն»— հրահանգի կարիքը չկա: Արարատյան հարթավայր: Ծաղկել են ծիրանենիները, և ինքնաթիռի



պատուհանից այնպէս է թվում, թե հարսնաքողով են ծածկվել ծառերը: Ապրիլն է, ծաղկել է հայոց հինավուրց ծիրանենին: Սիրանենիները միշտ ապրիլին են ծաղկում: 50 տարի առաջ էլ է ապրիլ եղել...

Կարկտաբեր էլ ո՛չ մի ամպ չի կախովի ծիրանենու գլխին: Ո՛չ մի մորկասյուն չի փաթաթվի բնին, ճյուղերը չի խաունի փրար, չի՛ բզկտի, չի թշի ծիրանենու ճերմակ պսակաշորը:

Կապտածուխ բնակավայրեր՝ ճամփեքի եզրին վազվըր-զոզ, տուն շինող երեխաներ, ձեռքով են անում փնքնաթիռին: «Բարձրություն» — Երևանի մոտ էլ այդ հրահանգը պետք է: Վերամբարձ կոռեկները միտքվել են քաղաքի կապույտ տանիքում:

Կես ժամ առաջ ինքնաթիռը լողում էր քո բարձրիկ նրկընքում: Քո երկնի գազույտ հերթում արև կար ցանձած և կար ճերմակ-ճերմակ ամպ:

Երկինքը՝ քո քաղաքների ու շենքերի կապույտ ծախր: Ճերմակ ամպերը՝ քո սաք շունչը:

Բայց քեզ, Հայաստան, վերեփց շպեռ է նայել, գկոցում էի աչքերս, և դու նրանում էիր ժայռից ժայռ: Պետք է կանգնեի քո ձորի ափին և պիտապտույտ ունենայի: Պետք է կանգնեի քո սարի փեշին ու շտեմեիլ գազաթիք: Պետք է կանգնեի քո ծովի եզրին ու շտեմեիլ ծայրը: Քո ծաղկած ծիրանենու բունը մոտիկից պետք է տեսնեի: Երբ քարով շտղված քո հողի վրա եմ՝ հորիզոնները այնքա՛ն ջատ են:

Ինքնաթիռում ետ ավելի լավ հասկացա՝ «Դու փոքր ու մեծ իմ Հայաստան» բառերի խմաստը: Հասկացա, որ դու արտի շափ փոքր ես, աշխարհի շափ մեծ:

**«ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԴՈՒՔ  
ՆՄԱՆ ԼԻՆԵՔ ԶԵՐ ՀՈՐԸ»**

Գրասեղանի դարակներից մեկը ջատ մոտ է Ռազմիկի հոգուն: Հարտդատ մի մարդուց մնացած հուշեր կան գարակում: Մի մարդուց մնացած ջոշափելին, առարկայականը:

Դարակում՝ մի լուսանկար, զինվորի զգեստաբանով, մի նամակ՝ մաշված տառերով՝ մշուշված աչքերի նման, նաև՝ ուսատառ թերթի մի կտոր, սոսաատառ նամակներ:

Հարազատ մի մարդուց մնացած հուշեր: Միա՛յն: Իսկ Ռազմիկի շո՛ւնչը, իսկ Զեմմայի շո՛ւնչը, իոկ...

Աշխարհի ճանապարհները տրորած մարդու կյանքի սյատմությունը փակի տակ, դարակի մեջ չի տեղավորվի:

Դարակը բացվում է այն ժամանակ, երբ Ռազմիկը հիշում է հորը: Ասենք, նա այնքան է հիշում, ինչ յոթերորդ սասարանում գրել է ազատ թեմայով շարադրությունում.

«Մայրս, շգիտեմ ինչու, լաց էր լինում: Այն էի շարություն տրել, ոչ Զեմման, բայց՝ լաց էր լինում: Հայրիկս շոյեց մորս մազերը՝ նս նախանձեցի, բռնեցի հորս փեշից, որ իմ մազերն էլ շոյի: Նա գրկեց ինձ, մյուս ձեռքով՝ Զեմմային և գնացինք խանութ: Մի մեծ տապալկ կոնֆետ գնեց, Երբեք հայրս այդքան շատ կոնֆետ չէր գնել: Հետո... էլ ոչինչ չեմ հիշում, էլ չեմ տեսել հայրիկիս»:

Դարակը բացվում է այն ժամանակ, երբ Ռազմիկը անպուսպ ցանկություն է զգում՝ դեմ-դիմաց նստել ալեխառն մազերով մի մարդու հետ, լռել և լռության մեջ լսել նրա ձայնը, հասկանալ նրան:

Թացում է դարակը և զինվորական զգեստներով մարդու լուռ, անթարթ ու իր սևեռուն աչքերը հանդիպում են իրար:

«Շուշանիկ, Ռազմիկի և Զեմմայի մոտ իմ մասին շատ շխտեսս, կարոտ կծնվի, ինձ շուտ տեսնելու ցանկություն: Աշխատիր ավելի շուտ քեզ հետ կապել: Կգամ, էլի «կհեղաշրջեմ» բալիկներիս դեպի ինձ, այնպես, որ դու էլ խանդես...», իսկ հոր ձայնը չի հնչում ականջներում: Ինչպիսի՞ն է եղել: Ասում են՝ հենց իր ձայնի նման, բայց պատերազմը նուև մարդկանց բնական ձայնի վրա է ազդում: Նամակը պրիլուց գնդակները սուչել են կողքին, գնդակահաքել անտառի սոսիները:

Ո՛չ լեռներ, ո՛չ հարթավայր, Ռազմիկի երևակայության մեջ ռազմաճակատը, օւր մարտնչել է հայրը ֆաշիստների դեմ, միշտ անտառում է եղել: Դրա հիմքը դաբակում պահվող թերթի կտորն է, որը «Պրավդայի» 1942 թվականի փե-

տրրվարի 3-ի համարից մայրը կտրել, «սեփականացրել» է, որպես Արիսակից ստացված մի նամակ: Իսկ Միութեան բոլոր հանրային գրադարաններում «նամակը» պահվում է որպես հերոսապատում, որպես աշխարհի պատմության էջերը արնոտող մարդկանց դեմքին իջած շառաչուն ապտակի ձայնագրություն:

«Հյուսիսի անտառների գվարդիականները» — հողվածի վերնագրի տառ-մարտիկների ուղղաշարը ոչ խախտվել է, ոչ կխախտվի, ոչ գլորվել է շարքի «տառերից» որևէ մեկը. ոչ կգլորվի:

«...Ոչ մի քայլ ետ, միայն առաջ — այդպիսին էր այդ մարդկանց չգրված օրենքը: Շարովը անցավ առաջ: Նա գիտեր, որ իր թիկունքում կանգնած են ընկերները-հերոսները, որոնք արդեն շտապում էին օգնության: Նրանց առաջնորդում էր Արիսակ Բալասանյանը: Նրա ձեռքի տակ կարգային ոչ մի զինվոր չկար, երբ ստացավ Շարովի ցուցումը: Նա հավաքեց խոհարարներին, երաժիշտներին, տնտեսավարներին և, հարձակվելով թշնամու օղակի վրա, ճեղքեց այն:

Թշնամին ջարդված էր, գնդակահարված»:

Քսաներեք տարի առաջ, «Պրավդայի» այս տողերը հայ մարտիկ և հրամանատար՝ ավագ լեյտենանտ Արիսակ Գրիգորի Բալասանյանի բաց նամակն էր՝ ուղղված աշխարհին: Նամակը մի մարդու, որի կորուստը նրա հարազատներից ամեն մեկը իր հոգու մեջ սգում էր մինչև այդ: Ուրեմն...

«Ապրո՞ւմ է Արիսակ Բալասանյանը», — հարազատները հարցում են կատարում հողվածի հեղինակ՝ զինվորական թղթակից, գրող Բրաժնինին: Մինչև նրա պատասխանը, ստացվում է Ա. Բալասանյանի երկրորդ «բաց նամակը». «Քաղաքացի Շուշիկ Բալասանյան, գերմանական ֆաշիզմի դեմ պայքարում ձեր ամուսինը՝ Արիսակ Գրիգորի Բալասանյանը, հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու, բարեխղճության, հերոսություն, արիություն ցուցաբերելու համար Կարելական զինվորական ռազմաճակատի Մ0384 հրամանով 23-7-1942 թվին պարգևատրվել է Լենինի շքանշանով»:

Իսկ հետո՝ Բրաժնինի պատասխանը...

Գրասեղանի դարակներից մեկը շատ մոտ է Ռազմիկի հոգուն. այնտեղ հորից մնացած շոշափելին է, առարկայականը՝ մի լուսանկար, մի նամակ... և ահ՝ ուսատառ մի նամակ, որի բովանդակությունը անգիր գիտե:

«Հարցնում եք՝ ապրո՞ւմ է ընկեր Բալասանյանը: Ցավով պետք է ասեմ. նա զոհվեց: Զոհվեց ինչպես իսկական հերոս, ինչպես իսկական հայրենասեր: Նա մահացավ զենքը ձեռքին, անօրինակ հերոսությունը պաշտպանելով հայրենիքը և վերջին ճակատամարտում առանձնապես ոչնչացնելով շատ ֆաշիստների: Դա եղավ հրամանատարի և զինվորի հետաքրքիր հերոսություն: Բոլոր նրանք, ովքեր նրան ճանաչում են, այդ թվում նաև ես, որ հանդիպել եմ նրան մարտի դաշտում, պահում եմ նրա ամենալուսավոր հիշատակը...»

Ձեր՝ Բրաժնին»:

«Ամենալուսավոր հիշատակը...» Բառերը գրված են 23 տարի առաջ: Գրել է մարդուն ճանաչող մի ուրիշ զգայուն մարդ: Բայց արդյո՞ք չի մոռացել արդեն հորս, չի ջնջվել հորըս պատկերը նրա հոգում: Խնչ իմանաս, մոտ քառորդ դար է անցել: Եթե Բրաժնինի հոգում էլ չկա հորս «ամենալուսավոր հիշատակը», ուրեմն... Ես պիտի փորձեմ պարզել:

Մի քանի օր առաջ դարակում ավելացավ էլի մի նամակ: «Քանկագին Ռազմիկ Արիսակովիչ, ստացա ձեր նամակը: Նամակի վերջում գրել եք. «Ուղարկում եմ 1942 թվականին մեզ ուղարկած ձեր նամակի կրկնօրինակը, որը կօգնի Ձեզ, հիշելու Արիսակ Բալասանյանին»: Դրա համար շնորհակալություն: Բայց ես Արիսակ Գրիգորևիչին հիշում եմ առանց դրա էլ: Ձեր հայրը շերմ մարդ էր: Նա քաջ մարտիկ էր, անողոք թշնամու նկատմամբ, նաև բարի: Հոգով արի էր և կատակասեր: Շատ էր սիրում կատակել և դա 1941 թվականին, երբ պատերազմ էր, երբ մենք ունեինք ռազմական անհաջողություններ, այնքան էլ հեշտ չէր մնալ հոգով արի և, մանավանդ, կատակել կարողանալ: Ձեր հայրը հեռատես մարդ էր: Եվ այդքանը զգացել եմ մեր մի քանի կարճ հանդիպումների ժամանակ:

Ես անմահացրել եմ Արիսակ Գրիգորեիչի փառքը «Թուրովին վերջերս» գրքիս «Նա չէր կեղծում» հատվածում:

Սրտանց ցանկանում եմ Ձեզ բարին, իսկ ամենից առաջ ցանկանում եմ, որ դուք նման լինեք Ձեր հորը:

Ձեր՝ Ի. Բրաժնին»:

Որդու դարակում հորից մնացած հուշեր: Միա՞յն: Իսկ ինքը՝ որդի՞ն, իսկ Բրաժնի՞նը, հյուսիսի անտառների գվարդիականնե՞րը, հրապարակներով անցնող շքերթնե՞րը, այն օրերի փլատակների փոխարեն կանգնած շենք-հուշարձաննե՞րը...

Աշխարհի ճամփաները տրորած մարդու կյանքի պատճառով թյուրումը մի դարակի մեջ չի տեղավորվի:

Մարդը հավերժ է, եթե կարողանում է գոյություն ունենալ ուրիշների մեջ, նրանց սրտում և հոգում, այնպես, ինչպես Արիսակ Բալասանյանը, Նախիջևանի Չնաբերդ գյուղի այդ հերոսը, որը նույնիսկ շիրմաթումբ շունեցավ 263,5 բարձունքում:

### ԿԱՆԱԶ, ՎԻՓԵԱՐԻ ԸՆԿՈՒՉՆՈՒ ՏԱԿ

Այգեձոր գյուղը աշխարհի ծայրին չէ: Ահա Շամշադինի կենտրոն Բերդը երկու քայլի վրա և Բերդից կես քայլ այն կողմ նա է՝ Այգեձորը, լեռներով ուսնկից ադրբեջանական Գետաբեկ և Թոուզ շրջաններին: Բայց երբ գյուղ ես մտնում, աշխարհը գոցվում է, մնում ես երևացող ու չերևացող թաղերի հետ, շրջակա անտառոտ լեռների խնձորուտ լղարիկ գետի ու երկնքի հետ: Ու թե արև չկա, կորցնում ես աշխարհի հյուսիսն ու հարավը:

Ամռան ամպոտ օր էր:

Կուլտնտեսության նախագահ Վահան Եզիազարյանի հետ կանգնած ենք գրասենյակի գոանր: Հաճարկուտ սարը մոտմոտ է, մեր կոպերի տակ, թիկնեղ ու բարձր է սարը, կանաչ գանգուրներն երկինք են քսվում, և կրծքին բացատ ունի: Բացատը ժպտում է, թվում է, թե նորընծա արև է: Ակամա հարցնում եմ.

— Գյուղի արեւելքն է:

— Արեւուտքը:

Հաճարկուտ սարին նայում ես թե չէ, բացատր բռնում է հայացքդ, գլուխդ խոնարհում ես՝ կոպերդ խուտուտ է տալիս, շրջվում ես՝ ծոծրակիդ ես զգում բացատի հայացքը: Հանկարծ ինձ թվում է, որ Հաճարկուտ սարը հոգնած ժամանակ նստում է իր այդ բացատում, հանգստանում է, իրարից լույս ու արև խլող ծառերը բացատն են ժողովվում՝ ի հանդես լույս ու արևի, սարը այդ բացատով է նայում աշխարհին, աշխարհը՝ սարին...

Վահան Եղիազարյանը նկատում է, որ բացատով շատ եմ սարվել, ասում է.

— Բարունց տափն է:

Մեկին շեմ հասկանում:

— Մեր գյուղում Բաբայաններ տոհմ կա: Բարունց ենք ստում: Նրանց մեծերն են անտառը հատել, խամհատել, դարձրել հող:

— Դա վաղո՞ւց է եղել:

— Երևի: Աչք եմ բացել՝ Բարունց տափը էսպես եղել է:

Հաճարկուտ սարը հոգնած ժամանակ նստում է Բարունց տափում, հանգստանում է, իրարից լույս ու արև խլող ծառերը Բարունց տափն են ժողովվում՝ ի հանդես լույս ու արեւովի, սարը Բարունց տափին ծնկահար կանաչով է նայում Այգեձորին, գյուղը սարին: Առանց Բարունց տափի Հաճարկուտն ու Այգեձորը յուր շեն գնա... Բարունց մեծերը գիտեն իրենց արածը:

Ճանապարհը գյուղից ելվերում է մինչև բացատի փեշը և փոխում կանաչ, վիթխարի ընկուզենու տակ: Բարունց հողաբի:

Սերունդներ են հանդիպել ընկուզենու տակ ու բաժանվել:

Ընկուզենին հզոր ու կնճռոտ բուն ունի: Բացումաց՝ կարծրացած արմատներ ու տարածուն սաղարթ՝ թեքված ճամփի վրա, որը հենց այդտեղ հավաքվել-դարձել է գործատեղի, ընկուզենու սաղարթի շափ մի կալ: Բարունց տափից հեձած խոտը լծկաններով քաշում են այստեղ, բարձում ավտոները: Բացատը շատ դիք է. ավտո չի բարձրանում:

Եզները իջնում են՝ թեքությունից գլուխները ետ դցած, բեկված հայացքներով կառչած ընկուզենուն, և նրանց լայն բացված սև աչքերում թրթռում է ծառի սոսափյունը:

Գլխիվայր իջնում է տրակտորը: Մեկը գլուխը շուտ-շուտ խցիկից դուրս է հանում՝ նայում տրակտորի հետքով փափուկ սահող խոտի կուտակին:

Բարունց թռն է: Բարունց Զիվան: Փոքրամարմին, պինդ ու արագաշարժ մի տղա:

- Զիվան, քանի՞ տարեկան ես:
- Քսանչորսի մեջ եմ:
- Կոմերիտակա՞ն ես:
- 65 թվականի մայիսի 20-ից:
- Բարունց Մեծերից ովքե՞ր են էս տափը բացել:
- Թունի ապերը կիմանա:
- ԶԱՀԵԼ ՏԱՐԻՆԵՐԻՑ ԻՆՉ ԵՍ ՀԻՇՈՒՄ, ԹՈՒՆԻ ԱՊԵՐ:
- ԱՆՏԵՐ ԱՇԽԱՐՀ ԷՐ, ԽԼՈՂ-ԽԼՈՂԻ:

Բարունց Թունին պառկած է անկողնում: Տոթ միջօրե է, բայց նա գլխաշորով փաթաթվել է, վերմակը քաշել գլխին: Գրիպ է: Մեր ոսկորները մրսում են:

Իմ փոխարեն հարսն է գոռում.

- Հարցնում է՝ Բարունց տափը ե՞րբ եք բացել:
- է է՛ն... էն տափը խլել են:
- Ո՞վ է խլել, Թունի ապեր,— աթոռս մոտ եմ քաշում, խոնարհվում բարձին:

- Հետը խռով ենք, շենք խոսում:
- Զգում եմ, որ իրար շենք հասկանում:

— Խոսքս Հաճարկուտի բացատի մասին է, Թունի ապեր,— գոռում եմ,— էն որ փեշին ընկույղի ծառ ունի:

— էէ՛ս... Ճղոպրուտի՞նը... էդ տափը երեկ-մյուս օր ենք անտառից խլել: Մենք մի տափ շենք ունեցել, քե մատաղ,— Մերունին, որ անկողնու մեջ էր թաղել հայացքը, ինձ է նայում, և տեսնում եմ նրա շատ կենդանի, տարիքից շաա ջահել աչքերը:— Մի տափ շենք ունեցել, է՛, էն կողմի տափը, որ խլեցին, ելանք թազա մեկ էլ Ճղոպրուտը բացեցինք:

- Բայց ո՞վ խլեց, Թունի ապեր:
- Ասում եմ՝ խռով ենք, իրար հետ շենք խոսում,



անունը չեմ տա: Ճղոպրուտի տափը հետո էր, որ բացեցինք, հազար ինը հարյուր շորսի՞ն էր, թե՛ հինգին: Հողը որ անտառից խլեցինք, չէ՞, Սաքին հրացան պատրաստեց ու էլ ոչ մեկը մոտ չեկավ մեր հողին:

— Սաքին ո՞վ է, Թունի ապեր:

— Սարգիսը, մեծ ախպերս: Գարբին: Հմի նա իննսունս մեկ տարեկան է:

— Գյուղո՞ւմ է ապրում:

Փոխարենը պատասխանում է հարսը

— Սաքի ապերը մահացել է:

— Մահացել չի, է՛,— ծերունին վիրավորված նայում է հարսին, ապա՝ ինձ,— Հաճարկուտի ճղոպրի ծառը տեսե՛լ ես... Սաքին էդ ճղոպրին է:— Խոռված երեխայի պես շուռ է գալիս, դեմքն անում պատի կողմ և փակում խոսքը,— ճղոպրին ու տափը նա պահեց, Սաքին պահեց, դարբին էր, բայց հրացան էր պատրաստում, Անտեր աշխարհ էր, խլող-խլողի: Թե Սաքին չէր եղել, ճղոպրուտն էլ ձեռքներիցս կաննեին, ոնց որ, է՛, էն տափը խլեցին:

Եվ Բաբունց տունը մնաց առանց հողի, Բաբունց տղամարդիկ՝ աղքատ, բատրակացու: Միակ հույսը Հաճարկուտ սարի իրենց բաժին անտառն էր և մի առավոտ նրանք անտառ մտան, նստոտեցին ընկուզենու տակ, և Սաքի երիտասարդ դարբինը իր խոսքն ասաց.

— Առավոտ կանուխ ելնում ենք խամհատի:— Եվ տոնը մռայլ էր ու անհողգողդ, ու եղբայրները հասկացան, որ առավոտ կանուխ անպայման ծառ են կտրելու, նոր բողբոջած ծառեր են հատելու:

— Մենք մեղավոր չենք,— շահել եղբայրների աչքերիցավը Սաքին նկատեց:

— Գարուն օրով ծառ հատելը թե մեղք է՝ շար մարդկանց մեղքն է: Մեզ հող է հարկավոր... Առավոտ կանուխ ելնում ենք խամհատի,— կրկնեց:

— Եվ, իմացած եղեք,— շարունակեց Սաքին,— էս ճղոպրին ձեռք չենք տալ. մեր հայրը էս ճղոպրի կշտին մեզ շատ պատվերներ է թողել: Էս ճղոպրին մեր անտառի ու մեր բարի հոր հիշատակն է, մեր գործին կկենա վկա:

Բաբունց եղբայրները երկար օրեր աշխատեցին: Եւ

կրանք բանում էին Սաքի հմուտ վարպետի ձեռքով պատ-  
րաստված գործիքներով: Բայց կաղիճների կարծր բնորոշ  
կացիւններ ճաք ավեցին, հատված բները քանդելուց խճճված  
արմատների տակ քլունգներ ծովեցին, եղավ, որ երկաթյա  
շղթաներ կտրվեցին, և ծառերը քաշող լծկանները գլորվե-  
ցին երեսն ի վար ու սրածայր պողերով եզր իր պողով իր  
կուրծքը պատուեց, եղավ, որ լուծ շարդվեց, եղավ, որ եզր  
ծունկ ծալեց լծան տակ, և թաք մնացած եզան հետ Բա-  
բունց եղբայրները լծվեցին:

Երկար ցերեկներ աշխատեցին: Եվ ամեն գիշեր Սաքի  
երիտասարդ գարբինը վերանորոգում էր գործիքները, նո-  
րերն էր սարքում, ապա պողպատի կտորներ էր ծոմաում,  
հղկում, չափ ու ձև տալիս՝ հրացանի փողի, փակաղակի...  
Եղբայրները տարակուսած նայում էին, հարցուփորձ անում,  
իսկ Սաքի գարբինը լուռ ու համառ իր գործին էր: Ոչ ոքի  
մտքով չէր անցնում, որ ինքնուս դարբինը հրացան պատ-  
րաստելու փորձ կանի:

Գարունքվանից ձմեռնամուտ Բաբունց որդիները հատեցին  
ու քանդեցին անտառի իրենց բաժինը: Չմռանը Հաճարկուտի  
կրծքին ճառագեց ճերմակ բացատը, և վարի փեշին, սլահա-  
կի պես արթուն ու զգաստ, կենում էր մենավոր ընկուզենի՝  
Բաբունց տափ...

Բաբունց ճղոպրին...

Չմռանը Սաքին փակված էր իր դաբրնոցում, օրն ի բուն՝  
խորհրդավոր սարքումարքի հետ: Եվ գարնան հետ ձի հեծավ,  
Հաճարկուտի փեշով ոլորվող ճամփով գյուղից ելավ գուրս  
ու մի շաբաթ շերևաց: Սաքին հրացան էր պատրաստել,  
տարել էր փողամեջի գալարները փորելու: Ու երբ վերա-  
գարձավ, գյուղ չմտած, ձին թեքեց կածանով, ելավ բացատը,  
ձին կապեց ընկուզենուց, կանգնեց անտառից խլած իրենց  
տափի կենտրոնում, հրացանն ուղղեց երկինք ու թըրախկ...  
Թըրախկ... Թըրախկ... կրակեց... Ամենքին հատկանալի լեզ-  
վով Սաքին ասում էր՝ անառուից հող ենք խլել և ով փորձի  
խլել՝ օրը կսևացնեմ: Թըրախկ... Թըրախկ... Թըրախկ...  
Թըրախկ... Տափի կենտրոնում կանգնած խրոխտ ու համար-  
ձակ որոտում էր Սաքին... Եվ գյուղում ու այգ կողմի սարե-  
բում բոլորն իմացան, սր Բաբունց տափի տերերը զենք

ունեն: Այլևս ոչ ոք չփորձեց ծուռ նայել, և բացատր մնաց...  
 Բարունց տափ...  
 Բարունց ճղոպրի...  
 — ՍԱՀԱԿԻՆ ԵՐԲ ՍՊԱՆՆՑԻՆ:  
 — ԿՈՂԵԿՏԻՎ ՄՏՆԵԼՈՒ ԹՈՒՂԹԸ ՈՐ ԳՐԵՑ, ՀԵՏՈ ՍՊԱՆՆՑԻՆ... ԷՆ ԺԱՄԱՆԱԿ ՍԱՀԱԿԸ ԶԱՀԵԼ ԷՐ, ՀԱ՛...  
 Այն տարին, երբ Հաճարկուտ սարից հող էին խլում, Բարունց Սահակը մատմիս երեխա էր, գործավորներին ջրկիր:

Իսկ գյուղի կոլեկտիվացման ժամանակ աշխարհի շարն ու բարին հառկացած երիտառարդ էր նա, հավատավոր կոմունիստ: Եվ մի առավոտ նա դարբնոց մտավ (Սաքի ճերմակ բունքերով դարբինը նոր գուլթան էր ձուլում) և նրան ասաց.

— Սաքի, քեզ հետ լուրջ գործ ունեմ:

— Իմանում եմ,— հայացքը բոցկլտացող քուրային պատասխանեց Սաքին,— էդ գործի մասին էստեղ չենք խոսի: Ելնենք ճղոպրի տափ:

Եվ Բարունց այրերը ելան Բարունց տափը, հավաքվեցին ճղոպրու տակ, և Սաքին թույլ շտվեց, որ Սահակը շուրթ շարժի:

— Իմանում եմ՝ խոտքդ կոլեկտիվ մտնելու մասին է, Սահակ: Ես դեմ չեմ: Համա էս գործում ամենամեծ խոսքը էո տափին կպատկանի, մեկ էլ մեր ցեղի ամենաջահեղներին: Բարունց ջահեղները ճղոպրու տափի հետ ավելի երկար կապրեն, քան ես, քան դու: Քո տղա Շահումը օրորոցի մեջ է, նա թող պատասխան տա:

— Սժկերի խելքը ի՞նչ է կտրում, ա Սաքի:

— Էս խոխեքը թող պատասխան տան,— և Սաքին նայեց իր պատանի որդիներին՝ Վարդանին, Ենոքին:

Սահակը նայեց պատանիներին, ժպտաց ու դարբնին թվաց, թե Սահակը քմծիծաղում է և վիրավորվեց, և ասաց նրան:

— Սահակ, վայ թե մենք իրար չենք հասկանում,— ապա երկար նայեց բացատին և դարձավ առաց,— տափը, համաճայն է՝ գիր գրեք: Ա՛յ խոխեք, ուրախությամբ գիր գրեք,— և իրենը պնդեց,— ես էլ եմ տառաճանաչ, դու էլ բայց թող խոխեքը գրեն. սրանք էս տափի հետ ավելի երկար կապրեն, քան Համբարձումը, քան Թունին, քան Ղե-

վոնդր, քան ես, քան դու: էգուց-էլօր սրանք են պատասխան տալու Բարունց տափի համար:

Ամիսներ հետո Սաքին երկար օրեր բռունցքը սեղմում էր ճերմակ քունքին և կրկնում. «էս ինչ բայդուշ խոսք էր. Սահակին ընչի ասի՝ էս խոխեքը ավելի ավելի երկար կապրեն, քան դու»:— Սահակին սպանել էին: Կոլեկտիվացումն իր թշնամիներն ուներ: Նրանք ահաբեկում էին մարդկանց, այս ու այն գյուղում դեզեր էին այրում, հազար անհույս ու անիմաստ բաներ էին անում, փախչում անտառները: Բարունց կոմունիստ Սահակը, անունով անտառապահ, կռվում էր թըշնամիների դեմ, զաշաղների որսորդ էր: Եվ՝ սպանեցին նրան.

— Հա՛, էդ խոսքը Սաքիին դարդ էր եղել, ասում էր, բայդուշ խոսք ասեցի,— հիշում է ծեր Թունին:

— Թունի ապեր, քանի՞ հեկտար հող հանձնեցիք կոլտնտեսությանը:

— Գիդեմ ոչ. էն ժամանակ հողը հեկտարի տակ չէր:

— Բա կոլտնտեսությանը հանձնելուց չչափեցի՞ք:

— Ընչի չափեինք. խալխի՞ն էինք տալիս, որ չափեինք: Բարունց տափ էր, Բարունց տափ էլ մնաց:

— ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԷՍ ՏԱՓԸ ՔԵՁ ՊԱՆԵԼ Է, ՀՄԻ ԷԼ ԴՈՒ ՊԱՆԻՐ ՍՐԱՆ:

— ՀԱ... ԳՆՈՒՄ ԵՄ, ԿՈՒՎ ԵՄ ԳՆՈՒՄ, Ա ՀԵՐ...

Այգեծորը թաղեր ունի՝ էրիծոր, Այգեստան, Առվութաղ, Միջին թաղ, Գոմեր, Խնձորուտ գետակով, ձորակներով ու սարերով թաղերը մաս-մաս են, սեղմվում սարերին ու գետափին, թռած Տորնիյալի դագաթը: Թե մի պատառ ժամանակ, ասենք, տասնհինգ-քսան տարի արևը խաղաղ է բացվում Այգեծորի գլխին, ձորը լցվում է խլվլացող ճժերով, և ինքն իրեն գալիս է նոր տափ բացելու պահանջը: Այգեծորում ամեն սերունդ հող է խլել՝ գետաբերանից, անտառոտ ու փռչոտ սարերից: Ամեն սերունդ այս սար ու ձորերում հող է շինել՝ շատ թե քիչ:

Գարբին Սաքիի Վարդան որդին տասը-տասնմեկ տարու մանչ էր, երբ հանդարտվեց խաղնակ աշխարհը, և Սահակ կոմունիստ հորեղբայրը գյուղի հալևորներին բացատրում-կրկնում էր, որ այս երկրի ծեր արևը շահելացել է, աշխարհը նորացել, գյուղում՝ էլ ոչ տեր, ոչ տիրացու: Վարդանը երե-

իստ էր՝ այս ամենից գլուխ շէր հանում, միայն թե ուզում էր շուտ մեծանալ, ինչպես բոլոր երեխաները: Այդ օրից մի քսան տարի խաղաղություն էր եղել, և Բաբունց Վարդանը Այգեձորի կոլեկտիվ տնտեսության գործերը ջահել ու պինդ թևութիկունքով վերցնող ու դնող սերնդի մեջ էր: Կոլեկտիվ մտնելու «գիրը» գրելուց աղվամազ ունեք դեմքին, հիմա կոշտայտ ու կոշտժնոտ էր, բանուզորժի մեջ ոսկորները պնդացած, կին ու ճժի տեր և դարբին հորը հա՛ հիշեցնում էր.

— Հնձից հետո խուբաները խամհատելու ենք:

Խաղաղ առավոտների հետ նորածիններ էին աչք բացել ձոր ու լեռներով խաչված այս կիրճում, 41-ի ամռանը երկուսն էլ Վարդանն ունեք: Տոթ միջօրեին Այգեձորի մանկատիք ձկների պես խլվլում էին խնձորուտ գետակում, ծմակներում ճովողում: Նրանց համար գյուղի դաշտերն ու սահմանը անսահման էր, բայց հո հայրերը բանիմաց այրեր էին:

— Խուբաները խամհատելու ենք. թազա գութան է պետք, ա հեր:

— Գութան կլնի:— Եվ ծեր դարբինը նայում է քուրային ու հիշում,— ճղոպրի տափը որ բացեցինք, քեզ պես ջահել էի: Հմի ուժս առաջվանը չի, խամհատի հերթը ձերն է, ջահել եք: Գութան կլնի: Միասին կսարքենք:

Վարդանը դաշտավար էր և, դաշտի բանուզորժից հետո, շատ ժամանակ, հոր հետ դարբնոցում աշխատում էր: Նա կարող էր փոխարինել հորը, բայց դարբին Սաքին դեռ ուժ ունեք կոներում և վարպետությունը շէր զիջում:

— էսօր, հնձից հետո, թե կարաս, արի՛ երկաթները ծռենք:

Եվ կիսամութ արհեստանոցում կայծեր էին շող գալիս, մուրճի թափից պատին կպած ճրագլույսը թրթռում էր, սալի կշտի ջրափոսը թշշում՝ պոռթկում ծուխ ու գոլորշի, դարբնոցը լցվել էր ջուր ու հրի բույրով, և Բաբունց հայր ու որդին արդար վաստակի բախտն էին կռում, անլուր աշխարհի այդ գիշերվա շարին:

Արևածագին Վարդանը իր կիսատ հնձին փնաց՝ դադրուտած ու բարի: Եվ ջահել ու բանուկ բազուկների համար,

Ճանր մարմնից հետո, գերանդին ավելի թեթև էր թվում, գերանդին շողքի պես ցուլում էր ցարենի արասում, նրա աչք ու ճակատի դիմաց խշշում էր աստառի թևերը: Բարունց Վարդանը քրանաթոր ու երջանիկ էր՝ ուսնկից հնձվորներով, թեք արտավ, արևով և աշնան հալսով, որ մի ամբար լիքը ցորեն էր և ետքանում խամհաավելիք նոր բացատը:

Տափք, ուր հունձ էին անում, Չինարի գյուղին ավելի մոտ էր և... պատերազմի լուրը Չինարի գյուղի սուգ ու շիվանից իմացան:

Բարունց Վարդանը, տղերքի հետ, գյուղ դարձավ՝ հայացքը տրեխների տակ գցած, և ատամները սեղմվել էին, գերանդին ուսն ի վար թույլ-թույլ ճռվում էր՝ վիրավոր, կախ ընկած թևի պես և նա տուն շատավ, որովհետև գյուղեզորին ծանուցագիր ավեցին, և կինը դաշտում էր: Գնաց հրաժեշտ տալու:

Վարինկան նստել էր ընկուզենու տակ, ոտքերը մեկնել, անիմաստ հայացքը կախել ձեռք ու դողին: Թվում էր, թե քնից նոր է տըք բացել, բայց մտքով կիսատ մնացած խառնակ երազի հետ էր: Նա նույնիսկ շնայեց ամուսնուն, շթեքվեց նրա կողմ, երբ ամուսինը նստեց կողքին, Վարդանին թվաց, թե կինը իրեն շնկատեց:

— Վարինկա...

Ղյգեծորում կոծ էր, դաշտերի ճամփերով վազում էին շաղ եկած մազերով կանայք, շվարած երեխաները իրար էին նայում: Գոմերի քար լեռան կողմից, օրը ցերեկով, հոտը գյուղ էր մտնում, և հովիվը մահակով թակում էր ածապուհներին:

— Գնում եմ,— ասաց Վարդանը, և կինը շպատասխանեց:

— Փամանակ չունեմ,— Վարդանը շղիմացավ, գոռաց, և Վարինկան փլվեց ամուսնու կրճքին:

Սաքի ծեր դարբինը ծանր ելվերաւ Հաճարկուտ սարի ճամփով, հասավ ընկուզենու մտա, կանգնեց արգու և հարսի կշտին:

— Վարդան,— զարմանալի անվրդով ձայն ավեց,— դու քանի՞ տարեկան ես:

Որդին հարցական նայեց:

— Ծրենուն տարու մեջ ես,— շարունակեց Սաքի ծեր դարբինը:— Ծրենուն տարի էս տափը քեզ պահել է: Հմի էլ դու պահիր սրան:— Նայեց որդու աչքերին և ձեռքը դեպի բացատը մեկնեց:

— Հա, գնում եմ, կռիվ եմ գնում, ա հեր:

— Էս ճղուպրին վկա է:— Սաքի ծեր դարբինը իրենն ասաց,— Հաճարկուտից որ տափը խլեցինք, հունդ գցելուց առաջ էս տափում հրացան եմ տրաքացրել. զենքով երդում եմ արել, որ Բարունց տափին խալխի ոտք չի դիպնի:

Կատաղած շան կծած մի կատաղած, է՛, որտեղից իր ցեղով վեր էր կացել, քշում էր Բարունց տափի վրա: Եվ Այգեձորի երիտասարդ հնձվորների հետ Վարդանը կռիվ գնաց, փրկելու Բարունց տափը, Բարունց ճղուպրին:

— ԿՌՎԻ ՏԱՐԻՆ ՀԵԿՏԱՐԸ ԻՆՁ ԷՐ ՏԱԼԻՍ, ՔՈՒՆԻ ԱՊԵՐ:

— ՄԵՐ ՀԱՐՍ ՎԱՐԻՆԿԱՅԻՆ ՀԱՐՅՐՈՒ. ԿՌՎԻ ՏԱՐԻՆՆԱ ԷՐ... ՆՐԱՆՔ ԷՒՆ...

— Կռվի առաջին օրը Վարդանը դնաց, մի նամակ ստացա ու էդ էր...

Վարինկան նուրբ, բարձրահասակ կին է, ժամանակից շուտ ծերացած: Կանգնած ենք նորաշեն տան դռանը, թոռները շրջապատել են նրան, և փոքրը, երկամյա Վարդանը, քաշում է փեշից: Վարինկան խոսում է՝ հայացքը խոնարհ, երկար ու մաշված մատները Վարդանիկի մազերին զոզում են... Մեղավոր եմ զգում ամուսնու մառին, այդ շքված տարիների մասին հարցուփորձ անելուս համար:

Հարսն ու Գարեգին որդին աշխատանքի են:

— Որ տուն շեռ եկել, հա՛, Գարեգինը կգա, հեաա չի խոսի:— Եվ անզրադառնում է,— Վարդանը որ գնաց, Գարեգինը հինգը չէր բռնորել:— Եվ քաշում է թևիցս,— մեր տանը թե մի թաս գինի շեռ խմել, հա՛, հետք չեմ խոսի:

Ապա թոռան ձեռքը պսկում է փեշից, շտապ ամառնեղենն է խառնում, թոռնուհուն կարգադրություններ անում, հեաո զուսպ նստում սեղանի մոտ, հայացքը նարից խոնարհում ու խնդրում՝ թող ծա ազատ լինեմ և ներող, եթե՛ կիրառապատասապվեց:



«Միրելի Վարինկա...»

Կովահոտ նամակ կա, ու հիշում է, թե որ օրը, որ ժամին, որտեղ ստացավ:

Եվ ո՞րը մոռանա Բարունց Վարինկան:

Վարդանի թողած գերանդին ծանր էր, և դարբին սկեսրարը նորը պատրաստեց:

Այդ օրերին շատ նոր գերանգիններ պատրաստեց, բոլորը՝ կանանց համար: Եվ մուրճահարներն էին կանայք: Բարունց Վարինկան էր:

Կռիվ գնացած այգեծորցի այրերը մի շաբաթվա հունձ էին թողել, ձգվեց մի ամիս: Վարինկան՝ ջահել, բարակիրան, նուրբ ու թույլ ձեռքերով, սեղմում էր գերանդին, խոնարհվում շափից ավելի, բայց լաս չէր կանգնում. հասկ ու ցողուն ծալմվում էր, գերանդին վիրավորում արտը, հողը փղձկում: Արտն ինքն էլ էր զգում, որ հնձվորները այրեր չեն: Իսկ ջահել հարսը պիտի հունձ սովորեր, և նա համաձայն էր, միայն թե նամակ գա, իրանն ու թևերը պնդացնել, հնձից հետո ցանք է պետք, թեք տափերին՝ գութանի մաճը բռնող թևութիկունք, և նա համաձայն էր. միայն թե՛ նամակ գա: Փառք քեզ, տեր...

«Միրելի Վարինկա», — եկավ նամակը, և Վարինկան գոտին պնդած արտ մտավ:

— Մի շաբաթվա հունձ էին թողել՝ մի ամիս ձգձգվեց:

Գերանդիավոր կանայք վերջին հունձը արին կես օրում և վախվորած ականջները դաշտի հասկոտ ճամփեքին վըխտացող երեխաների ձայներին՝ լուրերի պահած՝ շտապեցին գյուղ...

Հետո, գյուղեղրին, կանայք շրջապատել էին Վարինկային, ախուվախ էին անում, փեշերով սրբում աչքերը, շեղած տեղից հույս տվողներ կային, ասում էին՝ մի հավատա, Վարինկա, թուղթը գրողները սխալված կլինեն, ասում էին՝ Վարդանը էսքան շուտ ե՞րբ հասավ կռվի գաշտ, որ հիմա էլ... Իսկ Վարինկան շիվար նայում էր կանանց ու ոչ մեկին չէր տեսնում, դառնում աչք էր փծում ջուրջբոլորը՝ գյուղին, գյուղի շրջակա սարերին, ապա հայացքը գիպավ Հաճարկուտին և մի միտք հայտնվեց — աղավաղվեց ճակատին, աչքերը լայնացան, և նա ձեռքերով քշեց բոլորած կանանց

ու քայլեց: Կանայք փորձեցին հետևել նրան, բայց Սաքի ծեր դարբինը, որ քիչ այն կողմ կենում էր, արգելեց նրանց:

— Թող մենակ գնա:— Սաքին հասկացավ, թե հարսը ուր է գնում:

Եվ Բարունց տափի ճամփին գնալով արագանում էին Վարինկայի քայլերը, ապա՝ ելվերում էր մեջքից ծալված, բոունցքներով ծնկները սեղմելով՝ ուժ տալով և հասավ ճղողարու տակ ու փլվեց... Փողոցներից, կաուրներից նայում էին՝ ծերեր, կանայք, երեխաներ և շշուկով էին խոսք փոխում ու սպասում Վարինկային: Նա եկավ մթնշաղին, գլխաշորը սահել էր ուսերին, Հաճարկուտի փեշին՝ վար ընկավ և Վարինկան գյուղ մտավ առանց գլխաշորի, շաղ եկած մագերով: Գյուղացիները Բարունց հարսին առաջին անգամ էին տեսնում գլխաբաց: Եվ այդպես նա ավելի ջահել էր ու գեղեցիկ:

Առավոտյան, երբ բրիգադիրը գնաց, ներողությամբ, Վարինկային աշխատանքի հրավիրելու, նա արդեն գնացել էր քուլաշ տեղափոխելու:

Հետո մաճկալ էր: Այրձայնի սովոր լծկանները նրան շէին ուզում ենթարկվել, գլուխները դժգոհ թափահարում էին, լուծը ետ գցում, փնշատում էին. ոտք փոխում ծուլ-ծուլ: (Բայց հինգ տարում եզներն այնպես ընտելացան կանանց ձայնին, որ պատերազմից տուն դարձած սերմնացաններին շէին ընդունում):

Եվ անասնապահ էր: Եվ ծխախոտագործուհի: Բարունց տափի խոտ հարողն էր: Եվ... մինուճար մի նամակ ուներ,— «Սիրելի Վարինկա»,— և երկրորդ նամակի հույսը մերժող մի թղթի կտոր: Այդ էր դժվարը:

Առանց նամակի աշխատելը դժվար էր, պարզապես՝ անհնարին, և նամակ հուսաց ու բանեց, բանեց, բանեց... Մինչև կռիվը վերջացավ: Այգեձորի այրերից ով մնացել էր տուն եկավ՝ հաղթած ու վիրավոր, տխուր ու ուրախ: Հաղթանակից հետո Վարինկան թուլացավ: Նրա աչքերի դիմաց հույսը գողի պես քաշվեց ու ծպտվեց սարերի թիկունքում: Եվ հենց հաջորդ օրը Վարինկան դաշտում ընկավ: Հնձի ժամանակ զգաց, որ գլուխը պտտվում է, աչքերի դիմաց գուլներ էին թրթռում: Գերանդին վար դրեց, կամեցավ նստել, բայց

երեսն ի վար փոփեց: Հասան՝ նստեցրին, շուր շփեցին դեմ-  
քին, բայց նա ոչինչ չէր տեսնում, աշխարհը սև էր:

Քաղվել էր հայացքը:

Դաշտից սայլով տուն բերեցին, ապա Երևան տարան՝  
աչքերը վիրահատելու:

— Բժիշկներն ասացին՝ հողին շատ կուսնալուց աչքերիդ  
քող է իջել:

Բարունց Վարինկան զուսպ նստել է սեղանի մոտ, հա-  
յացքը խոնարհել և խնդրում է՝ որ ես ազատ լինեմ և թող  
ներեմ, որ հյուրատիրությունը կիսատ-պուստ ստացվեց...

«Սիրելի Վարինկա...»:

— **ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԳՅՈՒՂԻ ԶԱՀԵԼՆԵՐԸ ԲԱՔՈՒՆՑ  
ՇԱՀՈՒՄԻ ՍԵՐՈՒՆԴՆ ԷՐ:**

— **ՀԱ... ՄԵՆՔ ԵՐԵՒԱ-ԵՐԵՒԱ ՏՂԱՄԱՐԴ ԴԱՐՁԱՆՔ:**

Եվ Խուրանների խամհատումը պատերազմից հետո և էլի  
ուշ եղավ:

Բարունց տափից ու Խուրաններից խլած հողի արանքում  
կորել էր մի տափ՝ շխամհատված, շրացված, շկնքված: Այդ  
անանուն տափը, որ պետք է լիներ ու չկա, սպանվեց պատե-  
րազմում: Բարունց Վարդանի սերնդակիցները, Այգեձորի էն  
օրերի երիտասարդները, որ պատրաստվեցին ժամկուտում  
հորինել տափը, զնացին հզածը պաշտպանելու: Վարդանի  
կողքին, այգեձորցի շատերը թաղվեցին անանուն գերեզման-  
ներում ու նրանց հետ՝ անանուն տափը:

Հանենք գլխորկներս անհայտ կորած բացատի համար:

Իսկ Խուրանների խամհատումը հետո եղավ, պատերազ-  
մից հետո և էլի ուշ՝ երեկ-մյուս օր էր:

Պատերազմից հետո Այգեձորի կոմերիտականները Բա-  
րունց Շահումի սերունդն էին: Ուսումը կիսատ-պուստ թո-  
ղած պատանիներ ու աղջիկներ, երեխա-երեխա բանած՝ խո-  
շորձեռք ու խոշորոտք: Շատերը որբացան: Իսկ Շահումը  
հորն էլ չի հիշում: Նա օրորոցում էր, երբ կուլեկտիվացման  
ժամանակ սպանեցին հորը, կոմունիստ Սահակին: Հիմա  
Շահումը քառասուներեքի մեջ է, բայց ի՞նչ միջին տարիք:  
Թիկանքից մի նայիր՝ տարիների բեռը աճելանում է: Ահա,  
վ՛րադարձել է դաշտից, կանգնել գրասենյակի դռանը, գյու-  
ղի իրիկնային զրույցն է լսում:

— Բարով ես եկել,— բանուկ ձեռքը մեկնում է,— Ժուռ  
նալիստները մեր կողմերում քիչ են երևում:

Սկիզբը խոստանում է, որ նա զբուցասեր է: Բայց այդ-  
պես չէ, շատ խոսքեր մնում են աչքերի խորքում՝ նշմարում  
ես, կամ չէ: Իսկ աչքերը բարի են, իմաստալի, ուժը աչքե-  
րից ես զգում ու մոռանում՝ գուրս ընկած ուսերը, ճակատին  
ու շատիրված այտերին ծալծլված կնճիռները:

— Քսենի տարի եմ աշխատե՞լ,— մտածկոտ կրկնում է  
հարցս,— ինչքան միտքս գալիս է՝ բանում եմ: Ուրիշ բան  
չեմ արել, միայն կոլտնտեսութունում բանել եմ:

— Ուրիշ ի՞նչ պետք է անեիր, որ շես արել, Շահում:

Երեխաներից պոկված մի գնդակ է գալիս, նա վրա է  
քշում գնդակին, ոտքով հարվածում՝ անվարժ ու մի տեսակ  
երեխավարի, ապա շփոթված լռում: Իսկ աչքերի խորքում  
բողոքում է կիսատ մնացած մանկութունը:

«Երեխա ժամանակ գնդակ պիտի խաղացած լինեիր, Շա-  
հում, որ շես խաղացել,— ասում եմ մտքումս,— քո «Քըռ-  
չե թուփը» գնդակահարել են»:

— Ուրիշ ի՞նչ պետք է անեիր,— հարցը կրկնում եմ:

— Զգիտեմ: Մեր գյուղից դուրս ուրիշներն ի՞նչ են  
անում, իմանամ՝ կասեմ: Թե չէ կոլտնտեսութունում ինչ  
գործ պատահել է՝ արել եմ:

— Խուբաների բացմանը Շահումն էլ է մասնակցել,—  
ասում է կոլտնտեսության նախագահ Վահան Եղիազարյանը:

— Խամհատի՞ն,— Շահումը հարցական նայում է, թե՛  
ինչու հիշեցին. անցած բան է. բա էլ ինչպես պետք է լի-  
ներ:— Ինչի՞ համար եք ասում,— հարցական նայում է, և  
ես հիշում եմ՝ ցերեկը գյուղում ման էի գալիս, Առվութա-  
ղում կանգ տվեցի մի տան մոտ: Սարը ճեղքել էին, երկհար-  
կանի դուռը խցկել սարի մեջ:

«Հայրիկդ տա՞նն է»,— հարցնում եմ դռանը կանգնած  
աղջնակին:

«Չէ»:

«Ո՞ր է գնացել»:

«Աշխատանքի: Ընչի՞ համար եք ասում»:

«Ձեզ ո՞վ է թույլ տվել, որ սարը ճեղքեք ու ձեզ համար

տուն շինեք»— փորձում եմ: Աղջիկը շվարած նայում է, ապա, հերսոտ պատասխան տալիս:

«Բա մենք որտե՞ղ պիտի ապրենք...»:

— էլ ինչո՞ւ եք էստեղ կանգնել, տուն գնանք:— Առաջարկում է Շահումը,— թթի արաղ եմ քաշել, գինի կա:

— Անցյալ տարվա գինիգ գեռ չի՞ վերջացել:

— Ինչո՞ւ պիտի վերջանա, ոչ հարբում եմ, ոչ էլ՝ վաճառում:

Եվ տարին բոլոր գինի ունի ու երբ հյուրի հետ սեղան է նստում, լիքը-լիքը բաժակներով խմում է ու ժպտում՝

— Նոր հասկացանք, թե գինին ընչի համար է:

Տան հիմնաքարից մինչև տանիքի վերջին թիթեղը նոր է, ոչ ոքից չի ժառանգել, Բաբունց Շահումն ինքն է կառուցել: Եվ չի ժառանգել ոչ տնատեղ, ոչ տնամերձ այգի. տնատեղն ու այգին սարից է խլել: Բաբունց գասը շատացել է, Այգեձորում հիմա քսան-քսանհինգ ծխատեր Բաբունց կա: Մեկն էլ սա՝ Շահումը՝ մանկուց ամուլի տակ մտած՝ հոգնած, կորուզի ու բարի:

— ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԵՍ, ԶԻՎԱՆ:

— 1965 ԹՎԱԿԱՆԻՑ: ՕՐՆ ԷԼ ԵՄ ՀԻՇՈՒՄ:

Ամռան ամպոտ օր էր: Բայց Հաճարկուտի կրծքին ծաղկած բացատը արևի պես հայացքդ քաշում է: Զուգենաս էլ ինքը՝ Բաբունց տափն է ստիպում՝ նայիր ինձ:

Ճանապարհը գյուղից ելվերում է մինչև բացատի փեշը և փովում ընկուզենու տակ, ուր գործատեղի է, հենց՝ սաղարթի շափ մի կալ: Տափից հնձած խոտը տրակտորով ու լծկաններով քաշում են ընկուզենու տակ, բարձում ավտոները: Եզները իջնում են՝ թեքությունից գլուխները կտ գցած, բեկված հայացքներով կառչած ընկուզենուն և նրանց լայն բացված սև աչքերում թրթռում է ծառի կանաչը:

Գլխավար իջնում է տրակտորը: Մեկը գլուխը շուտ-շուտ խցիկից գուրս է հանում՝ նայում է տրակտորի հետքով փափուկ սահող խոտի կուտակին: Դարբին Սաքիի թոռն է:

Բաբունց Զիվանը: Փոքրամարմին, բայց պինգ ու արագաշարժ երիտասարդ է:

— Քսանչորսի մեջ եմ,— քաղաքավարի պատասխանում է և ինքն է հարց տալիս,— ներողություն, ո՞վ կլինեք:

Ասում եմ:

— Շնորհակալութիւն: Ծառայութիւնից նախանցյալ տարի եմ վերադարձել,— հենց սկզբից հարկ է համարում, թող իմանան, որ այս կիրճից վեր է կացել, հասել վլադիվոստոկ, հազար տեղից հավաքված տղաների հետ ընկերութիւն է արել և պատվով, հարգանքով վերադարձել է Այգե-ձոր, Բաբունց տափից էլի խոս է կրում ու, երեկոյան, երբ տուն գնա, վլադիվոստոկցի ուս ընկերոջից գուցե էլի նամակ լինի:

— Կոմերիտակա՞ն ես:

— 1965 թվականի մարտի 20-ից:

— Օ՞րն էլ ես հիշում:

— Ինչո՞ւ չպիտի հիշեմ: Կարևոր բաները չեմ մոռանում: Զիվանը տրակտորիստի օգնական է:

— Երկու վարպետ ունեմ,— ասում է,— Նիկոլ Եղիազարյանն ու Մանվել Մարտիրոսյանը: Ներկայիս վարպետը Մանվելն է, նա ասում է՝ ինձ հետ պետք է աշխատես, նա ասում է՝ ինձ հետ:

— Իսկ դու ի՞նչ ես որոշել:

— Ես պատրաստ եմ երկուսին էլ, ամեն մեկին մի ձեռքով օգնել, բայց ղեկավարները՝ ում ասացին, նրա հետ էլ կաշխատեմ: Կարող եմ առանձին տրակտոր բանեցնել, բայց դիպում չունեմ: Զմուռնը գնալու եմ Բերդ, տրակտորիստների դասընթացում սովորելու:

Հետո, չգիտես ինչու, ինքն է նկատում հագի տրեխները և պատճառաբանում:

— Թեթև են, աշխատանքի մեջ սրանք շատ հարմար են:

Կոլտնտեսության նախագահ Վահան Եղիազարյանը նայում է դիք տափին: Խոտի մի քանի կուտակ է մնում քաշելու ընկուզենու մոտ:

— Էստեղ բան չմնաց,— Եղիազարյանը դառնում է Զիվանին,— եղածը եզներով կքաշենք: Պետք է գնաք Ախընչիի խոտը տեղափոխելու:

— Գնանք,— պատրաստակամ պատասխանում է Զիվանը և նայում Ախընչի դաշտամասի կողմ:

Հեռվում, կապույտ շղարշի մեջ, նշմարվում են գյուղի այգիները, ծխախոտի ու կարտոֆիլի պլանտացիաները, բա-

ցատները, լանջերի դեղին արտերը՝ կտրակցոն ձորերով ու բլուրներով: Եվ կոնաձև բլրի գլխին կարկտաբեր ամպերի դեմ կրակող հրանոթներն են, հրամանի պատրաստ: Իսկ բլրի թիկունքի սարը անտառն ու երկինքը հասցնում է իրար:

Կապույտ խաղաղություն է իշել Այգեձորին: Թաղերից, ծմակներից, խնձորուտ գետակից կանչեր են լսվում: Երեխաներն են: Նրանց համար անսահման են դյուղի դաշտերն ու սահմանները, իսկ Վահան Եղիազարյանը գիտե, որ դա այդպես չէ:

— Ընդամենը շորս հարյուր իննսուն հեկտար վարելահող ունենք:— Իսկ կիրճի Այգեձորը հիմտ երեք հազար հինգ հարյուր շունչ ունի:— Մտածում ենք, թե որտեղ խամհատենք:

Նոր տափ բացելու հերթը Բարունց Զիվանի սերնդինն է: Բարունց Սաքի գարբինը լկա... Ողորձի... Զկա սե պատերով գարբնոցը: Կոլտնտեսությունը հիմա մեծ արհեստանոց ունի, արհեստանոցի վարիչը Բարունց Աշոտն է, և կանաչ, վիթխարի ընկուզենու տակ բանում են թեքերը թշտած նոր շահելներ:

## ԱՆՋՐԵՎԻ ՄԱՍԻՆ

**ՋԵՄՄԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՆԱՆՏԱՆ.**— 35 տարեկան է: Ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը, աշխատանքի է մեկնել հայրենի Իջևան: Հինգ տարի առաջ, երբ նրան ընտրել են ՀԿՊ Իջևանի շրջկոմի քարտուղար, բարձր գասարանի աշակերտները «ապստամբել» են և բոլոր դասարանների բոլոր գրատախտակներին գրել. «Ընկեր Անանյանը շպետք է հեռանա պրոցից, մենք համաձայն չենք»:

Տարիներ առաջ տասներորդ դասարանցի Ռ. Թհանյանը Զ. Անանյանին մի բանառտեղծություն է նվիրել, որը սկսվում է այսպես.

«Մայրենի լեզվի իմ լավ ուսուցիչ,  
Քրոջ նման շերձ, մոր նման բարի...»:



Ճիշտ է նկատել նա. Անանյանի համար ամենաբնորոշը անսահման բարությունն է, զգալը, խորհելը և մարդկանց օգնելու ինքնամոռաց պատրաստակամությունը: Այդ մասին է պատմում «Կոմունիստները» մրցույթին ներկայացված «Անձրևի մասին» ակնարկը:

Նա մտքերի հետ էր, իսկ ես երկար նայեցի նրա սրճապուլն աչքերին, և տասնամյա մշուշի միջից հառնեց մի պատկեր:

Ամառ էր, կապտամշուշ երկնքում արևը կախվել էր ձրգված մի թելից: Արտը պապահ էր, ճաքճքված տաք շուրթերով: Կանաչը արևահար էր, կանաչը՝ թևաթափ: Եվ ես երազում էի անձրևի մասին: Իրիկնապահին «ձորից ջուր խմած» ամպեր ելան, իրիկնապահին որոտաց երկինքը և... Վազեցի արտի մոտ. արտի շափ ծարավ էի: Ու անձրևը գալիս էր՝ թշուղի էր հողը, ու անձրևը գալիս էր՝ թրջվող հողի բույրն էր ելնում, ու անձրևը գալիս էր՝ կանաչը շտկվում էր: Եվ գալիս էր, գալիս՝ հանդարտ, մանրակաթ, մազմզելով:

Ես երկար նայեցի նրա աչքերին, ու մշուշի միջից ելավ այս պատկերը:

...Դեմքից շտրիխներ եմ որսում, Ճակատի վրայից՝ զուգահեռ, մազե երկու կամուրջ՝ գալիք օրերի ու տարիների համար: Քունքերի վրայից՝ երկու կապույտ երակ: Գանդուրների միջից՝ ժամանակի մի քանի ճերմակ ստվեր: Հետո գգում եմ, որ նրա ձայնն ու հայացքը իրար շատ են նման՝ մեղմ ու հանդարտ՝ նորից եմ հիշում վերակենդանացած սպտկերը՝ պապակշուրթ արտ, բարեհանդարտ անձրև, որի կաթիլների մեջ երկնային թախիծ կար:

Ես շտրիխներ եմ որսում դեմք ու շարժումներից, իսկ նա խոսում է Բակունցի մասին՝ մոտեցնում է Տերյանին ու հեռացնում, հիշում, որ ինստիտուտում սովորած տարիներին Բակունցը չկար... Եվ զարմացած նայում ինձ, որ ես նորից լռում եմ:



Մեկը դամբանական է ասում. թե՛ Ռազմիկը երիտասարդ էր, թե ջահել կին թողեց ու «խոխեք», թե գրանց աչքի տակ սյահել, ձեռք մեկնելը պարտք է, թե... Զեմման լսում էր ու

մտածում, որ բոլոր դամբանականները իրար նման են: Ամենամեծ դամբանականը լուսթյունն է, և՛ խոսքով չէ, միայն լուսթյամբ պետք է լցնել գերեզմանափոսը, որովհետև տե...

Երբեք մարդ այնքան փիլիսոփա չէ, որքան գերեզմանոցում:

Հետո թափորից ետ ընկավ, միայնակ իջավ քաղաք:

...Աշխատասենյակում եղած իրերը երբեք այդքան կարեւոր չէին թվացել: Չէ՛, շատ կարևոր են՝ սև ու սպիտակ հեռախոսները, գրասեղանն ու վրան դրված ապակին: Տակի գրությունները, և աթոռը, որի վրա ինքը նստած է, և հենց այս փոքրիկ կոճակը, որին հիմա պետք է մատ տա, կանչի քարտուղարուհուն, հարցնի. «Դու Սեդային մոտիկից ճանաչո՞ւմ ես, միջնակարգ կրթություն ունի՞»: Ունի՞: Իջևանցի լինե՞ր, կիմանա՞ր, Թբիլիսիից հարս բերեցին... Տեսնե՞ս Ռազմիկը ինչպես է հանդիպել նրան... ինչ հետաքրքիր է կյանքը՝ որտեղից-որտեղ մարդկանց ճամփաները խաչում է, միացնում, հետո բաժանում քմահաճորեն: Գզգզվել էին Սեդայի մազերը: «Ռազմիկը շահել կին թողեց», — ո՞վ էր դամբանական ասողը... Ամենամեծ դամբանականը լուսթյունն է: «...Լուսթյո՞ւն, լուսթյո՞ւն, լուսթյուն անսահման»:

Տերյանն այս բանաստեղծությունը որտե՞ղ է գրել, գրասեղանի առջև նստա՞ծ, թե՞ հենց գերեզմանատանը, մի տապանաքարի հենված, ձայնեղ մի դամբանականի տակ... Սեդան միջնակարգ կրթություն ունի՞: Ամենամեծ կորստին դեմ-դիմաց կանգնած՝ չէր մոռանում, որ երեխաներին խնամել է պետք, իսկ ինքը մենակ մնաց:

Դողդողացող թարթիչներից մի կաթիլ արցունք ընկավ ապակու վրա:

Սեդանի վրա՝ օրացույց, սեղանի վրա՝ սև ու սպիտակ հեռախոս, գրիչ-մատիտների փունջ, հազար ու մի գրություն, շգիտեմ էլի թե ինչ՝ և մի կաթիլ արցունք՝ կլոր, նման Երկիր մոլորակի: Արևի խուրձն էր ծիածան կապել կաթիլ արդունքի մեջ, պատուհանից այնկողմի աշխարհը կար և կալ տիրոջ դեմքը:

Օ՛հ, բնություն, իմաստուն ես դու: Երբեմն ըմբոստացել եմ քմահաճ խաղերիդ դեմ, բայց իմաստուն ես դու:

Երկնքի՞ն ես շուտ անձրև տվել, թե՞ աչքին արցունք: Զգի-  
տեմ: Բայց դրանք իրար նման են: Մեկ են: Երկուսն էլ կլոր  
են մեր աշխարհի պես, երկուսն էլ՝ բյուրեղ ու բարի՛, բա-  
րի: Մնվում են ամպ ու որոտից, ընկնում ու միշտ՝ աչքը  
ճամփին պապակ հող կա, թևաթափ կանաչ ու ծաղիկ:

Արտասուքը հոգու երկնքից պոկվող անձրև է:



Գետն ու ճանապարհը իրար փաթաթված գլորվում էին  
կիրճում: Գետը՝ Աղստեն էր, ճանապարհը... Դե, այն, որ  
մեկին տուն է տանում, մեկին հանձնում տնից, նաո՞ր պե՞տ  
սուաջ ընկնում տանո՞ւմ, տանում է, կապում աշխարհի  
հետ: Եվ գետն ու ճանապարհը իրար փաթաթված գնում էին:  
Գետը՝ գզգզված, ճանապարհը... Վարպետ Թորոսը տրտըն-  
չում է.

էս փոսերին տեր կանգնող չկա:

Զեն արձագանքում, ամեն մեկը իր մտքի հետ է: Սեղան  
մտածում է ու գտնում, որ...

Ստացվում է այնպես՝ ամեն մահի հետ մի նոր բան  
շունչ է առնում, ամեն մահից հետո աշխարհում ինչ-որ բան  
շակվում է...

Եվ զարմանում է իր խոհերի վրա:

Երբ Ռազմիկը կար, ուրախ էր կյանքը, բայց ոչ մեկը,  
ոչ մեկը իրեն ուսուցիչ չէր նշանակի: Հիմա դասատու է, հե-  
տո՞ էլ Անանյանը նստացրել է կողքին, Երևան է տանում, որ  
օգնի իրեն՝ ընդունվելու պետական համալսարանի հեռակա  
րսժինը: Ուրեմն, ստացվում է այնպես, որ ամեն մահի  
հետ...

Եվ մեղապարտ էր դառնում իր խոհերի համար:

Բայց գուցե դա ամենևին էլ այդպես չէ, պարզապես աշ-  
խարհում Անանյանի նման մարդիկ կան: Օգնում են ու...  
Մարդու թողնում պարտքի տակ: Երբևէ ինքը կարո՞ղ է վար-  
ձահատույց լինել: Ինչո՞վ...

Եվ խճճվում էր խոհերի մեջ:

— Վարպետ Թորոս, սպասիր մի քիչ հանգստանանք:

Նստում են գետի ափին: Գետի հատակին ցից-ցից քա-  
ռ

րեր կան՝ մաշվում են, մաշվում ու շեն մաշվում, գետը՝ սա-  
րից բաց թողած կծիկն է, իսկ ջուրը՝ ճերմակ նժույգի քա-  
մուն տված բաշ:

— Բոլոր գետերը, նաև մեր Աղստեր, ժամանակ են  
քշում: Այս ալիքներից ամեն մեկը՝ մի վայրկյան է, մի րո-  
պե, կամ... չգիտեմ, ինչ-որ ժամանակ, — ասում է Զեմման:  
Սեղան չի պատասխանում:

— Նայիր դիմացի ծառին. արմատների կեսը ջրի երեսին  
լողում են, — լռում է մի քիչ: — Իսկ այն մյուսը նկատե՞լ ես:  
Զգիտես ինչպես է դեռ կանգնած մնում, թվում է, թե հողին  
կապող ոչ մի արմատ չունի: Անողոք է գետը:

Սեղան կռահում է, որ խոսքերը ինչ-որ շափով իր հետ  
կապ ունեն, բայց մինչև վերջ չի հասկանում:

— Եթե շիմանայի, որ մի տեղ, մի գետափին այս ծա-  
ռից ավելի նեղն ընկած ծառ կա, ես սրան կհամարեի աշ-  
խարհի ամենադժբախտ ծառը: Բայց համոզված եմ, որ կա՝  
թեքվել է, ուր որ է շուտ կգա և դրա համար այս ծառի վի-  
ճակը այնքան էլ սարսափելի չի թվում:

Հա՛, գետը՝ կյանքն է, ծառերը՝ մարդիկ, հասկացավ Սե-  
ղան: Հիմա արդեն կարելի է պատասխանել.

— Դուք ճիշտ եք, ընկեր Անանյան, ընդունում եմ, իմ  
վիճակից էլ վատը կա:

Զեմման ժպտում է, որ ասածը տեղ է հասել ու մտածում,  
որ. «Աշխարհի ամենադժբախտ մարդը որոնում, շեղած տե-  
ղից մեկին գտնում է, որին ինքը պետք է կարեկցի ու... շա-  
րունակում է ապրել»:

...Գետն ու ճանապարհը իրար փաթաթված գնում էին,  
գետը՝ գզգզված, ճանապարհը.. Ուստա Թորոսը տրտնջում  
էր, իսկ Զեմման Սեղային հիշեցնում. «Զմոռանաս, երբ են-  
թական փոխվում է, «և»-ից առաջ գրվում է ստորակետ»:

## ՄԱՅՐԱԿԱՆ ԿԱՊՈՎ

Ամեն առավոտ կալան նոթերը կիտում է, մայրը շմնաց  
իր հետ մանկամսուրում, մենակ գնաց, որ «կակա բերի»:  
Ու նոթերը կիտում է: Բայց հեռո մի ձեռք մեղմորեն շոյում

է նրա զուխը: Մանրության չի զգում այդ ձեռքից Լալան. ձեռքը կարծես մորն է՝ գուրալի շերմությունն կա իր մազերը խառնող մատներում, զգում է ու աչքերը բարձրացնում վեր: Հանդիպում է երեխայի հայացքը մի համբուրող հայացքի (այդպես մեկ էլ մայրն է նայում իրեն) ու բացվում է նրա դեմքը... ժպտում է նա նինային ու ստաքերը թփթփացնելով հատակին՝ վազում է, վազել գիտե, ուրախ է, վազում է: Իսկ նինայի մատները արգեն մի ուրիշ Լալայի այտերի վրայից է սրբում անմեղ թախիժը... ու մի քանի րոպե հետո մանկամսուրի 22 երեխաները խառնվում են իրար՝ կովոզ ճնճուկների պես:

Մինչև «Մանկապարտեզ եմ հաճախում» երգելը 31 երեխաներ ամեն առավոտ սկզբից ձերգում են».

— Բարե Ձեզ, ընկել նինա:

Իսկ նինան... ընկեր չէ նրանց համար: Ամեն առավոտ 53 երեխաների մայր է դառնում նա, սրտոտ մայր, գորովալից, դաստիարակող:

Նինան մանկապարտեզ-մանկամսուրի վարիչ է՝ Թալինի շրջանի Արագածի այգեգործական սովխոզում:

...Մ՛վ չի սիրում հազիվ մի արևածագ տեսած գարնան կանաչ ծիլը: Բոլորն են սիրում: Բոլորն են սիրում՝ մանկական առաջին, երեքուն քայլերը, երեխայի «անմիտ» լացն ու ծիծաղը: Սիրում են... սիրում է և նինան, սիրում է... — «Բայց այնպես պետք է սիրել, որ հետո սրանցից և ոչ մեկը կյանքի փուշ չգառնա, շեղվի ուղիղ Հանապարհից», — մտածում է նա:

Ու ինչքան ուզում է Սամվելիկը թող շար լինի. ուզենա քանդել Անժիկի կառուցած տնակը, քաշել նրա մազերից ու կամենա շարդել Վարդանուշի տիկնիկը: Նինան արգեն զգուշացրել է դաստիարակչուհուն.

— Տնակ շատ կառուցել կտաս Սամվելիկին, կստիպես, որ Անժիկի հետ շատ երգի, թող ընտելանան: Կհամոզես, կնստեցնես ու Վարդանուշի տիկնիկը կտաս ձեռքը, թող շատ երգի «Տիկնիկի օրորը»: Այնպես արա, որ «փոքրիկ դադանը» դուրս գա Սամվելիկի հոգուց:

...Տիդանը լավ է պարում, լա՛վ է արտասանում էմման: Պետք է զարգացնել երեխայի այդ շնորհքը: Ու օր-օրի Տի-

գանի դալար թևերը ավելի ճկուն շարժումներ են անում,  
էմման ավելի անուշ է արտասանում.

«Սիրում եմ քեզ հայոց լեզու,  
Մայրիկիս պես անուշ ես դու...»:

Ու օր-օրի Արայիկը ավելի լավ է հասկանում Նինայի հայացքը, նայում է հազիվ կես թրջված ձեռքերին ու նորից վազում լվացարանի մոտ, լվացվում նորից, սրբվում ու նոր տեղ գրավում Հրաչիկի կողքին: Հրաչիկը լավ է ուտում: Ուտում ու լեզվի ծայրով լիզում կեռաս շուրթերը: Ինչքան ուզում է թող ուտի, կտան: Բայց ուտելուց հետո պետք է «աշխատի»: Փոքրիկ կարմրակոթ բահը տալիս են նրան, ու Հրաչիկը կերածի շափ էլ «աշխատում է»: Թող աշխատի, լավ է: Ավելի ճիշտ Հրաչիկին թող թվա, թե ինքը աշխատում է. շենքի հիմք է փորում, ծառի փոս: Բայց շուտով հենց այս աշնանը, Հրաչիկը «ընկեր Նինայի» հետ ու նրանց հետ, որոնց մանկապարտեզում նույնպես ընկեր է ասում, իրոք ծառի փոս պետք է փորի: Որոշված է: Մանկապարտեզի բակըն ու շրջապատը պետք է ծառատնկվի, երեխաներից ամեն մեկը իր ծառը պետք է ունենա այնտեղ, իր անունը կրող ծիրանի ծառ... խնձորի ու տանձի:

Մառերը կմեծանան, «Մանկապարտեզ եմ հաճախում» երգողը «Դպրոցի ճամփան» կարտասանի, բայց սիրով կանցնի նորից մանկապարտեզի դռնով ու, եթե բակում չերևան, կկանգնի ու հայացքով կփնտրի իր դայակին, իր գաստիարակչուհուն, խոհարարին, կփնտրի ու «ընկեր Նինային»: Այս անգամ, իրոք, ընկեր Նինային:

...Կանցնեն էլի տարիներ: Մանկապարտեզի բակում վաղը տնկվող ծիրանենին սպիտակ ծաղիկներ կտա, խնձորենին՝ սպիտակ ծաղկաբույլ, մի սպիտակ փունջ էլ Նինայի մազերում կերևա... «չար» Սամվելիկը Սամվել կդառնա՝ գուցե նկարիչ, գուցե գիտնական... որմնագիր, սերմնացան, կհասկանա.

«Անցած ծիծաղիս վրա ժիծաղում  
Ու անցած լացիս վրա եմ լալիս»

տողերի իմաստն ու կհիշի մանկասպարտեզը... ընկեր Նինա-  
յին: Անպայման կհիշի: Աշխարհում ամենասուրբ ու ամենա-  
սուրբ՝ մոր ու մանկան կապով են կապված հիմա նրանք,  
հետո կհիշի:

## ՄԵԱՍՅՈՒՆԵՐԸ

### 1

Է՛, որքա՛ն ժամանակ է քայլելով գյուղից գյուղ շեմ  
գնացել: Համ էլ Ակունքը որտեղ է, որ անպայման ավտոյի  
սոյասեմ: Բասարգեշարն ու Ակունքը ճամփեզրի ծառերով  
միացել են, մի երկու տարի հետո տներով էլ կմիանան, և  
այս ճանապարհը կդառնա «նեղուց»:

Կողքովս մի աղջիկ է գնում: Քայլում ենք միասին:

Ես գյուղն առնում եմ աչքերիս մեջ ու քայլում:

Իսկ ճանապարհը՝ շիտակ հայացք: Թաց է, և ամեն  
ոտնահետքի տեղ շարդուփշուր եղած արև կա: Ամեն փի  
ջրափոսում՝ ալիքվող ոսկյա վարսեր, կկոցիր աչքերդ, որ  
նայես:

Գյուղի թիկունքին՝ սարեր, սարերի կույտ՝ ալիք-ալիք:  
Ամենաառաջինը նրանք՝ այդ հազար փի ու բռունցք լեռնա-  
պաղաթներն են բռնում արևի շողերը և ամենավերջինը՝ ար-  
ձակում: Դրա համար ձմեռնամուտին էլ կանաչը թարմ է  
այնտեղ:

Գյուղը լեռնապարի հետ ձգվում է, Խճճված տներ ունի,  
յափ ու ձևից դուրս և դրանով իսկ իսկական գյուղ է: Սիրում  
եմ այդպիսի գյուղեր:

Տները ճերմակ «գլխաշորեր» ունեն: Ամեն մի «գլխաշո-  
րից» մի ծվեն ծուխ է բարձրանում: Մխում են տները:

Մխասյունները՝ աշնան փափուկ խաղաղություն: Մխասյու-  
նեփը՝ իլիկի թել և կապույտ թաշկինակ:

— Ռուբիկ, ա՛յ Ռուբիկ:

Տատը ձեռնափայտ ունի: Ոտքերին օգնելու համար շէ՛

կորած գառին կամ հորթին պիտի տունք թշի: Գյուղից դուրս է եկել և ձեռնափաշտը թափահարելով քայլում է:

— Ռուբիկ, գտա՞ր:

Իսկ Ռուբիկը, է՛, հերկի մեջ է:

— Ի՞նչ է կորել, մայրիկ:

— Ղազերը, բալա ջան, էն կողմերը դազ շտեսար:

— Բասարգեչարի վերջին տների մոտ մի քանի հատ կար

— է՛դ է, մերն է:

Խոսում է աշխույժ, ժպտալով, անհանգիստ շարժում անում, ուզում է քայլի:

— Ռուբիկ... արի՛, արի՛:

Բռնում եմ թևից.

— Թո՞ռդ է:

— Հա, բա:

— Քանի՞ թոռ ունես.

— Է՛, շատ, 12—13-ը:

— Ուրեմն, շատ էլ երեխաներ կունենաս:

— Փառք աստծու, բալա ջան, հինգը՝ 4 տղա, մի աղջիկ:

— Մեծ տղիդ մո՞տ ես ապրում:

— Զէ, բալա ջան, մեծս կռիվ գնաց, չեկավ:

— Ուրեմն երեք տղա ունես:

— Զորսը, չորս՝ Վանիկը, Արմենակը, Սեդրակը, Շալիկոն: Վանիկս կռիվ գնաց, չեկավ:

Այդպես: Ինչքա՞ն նուրբ պետք է լինել մայրերին հասկանալու համար: Հազար անգամ ասում է, իսկ ես չեմ հասկանում, որ մոր համար որդին չի մեռնում: Վանիկի անվան վրա հազար ու մի փաստաթղթում գիծ են քաշել, թեկուզև՝ դողդողացող սիրտ ու ձեռքով: Շատերն են մոռացել: Գուցե նաև... Արմենակին եթե հարցնես քանի եղբայր ունի, Վանիկին չի հաշվի: Իսկ Աղուտ մայրիկը... «Զորս տղա ունեմ»: Եվ միշտ մեծի անունը սկզբից՝ «Վանիկը»...

«Կռիվ գնաց, չեկավ»: Դա էլ որպես նախատինք:

— Տղաները բաժա՞ն են, որի՞ մոտ ես մնում:

— Բա, բալա ջան... կայնի գտնիմ, գամ:

Եվ փեշերը խառնելով իրար, շտապում է...

«Ռուբիկ...»:



Նազար ու մի ցավ որտեղում անթեղած կապրեն մայրերը:

Երեկ ես մի «հայտնագործութուն» կատարեցի. իրիկնապահերին կանայք աներն են գյուղի փողոցների, գյուղի-երկնակամարի, գյուղի...

Սարալանջին կպած տան կողքին ուռենիների մի խումբ գլուխ-գլխի է տվել, նման ջրի եկած աղջիկների, միմյանց «կոճակներն» են բաց ու խուփ անում: Ուռենիների կողքին երկու կին հանդիպել են... «Մա՛»: Կողքի տան կտուրից է: Մեկը շարժվում է տեղից, անում մի քանի քայլ, շուտ գալիս էլի. մի խոսք պակաս է մնացել: Մի խոսքը՝ նորից երկու և նորից՝ դեմ-դիմաց, նախրից բաժանվում է մի կով, կանգ-ծում դրուցակից կանանց մոտ, բառաչում: Երկուսը միաժամակ ձեռքով են անում. «գնա»: Կովը համառում է, ճանաչել է տիրոջը, գլուխը ցցում է, բառաչում ավելի բարձր:

Ջնգո, ղնգո, ղնգո... Դատարկ դուլերը նվագում են: Տանն էլ, գուցե, թոնրի բոցերն են նվագում, և շտապում է կինը:

— Ժողովո՛ւրդ, աքեք, ոչխարները ջոկեք:

Թոխլիների հովիվն է: Ձմեռնամուտ է, հոտը իջեցրել է սարերից, կանգնեցրել գլուխի կենտրոնում. «արեք ջոկեք»: Զուկողները՝ կանայք: Շուտ ու մուտ են տալիս ոչխարի գլուխը «Սա է»: Անշատում են հոտից: Իսկ հոտը՝ սպիտակ, սպիտակ, բոլորը իրաց նման:

«Կրակ են էս կնանիքը, կրակ. ո՞նց են ճանաչում: Գառ գնացել են՝ թովսլի եկել, ոչ էլ նշան ունեն, ո՞նց են ճանաչում»:

Կամուրջի վրա կանգնած տղամարդիկ օրորում են գլուխայները:

Իսկ կամուրջի տակով գետ է անցնում, սկիզբը դիմացի օտարալանջն է: Գետի ափերին՝ բարդիները ջրի անզուսպ ծիծաղից կարգամեղ են:

Մեկը գլուխը խոնարհած անցնում է: Զուր է տանում: Կիսատ են գուլները:

— Տանն ուրիշ մեկը չկա՞, էս հալին ջուր է տանում:

— Ո՞վ կա, մի խեղճ կեսուր ունի, մարդն էլ հո... դու չգիտե՞ս մեր տղամարդկանց սովորութունը, ջուր տանո՞ղ են:

— Մի աղա ունենար, երեք աղջիկ ունի խեղճը...

...Իրիկնամուտ էր: Ինչ-որ տեղ արևը հրդեհել էր ամպերը, բայց չէր երևում:

Իրիկնամուտ էր, ամեն երգիկից ծուխ էր ելնում, և ես մտածում էի, որ հիմա ամեն մի թոնրի կողքին կամ վառարանին մոտ մի աատ կամ մի մայր կա նստած: Նրանցով են ծխարույր գյուղի իրիկնամուտները, նրանցով են ծխասյուները սյուն դառնում՝ գյուղի երկնակամարի տակ...

Երեկ ես հասկացա, որ կանայք են գյուղի իրիկնապահի իշխանները:

## 2

Ատում եմ պատերազմը, զզվում եմ: Ինչպես օձից, որից շեմ վախենում, բայց զզվանքից փախչում եմ:

Ինչքան ուզում եմ չհիշել, չի ստացվում, է՛լի: Բուլորովին մտքովս չէր անցել, որ գյուղսովետի նախագահ Աշիկ Ամիրխանյանի հետ իմ խոսակցությունը հենց երկրորդ րոպեին...

— Մեր դպրոցի դիրեկտորը կին է՝ Եսթեր Ղարիբյան: Եղբորը փոխարինեց՝ Գարսևան Թադևոսյանին: Պատերազմը որ սկսվեց, Գարսևանը կոխվ գնաց, Եսթերը փոխարինեց:

Բայց կարող էր ավելի մեծ ճանապարհի վրա կանգնել Եսթերը: Երբ պայթեցին ումբերը, նա Երևանի մանկավարժական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանողուհի էր՝ հեռաձիգ ու կապույտ երազներով: Թողեց ինստիտուտը: Գողացող ծնկներով, արցունքներից շաղված աչքերով բացեց զրպրոցի դուռը, ուսուցչանոցի դուռը: Նստեց այն աթոռին, ուր երեկ եղբայրն էր նստած, համբուրեց այն սեղանը, որ եղբորը շնչով շաղված էր: Երկար ժամանակ դարակները անշարժ էին մնում, գոց, որպես եղբորից մնացած հուշ, եղբոր մատնահետքերը վրան: Սեղանի վրա դրված ապակին չէր փոխվում, ապակու տակի նկարները, «Ակունքի դպրոցի դիրեկտոր Ընկ. Թադևոսյանին» շեղ մակագրությամբ գրությունը...

Հետո... Դե ո՞վ չգիտե, որ ժամանակը ավերիչ է: Դպրոցի շենքը շարժվեց տեղից, դուռն ու լուսամուտը, ուսուցչանոցը... Ուր մնաց թե՛ սեղանն ու ապակին, դարակներն ու նկարները:

Ավարտվեց պատերազմը: Դպրոցի «ախար» շվերադարձավ: Մնաց ծսթերը՝ ինչ-որ շափով իր մեջ ունենալով նաև եղբորը՝ գպրոցի դիրեկտոր, կենդանի, շնչող: Մնաց և իր սաներին սովորեցրեց լեռնիվեր մագլցում, ձեռքմեկնում ձորից բարձրացողին, ապտակ՝ աշխարհին ու մարդուն գաղանի աչքերով նայողին:

Ավարտվեց պատերազմը: Գյուղում շատացան աշխարհին բարի լույս ավետող առաջին ճիշերը, նաև ծխերը, թիվն աշակերտների, նաև ուսուցիչները. Գեղեցիկ Խաչատրյան, Լաուրա Հովհաննիսյան, Զվեգդա Զաքարյան, Անիկ Մարտիրոսյան, Էլինա Վարդանյան, Երանուհի Եղիազարյան, Ժենյա Գրիգորյան, Ֆրիդա Սիրեկանյան, Նեկտար Մինասյան, Սեդա Ղամբարյան, Լաուրա Հունանյան: Զոկատ՝ գյուղի մանուկների աչքերը բացող, գյուղի դատրերին ու որդիներին գյուղից դուրս՝ աշխարհի ճամփեքով առաջնորդող:

Պատերազմի ժամանակ Մայրանուշ Հովհաննիսյանը տրակտորիստ էր աշխատում: Հիմա նա նստած է ինձ մոտ: Եթեկավուն մազեր ունի, կոշտացած, ծխախոտի դառը սևով ծեփված ձեռքեր, ակոսված ճակատ և անորոշ հայացք:

— Աշխատում էի Բասարգեշարի ՄՏԿ-ում, տրակտորիստ էի: Երջանի շատ գյուղերում՝ Մեծ Մազրայում, Նորակերտում, Եիշկայայում, Զողում վար եմ արել, կոմբայնով՝ հունձ: Էն ժամանակ 18—19 տարեկան էի:

Խոսում է ցածրաձայն, գլուխը կախ, իր՝ կոմբայնավար ու տրակտորիստ լինելը չի ներկայացնում որպես հպարտութուն: Ա՛խր, տղաներն էին էդ գործերը կատարում: Գնացին: Նրանցից մեկին սրտի խորքում գուցե սիրել է, ո՞վ գիտե: Գնաց, շեկավ և...

— Հայր էլ ունեմ, մայր էլ, քույր էլ, եղբայր էլ:  
Հիմա ծխախոտի օղակավարուհի է: Վարպետ է դարձել: ԶԿՊ Բասարգեշարի շրջկոմի բյուրոն միաձայն ընդունեց նրան:

- Ես գնա՞մ:
- Մայրանուշ, ակումբում կինո կա, եկել ես, նայիր:
- Շտապում եմ, շորանոցից եմ եկել, աղջիկները սպասում են:

Գնում է: Նա շիկապուտեմ, սիրուն մազեր ունի, նուրբ

ու քարձր հասակ, կանոնավոր գիմադժեր, ճակատին մի ակոս. ձեռքերը կոշտ էին՝ պատված ժխախոտի գառը սևով:

Նա պատերազմի ժամանակ հերթափոխի է կանգնել: Նա՞ նազ աղջիկը — տրակառքիստ:

Եվ Ակունք Գյուղի կանանցից ջատերն են կանգնել հերթափոխի. Վարսենիկ Վարդանյանը, Խանում Մելքոնյանը, Արևհատ Նամոյանը, Հեղինե Ռսկանյանը, Բավական Հայրիջանը... Շատերը: Ակունքի կուլտնտեսությունում այժմ մոտ 300 կին աշխատող կա: Այն ժամանակ ավելի ջատ են եղել, նաև տգամարդկանց փոխարեն:

— Սովորություն է գարձել, բալա ջան, տանը գործ չեմ կարողանում անել, իմը կոլխոզն է, տան հետ գործ չունեմ: Սաղ մնան հարսներս՝ Ազավնիկս, Ռոզաս, Մելանիաս:

Վարսենիկ մայրիկի աչքի անկյունում մի կաթիլ արջունք սառել մնացել է: Ցրտից է: Զորանոցը՝ շորանոց, բայց, ախր, ձմեռնամուտ է:

— Իսկ հարսներդ կուլտնտեսությունում չե՞ն աշխատում:  
— Աշխատում են, բայց որ նրանք էլ իմ շափ աշխատեն, էլ տանը գործ անելու հավեռ չեն սենեմ: Էն ժամանակ էլ թող իրենց հարսները աշխատեն, ձիշտ չէ՞:

Խոսում է, իսկ ձեռքերը արագ-արագ ջարժվում են: 18 տարի առաջ այդ ձեռքերը կառավարական մի պարզև քերեցին տիրոջը՝ «Աշխատանքի արիություն համար»:

— 26 տարվա կոմունիստ է, հա՛, Վարսենիկ մայրիկը: Ժողովների ժամանակ բուրբիս «Թափ է տալիս»:

Գյուղում կառավարական ավելի բարձր պարզև ունեցողներ էլ կան:

Խանում Մելքոնյան: 45 տարեկան: Երբ 28 տարեկան էր, կարմիր դրոշի շքանշան ստացավ:

Այդ թվականը՝ 1948, ընդհանրապես քեզում էր ակունքցիների համար:

Հեղինե Ռսկանյանին՝ մեղալ Աշխատանքային գերազանցություն:

Արևհատ Նամոյանին՝ Լենինի ջքանշան:

...Ձմեռնամուտի ճքճքան առավտու Գյուղի թիկունքի սարը ձնել է: Զրափոսերը սառցակալվել են: Ճանապարհին՝ սառցակեղև: Տաքություն հս երտգում, տաք, արև: Արև կա,

բայց տաքութիւն շունիւ Շողերը կախովի են երդիկները վրա, փաթաթովի ծխասյուններին՝ տաքանում են, Հիմա երդիկներն են տաքացնում երկինքը, տատերի ու մայրերի բարակած ձեռքերն են տաքացնում արևի շողերը:

Ռոզա մայրիկը վազուց ոտքի վրա է: Մենք քնեցինք, նա արթուն էր, վարթնել ենք, արթուն է: Ե՛րբ է քնել: Բոնիքը վառել է, կարմրացրել: Շեն տուն է՝ 17-ը մի հարկի աակ: Որդիները՝ Աշիկը, Միշան նոր տներ են կառուցել, էլի տուֆաշեն, էլի ճերմակ «գլխաշաքերով»: Մայրը ո՛ւմ հետ պիտի գնա: Ոչ մեկի: Հայտարարել է: «Դուք կին ունեք, երեխեք ունեք, ես Ստեփանիս մոտ եմ մնալու»: Բախտավո՛ր է Ստեփանը:

Մայրը ներս է մտնում, «բարի լույս» է դնում սեղանին: Կարող էին հարսները բերել, աղջիկը, բայց ինքն է բերել: Հետն էլ մի երկու անուշ խոտք կասի, հարսները շեն կարող այնպես, որ հյուրը ազատ լինի:

Դուրս ենք գալիս տնից: Ռոզա մայրիկը ափերը շփում է գոգնոցին, աջս առնում ափերի մեջ:

— էլի՛ կգաս, բալա ջան:

Ճքճքան է առավոտը և դրա համար Ռոզա մայրիկի ձեռքերի խոնավ տաքութիւնը ավելի շատ եմ զգում:

Մի կին կտրում է ճանապարհը, վազում փողոցով: Քայլերի մեջ ուրախ տազնապ կա:

Ի՞նչ է պատահել, ժենիկ»:

«Քնարիկին, տրակտորիստ Լավրենտիին էլի աղջիկ է ծնվել»:

Ձնգո, զնգո, զնգո... դուլները նվագում են: Տանը գուցե թոնրի բոցերն են նվագում: Շտապում է կինը:

Սարալանջին կպած տան կողքին, ուռենիների մի խումբ գլուխ-գլխի է տվել՝ նման ջրի եկած աղջիկների: Երկու կին հանդիպել են և ծայր է առել մի զրույց, գուցե՝ գիշերը տեսած երազի մասին:

Մի տաա գոգնոցի հացը հավերին է մանրում: Ոսկեփետուր մի ճուռ նստել է ուսին, իսկ տատը ամենեին էլ շի անհանգստանում:

Ճքճքան առավոտ է: Կանայք՝ ամեն փողոցում, ամեն շեմի վրա, ամեն բակում: Տղամարդիկ՝ հատ ու կենտ, դաշ-

տում գործ չկա, տան հետ գործ չունեն։ Մեկը ծխելով անցնում է, իսկ այդ ծուխը շատ վեր չի բարձրանում, բզկտվում է, հալվում։

Իսկ երդիկների ծխերը ուրիշ են։ Երկինքը ասիլը պահել է երդիկների վրա, ու տաքանում է։ Արևը կախվել է երդիկների վրա, երդիկից իրեն ներս է գցել թո՛ւրի շրթին նստած տատի գոգը ու տաքանում է։

Երեկ ես մի «հայտնագործություն» կատարեցի. գյուղի ճքճքան առավոտների տերը կանայք են...

### ԱՆՎԱԽՃԱՆ ԳԻՇԵՐՈՒՄ ՈՒՂԵԿՑՈՂ ԼՈՒՅՍԸ

Առավոտյան՝ տան, գյուղի՝ Ոսկեվաղի, ծանոթ ու հարազատ լեռ ու դաշտի, ուլթարի իր հոտի ու գամփոփ կարոտն աչքերում Կոլյան պատերազմ գնաց...

...Արտաքին աշխարհից վերջին պատկերը Կոլյայի աչքերում գերմանական դանդաղընթաց ինքնաթիռը մնաց, դիրքերի վրայով սողացող նրա մահաբեր ստվերը, գետնի վրա ծանրորեն նստած փոշու ամպն ու կողքին գալարվող մի դինվորի կերպարանք։

— Բացե՛ք աչքերս, աչքերս բացե՛ք, — ճշում էր Կոլյան, մատներով տենդորեն շոշափում դեմքը, կոպերը հետ աանում։ Գալարվում էր մահճակալի վրա ու չէր հավատում, չէր ուզում հավատալ, որ աչքերը ոչնչով ծածկված չեն։

— Ինչո՞ւ չեք խոսում, ո՞վ կա այստեղ, գիշեր է, ցերեկ է, արև է, ձյուն է. ի՞նչ կա դրսում, ուզում եմ տեսնել, բացե՛ք աչքերս, բացե՛ք, — բժիշկը կանգնում էր նրա մահճակալից քիչ հեռու, լուռ ու անզոր, բացված պատուհանի մոտ, քույրն էր խեղդում հեկեկոցը։ Իսկ դրսում արև, սոսու բողբոջած ճյուղ, ճյուղին՝ երգող դեղնակտուց ծիտ, սոսու տակ գոլորշիացող սեզոտ հող, հողում՝ խլվյացող մի անձրևորգ։ Պատուհանից այնկողմ գարուն էր, կապույտ մուժ... խուլ որոտ։ Որոտը լսում էր Կոլյան, իսկ դիմացի կանաչող սոսին չէր տեսնում... կույր էր արդեն Կոլյան, աչքի սևն ու սպիտակը խառնվել էին իրար։

— Չէ՛, հեռացրե՛ք, հեռացրե՛ք ասում եմ Ձեզ՝ պետք չէ

ինձ: Ինչո՞ւ ուտեմ... Ես այլևս չեմ ուզում ապրել առանց աչքերի, առանց աչքերի... ու անզորությունից լաց էր լինում նա՝ անարցունք:

...Ինչպե՞ս պատահեց, որ Կոլյան այլևս չհրաժարվեց հացից... Ի՛նչ հզոր է ապրելու բնազդը, և ամեն ծանր կորստի հետ հաշտեցնող, ինչպիսի՞ ուժ է ժամանակը... Ու մի առավոտ, ձեռքերը առաջ մեկնած, խարխափելով Կոլյան դուրս եկավ: Արևի նուրբ շողերի հետ գարնան զեփյուռ կար հիվանդանոցի բակում, սոսիների սաղարթում՝ գարնան շշուկ, աչքերի տակից մայրացող հողի բույրն էր բարձրանում, պարուրում դեմքը: Ու Կոլյայի ունգները լայնանում էին, կուրծքը՝ ուռչում: Գարունը խուժել էր նրա հոգին, դիպել՝ սրտին: Մի ձեռք մեղմորեն բռնեց նրա թևը: Կոլյան ցնցվեց:

— Ախպերս, դու չէի՞ր կամենա մի քիչ օգնել ինձ, սպիտակեղենները թաց են, պարանը ծանրությունից կախվել է, մենակ չեմ կարողանում ձգել, կօգնե՞ս ինձ, չէ՞:

«Կօգնե՞ս ինձ, չէ՞» բառերը միանգամից մեխվեցին Կոլյայի ուղեղում: Ինչպե՞ս թե, ուրեմն ինքը կարող է դեռ ինչոր բան անել, կարող է կյանքում պետք գալ, օգնել մեկին... «Կօգնե՞ս ինձ, կօգնե՞ս ինձ...» անհանգիստ թրթռում էին բառերը նրա ուղեղում...

— Որտե՞ղ է, քույրիկ, պարանը...:

— Ահա,— ու կինը Կոլյայի ձեռքը կպցնում է ծառի բնին փաթաթված պարանին,— ձգե՛նք միասին:

— Չէ՛, ես մենակ կձգեմ, դու հեռու...— ու Կոլյան սեղմում է ատամները... «Կօգնե՞ս ինձ, կօգնե՞ս ինձ...»

— Բավական է, բավական, հիմա նորից փաթաթենք ծառին, կապենք:

— Ես կփաթաթեմ, սպասի՛ր...

— Շնորհակալությո՞ւն, շնորհակալությո՞ւն, էլ սպիտակեղենը չի կեղտոտվի,— կնոջ ձայնը արդեն քիչ հեռվից էր լսվում, իսկ Կոլյան կանգնել էր ձեռքերը չհեռացնելով արդեն ձգված պարանից: Անհանգիստ շնչում էր, ու դեմքի մկանները ջղաձգորեն շարժվում էին: Ուրեմն օգնեց ինքը... Ուժեղ բազուկներ ունի ինքը... օրեր ունի դեռ ապրելու, բայց աչքերը... այդպիսի խավար, անասող ու անլուսին գիշերերբեք չէր իջել ոչ մի սարի վրա, իր պահած ոչխարի փա-



րախի վրա, երբ ինքը հովիվ էր: Չի՛ եղել, չէ՛, այսպիսի խա-  
վար գիշեր: Ու գա անծայր պետք է լինի: Օ՛հ, ինչպե՞ս «լու-  
սացնի» այդ «գիշերը»... Բայց ինքը օգնեց ախր, ինչ-որ մեկը  
գոհ գնաց իրենից. «էլ սպիտակեղենները չեն կեղտոտվի»: Ու  
երկու ձեռքով ամուր քոնած պարանը արևի ու լույսի մի փունջ  
թվաց Կոլյային, մի ուղեցույց անվախճան գիշերում, դեպի  
գալիք օրերը ձգող հույսի շող, աստիճան նպատակ:

Հոգու աչքերով, մութ գիշերում առկայծող կյանքի այդ  
շողից քոնած տուն գարձավ նա մի օր: Կոլյանտեսության ան-  
գամ դառնալ չէր կարող այլևս: «Հորովել» ասել, հոտի հետ  
սար բարձրանալ չէր կարող...

Իսկ... թեև կծկել կարող էր: Ինչ արած, կյանքում թեև  
կծկել էլ է պետք, մեկն էլ այդ պետք է անի կյանքում: Այդ  
մեկն էլ ինքը թող լինի, ինչ արած: Ու կույրերի միասնորման  
Աշտարակի կույրերի վարչության անգամ գարձավ, թեև  
կծկման ցեխի քանվար դարձավ սարերի երբեմնի հովիվ  
Կոլյա Ղամբարյանը:

...Մի տախտակի վրա իրար կողքի ամրացված մեխեր  
Տեսնող մի քանվար կոճերը հազցնում է այդ մեխերի վրա,  
փաթաթված սպիտակ, բարակ թելերի ժաշրերը քանտում,  
հասցնում իրար ու տալիս Կոլյային:

— Վերցրո՛ւ, Կոլյա՛, կծկի՛ր:

Կոլյան լուռ վերցնում է թելի ծայրը: Մե նրա ափանջին  
հնչում են՝ «Յգնի՛ր, օգնի՛ր»:

Այդ բառը շատ էր գուր եկել նրան, բացել էր նրա հոգու  
աչքերը: Ինքը, իրոք, օգնում է, աչքերով չէ, հոգով է տես-  
նում իր արածը: Ուրեմն թեկուզ առանց աչքերի ինքը պետք  
է դեռ. աշխատում է, կծիկ է անում, օգնում է... կյանքին  
Ուրեմն... մտածում ու կծկում էր Կոլյան, և նրան կյանքի  
հետ կապողը, մեխերի վրա պտտվող, կոճերից անջատվող  
նուրբ ու լույսի շողքի պես սպիտակ թելերն էին, որոնք  
խառնվում էին իրար, նրա ձեռքերի մտա միանում ու մեծա-  
ցող կծիկի վրա դառնում ամուր թել, պարանի համար ոլոր-  
վող ամուր թել, արևի լույսի մի նշույլից իսկ զրկված  
մարդուն կյանքի հետ կապող, ժամանակի ճախարակին փա-  
թաթվող ամուր թել...



Հիմա Կոռյտն թելի կծկման ցեխի վարդին է: Հիմա Անուշն է այդ ցեխում կծիկ անում, Մանիշակը, Փերինազը: Ու կոճիրից ձգվող սպիտակ թելերը երանց համար էլ են դարձել անծայր գիշերում ուղեկցող լույսի շողեր:

Պատերազմ, պատերազմ... Դիրք էր փորել Ռոստոմի մոտ մարտիկ Զավեն Հովհաննիսյանը, որ թշնամին այն կողմ շանցնի: Բայց իր ձեռքով փորված խրամատում իր ցերեկն ու լույսը, աշխարհում իր բաժին ծիածանի գույները թողվեցին ու թաղվեց աչ ձեռքը՝ աչ բազուկի հետ՝ խրամատում: Բայց կյանքի բազմերանգ գույներում գույն է թողնում նա: Առանց աչքերի հետք է թողնում նա կյանքում՝ աշից ուժ առած իր ձախով:

...Ու երեկ մարտի իր դիրքում Գերասիմ քեռու առնական դիմքին աչքերի փոխարեն միայն նրանց ծածկող կոպերը մնացին, հանկարծակի գիշեր դարձավ աշխարհը: Բայց լույսի պատառներ են խաղում հիմա, լույսի շերտ այդ խավարում ու ձեռքով անում, ձգում նրան: Կյանքի հմայքն է դա, աննպատակ շապրելու, օգնելու մարդուն, կյանքի համար բեռ շղառնալու տենչն է՝ ամուր կապ՝ Գերասիմ քեռուն օրերի հետ կապող: Գերասիմ քեռուն, բարակ պարան ոլորող 19-ամյա ժորային ու նրա պապին՝ 70-ամյա Արմենին, Ֆելիքսին, Ֆիզիկուլտհրապարակներից մի ժամանակ փոթորկալից ծափեր պոկող Սուրիկին, Կիրակոսին, վաղուց աչքի լույսը կորցրած Տիգրան քեռուն, Գևորգին... շոշափելով կարված բանվորական ձեռնասրբիչներով ու ձեռնոցներով կյանք մտնող Նազիկին, Մաղիկին, Գարունին, Արփիկին... ձեռնոցներով շուռ տվող Գևորգ քեռուն, Արամայիսին ու Միշա Բարելյանին...

...Ի՞նչ անողոք կատակներ է անում երբեմն բնությունը, ինչ հիմար խաղեր՝ Մեմել է Միշան գեղեցիկ աչքերով, ու աչքերը տեսողութուն չեն ունեցել: Արևը ինչպե՞ս է շողում, լալկան ուռենի՞ն ինչպե՞ս է ստվիթ գցում առվի վրա, կարմիրն ի՞նչ է, սպիտակը ի՞նչ է... շի տեսել Միշան: Բայց նա արհամարհել է այդ տեսակ խաղերը, վրնժ լուծել նրանից: Տեսնող հասակակիցների հետ դպրոց է գնացել... պետական համալսարան է գնացել տեսնողների հետ ու լսողությամբ միայն ուղեղում տաճիչ ավելի շատ, քան համակուրսեցիներ

րից շատերը: Ավարտել է համալսարանը Միշան, դարձել պատմաբան: Ու հիմա, երբ իջնում է երեկոն, կույրերի ակումբում, Միշայի մոտ շատերն են հավաքվում: Պատմում է իր իմացածը նա, ու ավելի են բացվում իր բախտակիցների հոգու աչքերը, գիշերում փայլատակող լույսի շողերը ավելի են շատանում, մոտենում իրար: Զարմանալ պետք չէ, ինչպե՞ս նրանք կյանքում չեն սայթաքում: Ու հետք են թողնում կյանքում, որն ավելի ուղիղ է, դաջված, քան աշխարհում տեսնող մարդկանց շատերի հետքերը:

### ՆՐԱ ՁԵՌՔԵՐՈՒՄ ԴԱՆԱԿԸ ԿՅԱՆՔ Է

#### 1

Տասնվեց տարի առաջ: Գարուն էր... պատերազմ... Վարչապալայի տակ գոտեմարտ...

Սերգեյը նկատեց. դիմացը կանգնած գերմանացու ձեռքին բացված դանակ կար, դանակի արյունոտ շեղբին՝ գարնան արև: Առավոտվա շողերը արյունոտվել, արյունից խենթացել ու պարում էին շարախինդ, մահվան քրքիջով քրքջում: Սերգեյը տեսավ: Տեսավ, որ գերմանացու աչքերից մարդասպանն էր նայում, դանակի ծայրից՝ մահը...

Վիրահատման սեղանին Սերգեյի ծանրացած կոպերը ետ գնացին: Մի քանի վայրկյան նայեց անիմաստ ու հետո ճշաց, փակեց աչքերը. կողքին կանգնած սպիտակխալաթ կնոջ ձեռքին փայլուն դանակ կար: Նորից ուշքի եկավ: Այս անգամ կնոջ ձեռքերը դատարկ էին, ու սպիտակ աչք իջավ իր ճակատին, խառնեց սև գանգուրները: Ինչքա՞ն թախիժ կար կնոջ աչքերում ու ինչքա՞ն սեր: Չէ՛, այնտեղ, այն մարդու աչքերը այդպես չէին նայում իրեն: Սա ուրիշ է: Երկար ժամանակ այդպիսի հայացքի չէր հանդիպել. պատերազմի դաշտում մարդիկ քաղցր չեն կարող նայել, եթե ուզենան էլ, չեն կարող: Սա ուրիշ է, Զերմություն կար այդ հայացքում, քրոջ քնքշանք: Ու Սերգեյը ուզում էր այրվող շուրթերը բաց անի, ինչ-որ բան ասի, բայց ցավերը կնճիռներ են դառնում նրա ճակատին:


— Ոչինչ, երիտասարդ, լավ կլինի: Մի փոքր վիրահա-

տություն ու ամեն ինչ լավ կլինի: Բայց այսքան որ դիմացել ես, էլի տղամարդկություն պետք է անես, քնաբեր դեղ տալ չենք կարող, — ու վերցնում է դանակը:

Պատուհանից ներս ընկած գարնան շողերը վախվորուկ թռվոում են դանակի փայլուն ծայրին, աչքով անում Սերգեյին: Սերգեյը տեսավ: Տեսավ, որ գեղեցկադեմ այդ կնոջ վշտահար աչքերից մարդն էր նայում, մայրը, դանակի ծայրից՝ կյանքը...

Չէ՛, այդ ձեռքն ու դանակը կյանք չէ, մահը սպանելու համար էին:

Ու Սերգեյը սիրեց փրկարար այդ ձեռքը, վիրաբույժի դանակը...



Այդ օրից տասնվեց տարի է անցել: Հեռու Ղարաբաղում, Չարդախլու գյուղում, Սերգեյենց դուռն հաստարուն ծառը տասնվեց անգամ բողբոջ է տվել, ծաղիկ, թուփ ու դեղին տերև: Բայց Սերգեյը մի տարի միայն թթենու բողբոջն է տեսել, թուփը չի տեսել, մի տարի միայն՝ շամշացած թուփը, մեկ միայն՝ ծառից դողդողալով ընկնող դեղին տերևները: Սերգեյը այդ տարիներին ուսանող է եղել Բաքվի բժշկական ինստիտուտում ու հետո վիրաբույժ, բժիշկ Մարտիրոսյան՝ Ապարանի շրջանում:



1952 թվական, աշուն: Աշխատանքային առաջին օր ու առաջին վիրահատում: Դանակը դողում էր իր ձեռքում, ճակատին քրտինքի մանրիկ կաթիլներ կային: Վիրահատման սեղանին պառկած Ահմադը «աղիների անանցանելիություն» ուներ, բարդ էր վիրահատումը, ու Սերգեյը առաջին անգամ էր դանակը շարժում կենդանի մարմնի վրա, առաջին անգամ էր դանակ բարձրացրել մահվան դեմ: Դժվար է: Կկարողանա՞ սպանել մահը: Ու նրա հոգու ողջ ապրումները քրտինքի կաթիլներ էին դարձել դեմքի վրա:

Ահմադը, երբ դուրս էր գալիս հիվանդանոցից, երկու ձեռքով բռնել էր բժշկի աջն ու շփտեր ինչ ասեր: Ի՞նչ ասեր,

վիրարույժի ձեռքը դանակի հետ կյանք էր փակել իրեն, շնորհակալությունը քիչ չէ՞ր: Ի՞նչ ասեր բառ: Բե իրեն շնորհված կյանքի համար մալորվել էր Ահմադը: Բայց ի՞նչ իմանալու, որ իրենից շատ բծիշկն էր հուզված: Ինքը կարող է անժամանակ մահ սպանել, կյանք տալ մարդուն: Ու իրեն շնորհված բախտի համար հուզվել, մալորվել էր Սերգեյ Մարտիրոսյանը:



Ձմեռ, ճոճուան ձյուն, կապույտ երկինք: Արագածի ճեմակ գագաթին նստած արև: Ոսկե շողերը հավաքվել ու սենյակի մի անկյունում են արդեն թրթռում: Ահա արևը կզլորվի Արագածի քարոտ փեշերում ու սենյակում այլևս արև չի լինի: Իսկ վիրահատման սեղանին մի մայր կա. Լուսին է: Ու... Մարտիրոսյանի ձեռքերը շեն դողում, իսկ դրսում սիրտը դողում է. այնտեղ, պատուհանից այն կողմ մտախոհ ու գրկիկոր մարդիկ կան, կանայք՝ արցունքոտ աչքերով, սնկսընկացող երեխաներ: Ցրտի՛ց չէ, կարող է իրենց մոր բարի աչքերը բացված շտեմենն այլևս. դողում են: Նրա ջերմ ու գուրգուրուն հայացքը կարող է այլևս չգրկի իրենց ու տաքացնի ձմռան ցրտին: Կարող են ամբողջ կյանքում մոր կարոտից դողալ, եթե ինքը...

Ու լարվել էր վիրարույժի դեմքը, քունքի մոտ երակը բարձրացել, կկոցվել աչքերը, դանակը մի սիրտ էր դարձել, ութմիկ տրոփող սիրտ ու փարձել վիրահատվող մի մոր... Այնտեղ, պատուհանից այն կողմ... Ու Հարթավանում մի տուն կա փակ դռնով, տան անկյունում ժլատող մի կատու...

Տասը փոթորկուն ձմեռ է անցել այդ օրից էլի, բայց անցած ձմեռներից և ոչ մի օրն այնքան ցուրտ չի եղել, կուսիկի, արդեն շափահաս դարձած, երեխաների համար, որքան այն ձմռան արևոտ օրն էր: Բե ոչ մի օր այնքան տաք չի եղել նրանց համար, որքան նույն ձմռան արև բթաշունչ օրը, երբ հիվանդանոցից մոր հետ գուրս եկան, տուն գնացին, սրտներում տանելով նաև վիրաբույժ Ս. Մարտիրոսյանի հաքազատ պատկերը:

Ու շփտես ինչպե՞ս մարդ կարող է մոռանալ մեկին, ով

մայր է ազատում մահվան դրկից ու վերադարձնում երեխաների դիրկը:



Ոչ հարազատ կար, ոչ դողահար սիրտ դրսում՝ վիրահատարանի պատուհանից այն կողմ: Հովիվներն էին բերել ջարդուփշուր եղած երիտասարդին:

Տրակտորով սար էր գնում, քարափից գլորվեց տրակտորի հետ, — հանձնել էին բժշկին ու գնացել:

Անշուք ու անծանոթ երիտասարդի միակ հարազատը այդ սյահին մենակ նա էր՝ Մարդ Սերգեյը, վիրաբույժ Մարտիրոսյանը, ու նրա սիրտն էր դողում:

Բժշկի ձեռքի արյունոտ անձնագիրը որոշ բան ասում էր երիտասարդի մասին: Ասատրյան Գևորգն է, 1932 թվականին ծնված, Շահումյանի շրջանի Կողբ գյուղից, ամուսնացած է, գուցե և երեխաներ ունի, ինչ իմանաս... անցած գիշերը վատ երազ տեսած սպիտակամազ մայր ունի դուցե (մայրերը միայն վատ երազ են տեսնում), կնճռոտված դեմքով հայր դուցե... Ու դողում է Սերգեյի սիրտը, ճմլվում: Օ՛հ, ինչ դժվար է, եթե ինքը չկարողանա սրբել երիտասարդի դեմքին նստած մահը: Եվ վիրաբույժը վերցնում է դանակը... Ապարանի հիվանդանոցում բժիշկ Մարտիրոսյանը կռվում էր Գևորգի մահվան հետ, այնտեղ, Կողբում, Գևորգի կինը՝ Հայկուշը, ասեղնագործում էր մի թիզ մեծութուն ունեցող շապիկի օձիքն ու խանդաղատանքով մտածում. «Մինչև Գեվորգը դա, երեխան... ծնված կլինի: Ի՞նչ պետք է ունենանք, տղա, աղջիկ: Անունն ի՞նչ ենք դնելու: Եթե տղա լինի... եթե աղջիկ լինի...»:

Բայց... Ապարանի հիվանդանոցում երեխա ունեցավ Հայկուշը: Ու երբ ամուսն մի առավոտ Գևորգը գուրա եկավ հիվանդանոցից, գրկին քարուրի մեջ փաթաթված, մի փոքրիկ Սերգեյ կար: (Հիվանդանոցում ծնված երջանկութուն): Ջահել զույգերը Կողբ էին գնում աւ նորածին իրենց տղայի հետ տուն տանում և բժիշկ Սերգեյի անունը: Հիմա կազրեցի հընգամյա Սերգեյը դիտե արդեն, թե ինչպես է ծնվել իր անունը:



Այս աստղանիշը թող վերջինը լինի: Կարելի է երկու հազար անգամ այսպիսի աստղանիշեր դնել ու պատմել մարդկային մի կյանքի մասին, որն ընդհատվում էր մի օր, բայց վիրաբույժ Ս. Մարտիրոսյանը դանակ է վերցրել իր գործող աջով՝ կտրել մահվան կարկառած ձեռքերը, խլել նրա ձեռքից մարդկային այդ կյանքն ու հանձնել աշխարհի կյանքին: Դանակ վերցրել, որ շենավանցի Վաչագանը դեռ 40-ը չլրացած հրաժեշտ շտա կյանքին, որ Ռաֆիկը իր կյանքի ամառնամուտին շփակի իր հաշիվները կյանքի հետ, որ Բորիսը, դեռ մի քանի գարուն չապրած, չթողնի Արագածի ու Բուժականի ծաղկոտ գարունները, որ...

Երկու հազար անուն, երկու հազար ընդհատվող կյանք, երկու հազար պատմություն՝ սկիզբ առած սովորական մի մարդու աջում հմտորեն շարժվող սուր մի դանակի ծայրից:

Այդպես է, դանակը՝ Ապարանի շրջանի գլխավոր բժիշկ, շրջկենտրոնի հիվանդանոցի վիրաբույժ Սերգեյ Մարտիրոսյանի ձեռքում կյանք է:

## ՄԻ ԲԱԺԱԿ ԹԵՑ

Ամբողջ օրը Սարահարթում էի՝

Հիմա հյուրանոցում եմ: Պատուհանից դուրս եմ նայում: Սպիտակը իրոք սպիտակել է: Տները՝ սպիտակ վրաններ, ճամփաները՝ սպիտակ ժապավեններ, շուրջպար բռնած լեռները՝ սպիտակ բերդեր, ուսած ամպերի շվող երամներ: Ձմեռ է: Սպիտակում տարին ճերմակել է: Ցուրտ է...

Սեղանիս վրա՝ մի բաժակ թեյ: Երկու կտոր շաքար անշշուկ պայթում են, բեկոր-բեկոր դառնում, բյուրեղանում, անէանում ու բաժակի պատերին ու հատակին գծագրում մի պատկեր՝ նման սարահարթի մի աղջկա: Հետաքրքիր է ինչո՞ւ է հալվող շաքարը պատկեր գծագրում՝ պարզ, շոշափելի: Մտածել է տալիս...

Լսի՛ր, Ֆենյա, երբևէ քո մտքով անցե՞լ է, որ մի օր, ինչոր տեղ, մեկը քո պատկերը կտեսնի թեյի բաժակի մեջ: Հենց

այդպես, գոլորշիով պարտրված թեյի բաժակի մեջ...

Չի՛ անցել:

Իսկ ես տեսնում եմ: Նայում եմ բաժակի մեջ ու տեսնում: Ժպտում ես այնպես թմոթխած, ինչպես երկու ժամ առաջ, երբ դեմ-դիմաց նստած էինք: Նույն՝ երազով շաղված աչքերը: Այտերիդ թափված նույն՝ անհնազանդ մազերը: Բոլորը բաժակի հատակում:

Պատուհանից այն կողմ քամի է:

Սեղանի վրա մի բաժակ թեյ՝ տաք, ջերմացնող:

Շաքարը հալվում է, դառնում տաք քաղցրություն, նկարում մի պատկեր՝ նման սարահարթցի մի աղջկա:

Նայում եմ, մտածում:

Լսի՛ր, Ֆենյա, երբ դու փոքր ես եղել, երբ ձեր գյուղի մոտակայքով անցնող Չիչխան գետակը աշխարհի ամենամեծ գետն է երևացել քո աչքին, դու մտածե՞լ ես ճակնդեղագործուհի դառնալու մասին:

Չե՛ս մտածել:

Զրույցի ժամանակ այդ հարցը շտվեցի քեզ. ավելորդ կլինեիր: Գիտեմ, չես մտածել: Ճիշտ չեն ասում, թե՛ Պողոսը մանկուց էր երազում այգեգործ դառնալ, այսինչը՝ ծխախոտագործուհի, այսինչը՝ կթվորուհի... Մանկական ու պատանեկան տարիների երազանքները արևից վառ են լինում, աստղերի շափ հեռաձիգ:

Է՛, անսկիզբ ու անվերջ են եղել քո երազները: Եվ չես մտածել դաշտի ճանապարհը՝ քո կյանքի ճամփան դարձնելու մասին:

Պարզապես հետևյալը. ընտանիքը մեծ է եղել, աշխատողը մեկ՝ քո հայրը: Օգնել էր պետք: Եվ դու բռնել ես դաշտի ճանապարհը:

Վախվխելով է ձեռքդ դիպել հողին: Առաջին հպումից հողի վրա «Ա» տառի տեսքով մի հետք է մնացել՝ կյանքի այբուբենի առաջին տառը:

Մայրը համբուրում է իր մանկան թաթը, երբ նա խզմըզում է, փորձում է նկարել Մաշտոցի «Ա»-ն: Մոր համբուրից անվարժ ձեռքը թափ է առնում և խզմզանքն ու նկարը դառնում է գիր:

Հողը մայր է: Զորավոր է հողի համբույրը: Հողի հետ



հավելուց մատներին գողը անցավ, որտեղից-որտեղ (դոս էլ չիմացար) բազուկներից մեջ ուժ զգացիր, գաղձար ինքնավստահ: Կյանքի այբուբենը մնաց թո դեմքի կարմիր շղարշի տակ և՛ մատիդ կպած մի պտղունց հողի: Թերթվեցին, իրար թիկնեցին օրերը: Դու կարգաջիր կյանքի մի դրվագ և դու մի պատմություն գրեցիր՝ կյանքին մեկնած ձևերիդ մասին, երեքամյա պարզ մի պատմություն:

Եվ... Երկու ժամ առաջ էր՝ Դու բացեցիր գրասենյակի դուռը, ամոթխած կանգնեցիր շեմին: «Սա է Ֆենյա Հարությունյանը, մեր լավագույն ճակնդեղագործներից մեկը», ներկայացրին քեզ, և նստեցինք դեմ-դիմաց:

— Ուզում եմ Ձեր մասին գրել...

Դու նայեցիր ինձ խուսափուկ, հեռո.

— Ի՞նչ գրեք... Ես ո՞վ եմ,— ասացիր՝ հայացքդ պատուհանից դուրս,— ես... գպրոցն էլ չեմ ավարտել...

Հիմա...

Հյուրանոց: Նայում եմ պատուհանից դուրս: Յուրտ է՝ Մրսած քամին ծեծում է պատուհանը. ճեղք է փնտրում ներս գալու համար:

Սեղանի վրա՝ մի բաժակ թեյ, տաք, զուլալ: Շաքարը լուծվել է, նկարել է մի պատկեր՝ նման սարահարթի մի աղջկա...

Նայում եմ: Մտածել է տալիս:

Դու ինչո՞ւ ասացիր. «Ի՞նչ գրեք... Ես ո՞վ եմ...»: Դու ինչո՞ւ չես ճանաչում քեզ, չե՞ս կարծում, որ աշխարհի ամենալավ մարդկանցից մեկը դու ես: Հենց այդպես՝ ամենալավ մարդկանցից մեկը: Ազնիվ խոսք: Ասեմ հիմա:

Լսիր, Ֆենյա, երբևէ պատահե՞լ ես մեկին, որը կյանքին մի բաժակ թեյի քաղցրություն չի տալիս: Գուցե և հանդիպած չինես. քիչ են այդպիսիները: Տարվա մեծ մասը դու քայլում ես սեւապատ ճամփաներով՝ կողք-կողքի այնպիսի մարդկանց հետ, որոնց քայլերը ոչ թե ծանրություն, այլ թեթևություն են բերում հողին և այդ ոտնահետքերի տեղ ոչ թե խամրում, այլ պայծառանում են ծիլերը...

Թեյի բաժակի կողքին է նաև թո նկարը... Մակագրություն. «Ֆենյա Հարությունյան, առաջին բրիգադի, ճակնդե-



ղագործական առաջին օղակի անդամ, Օղակի տված այս  
տարվա բերքի 250 ցենտները նրա ուժերով է: Ուզում եմ  
հաշվարկ կատարել. 250 ցենտներ շաքարի ճակնդեղից քանի՞  
բաժակ թեյ փոսացվի...

Հաշվե՞մ: Գժվար կլինի: Եռչնիսկ հաշվելը դժվար կլինի:  
Լսիր, Ֆենյա, էլ ինչո՞ւ դու առացիր. «Մ՞նչ գրես... ես  
ո՞վ եմ... ես գարոցն էլ չեմ սովորեցել»... Գարոցը կավարտես,  
դա անփրփարածելի չէ: Թնչո՞ւ դու այն կարծիքին չես, որ  
տիեզերք թռչելուց առաջ մարդուն պետք է եղել... մի բա-  
ժակ թեյ:

Բամին ծեծում է պատուհանս... ճեղք է փնտրում: Թող  
ներս մտնի, չեմ մրսի, սեղանին թեյ կա՛ տաք, ջերմացնող:  
Բաժակի հատակում ասես սարահարթի ամոթխած  
աղջկա մատներն են հալվում...

### ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Առաջին անգամ հայոց հողն է ժլարձակել ծիրանի ծառը:  
Ե՞րբ: Ինչպե՞ս: Ո՞վ գիտե: Գալարուն գետից ա՞յս կողմ, ա՞յն  
կողմ, ո՞ր մասում, հայոց որտեղի՞ բուռ հողն է առաջինը  
պտղել ծիրանենին: Գտնես համբուրես: Ո՞վ է առաջինն ան-  
վանակոչել «ծիրանի ծառ»: Լա՞վ է կնքել:

Ծիրանի ծառը հայկական է: Սփռվել է աշխարհով մեկ:  
Մեծապես՝ փոթորիկների ու հեղեղների միջոցով: Է՛, չգի-  
տեմ՝ քանի-քանի անգամ այնպիսի փոթորիկ է եղել, որ հա-  
յոց հողից արմատախիլ է ւերել հասունացած պտուղներով  
ծիրանենին, ջարդուփշուր արել, քշել-կորցրել ու ճյուղատա-  
րած պտղատու մի ծառից մեկ-երկու մաշված, բզկաված կո-  
րիզ է ազատվել՝ ընկել մի հողի վրա, չգիտես աշխարհի որ  
մասում, և համառել, ծիլ տվել...

Ծիրանի ծառը հայկական է, համառ, դիմացկուն:

Սփռվել է աշխարհով մեկ:

Եվ այնքա՞ն հման են հայն ու ծիրանի ծառը:



— Քանի՞ տարեկան ես, քեռի Պողոս:

— Փաշիտրտով 67 տարեկան եմ, շեմ գիդեր՝ շի՞շտ է: Հա՛... Որտեղի՞ց պիտի իմանաս, քեռի Պողոս, Տաճկահայաստանից քշված ամեն մի հայ աշխարհի ոլոր-մուր ճամփեքի վրա կորցրել է օրերի հաշիվը, կորցրել տարիքը:

...Ջորախ: Հազար օջախ էր: Հազարն էլ հայի: Ամեն տան կողքով կանաչ ափ առու էր վազում, ամեն տան դիմաց՝ ծիրանի այգի՝ ամեն ապրիլին ծաղկում էր: Պողոսենց տան դիմացն էլ շրշում էին ծիրանենիները, մեկը՝ Պողոսինն էր, ջահել էր, երկինք ձգվող, հպարտ:

— Իմ ծննդյան մեկել օրը հայրս էր դնգել: Պողոսին հեղթող մեծնա, ըսեր էր հայրս:

Ու մեծացել էր, արդեն հինգ ապրիլի՝ ծաղկել: Իսկ այդ ապրիլին... Սանձարձակ մի բորան ծիրանենու ծաղիկների ճերմակ պսակաթերթերը պոկեց-տարավ: Ծիրանենիները ճյուղակոտոր եղան, շտվեցին պտուղ...

Տուն ու այգի թողած գաղթեցին:

— Ադ ադեն մարս մահացած էր: Լավ էր, որ մահացած էր... շտեսավ...

Բզկտվեցին, ճամփեքի վրա ցաք ու ցրիվ եղան:

— Հիմա էլ շեմ գիդեր, հայրս մահացա՞վ, ի՞նչ եղավ: Երկու եղբայր ուներ, կորցրեց: Մնաց մենակ, անտուն, շրջմուլիկ մի պատանի:

— Ինը թագավորի հողի վրա տուն շինած եմ:

Օտար ափերում, ինը տերովության հողում հիմք է փորել, տուն է կանգնեցրել քեռի Պողոսը: Բայց այդ տներից ոչ մեկը օջախ չի դարձել... Հենց նոր կառուցած շինության հիմքը խարխավել է՝ փուլ եկել: Դեգերող հայը համառել է, կառուցել նորը:

— Ծիրանի ծառ շատ կսիրեի:

Ու կորիզ ճարեց, գցեց հողում: Մլեց: Ծիրանենին դիմացկուն է, ամեն հողում, աշխարհի բոլոր ծայրերում աճում է:

— Ջորախում, 4—5-րդ տարում ծիրանը գձաղգեր: Ագիկա կուշանար, շէր ձաղգի:

Իր ծննդավայրից հեռու, ծիրանենին շփոթում է ծաղկման

ժամկետը, չի տալիս- այնպիսի ձերմակ ծաղկաբույլ ինչպես այն հողում, ուր պտղել է:

— Քամին կկպնեն թե չէ՝ բնեն ու արմատներեն սկսած կդողար:

Օտար հողում ծիրանենին չի խորացնում արմատները և մթնշաղի հովից գանգրահեր գլուխը շարժում է մոլոր:

— Հա կնայեի ծառին, խանը կգար, կանցներ, կնայեր՝ քթի տակ կժպտար:

Եվ կհասկանար Պողոսը այդ ժպիտի իմաստը. «էդ քո ծառը որ բերք տվեց, կկիսենք»: Բա, էլ ինչո՞ւ է ուրախանում իր ծիրանի ծառով: Կամ չէր լինի, եթե...

«Միրանի ծառ, բար մի տա,

Ճրղբներդ իրար մի տա...»:

Պտուղ տվեց ծառը՝ մանր, անգույն: Իր հայրենիքից հեռու հաճախ է ծիրանենին տալիս աղավաղված պտուղ...

— Մանչս ներս կվազեր ու արարերեն կըսեր. «Մարե, հաց կուզեմ»: Կըսեի. «Դղաս, հայերեն խոսե»: Կխոստանար, հետո դուրս կգար արաբ երեխեքի հետ նորեն խաղ անելու ու կմոռնար ըսածս: Իրիկան փեշը կլցներ ծառից թափված ծիրանը, ներս կգար: Կնայեի, հաղիվ կճանչնայի, որ մանչիս փեշի պտուղը ձիրան էր. էնքա՞ն մանր էր, էնքա՞ն ծրամըռված...

«Մանր», «ծոմոված» պտուղ... Դրա համար ինքը՝ ծիրանենին չէ մեղավոր, այլ այն փոթորիկը, որն իրեն հասցրեց այնտեղ, այն օտար ափը՝ որի հողի հետ իր արմատները սիրով չեն գրկվում: Միրանենին հայոց հողն է ծլարձակել և իր հայրենիքում է միայն արևաներկ պտուղներ տալիս: Ու ինչքան նման են իրար հայն ու ծիրանի ծառը:

— 46 թվականին հայրենիք եկած եմ: Եղբայրներիս հոս գտա: Ես Բեյրութեն եկած էի, անոնք, ամեն մեկը՝ մի երկրեն:

Հայրենիք ունեցան, տուն: 31 թափառուն տարի էր անցել, և եղբայրները իրար դիմաց նստած էին անձանոթների պես, իրար հարցուփորձ էին անում. «Տաճկահայաստանե՞ն գաղթած ես», «Հայրենիք ո՞ր երկրեն եկար», «Հորդ անունն ի՞նչ է», «Ֆամի՞լդ ինչ է...»: Տարբեր երկրների հող ու արևի կնիքը կար ամեն մեկի դեմքին. օտար էին իրար: Նրանցից

փոքրը իր ազգածուկն էր շէր հիշում, շատ փոքր է եղել, երբ գաղթել են: Հիշում էր միայն, իրենց գյուղի կողքին մի խոր ձոր կար՝ ինքը գնում էր ծաղիկ քաղելու, իսկ մեծ եղբայրը վախենում էր, թե քարափից վայր կընկնի ու գալիս քաշքըշկուով տուն էր տանում իրեն: Եվ հիշում է. իրենց տան դիմաց ծիրանի այգի կար: Գարնանը ծառերի տակից ծաղիկներն սպիտակ թերթերն էր հավաքում մեկիկ-մեկիկ, ամուր սեղմում ավի մեջ, որ չկորցնի, ամուսնը կարմրավուն ծիրան էր հավաքում, լցնում փնջը:

— Աղիկա ես կհիշեմ, ես ազոնք կհիշեմ, գու իմ ախպերիկն ես...

Այն միաժամանակ այդպես էր ասում. «ախպերիկ», հիշել էր, աչքերը մշուշվել էին, և շաղված հայացքը կանգ էր առել դիմացը նստած մարդու ալճխառն մազերին... ժամանակից շուտ գույճը թոցրած մազերին:

— Դու մեր եղբայրն ես... — ու գրկախառնվել էին:

Հազվագյուտ բախտ: Իրար համար կորած էին, ամեն մեկը կարծում էր, թե ինքը մենակ է աշխարհում՝ անտուն ու անհող, առանց ծիրանի այգու... Բայց հանդիպեցին:

— Դղաս՝ Մինասը, հայրենի հողին վրա բոյ քաշած է: Ելգեգործ օղակավար կաշխատի: Երեք թուփիկ ունեմ: Նորեն պիտի ունենամ:



Եի քանի օր առաջ Ջերժինսկու անվան սովխոզի գրասենյակում էի:

— Ես ուզում եմ մի պտղաբույծի մասին ակնարկ գրել, ո՞ւմը կներկայացնեք, — հարցրեցի:

— Գրեք հայրենադարձ Պողոս Մկրտչյանի մասին: Թողակառու է, բայց ծիրանի ծառերից ձեռք չի քաշում: Ընդունասած, մեզ համար էլ է դժվար մտնել ծիրանի այգին ու այնտեղ շտեսնել քեռի Պողոսին:

Եիրանանոցում ծանոթացանք, նայեցինք իրար: Քեռի Պողոսի աչքերում իմաստուն թախիժ կար՝ ծնված մոլոր ճամփեքի վրա, որը հայրենիք գալուց հետո 18 տարի է՝ սրբում է, ջնջում, չի ջնջվում: (Եվ հայրենադարձ բոլոր հայերի աչքերն են իրար նման, շատ նման):

Նստեցինք հաստաբուն, շնկշնկացող ծիրանենու տակ՝  
 Քեռի Պողոսը ծիրանենու բնի պես ճաքճքված արեքը շփեց  
 իրար՝ թափ ավեց խոնավ հողն ու հանեց գլխարկը: Զգիտես  
 ինչու, ինձ թվաց, թե հայացքս ոչ թե նրա ապիտակ մազե-  
 րին, այլ հին մի ծիրանենու ծաղկած սաղարթին է դիպել...  
 Եվ մենք զրուցեցինք:

### ԽՈՍՐՈՎ ՔԵՌՈՒ ԱՅԳԻՆ

Ամառնամուտ է: Ճյուղերը պատահանին քսող թթենին  
 շոգից սսկվել է: Թրմփ-թրմփ՝ երկու պառու իրար հանից  
 ընկան ուղիղ խոսքով քեռու ոտքերի մոտ: Թամամ մայրիկը  
 վերցրեց, դրեց պատին. «Թող շիր դառնա»...

— Մեկ է, հայրիկ, քեղ գահընկեց կանեմ,— ու ծիծա-  
 ղում է Վոլոդյան:

Իսկ գիտե՞ք ինչպես է ծիծաղում նա. բարձր, զրնգուն,  
 սպիտակաթև աղավնու ծափի է նման նրա ծիծաղը:

Կնճիռները ձուլվում են խոսքով քեռու ճակատին.

— Ի՞նչ անգուր ես ծիծաղում:

Անդո՞ւր... է՛... ինչպե՞ս ասել, թե կանաչների մեջ թաք-  
 նըված աղբյուրի քշքշոցը ծարավ մաքուր համար ինչ է...  
 Վոլոդյայի ծիծաղը միշտ էլ այգայես է արձագանքել քեռի  
 խոսքովի սրտում: Այգուց տուն է դարձել՝ ոտքերը փոշոտ,  
 դեմքը իրիկնապահի արևմուտքի պես կարմրած և դեռ տուն  
 չհասած ունկնդրել է Վոլոդյայի ծիծաղը: «Ես շծիծաղեցի,  
 սիրտ չեղավ, մանկություն չանեցա... Թող երեխան ծիծաղի»:  
 Հետո...

Հետո մի օր էլ քեռի խոսքով Վոլոդյայից ավելի բարձր  
 ծիծաղեց, հոգու խորքում ծիծաղեց.

— Ընդունվեցիր, է՛լի...

— Հա՛, հայրիկ, ընդունվեցի. ինչո՞ւ ես ախրքան հարց-  
 նում, չե՞ս հավատում:

...11տարի առաջ Նորապատում ի՞նչ արտակարգ դեպք  
 էր պատահել, Գևորգենց խոսքովի աղան քննություններ էր  
 տվել, ընդունվել Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը:  
 Պրծավ, գնաց: Կարևոր իրադարձությո՞ւն էր: Անաստասի

տղան չէ՞ր ընդունվել: Մի ուրիշը էգուց չի՞ ընգունվելու: Իսկ քեռի Խոսրովի տո՞ւնը, քեռի Խոսրովի հոգո՞ւմ... Ախր պապերը առանց «Ա»-ն ու «Բ»-ն սովորելու գնացին: Ինքը կյանքի կեսին հաղիվ ճանաչեց տառերը: «Ընդունվեցիր, էլի՛...»: Ու քեռի Խոսրովի սիրտը ուրախությունից տրաքում էր:

...Բայց տես... Ավարտել է ինստիտուտը, կանգնել է հոր դիմաց. «Մեկ է, հայրիկ, քեզ գահընկեց կանեմ»:— Կատակում, թե լուրջ է ասում:

Ախր ի՞նչ է ուզում դիպլոմավոր որդին, էն երկու հեկտար այգու բրիգադիրությո՞ւնը: Բա որ էդպես էր՝ ինչո՞ւ սովորեց... Ուրեմն իր իմացած մի քանի տառն ու վոլոգչյայի դիպլոմը... (գիտնական ագրոնոմ) հավասար են:



Հաջորդ առավոտ քեռի Խոսրովը «գահընկեց» եղավ: Հաջորդ առավոտ խուզարկու ուղեկցող հայացքների տակ վոլոգչյան շրջում էր այգում: Առաջին անգամ շէր, ծանոթ էր այգին: Է՛, դեռ կարճ շալվար ունեւ հագին, երբ իր «զորքով» հարձակում էր գործում վազերի վրա: Քանի՛ այգեկութ էր անցել, քանի՛ տերևաթափ, բայց իր մանկական ու պատանեկան տարիների հուշերը պահել էին վազերը: Պահել՝ կնճռոտված բների, հողում խորացած արմատների մեջ: Պահել ու պատմում էին... Ինչպե՞ս էր, որ ամբողջ այգին ոտնատակ էր տալիս, թմբից-թումբ, վաղից-վազ էր անցնում, բայց մի հարմար ողկույզ չէր գտնում, որ նվիրի նրան...

— Հը՛, ընկեր ագրոնոմ-բրիգադիր, ո՞նց է այգին, հիվանդություն, բան չկա՞:

Վոլոգչյան սթափվում է, քեռի վահանը որտեղի՞ց հայտնըվեց: Եվ ինչո՞ւ է այդպես նայում, կարծես անծանոթ լինենք, չես ասի, թե մեր հարևանն է: Ինչո՞ւ է այդպես նայում...

— Տես, հա՛, հերդ վատ աշխատող չէր, էս վազերից ամեն մեկին այնպես էր ճանաչում, ոնց որ քեզ: Որ դու մի բան ավել շանես հորիցդ, էլ քու դիպլոմին հավատացող չկա՞:

Գե ման արի, մի լավ նայի՛ր, տե ս ի՞նչ կա, ինչ չկա, անելիքդ որոշիր...

Նայում էր Վոլոդյան արդեն հեռացող քեռի Վահանի հտեկից, նայում ու աչքերի առջև դեռ Վահանի խորհրդավոր ու պահանջկոտ հայացքն էր գամված, ուղեղում՝ արձագանքի պես պատեպատ էին խփվում «հիվանդություն կա՞, չկա՞... անելիքդ որոշիր...»: Իրոք, այգին վարակված չէ՞, ինչպե՞ս չի նայել: Ու նայում է հենց դիմացի վաղին, ուշագիր: Ոչ մի հիվանդություն, տերևները՝ կանաչ, անբիծ, «տես հա, հերդ վատ աշխատող չէր»: Շվերից մեկը արևի սիրուց ձգվել-ձգվել էր դեպի կապույտ երկինքն ու, շփտես ինչու, վերջում թեքվել, ծայրը՝ հարցականի պես: Մյուսն էլ, մյուսն էլ... Ամեն վաղի վրա քանի՞ շիվ, քանի՞ հարցական: Առաջ է այդպես եղե՞լ: Բա ինքն ինչպե՞ս չի նկատել:

Եվ առաջին անգամ Վոլոդյան զգաց, որ վազերի վրա... հարցականներ կան՝ նման քեռի Վահանի հայացքին:



Անցյալ տարի: Ամառ: Կեսօր է, բայց ծառ ու կանաչ գուլորշու մեջ պարուրված են: Անցած գիշեր էլի անձրև էր մաղել: Ամպերը հիմա էլ բարդվում էին իրար վրա: Գոնե կարկուտ չինի, թե չէ անձրև կա ու կա: Բայց ասում են Նորապատի կոլտնտեսության Վոլոդյա Գևորգյանի ղեկավարած բրիգադի այգիների վրա... «անձրև» չի եկել: Գնում են տեսնելու:

Երկաթգծ՝ պսպղուն, բանուկ երակի պես պրկված, կապույտ փայլով: Գծի կողքին ուռենիներ, ամեն մեկը իր գեղեցկության վրա վստահ, աղջկա նման վարսերը աչքերին թափած: Ուռենիների կողքին բարդիներ, երես առած պատանիների նման ձգվել-ծիծաղում են: Ծառերի տակ ծնկաչափ կանաչ՝ հաղար ու մի անուն, բուրում են: Եվ երկաթգծի կանաչ գոտուց այն կողմ Վոլոդյայի բրիգադը:

Վոլոդյայի հետ շրջում ենք: Շարքերում՝ կնճռոտ բներով թևատարած վազերը ճոճվում են ողկույզների ծանրության տակ: Ճիշտ է, «անձրև» չի եկել: Դրանց կողքին նաև մեկերկու նվազ, առաջին ողկույզներով երիտասարդ վազեր,

նաև՝ մի երկու շվով, հաշվվող տերևներով գարնանը տրե-  
կած մատերու նայում ենք, անցնում շարքից-շարք:

— Փողովուրդն առում է շկա շարիք առանց քարիքի»  
Այս տարվա եղանակը արտակարգ նպատակով էր նոր տրե-  
կարկների համար: Գարնանը լրացման կարգով տնկված բո-  
լոր մատերը կանաչել են: Այգին պետք է լիարժեք լինի, լի-  
արժեք:

— Մարդը լիարժեք լինի, բալամ, մարգը,— քեռի Վա-  
հանը ընդհատում է նրան,— մարդը որ կիսատ-պատ մարդ  
չեղավ, այգին էլ լիարժեք կդարձնի, տունն էլ, դուրսն էլ—  
Տարեց այգեգործը ուղղում է մեջքը, պատրաստվում դրու-  
ցելու, երևի Վոլոդյայի մասին: Բրիգադավարը հասկանում  
է այդ:

Քեռի Վահանը համոզվել է, որ մի քանի տարի առաջ  
իզուր է կասկածանքով նայել «ընկեր ագրոնոմ-բրիգադիբին»:  
Բայց, դե, պետք է նայեր. վաղուց կանգնած շենքի մամու-  
պատ քիվը իր բարձրութունից է նայում հենց կողքին կա-  
ռուցվող շենքի անկյունաքարին...

Խոսքով քեռին համոզվել է արդեն, որ իր իմացած «եր-  
կու տառի» և որդու դիպլոմի միջև «սարեր» կան, շնայած  
Վոլոդյան իրեն «գահընկեց» արեց ու բրիգադավար դար-  
ձավ:

Շատ բան է արդեն ապացուցել նա, շա՛տ: Անցյալ տարի  
քեռի Խոսքովը շուտ-շուտ էր գալիս Վոլոդյայի բրիգադի  
այգիները: Իսկ շորս տարի առաջ, երբ որդին նոր էր փո-  
խարինել իրեն, բուսրովին չէր գալիս: Հիմա, երբ Վոլոդյան  
հարցնում է «Ինչո՞ւ», հայրը ժպտում է: Անցած աշնանը  
այգեկութի առաջին օրը քեռի Խոսքովն էլ էր բրիգադում:  
Ման եկավ այգում, նայեց երկար, հին այգեգործի հմուտ-  
թյամբ մոտավոր ճշտությամբ որոշեց՝ «հեկտարից 105—110  
ցենտներ կստացվի», հետո նրա ճակատին հավաքված կրն-  
ճիռները ետ գնացին ու խոստովանեց. «Այգիս լավ է բերք  
տվել, գոհ եմ»: Հասկացան մարդիկ. համատարած կանաչ ու  
ողկույզներով ծանրաբեռնված այգու մեջ Խոսքով քեռու այ-  
գին ու խազողի առաջին վազը Վոլոդյան էր:





Գիշեր է: Ճանապարհը երիզող թթենիների մեջ թաքնված էլեկտրալամպերը լույս են ցուում, խոտրով քեռին ու Վոլոդյան գյուղամիջից տուն են դառնում:

— Քու տարիքի չափ աշխատանքի փորձ ունեմ, այ բալամ, ես որ ասում եմ սխալ ես, ընդունիր, էլի:

Վոլոդյան ծիծաղում է: Ճանապարհի վրա բացված պատուհանից՝ ավելի բարձր ծիծաղ, մանկան:

— Ըհը, տղեդ է ծիծաղում, կեսգիշեր է, չի էլ քնել: Քու կտորն է: Դեռ մի բան էլ քեզնից բարձր է կշկշում... Շատ լավ է, սպասիր, հլա ոնց որ դու իմ, էնպես էլ Գագիկդ «փորձանք» կդառնա գլխիդ: Սպասիր...

Քեռի խոսքովը սահմանափակում է «վեճն» ու տուն են մտնում:

Գիշերը Գագիկի ձեռքի շաքարի նման հալվում էր:

## ԻՐ ՃԱՄՓԱՆ ԳՏԱՍ ԾԱՐԴԸ

Համոզում եմ, և փոքրիկ Կարինեն «դավաճանում» է մորը, գրքերի տակից հանում է մի տետր, տալիս ինձ: Տետրը խունացած է, կարծես դեղին մի շղարշով պատել են նրա բոլոր թերթերը: Այդպիսի գունավոր շղարշ է բացվում այսօրվա ու երեկվա միջև:

Տետրի կազմին՝ «Բանաստեղծությունների տետր: Սահականուշ Խանգելոյան» գրված է գեղեցիկ, հնարավորին չափ՝ տպագիր, որպեսզի տետրը... գիրք երևա (տարիք է, էլի):

Քերթում եմ: Ոտանավորներ՝ ամեն ինչի մասին: Իսկ մեկը կիսատ է մնացել, շորրորդ տողից բանաստեղծը քննադատ է դարձել:

— Կարինե, լսիր, մայրիկդ ինչ է գրել,— ուզում եմ ավելի բարեկամանալ: Նա ժպտալով մոտենում է:

Շիկացած ճամփան ու ծարավ առուն  
 Ամառ գրկել են լալիան ուռնուն,  
 Իսկ փաշեթաթախ ու հագնած ուտիճ  
 Լուռ խոնարհվել է...

«Ուռննու» հանգով է գնում: Ուռննու մասին գուցե միայն այդ հանգով գրելու Իհարկե: Բա էլ ի՞նչ (ծիծաղ):

Կարինեն ուրախ կշկշում է, երևի նրա համար, որ մոր գրած «ծիծաղ» բառը լսեց:

Սահականուշը ներս է մտնում:

— Ժամանակին կարգին բանաստեղծություններ եք գրելու— Նայում է աղջկան, մատը թափ տալիս, կարմրում է: Աշակերտուհու պես կարմրել գիտե:

— Այս ոտանավորը ինչո՞ւ եք կիսատ թողել:

Նայում է, լռում է մի քիչ:

— Դրա հետ հետաքրքիր մի պատմություն է կապված: Քսանմեկ տարի առաջվա պատմություն: Պատկերացնո՞ւմ եք: Երբ թերթում եմ տեսրը, որին ես օրագիր կանվանեի, ամենաշատ հուշ այդ կիսատ մնացած տողերն են արթնացնում: Այսպես պատահեց...

Տասնվեց սեպտեմբեր առաջ:

Առավոտը զրնգում է երեխաների աղմուկով, ծիծաղով:

Աշոտիկը թեքվել է պայուսակի ծանրության տակ ու փողոցով անցնող ոչ մեկի հայացքը բաց չի թողնում, նայում է անցնողին, ծիծաղուն հայացքով ցույց տալիս պայուսակը:

Տասնվեց սեպտեմբեր առաջ, Առավոտ, Արև:

Ճանապարհին նաև Սահականուշը: Ճանապարհը նոր է նրա համար: Գյուղն էլ՝ Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյանը: Եվ զրնգացող առավոտն է նոր նրա համար: Այնպես նոր, ինչպես Աշոտիկի համար, որ պայուսակի ծանրության տակ թեքվել է ու ոչ մեկի հայացքը բաց չի թողնում: Սահականուշը նայում է նրան, ժպտում. «Առաջին դասարանցի է... Ես էլ եմ առաջին դասարանցի: Սա պետք է «Ա»-ն սովորի, ես պետք է սովորեցնեմ «Ա»-ն: Երկուսս էլ առաջին դասարանցի ենք: Սա՝ գպրոցի, ես՝ կյանքի»:

Ժպտում է նաև Աշոտիկը, պայուսակը փոխադրում մյուս ձեռքը:

«Ինձանից ու այս սավառնող երեխայից ո՞վ ավելի ընդունակ, ավելի լավ աշակերտ կլինի...»:

Դպրոցի բակով զարնան առավոտի մի հով էր անցել ու հազար գույնի ծաղիկներ խառնել իրար՝ սնդիկ, բլբլացող ծաղիկներ:

— Էրեխեք, էս ո՞վ է: Նոր ուսուցի՞չը:

— Չէ՛, ուսուցիչ չէ:

Սահականուշի քայլերը խառնվեցին իրար: «Միտումով պատասխա՞ն»: Ո՞վ էր, տեսնես: Դաս կտա՞մ դրան: Ասենք թե... Բայց մի օր այդ խռովկան ձայնով երեխան ուսուցչի կոչում կտա՞ ինձ, թե՞... Ախր, Եգորյանին այդպես էլ ուսուցիչ չհաշվեցին: Չնայած հինգ տարի դասավանդեց, և ես հինգ տարի ընկեր Եգորյան ասացի... Իրոք, հետաքրքիր է. մանկավարժի դիպլոմ կարող ես ունենալ, աշխատանքի ուղեգիր կարող ես ստանալ, բայց մի երեխայի կողմից կարող են մերժվել դրանք: Իսկ...

— Բարև ձեզ:

— Բարի գալուստ:

Սահականուշը շփոթվեց: Այտերի կարմրին կարմիր ավելացավ:

...Տասնվեց սեպտեմբերի մեկ է հալվել սեպտեմբերյան առաջին զանգի ղողանջներում:

Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան գյուղի, Հոկտեմբերյան քաղաքի բանկրիտ դպրոցի պաներն ու բազմաթիվ շրջանավարտներ Սահականուշ Խանգելոյանին վաղուց են շնորհել ՌԻՍՈՒՑՁԻ կոչումը: Նրանցից ամեն մեկը իր ստորագրութունն է դրել՝ մանկավարժի նրա գիպլոմն ստորագրած, նրա աշխատանքի ուղեգիրը ստորագրած մարդկանք ստորագրութունների կողքին: Ստորագրել են ու հաստատել գիպլոմի ու կյանքի ուղեգրի իսկութունը:

Հիմա հերթը Հոկտեմբերյան քաղաքի №17 գիշերօթիկ դպրոցի սաներինն է...

Մի տերև, ծառին համառորեն մինչև երեկ կառչած մի տերև ղողղողալով վար իջավ ու ծառի բնի մոտ տատանվեց՝ «գնա՞լ, մնա՞լ...»: Հանգարտ քայլող կինը տեսավ, խղճացե՛ծ տղվեց այտին քսվող մազափունջը, ուր նաև անցած օրերի ճերմակ հետքերը կային, և հիշեց, որ տերևի ընկնելուց առաջ, ճյուղին՝ տերևակոթի մոտ բողբոջ է կազմակերպվել, ուռչում է... Ժպտաց ու շմտածեց ծառի տակ տատանվող տերևի մասին:

Գիշերօթիկի բակում ուրախ աղմուկ կար: Նա ավելի

գանդաղեցրեց քայլերը: «Քող աղմկե՛՛ն, ավելի բարձր... Ամեն ինչից շատ սրանց ուրախ աղմուկ է պետք... Հարկավոր է խնդրել մեք բոլոր ուսուցիչներին, որ այդպիսի դեպքում գիտագություն շանեն երեխաներին...»:

— Երեխեք, սուա, ընկեք Խանգելդյանը: «Ափսոս»:

— Բարև ձեզ:

Բառերն ասաց հատ-հատ, հանդարտ: Այդպես է միշտ: Բառերում՝ սեր, համակրանք, խոհ... շգիտես ինչ: Իսկ դրա համար շի ստիպում իրեն. այդպիս է միշտ: Ակնոցների տակ՝ սև աչքերում բառերի տատկերն էլ կարելի է տեսնել, լուսավոր պատկեր, և երեխաներից ամեն մեկին թվում էր, թե այդ բարևը իր համար էր:

Նրանց՝ գիշերօթիկի երեխաներին, այդպիսի բարև պետք է:

Վախվորուկ աչքերով Անիկին դասերից հետո մազերը մեղմորեն խառնող ձևոք շկա: Հեռու են դրանք: Եվ Խանգելգյանի ձեռքն է ամեն օր դիպչում աղջկա մազերին: Այդ պահին այդ ձեռքը Անիկին, միայն Անիկին է պատկանում: Այդ պահին ուսուցչուհու զարկերակը ափերի մեջ կարող ես հաշվել: Անհանգիստ զարկեր՝ ափերի մեջ:

Նրանց՝ գիշերօթիկի երեխաներին այդպիսի սիրտ պետք է: Ակնոցների տակ շուտ-շուտ թացվող այդպիսի աչքեր պետք են: Երվանդը վատ է գրել: «Երկու»: Նշանակում է, նայում երկար ու տետրերի կապոցը մի կողմ հրում: «Ո՞ւմն է «երկուսը», Երվանդի՞նը, ի՞մը...»:

Հայրը լքել է ընտանիքը, հեռացել... Մոռացել է, որ աշխարհում իր կամքով ծնված, տանջվող մարդ կա... Կուզենար այս «երկուսը» կարմիր թանաքով նրա ճակատին դաշել... Իսկ Երվանդի գնահատականն, այնուամենայնիվ, պետք է փոխվի:

Եվ այդ պահին նրա մազերում եղած անցած օրերի ճերմակ հետքերը, կարճեա, շատանում են...

Հոգ չէ, թող շատանան: Տերևաթափից առաջ ամեն վաղը ընկնող դեղին տերևի կոթի մոտ գալիք տարվա բողբոջը կազմակերպված է արդեն...

Առաջնու է: Ծրկինքը պարզ է, արև կա: Նալբանդյանի մեքենատրակտորային պարկում կողք-կողքի կանգնած տրակտորները սառն են. արևն անուծ է, տաքացնող ձեռքերն ի՞նչ եղան: Հողերը սպասում են ցելվորի: Իսկ նա՝ զինվոր... 41 թվականն է: Աշխարհի լեռներին՝ սև ամպ ծընկած աշուն:

...Միասին քայլում են Շուշիկը, Գոհարը, էմման, Նազանին, Զվարթը, էլի կան: Բայց լուռ են: Ափսոս: Տրակտորները սառը շինեին, լո՞ւռ կքայլեին նրանք, հնչուն ծիծաղով չէի՞ն տաքացնի աշնան արևը: Ու ծիծաղ չկա: Բայց տրորում են ճանապարհը: Բաճկոններ են հագել, ռազմաճակատ մեկնած մարդկանց թողած ծանր կոշիկները, որ... ուժ ունենան ու տաքացնեն տրակտորները...

...Հանդարտ շարժվում է տրակտորը, ակոսներ է բացում՝ մեկ, երկու, երեք... բայց խորը չեն, չեն թիկնում իրար, խոփերը դուրս են մզվում հողից: Դե, այսպես վար չեն անի: Կանգնում է տրակտորը: Շուշիկն իջնում է խցիկից, կանգնում 13-ամյա իբ օգնականի՝ Սամսոնի կողքին: Նայում են իրար, հասկանում. «Սաղը է»: Աղջիկը մոտենում է գոթանի վարի խորությունը կանոնավորող դեկին: Դարձնում է մի երկու պտույտ, հետո դեկի պտտման ուղղությամբ թեքում է իրանն ու գլուխը, բայց զեկանիվը տեղից չի շարժվում: Դժվար է, ուժ է պետք, ուժ: Սամսոնը մոտենում է նրան.

— Ես...

Եվ շարունակվեցին, ձգվեցին ակոսները, ակոսները որպես սահմանագիծ: Հենց այդպես, իրար վրա շուռ եկած ակոսները տակով արին Սամսոնի կիսատ թողած մանկական խաղերը: Ոչինչ, գյուղի փողոցներում իրենից փոքրերը թող խաղան: Ինքը...

Նրա բարալիկ մատի վրա մի բարալիկ մուր երևաց: Մո՞լոր: Երեկոյան ինչքան ուզում է թող լվացվի, մեկ է՝ դուրս չի գա: Բա ինչ, հա՞ լվացվիր ու սրբվիր՝ ճակատիդ հայտնված առաջին գիծը կշնջվի՞, չի՞ երկարի, չի՞ խորանա: Եվ Սամսոնի մատին կպածը մուր չէր՝ կլանքի կնիքն էր: Եվ արտում բաց-

ված առաջին սաղրիկ ակոսը շէր ակոս, այլ՝ ոտնահետքերը՝ հնչուն ծիծաղը տրակտորի հոնդունն դարձրած մի աղջկա ու 13-ամյա մի... տղամարդու: Հետո ինչ, որ դրանք երբուն էին. արևի հենց առաջին շողերի հետ հալվո՞ւմ է ձյունը... Կարևորն այն էր, որ արտերը առանց ցելվորի շմնացին՝ ու հորովելն արտից արտ անցավ:

Երկու տարի, և արդեն վարպետ էր Սամսոնը, 15-ամյա վարպետ ու օգնական ուներ: Նրա տրակտորը վստահ տրորում էր գյուղերի ու դաշտերի ճանապարհները: Ճանապարհը մեկ Արմավիր էր տանում նրան՝ մեկ՝ Գետաշեն, Շենավան, Զանֆիդա... Դաշտերի այնքա՛ն ճամփաներ նախշեց Սամսոնի տրակտորը, այնքա՛ն արտեր լսեցին նրա երգած հորովելն ու կալի երգը...

Արտերի հորովելին ու կալի երգին վերջ չկա...



Փոստատարի ուսապարկի հետ ամեն օր գյուղ էր հասնում և՛ ուրախություն, և՛ սուգ: Փոստատարը ուղմի դաշտից ամեն օր գյուղ հասած սուրհանդակն էր: Աշնան այդ օրը, երբ և՛ արև կար, և՛ արևի շողերում՝ ձմռան կեսին իջած ձյան ասեղնափայլ բյուրեղներ, Նալբանդյանում փոստատարը մեկի դռանը կանգնել էր ու շէր համարձակվում ներս մտնել. քառածալ փոքրիկ թուղթը այրում էր նրա ձեռքը... թուղթը, որ մի մոր պետք է հանձներ...

Աշնան այդ օրը, երբ և՛ արև կար, և՛ արևի շողերում՝ ձմռան կեսին իջած ձյան ասեղնափայլ բյուրեղներ, Ալմո մայրիկի տան շեմին մի ափսե ջարդվեց, և Սամսոնը Անիկի թևից բռնած ներս մտավ: Հարսանիք... Զսպված: Զսպված ուրախություն, Թող այդպես լինի, թող աշնան արևի մեջ լինի և ցրտություն... Բայց որ արև կա, լավ է...

Կյանքի հորովելին ու կալի երգին վերջ չկա...



Այն օրից, որ Սամսոնի բարալիկ մատին մի պատառ մուր կպավ, անցել է 23 տարի: Հիմա Սամսոն Պետրոսյանը Նալբանդյանի կոլտնտեսության տրակտորային բրիգադի

բրիգադիրն է: Ճակատին ու աչքերի շուրջը՝ արտերում իր բացած ակոսների արտացոլումը կա արդեն, աչքերի ամառվա երկնակամարում՝ բացված հանդույցները: Եվ մատների վրա չի կարելի հաշվել թիվը այն մարդկանց, որոնք Սամսոնի օգնությամբ են երկաթյա լուռ ու անփայլ մի «կույտի» շունչ ու փայլ տվել ու տրակտորի աղմուկի մեջ տեսել ռիթմ ու տակտ, աշխատանքի երգ, և թիվն այն մարդկանց, որոնք եղել են Սամսոնի օգնականները, իսկ հետո ամուր կանգնել են ոտքերի վրա, արտերում սեփական ակոս են բացել և ունեցել օգնականներ:

Գարուն է: Դաշտում հորովել երգելու նախօրերը: Նալբանդյանի մեքենատրակտորային պարկում կողք-կողքի կանգնած տրակտորներին և մեխանիզատոր տղաներին բրիգադիրն այնպես հասկանալի ու պարզ է նայում, ինչպես դիրիժորը՝ երաժշտական իրենց գործիքները լարած ու համերգի սկսվելուն սպասող նվագախմբին: Նալբանդյանի կուտնտեսութունում ո՞վ չի սպասում Սամսոնի «խմբի համերգին»: Իսկ ո՞ր նվագախումբը չի ձգտում, որ վերջում միայն ծափերի արժանանա: Ու մեխանիզատոր տղաները լարել են իրենց «գործիքները»:

Իսկ Արմիկի հետ մեկ էլ պետք է խոսել, նրա հետ միասին (անցյալ տարվա իր աշակերտի) մեկ էլ պետք է մոտենալ շարքի վերջին կանգնած տրակտորին՝ Արմիկի տրակտորին:

Արմիկը Շուշիկի հորեղբոր տղան է: Այն ժամանակ, երբ ինքն օգնականն ու աշակերտն էր Շուշիկի, Արմիկը կա՞ր, չկա՞ր... Իսկ Մուրադը կա՞ր, շորրորդ դասարանցի իր Մուրադը, որ այսօրվանից է ուզում մրոտել իր ձեռքերը:

Ջէ, կյանքի ու արտերի հորովելին ու կալի երգին վերջ չկա...

### ԿՅԱՆՔԻՆ ԳԱԶՎԱԾ ՈՏՆԱՇԵՏՔԵՐ

Սովետական Հայաստան՝ 4 տարեկան: Որք ու մենակ պատանիների ժպտացող աչքեր... Նրանցից մեկը՝ Պետիկը:

Պետիկը Հողժողկոմատի տրակտորային միամյա կուրսերում՝ հայոց «Ա»-ն սովորող, ձեռքեր մրոտող:



...Աշխարհում բացված ետր ուղի: Հոկտեմբերյանը «Նոր ուղի» կազմակերպութունում՝ Պետիկը տրակտորիստ:

...Տաճկաստանում պազը հեծանիվը «սուտանի ձի» էր կարժել: Ուր է, է՛, տեսներ թոռան՝ «սուտանի ձին» ձեռքին խաղալիք:

Եվ ՅՂ տարի տառը՝ տուաշին տկուր: Ակո՞ւր... 16-ամյա պատանու ոտնահետքը դաշվեց կյանքում այդ ակոսի հետ: Ամուր ու անարատ դաշվեց: Ցողի պես՝ անարատ, արճճի սլես՝ ծանր:

...Հայոց լեռնաշխարհում «Նոր ուղի» կազմակերպութուններ այնքա՛ն շատ, Տրակտորների մոտ կանգնած նոր մրոտված ձեռքերով, ժպտացող պատանիներ այնքա՛ն շատ: Եվ... Պետիկը՝ շրջիկ մեխանիկ...

Կանգնել է...

է՛, այնքա՛ն մարդիկ են կանգնել, ընդհատել աշխատանքը, սպասել, որ Պետիկը գա՛ իրենց ճանապարհը կըտրող քարը վերցնի, գա՛ թևերից բռնի ու հանի ձորից, որ տեսնեն ամպերի հետ շաղված հորիզոնը, որ... Մպասել են ու եկել է նա՛ երիտասարդ շրջիկ մեխանիկը: Ծկել է, մեկի հայացքում հարցականը շեշտ է դարձել, մի տեղ խորացել է խոփը հողում, ձգվել, երկարե՛լ, որպես կյանքի ճանապարհ:

Մեկի կյանքի ճանապարհ՝ բացված և Պետիկի օգնությամբ...

Հետո... Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի գլխավոր ինժեներ Պետիկ Ներսիսյան: 1934—58-ը, 24 տարի: 24 տարի և դարձյալ կոմբայնն ու տրակտորը կյանքում նրա երգերի տավիղը դարձան, կոշտացած, սղոսկող ափերով մարդիկ՝ մոտ ընկերները: Եվ դաշտերում բացված ետր ակոսների հետ, հնձված արտերի, պլանտացիաներում բամբակենու ուղիղ շարքերի հետ՝ շարունակվեցին, շատացան էլի Պետիկ Ներսիսյանի ոտնահետքերը: Շատացան, երկարեցին... Կրեմլ հասան: Եվ 14 տարի առաջ... Սոցիալիստական աշխատանքի հերոս Պետիկ Ներսիսյան...

Կյանքում նրա ուղիղ քայլերը ուրիշ ափ չէին տանի:



Երկու օր առաջ:

Կիսահնձած արտ: Արևը կանգնել է, չի շարժվում: Գլուխներն իրար ստվերում թաքցնող ցորենի հասկեր: Վահագնի ճակատին՝ քրտինքով ծծված մղեղ, ձեռքին՝ շիկացած դարձակ: Չէ՛, վատ ժամանակ է «կողի ընկել» կոմբայնը. անհամաչափ է աշխատում:

...ինչպե՞ս հայտնվեց վարպետ Պետիկը, վահագնը չի մացավ:

— Բարև, վարպետ ջան, էդ ինչ ժամանակին հասար:

Ներսիսյանը ժպտում է:

— Ի՞նչ է պատահել:

— Կավ չի աշխատում, չգիտեմ:

— Կիմանանք, աշխատացրու:

Վահագնը նստում է կոմբայնի դեկի մոտ, իսկ վարպետ Պետիկը լարվում է, լսում մեքենայի աշխատանքի ձայնը, հետո ձեռքով հասկացնում, թե կանգնիր ու հանում է վերնաշապիկը: Կես ժամ և ցորենի հասկերը սիրով խոնարհվում էին էլի կոմբայնի վիլակի առջև:

«Հայգյուղտեխնիկայի» Հոկտեմբերյանի բաժանմունքի սպասարկող մեխանիկ Պետիկ Ներսիսյանը... Շրջիկ արհեստանոցի մեքենայի վարորդի կողքին նստած շտապեցնում էր.

— Մխախոտ վառելու ժամանակ չէ, համ էլ ղգույ՜ կարող ես հրդեհել արտը, արագ քշիր: Մենակ էս չէր, է՛, հիմա կարող է մյուս տղերքի մոտ էլ մի բան պատահած լինի:

— Հիմա, վարպետ ջա՛ն, հիմա կհասցնեմ:

Մեքենան նրան Հակոյի կոմբայնավարների մոտ պետք է հասցնեք, Գյալթոյի, Սորիկի, Արեգի, Սաբունչի, Բառոժի... որտեղ պետք էր...

Որտեղ պետք էր: Որտե՞ղ է պետք:

Կյանքին է պետք վարպետ Պետիկը, նոր բացվող մի ակոսին, արտերին՝ ցանվող ու հնձվող, դաշտերին կանաչ...

Նրա ոտնահետքերը դեռ երկա՛ր պետք է դաջվեն կյանքում՝ ամուր ու անարատ, ցողի պես անարատ, արճճի պես ծանր:

Լսում կամ թերթից մեկում մի ինֆորմացիա ես կարդում, թե՛ այսինչ վայրում հայտնաբերվել է այսինչ հանքանյութը, խոշոր պաշարով: Լսում ես, ուրախանում և հանկարծ հիշում, որ աշխարհում երկրաբան էլ կա: Հետո, գուցե հաջորդ րոպեին, մոռանում ես երկրաբանի մասին ու հիշում մեկ էլ այն ժամանակ, երբ... այսինչ վայրում... Նրանք՝ երկրաբանները, հեռու են քեզնից, քիչ են տրորում ասֆալտապատ մայթերը, լեռներում են նրանք, կիրճերում, անապատներում: Շատ հաճախ այնպիսի վայրեր են ոտնատակ տալիս, ուր մարդու ոտք չի դիպել: Նրանց՝ երկրաբաններին, կյանքում գուցե ամենաշատը հովիվներն են հանդիպում: Հանդիպում են՝ դեմքերին տեսնում արևի, հողմի, անձրևի... նույն կնիքը, ինչ իրենց, կաթ են առաջարկում նրանց, ուսապարկի խրտխրտան լավաշ, գուցե նաև՝ լուցկի... Իսկ դու դեպքից-դեպք, կապված մի իրադարձության հետ, իրոք իրադարձության, հանկարծ հիշում ես, որ աշխարհում երկրաբան էլ կա...



Տրորված անուն ունի գյուղը՝ Քաբյաուլի: Գյուղում բուլորը գիտեն, որ մեկ կիլոմետր հեռու երկրաբանական խումբ կա. հորատող մեքենաները կանգնեցրած՝ մի քանի ամիս է փորփորում են գետինը: Ինչո՞ւ, չգիտեն: Գիտեն նաև, որ Արսենը ամեն օր վառելանյութ է կրում այնտեղ, հիմա կերևա:

...Մեքենան հանդարտ կծկում է լեռնապռունկով ձգվող ճանապարհը: Արսենի հաղթ բազուկներում ամուր է դեկը:

— ՆախաՆձելի քաշ ունես, Արսեն:

Նա ժպտում է:

— Քաշս տեսնեիր էն ժամանակ, երբ նոր եկա այստեղ՝ երկրաբանների մոտ, 120 կիլոգրամ էի, տղաները անմիջապես կպցրեցին՝ Դմբուզ Արսեն, հիմա ընդամենը 90 եմ: Իսկական քաշ գցելու տեղ է... Այ, վանքի ուղղությամբ գնանք, կերևան հորատիչները:

...Սևանա լճին ծով են ասում մարդիկ, գետակներին՝ գետ: Հետո ժայռեր են կոփում, թրատում, ծակում են սարերը, որ լիճը իրոք ծով դառնա, գետակը՝ գետ: Բարակ է Մարմարիկի ջուրը, բարակ ու զուլալ: Բայց գետ են ասում, Մարմարիկի գետ: Հոսում է ու գետակի երկարությամբ ոլորուն ձգվում են լեռնապարերը: Տարօրինակ է բնությունը, քմահաճ. գետակը, ասես, երկու աշխարհամասեր է բաժանում իրարից՝ ձախափնյա լեռնապատը հողմնահարված է, լերկ, խանձված, աջափնյայի գանգրահեր ծառերի անտառում խեղդվում է արկը: Հիմա այդ լանջերը մի տեղ պետք է ձեռք-ձեռքի տան ու Մարմարիկի ծնծղան շուրթերով համբուրվեն իրար հետ: Ջրամբար պետք է կառուցվի: Եվ դրա համար երկրաբաններն են առաջինը կանգնել կիրճում:

Երկրաբանները մի օր սուզվեցին լեռների հատակը և Հրազդանում կառուցվող լեռնաքիմիական կոմբինատի հումքը գտան, բայց նրանք ի՞նչ գործ ունեն այն ջրամբարի (Մարմարիկի լիճ կանվանեն հետո) կառուցման հետ, որը արդյունաբերական ջուր պետք է տա կոմբինատին: Ախր, դա ջրաշինարարների գործն է: Չէ՛, առանց երկրաբանի ջրամբար չեն կառուցի: Լսե՛լ ես. պատմում են, որ մի անգամ առանց երկրաբանների մի գետակի դիմադիր ամուր պատնեշ են կանգնեցրել, կառուցել ջրամբար: Բայց մի օր կուտակված ջուրը պոկել-քշել է պատնեշի տակի հողաշերտը, ողողել արտեր, գյուղեր և «ամուր» և հսկա կառույցը՝ գետակի հունը կալող պատնեշը վերածվել է ձորալանջերն իրար կապող... կամուրջի: Այդպես է. պատնեշը կամուրջի կփոխվի, եթե երկրաբանը ինքը չդառնա կառուցվող պատնեշի հիմքի խորությունը, քարն ու շաղախը:

Հորատող հաստոցների աղմուկով լցվել է կիրճը: 7 հորատիչներ շարվել են ապագա պատնեշի հատակի նշագծերի ուղղությամբ ու ծակում են գետինը: Հորատանցքերի մոտ դրված նշարկման արկղերում ամեն ժամ ավելանում են ընդերքի շերտերի թաց նմուշները: Երիտասարդ երկրաբանը կարդում է «էջը»: «Մինչև 2 մետր՝ հողային ծածկ է, 2—3 մետր՝ տարբեր հղկվածության ու կազմության ապառների բեկորներ են, եթե այդպես շարունակվեր և գնալով ամրանար, լավ կլիներ, բայց 37—53 մետր տարբեր հատիկներով

ազգայն է, իսկ 53-ից սկսվում է մայր ապարը, ամառ է՝  
 Եբբ բոլոր հորատանցքերի մոտ դրված նշտրկղերը, որպես  
 ընդերքից հանված գրքեր, կկարդացվեն երկրաբանների կող-  
 մից, այն ժամանակ գունավոր մետալուրգիայի ձեռնարկու-  
 թյունների հայկական պետական նախագծային ինստիտու-  
 տին պարզ կդառնա, թե ինչ ձևով պետք է կառուցել պատ-  
 նեշը:

### ԱՌՔՋԻՆ ՇԵՏՐՎԱՆԻՑ ԶԵՏՈ

Մայիս: Վաղորդյան ցողով շաղված մի ձնծաղիկ: Արևի  
 նուրբ շողերը համբուրում են սպիտակ թերթերը: Դեղնակտուց  
 մի ծիտ նստած է ծաղկի կողքին՝ կտցին փափկած մի շյուղ:  
 Դիմացի սև ցելը պարուրվել է կապտավուն գույրշիով...  
 Գարունը լուռ կանգնած երիտասարդի աչքերի մեջ էր, սրտի  
 մեջ էր և դիմացն էր փռված: Քիչ հեռու հորատիչն էր գղրը-  
 դում: Երեկոյան հորատումը գագարեցվել է 185 մետրի վրա,  
 հիմա նորից...

Հովսեփը բացում է տեղանքի քարտեզը (արդեն քանի՞  
 անգամ) և հայացքով գամվում այն կետին, ուր հիմա քար-  
 տեզից ու կետից դուրս հորատիչն է կանգնած: «Անպայման  
 կշատրվանի, անպայման»:

...Մայիս: Առավոտ: Կապույտ, կապույտ էր երկինքը:  
 Արագածի արծաթ գագաթները շողում-փայլ էին տալիս  
 իրարու: Լեռնային գյուղի ամեն տան պատուհանից ու եր-  
 դիկից արևը խուրձ-խուրձ ներս էր ընկել: Իսկ հորատիչը...  
 Հանկարծ փոխվում է ժայռը և... Հավաքվածները խառնվում  
 են իրար, ալեկոծվում, ազմկում. «ջո՛ւրը, ջո՛ւրը»: Իսկ Հով-  
 սեփը, շունչը պահած՝ կանգնել է: Թվում է նրան, թե ջուրը  
 հորատանցքից չէ՝ իր սրտից է ժայթքում, ու եթե ինքը շնչի,  
 շարժվի տեղից՝ ջուրը կգաղարի շատրվանելուց...

...Երևանի երկրաբանական վարչութիւնում հեռագիրը  
 ձեռքից ձեռք անցավ. «Ախուրյանի շրջանի Արևիկ գյուղում  
 186,5 մետրից այսօր շատրվանեց ջուրը: Հովսեփ Սարգսյան»:

Իսկ ինքը տուն հասավ մթնշաղից հետո: Անհամբեր էր  
 դարձել.

— Մա, խփեց շատրվանը, առավոտյան խփեց...

Մայրը վախեցած նայեց:

— Ինչի՞ խփեց, ո՞վ խփեց...

...Առաջին շատրվանից հետո անցել է 21 տարի: Այդ ընթացքում երկրաբան Հովսեփ Սարգսյանը Հայաստանի լեռներն ու կիրճերը, հովիտները ոտնատակ է տվել՝ պապական կաթ դաշտերի համար, մարդկանց համար, որոնք խմելու ջուրը պղտոր ջրափոսներից են բերել, ջուր է փնտրել: Եվ որպեսզի ջուրը մի ժամ առաջ, մի րոպե առաջ շատրվանի, ասենք, Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան գյուղում, Հովսեփը մի օր վառելանյութի տակառը ցած է բերել ճանապարհին խափանված մեքենայի թափքից ու գլորելով, քարշ տալով հասցրել հորատիչ ագրեգատի մոտ:

Հիմա անցած տարիները լեռների հորիզոնականների պես իրար վրա նստել են նրա ճակատին, և բազմաթիվ շնորհավորական հեռագրերի, պատվոգրերի ու գովասանագրերի համար բացվել է երկրորդ թղթապանակը: Իսկ նա դեռ երիտասարդ է, իր տարիքից էլ երիտասարդ. լեռներում կանաչը միշտ թարմ է մնում և շատ կածաններ կանցնի: Դեռ կկանգնի այնտեղ, ուր արծիվներն են բուլյն դնում, այնտեղ, ուր արծիվների ստվերներն են դիպել միայն...

#### ՌՈՒՋԱՆՆԱՑԻՆ ԴՊՐՈՑ ՁԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ

Փոքրամարմին է, արագաշարժ: Բանվորական երկարաճիտ կոշիկներ ունի հագին: Վազելով իջնում է սարալանջից, չքմի-չքմի կտրում է Մարմարիկը, մոտենում ու մեկնում ձեռքը:

— Ծանոթանանք՝ Սամվել, — հետո ժպտում է ու ավելացնում, — Ռուզաննային դպրոց ընդունեցի՞ն, չիմացա՞ք:

Ես հարցական նայում եմ:

— Ուրեմն դուք աղջկաս չե՞ք ճանաչում, իսկ ինձ թվում է, թե Երևանում բոլորը գիտեն, որ Ռուզաննան այս տարի դպրոց էր ուզում գնալ, այն էլ մի տարի շուտ, բայց չէին ուզում ընդունել: Չիմացա՞ք ինչ եղավ:

— Կիմանամ, կհաղորդեմ:



— Լավ, ինչպե՞ս ուղարկել հեռագիրը, կոնկրետ հասցե էլ չկա. Մուրղուզի լեռնաշղթա, հետո՞,— փոստի աշխատողը սրտնեղում է,— կարգին հասցե տվեք:

— Երկրաբանները լեռների ու ծայրերի մեջ չեն կորչում, գրեթե՝ Շամշադին, Մուրղուզի լեռնաշղթա, Սամվել Մարտիրոսյանին և՛ վերջ:

Հաջորդ օրը միջօրեին շահել մի հոտաղի հետ լեռան գագաթն է հասնում նաև հեռագիրը. «Աչքդ լույս, աղջիկ ունեցար»: Պատասխան հեռագրով Սամվելը աղջկա անունն է տուն ուղարկում՝ «Ռուզաննա»: Իսկ երբ ինքն է տուն գալիս ու փորձում ծանոթանալ Ռուզիկի հետ, աղջիկը ճշում է. նա արդեն ճանաչում էր տատին, պապին, մորը, բայց այդ մեկը... «անծանոթ» էր...

Քիչ չէ, բուրբում է տասներորդ տարին, որ Սամվելը լեռների որդեգիրն է: Մեկ՝ Շամշադինի, Գորիսի, Ղափանի, մեկ՝ Գեղամա... լեռները, մեկ՝ Արարատյան հովիտն է ծլարձակել, կանաչել, ծաղկել ու գունաթափվել նրա աչքերի առջև, եղյամ է իջել սարերին, ձյուն նստել, ու այդ բուրբը երա համար եղել է շատ աննկատ: Իսկ երբ տան դուռն է բացել, Ռուզիկը սկզբից անծանոթի պես է նայել նրան, և ինքը նկատել է, որ աղջիկը մեծացել է, որ աղջիկը նիհարել է, որ աղջիկը... «Ա»-ն է սովորել, արտասանել գիտե, որ... ուզում է դպրոց գնալ: Բայց գնացե՞լ է... Գուցե մինչև հիմա էլ անհայտ է Սամվելին: Իսկ ես խոստացել եմ իմանալ, հայտնել: Կատարում եմ խոստումս: Ռուզիկին դպրոց չեն ընդունել, Սամվել, թողել են, որ մի տարի էլ խելոքանա:

## ՌՈՄԱՆՏԻԿ ԵՐԿՐԱԲԱՆԸ

— Բարև ձեզ:

Մարզը հակված գլուխը բարձրացրեց ու նայեց հարցական. այդ ո՞վ է առանց դուռը թակելու ներս մտել, կանգնել գրասենյանի առջև: Բայց նրան դուր եկան երիտասարդի խելացի աչքերը, ճակատին թափված անհնազանդ մազերը:

— Ես երկրաբան Ռուզիկ Հովսեփյանն եմ, իմ մասին, կարծեմ, ասել են ձեզ:



— Ա՛հ հայրենակից, բարով եկար: Մանոթանանք՝ Ավագիմով:

Ռուզիկը մեկնեց ձեռքը ու նկատեց, որ սեղանին դրված ափսեի մեջ խաղող կա, և որ ողկույզներն իրենց մեջ կանաչավուն հատիկներ ունեն... «Հայաստանի խաղողը արևագույն է, ավելի քաղցր սրանից...», — մտածեց նա:

— Ի՞նչ կա Երևանում:

— Մուրճերի վրնգոց ու արև:

— Դու բանաստե՞ղծ ես:

— Իսկ դուք բանաստեղծ չե՞ք...

Ռուզիկը նորից նայեց ափսեի պոնկից կախված ողկույզին. «Այնուամենայնիվ քաղցր կլինի, խաղող է...»:

— Ուզում եմ վարագույրը միանգամից բացել, տեսնեք քեզ դուր կգա՞. այնտեղ, ուր պետք է աշխատես, ավազի անապատ է, ստվեր չես գտնի... Ասենք, կգտնես՝ քո ստվերը, այն էլ քեզ պետք չի գա: Քամի, փոթորիկ՝ ինչքան ուզես, և բարխանները... բարխան գիտե՞ս ինչ է՝ ավազի բլրակ, բարխանները օրական փոխում են իրենց տեսքը: Ահա ընդհանուր պատկերը: Մտածիր, եթե գիտես, որ մի երկու օր հետո չես կանգնի դեմս, թե հայրենակից, մի բան արա ետ գնամ, հրամանագրեմ, թե չէ...

...Թուրքմենիա, Յասխանի ավազուտներ...

Անցավ տարին, և Նեբիդ-Դաղ քաղաքում տոնահանդես եղավ. քաղաքը խմելու ջուր էր ստացել՝ Յասխանի ավազուտներից քամված ջուր: Տոնահանդեսի հերոսները երկուսն էին՝ երկրաբաններ Անատոլի Մանժոսովը և Ռուզիկ Հովսեփյանը: Ավագիմովը խենթացել էր, գրկել էր Ռուզիկին ու գոռում էր. «Հովսեփյանը իմ հայրենակիցն է, լսո՞ւմ եք...»:

Անցավ էլի մեկ տարի...

...Եթե Ռուզիկին հարցնեն, կասի՝ աշխարհի բոլոր ժայռերից երևում է Արարատի ձյունաթույր գագաթը: Օրինակ, հավատացնում է, որ ինքը Թուրքմենիայից, Նեբիդ-Դաղ քաղաքից տեսել է: Տեսել է և Ավագիմովին հավատացրել.

— Դու լեռների՝ որդի ես, գնա, բայց շմոռանաս ինձ, Յասխանի ավազուտները: Մոռանա՞լ: Անապատը նրա հոգում էր արդեն ներշնչված էր ավազուտներով և դա պոռթկաց որպես «Ինչ գտան նրանք» ու «Երկրաբանները» վիսպակ:



Նստած ենք գետակի ափին: Երբ՞ի երկնագամբեթի աստղերի ցուքը տարուբերվում է Մարմարիկի ջրերի մեջ, լուսինը սառը ծպտում է գետակի հատակից:

— Որ ուզենանք, գետի միջից աստղերը կհավաքենք,— ասում է Ռուդիկը:

— Կհավաքենք, բայց... ցուրտ է:

— Հա, մոռացել էի, դու սովոր չես, իսկ ես ցրտադիմացկունություն երեք տարվա ստաժ ունեմ արդեն:

— Ռուդիկ, որտե՞ղ եք, ընթրիքը պատրաստ է,— «խոհարար» Նշանի ձայնը Ռուդիկին էլ է դուր գալիս, ինձ էլ...

Անտառի փեշին, վրանում առկայծում էր էլեկտրալամպը:

## ՀՆՏՔՆԵՐ ՀՈՂԻ ՎՐԱ

### 1. ԱՍՏԵՃԱՆՆԵՐ՝ ՎՐԱ ՆԱՏԱԾ ՄԵՐԻՆԻՆ

— Սեպտեմբերին էլ նախագահ փոխե՞ն:

— Պետք է, քեռի Արմենակ, կոլխոզը ձեռքից գնում է:

— Է՛,— ծերունին ձեռքը անհույս թափ տվեց,— որ նոր նախագահ նշանակեցին ի՞նչը կփոխվի: Կոլխոզը ես ու դու պետք է ձեռքի մեջ պահենք: Մենք էլ ձեռքներս ծալել ենք: Պողոսը չէ, Պետրոսը թող ըլնի, որ շաշխատեցինք, նախագահը ի՞նչ կանի:

— Գնանք, գնանք, քեռի Արմենակ, գնանք հենց ժողովում էդ նույնը ասա:

— Օգուտ չէ, շանրմ, ինձանից ձեռ քաշի:

Եվ կոլտնտեսության գրասենյակի աստիճանների մոտ անշարժացավ ծերունին: Մխեց, ծխի միջից կկոցած աչքերով նայեց երկնքին և, չգիտես ինչու, հատկապես այդ պահին հիշեց, որ «աստված ամեն ինչ կես է արել իր հետ», նաև երեխաները. «Հինգը տարավ, հինգը թողեց»:

Գահլիճի բաց պատուհաններից պոռթկում է ժողովականների աղմուկը: Բոլորը միաժամանակ խոսում էին:

«Մեր գյուղի ու կոլխոզի կարգ աւ կանօնը էս ժողովից է երևում,— գլուխը տմբամբացրեց ծերունին,— չէ, շանըմ, իզուր չուր կծեծեն»։ Ձէք հիշում, թե քանիսին նախազան ընտրելու համար ձեռք էր քարձրացրել՝ «Համաձայն եմ»։ Նույն ձեռքը քանի անգամ էր քարձրացրել՝ «Հանել»։ Հիմա... Հազար մնացել էր միայն աշխատող բազուկի և հողի նկատմամբ։ Եւ 1961 թվականի սեպտեմբերին էջմիածնի շրջանի Սաղկունքի կոլտնտեսութեան ընդհանուր ժողովին հողի հին մշակ Աբանակ քեռին շմանակցեց։ Բայց, այնուամենայնիւ, ժողովի արձանագրութեանը ավարտվեց այսպէս.

«Կոլտնտեսութեան վարչութեան նախազան ընտրվեց Ազատ Գրիգորյանը»։

2. ԽԵՂՃ ԱԶՄԱԳ

Դաշտի ճանապարհին՝ ծանր, տաք փոշի։ Փոշու մեջ ոչ մի հետք։ Հիմա նոր միայն մեկը՝ թրմփ, թրմփ, թրմփ... Համաշափ, ծանր։ Եւ ստրիկի տակ ճմլվում են խոհեքը... «Ախր, գաշաի ճամփա է սա, աշուն է, հետք ինչո՞ւ չկա»։ Ծամփի ձախ մասում՝ պոմփոտրի շորացած թփեր։ «Մեպտեմբերի սկիզբն է դեռ, ինչո՞ւ են շորացել պոմփոտրի թփերը։ Ախր, հիմա պետք է բերք լիներ»։ Ծամփի ձախ մասում՝ նաև բամբակի կծղած տերևներով բույսեր։ «Վաղուց չի ջրվել...»։

Վաղերի վրա փոշի են մաղելը

Չրթ, չրթ... Մարդը լարում է լսողութունը։ Հետո... Առվի հատակից ճանկում է քարեր։ Եւ... Սուր մի ճիչ։ Շարքի մեջ կանգնած է մի աղջիկ։ Մի թիղ հասակ ունի, կանաչ թիւի հետ փաթաթված ծամ, կարմիր շոր և մի մեծ ձեռնափայտ։ Մարդը մի կողմ է շարտում քարերը։

- Ո՞ւմ աղջիկն ետ
- Էհմադի
- Կովը ձե՞րն է
- Հա
- Հայրի՞կդ առաց, որ այդու մեջ արածացնես։
- Հա

— Կավ, աղջիկս, կովը քշիր տուն տար:

...Առաջին մարդն է, որ երեկ նոր ընտրված նախագահը գրասենյակ է կանչել: Ինչո՞ւ է կանչել, Ինչպե՞ս է վերաբերվում մարդկանց հետ: Գրասենյակում նստածները անհամբեր սպասում են «կանչվածին»: Ահմադը ներս է մըտնում, ձեռնափայտը «մեխում» գրասենյակի կենտրոնում, ծնոտը՝ ձեռնափայտին: «Ես եկա, նախագահ»:

— Կովդ ի՞նչ արժի, Ահմադ:

Ահմադը տարակուսած նայում է նախագահին, հետո՝ գրասենյակում հավաքված համագյուղացիներին: Նրանց հայացքներում նույնպես հարցական կա և հետաքրքրություն:

— Կովս ծախու չէ:

— Դու արդեն վաճառել ես կովդ: 200 ուրլի արժե՞:

— 250 էլ արժե:

— Ավելի վատ քեղ համար: Դու 250 ուրլի տուգանված ես:

Ահմադը շփոթվեց, կարմրեց, տաքացավ, ձեռնափայտը հարյուր անգամ թխկթխկացրեց գետնին. «Իմ կովը այգի չի՛ մտել, չի՛ մտել, չի՛ մտել, վալա, բիլա...»:

— Ասենք թե՛ մտել է, դրա համար 250 ուրլի կտուգանե՞ն,— գյուղացիները օգնության են հասնում:

— Էդ հլա կովը այգի մտնելու համա՞ր, բա որ մի կարգին բան ըլնի՞...

— Էնքան կտուգանի, որ տունդ ծախես տակից գուրթ չգաս:

Գյուղացիների բողոքը բացահայտ էր: Նախագահը գրասենյակին հակված լուռ նայում էր: Նա գրեց այդ օրվա անհետաձգելի իր անելիքի երկրորդ կետը՝ «բրիգադիլի պարտականություններից ազատել Մամիկոն Թորոսյանին և Երջանիկ Երանոսյանին»:

— Ընկեր Գրիգորյան,— բարձրահասակ մարդու ուսերը կախ էին ընկել,— երեխաս ձեռքից գնում է, մի ավտո չկա՞...

Աղատը նայեց մարդու դեմքին՝ կնճիռների մեջ հոգս կար, տազնապ, սպասում, հույս: Այդ դեմքի արտահայտությունը կարող էր փոխել ինքը: Սպասումը կարող էր ջնջել մարդու դեմքից, փոխարենը՝ մի փոքր, փոքր ժպիտ գնել: Կարող էր այնպիսի վայրույթով պատել այդ դեմքը, այնպիսի փոթո-

բիկով, որ, նույնիսկ, հոգսն ու տազնապը շքանային: Կարող էր... «Շատ բան կարող եմ: Եվ՝ մի բառով: Այո, մի բառով»: Ինչ հետաքրքիր է: Երեկ անծանոթ էր գյուղին, Ահմադին, էս մարդուն: Հիմա գյուղի տերն է և գյուղի... «Ժառան, ծառան»: Քանի՜ ծուխ կա գյուղում, հարյուր, հարյուր քսան, ամեն տան անդամն է, նաև՝ Ահմադի ընտանիքի, նաև՝ ուսերը կախ գցած այս մարդու... «Անունն ինչպե՞ս է: Կարևո՞ր է որ... Բայց... Ահմադը տուժեց: 250 ուրլի, Մանր կնստի... Բայց պետք է վճարի, անպայման, անպայման և ոչ մի կոպեկ պակաս: Ասվել է, վե՛րջ: Թող տուժի: Կարելի է... Կարելի է բրիգադիրներին ասել (ովքե՞ր են լինելու բրիգադիրները...), որ Ահմադին լավ գործի դնեն, լավ վարձատրեն: Իսկ տուգանքը պետք է տա, անպայման: Անպայման...»:

— Ահմադ:

Ահմադը խոժոռ նայեց նախագահին, բայց նրա հայացքը որսալ չկարողացավ:

— Վարորդներից մեկին կանչիր այստեղ, շո՛ւտ:

Ահմադը ներսից եռ եկավ. «էս մարդը իմ հոգո՞ւն եկավ: Մի աշխարհ փող տուգանեց, հիմա էլ... Չե՞ն է արևում»:

— Ես քու կատարածուն չեմ:

— Ահմա՛դ... Շուտ:

Գյուղացիները աչք-ունքով արեցին Ահմադին, և նա այսպես հասկացավ, «Գնա: Գնա, որ տուգանքդ վերջի»:

...Իսկ տուգանքը՝ «մի աշխարհ փող», Ահմադը ~~արձան~~ ամենայնիվ վճարեց:

3. ԱԳՐԵՍ ԴՈՒ, ԱՀՄԱԳ, ԱԳՐԵՍ

Երկու շաբաթ քեռի Արմենակը ոտք չդրեց գրասենյակ «Գործ չունեմ, ջանքում, ինչքան գնացի բավական է»: Բայց անկախ իրենից սկսեց մտածել Ահմադի «տուգանք-տնաքանդության», բրիգադիրներին գործից հանելու, «զոհվածի ընտանիքին» տված մեկ խորանարդ մետր փայտի... Նախագահի արած «մեծ ու փոքր» գործերի մասին:

— Այ կնիկ, էս նախագահը ոնց որ ճիշտ-ճիշտ բաներ է անում:

Երկու շաբաթ հետո քեռի Արմենակը բացեց գրասենյակի դուռը: Մի ժամ թիկն տվեց պատին, 10 խոսք ըսեց նախագահից. դա դուր եկավ ծերունուն: «Քիչ խոսի, շատ գործ արա,— ամեն օր խորհուրդ էր տալիս որդուն: Բայց մի քիչ վերավորվեց. նախագահը չէր նկատում իրեն:

— Ընկեր նախագահ, աշխատող պետք չէ՞,— նեղացած ինքը ներկայացավ:

Նախագահը ուշադիր նայեց ծերունու աչքերին, բայց գույնը որոշել չկարողացավ: Ժամանակը լուծել էր և՛ աչքերի, և՛ մազերի գույնը:

— Աշխատող միշտ պետք է, քեռի Արմենակ, բայց ավելի շուտ քո խորհուրդն է պետք՝ ինձ էլ, ջահելներին էլ:

Որտեղի՞ց գիտեր իր անունը: Դուրեկան մի ալիք ջերմացրեց ծեր սիրտը: Տաք ժպտացող մարդու քունքերի ճերմակած թելերը այնպե՞ս հարազատ թվացին նրան:

Անցան ամիսներ: Ազատ Գրիգորյանին մոտիկ մարդկանց պես հարազատ դարձան Մաղկունքի դաշտերի ճամփաները: Հազար անգամ անցած ճամփի պես՝ ծանոթ դարձավ ամեն ծաղկունքցի: Եվ ինքը բացեց իր «կրծքի կոճակները». թող մարդիկ ճանաչեն: Երևաց՝ անողոք նախագահը: Երևաց՝ հուզական մարդը: Երևաց՝ ամենախոս իր լուսթյամբ:

Բայց... Լիք ու դատարկ դուլերի հետքով գյուղում զրընգաց. «Գրիգորյանը ազատվում-գնում է»: Քեռի Արմենակը անձամբ ստուգեց.

- Ճի՞շտ է:
- Ճիշտ է, քեռի Արմենակ:
- Ինչո՞ւ:
- Ասպիրանտուրա եմ ուզում գնալ:
- Լավ միտք է, բան չունիմ ասելու, բայց հողից մի կարվիր, բալամ: Ազրոնոմի ամենամեծ ասպիրանտուրան, իմաստուն դատատուն հողն է: Չմոռանաս:

...Ահմադը զգաց, որ այդտեղ ամենամեծ խոսքը իրենն է: Զեռնափայտը թիկթիկացրեց հատակին.

— Սուս մնացեք, ես ասիմ... էս գյուղում ինձե՞րց ալելի մեծ վնաս ո՞վ է կրե մեր նախագահից: Ո՛չ որ: Ո՛ր ամեն

տարի երկու էդքան պրուգանք տամ, էլի համաձայն եմ: Մեր նախարարահին շինք ազատում, Պրծավ գնաց:

— Ապրես դու, Ահմադ, ապրես,— արձագանքեց դահլիճը:

Մամիկոն Թորոսյանն ու Երզանիկ Երանոսյանը («գահրնկեց» բրիգադիրները) նույնպես կրթոտությամբ «մերժեցին» Ազատ Գրիգորյանի դիմումը:

Անհիշաշար այդպիսի մարդկանց հետ, նրանց համար արժե աշխատել:

#### 4. ԼՈՒԻԿԻ ԿԱՇՅՈՒՄ

Որպես «թվեր և փաստեր» ուզում եմ օգտագործել Մադկունքի կոլտնտեսության մասին արտահաստիքային մեր թղթակիցներից մեկի ուղարկած «Լուիկի դաշտում» վերնագրով թղթակցությունը: Ասեմ, որ վերնագիրը բովանդակության հետ համարյա թե կապ չունի: Պարզապես նա կամեցել է «պոմիդոր»-ի փոխարեն օգտագործել «լուիկ» և կամեցել, որ դա լինի նաև վերնագրի մեջ, խոշոր տառերով: Ահա նրա եերհայացրած նյութը:

«Հենց սկզբից ասեմ, որ Մադկունքի կոլտնտեսությունը 146 հեկտար վարելահող ունի: Օգտագործում են խղճով, խնամքով, թիգ-թիգ՝ 40 հեկտար խաղող, նույնքան հացահատիկ, 36 հեկտար բամբակ, 5 հեկտար ձմերուկ և 25 հեկտար բանջարեղեն:

Ուրեմն՝ 120 տուն, 220 աշխատող ձեռք (ուխուն տոկոսը՝ ուժեղ և ջահել) և 146 հեկտար հող: Փոքր տնտեսություն: Բայց ես անցա դաշտամիջյան ճամփաներով, և դրանք ձիգ ու շրնդհատվող թվացին: Զրուցեցի քեռի Եղիազարի և նրա 14-ամյա որդի Սերյոժայի հետ, և կանաչ հորիզոնը շաղվեց ամպերի հետ: «Ամեն հեկտարից 100 ց. բերք է սպասվում: Բերքահավաքին կգաս»: Լավ մարդ է քեռի Միհրանը:

Ես զգուշ քայլում էի լուիկի դաշտում, գնում էի դեպի աղջիկները ու մտածում. ինչպե՞ս կընդունեն ինձ: Զեռքերս հողոտեցի, թաքցրեցի արևի ակնոցները, և քայլերս ավելի համարձակ դարձան: Ես հասկացա, որ միայն այդպես կարելի է քայլել հողի վրա, կարմիր ուլունքներով ծեփված այս



գաշտով: էլի եմ եղել լուիկի դաշտում, բայց այդքան պրտ-  
դառա՛տ... Ինչպե՞ս էին աճեցրել: Ինչպե՞ս: Հասկանալի է:  
Ինձ ուղղվեցին բարի, բարի աշքեր՝ արևահար դեմքերի վրա  
ավելի քան փայլող: Նրանց տաք ու ամուր ասիների մեջ ես  
զզացի աչիս թուլութունը: Անիտա, Ռոզա, Աշխարհուհի,  
Ասյա, Լիդա, Աննաման...

Լուիկով լցված արկղերը շարվել-ցանկապատ են դար-  
ձել ճանապարհի եզրին: Չեն հասցնում տեղափոխել: Յուրա-  
քանչյուր հեկտարից՝ 600 ցենտներ մի հատի պես:

Չէ՛, Մադկունքը փոքր կոլտնտեսություն չէ: Եվ ընդհան-  
րապես տնտեսության մեծությունը հողատարածությամբ չի  
որոշվում:

...Երբ արդեն կոլտնտեսության գրասենյակում էի, զգա-  
ցի, որ առանձնապես գործ էլ չունեմ: Ինչո՞ւ շուտ բաժան-  
վեցի աղջիկներից, ինչո՞ւ շմեղի մինչև երեկո: «Մնա»,—  
ասում էին ինձ և՛ այնպիսի տոնով, ինչպես հյուրասեր տան-  
տերը չի կամենում, որ հյուրը ոտքը շեմից գուրս գցի:  
«Մնա»: Այն ժամանակ ես պատասխանեցի, թե՛ գյուղում,  
գրասենյակում դեռ գործեր շատ ունեմ: Բայց...

Գյուղում ոչ ոքի շտեսա, իսկ գրասենյակում հաշվապահը  
հարցական նայում է. «Ասեք, ի՞նչ եք կամենում»:

— Ի՞նչ լավ թվեր ունեք,— ասում եմ և, քիչ է մնում,  
ես էլ ծիծաղեմ իմ հարցի վրա: Իսկ հաշվապահը պատաս-  
խանում է շատ լուրջ.

— Լավ թվեր շատ ունենք,— երևի հաշվապահների մոտ  
ընդունված են «լավ թիվ» և «վատ թիվ» արտահայտություն-  
ները:

— Քանի որ այս տարվա թվերը դեռ լրիվ պարզ չեն,  
ասեմ անցած տարվանը:

«Հեկտարից՝ 31 ցենտներ բամբակ, 33՝ հացահատիկ, 600  
ցենտներ լուիկ, յուրաքանչյուր կովից՝ 2520 կիլոգրամ կաթ,  
մեկ աշխօրի ինքնարժեքը՝ մոտ 4 ուրլի»:

Այդ «լավ թվերի» համար «փոքրիկ» Մադկունքից շորսը  
արժանացան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվո-  
գրի: Եվ ահա, նախանձելի քառյակը՝ Գարուշ Մամիկոնյան,  
Բարկեն Եղիազարյան, Մաուլենա Միքայելյան, Զաբել Բալա-  
սանյան: Ես շատ ուրախացա հաշվապահի ներկայացրած

թվերից հատկապես վերջին համար՝ «Աշխօրի ինքնարժեքը 4 ուրլի»:

- Ինչքա՞ն կստանան այս տարի:
- Մոտավոր հաշվումներով՝ մինչև 4,5 ուրլի:

Իսկ 1961 թ. այդ նույն գյուղում, նույն հող ու ջրի տեր մարդկանց մեկ աշխօրի վաստակը 1 ուրլի 54 կոպեկից շի անցել: (Դրանից ավելի պակաս էլ են ստացել):»:

### 5. ՀԵՏՔԵՐ ՀՈՂԻ ՎՐԱ

Նա էլ՝ Ազատ Գրիգորյանն էլ, դպրոցը կիսատ թողեց, աշխարհում կռիվ կար: Հետո, երբ դպրոցում անգիր ոովորած բանաստեղծությունները արդեն մոռանում էր, էքստենսիվ քննություն հանձնեց հասունության վկայականի համար: Ստացավ: Եվ՝ իրոք, հասունության վկայագիր: Կյանքը լավ ու վատ խոհերի ալիքներ էր դարձել ճակատի վրա: Մազերի մեջ երկու ոպիտակ թել կար, Իրոք՝ հասունության վկայագիր. հողի ուժ ունեք երակներում, մտքում՝ հողի իմաստություն:

Հեռակա ուսուցմամբ ավարտեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը:

Հեռակա ուսուցմամբ մի տարի հետո ասպիրանտուրա կավարտի:

Ճիշտ է, «հաստափոր» ու «լղարիկ» գրքեր է կարգում, և, գրասենյակի մի անկյունում կախված, գաշտի շորերի զըրպաններում Երևանի հանրային գրադարանի տոմսը կա, քաղվածքներ գրքերից, բայց՝ հիմնականը, ամենօրյան՝ իմաստուն ու մագաղաթագույն թերթերով այն գիրքն է, որը մարդուց առաջ գոյություն ունի: Հողը: Հողից է սովորում, և հնագույն այդ գրքից պետք է քննություն տա:

«Ազրոտեխնիկական մի քանի միջոցառումների ազգացությունը աշնանացան ցորենի «էլեկտրոլիզոն-12» և «Անքիստ-1» սերմնանյութերի ցանքային որակի վրա», — այս է թեման: Փորձեր է կատարում:

Փորձ-հող զցած ամեն հունգ թող ծիլ գառնա:

Փորձ-ամեն պտղունց հող թող մի մասունք հաց գառնա:

Եվ դրա համար՝ կնճիոների մեջ հող լցված ճակատ: Անհանգիստ մտորումներ: Նաև՝ շթարթվող աչքերի առջև հավիկող գիշերներ:

## ԳԱՐՆԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՆԵՐԸ

Արթիկի դաշտ ու արտի, սար ու քարերի տերերը ժողով գումարեցին, ընդունեցին փոխանցիկ մի դրոշ և մի... գարուն:

Այո՛ նաև գարունը: Եկել-կանգնել էր ժողովատեղի դռանը, մարդիկ դուռ ու լուսամուտ բաց արեցին, ու մի փուշ ծիծաղ փաթաթվեց դրոշի ծոպերին, շարքերի արանքով խուժեց շրոնվող մի հոսք, փաթաթվեց հողագործ մարդկանց նստածներից մեկը ոտքի հլավ, մոտեցավ ամբիոնին.

— Ժողովուրդ, շատ հաց ստանալու համար կառավարական էս դրոշակը մեզ շեն նվիրել, նվաճել ենք, նվաճել: Քե գարունը ձեռքից բաց չթողեցինք, ուրեմն էս դրոշակն էլ իր տեղում ամուր կմնա:

Այսքանը: Հետո, ճաշկերույթի ժամանակ, բաժակ-բաժակի ետևից գինի խմեց, արագ-արագ հաց կերավ ու.

— Դե, ես գնացի:

Դռան մոտ վերջին պատառը կուլ տվեց, ափով սրբեց բերանը, գնաց: Հաջորդ օրը ես նրան հանդիպեցի:

## ՎԱՐԴԱՔԱՐՈՒՄ

Գյուղի ոտքերը լիզող մի գետակ կա: Երբեմն կարող ես արծաթ թելի պես փաթաթել մատիդ. ամռանն ու ձմռանը: Իսկ ձնհալին հայացքդ շարդուփշուր կանի պղտոր ալիքների մեջ:

Մենք կամուրջով գյուղ մտանք, իսկ կամուրջի տակ մնաց Մանթաշ գետակը՝ ալիքների մեջ՝ սարերից բերած պուտ-պուտ գարուն: Տարվա եղանակները գետակի հետ են գյուղ մանում:

— Դուք մի քիչ զբաղվե՛ք, մինչև ես հասնեմ գաշտ, ես գամ:

Եվ կոլտնտեսության վարչության նախագահ Պարույր Գալստյանը շտապ մեքենա է նստում, Պատուհանից երևում են նրա ճեքմակ մազերը և աչքերի փայլը: Ես մտածում եմ, որ Վարդաքարի նախագահի աչքերը ուրիշ տարբերի են, մազերը՝ ուրիշ:

Գարունը բոլորին դուրս է քաշել: Դժվար է նստել տանը և նայել պատուհանի տակ ծխավ բռնված հողին: Սուրենը խնձորենիները ազատում է թղթակապերից. հողը հեռացնում բների մոտից: Նազուկ, մի քանի գարունն ապրած պտղատու ծառեր են երևում ամեն բակում:

— Ծր՛, ծր՛, ծր՛,— գլուխն օրորում է քեռի Նիկիտինը,— ոնց շուտ գլխի շենք ընկել, որ էստեղ էլ տանձ ու խնձոր կաճի, հիմա գյուղը ծառերի մեջ շէր եթևա:

Պատասխանում եմ մտքումս. «Բա ոնց գլխի շեք ընկել, որ գլխարկներով տները գլխարաց տներից լավ են... Ուրեմն այստեղ մի ուրիշ բան էլ կա: Գուցի դուք մեղավոր էլ չեք, որ «գլխի շեք ընկել»:

— Մեր խնամի Արամը խաղողի վազ էլ ունի,— շարունակում էր քեռի Նիկիտինը,— անցած տարի բերք տվեց, բայց մի քիչ թթու էր: Էս տարի գարունը շուտ եկավ, խնամուս խաղողը քաղցր կլինի:

Զը՛խկ, չը՛խկ: Զը՛խկ, չը՛խկ: Որմնագիրներ Վոլոգյա Պետրոսյանն ու Խաչատուր Խաչատրյանն էլ գարնան հետ իրենց գործին են. գյուղում, բարձունքի վրա ակումբի հսկա շենքն է կանգնելու: Արև կար կիսավարտ շինության վարդագույն ճակատին, արդեն կապված սյունների ու կամարների վրա: Եվ արևի փոշի կար վարպետների գունատված կազիրոկներին:

— Այս տարի կավաբտվի ակումբի շինարարությունը: Դիմացը զբոսայգի ենք պատրաստելու: Գեղեցիկ բան կըստացվի,— Վանիկի համար հանգիստ է մտքով կտրել երեքշորս տարի: Եվ դա շմարմնավորվող հրազ չէ, այնպես է, ինչպես գետնին փռված, յուղաբծերով կնքված իր բաճկոնի վրա դրված կոմբայնի այն վերջին մասը, որ, այ այսպես, կվերցնի, կփշի մի անգամ էլ, այսպես կտեղադրի ու:

— Վերջ, սրանից էլ պրծանք,— ~~ապի~~ շփում է, բան-  
կոնը գցում ուսերին,— տեսնենք տղերքն ինչ են անում:

Տղերքը՝ Պատվականն ու Ռազմիկը, ցորենի հատիկներ  
են... ծամում:

— Տեսեք,— ասում է Պատվականը,— աշնանացանը  
կատարելուց շարքացանի մեջ հատիկներ են մնացել, ոչ  
ցրտահարվել են, ոչ բան, հիմա որ ցանենք, կծլեն:

Երբ գարնանացանի գնան, շարքացանում մնացած ցո-  
րենհատիկները մեկիկ-մեկիկ կընկնեն ճանապարհին, կա-  
նաչ ծիլ կդառնան, կանաչ սլաք՝ արտ ու գյուղի միջև:

Պարույր Գալստյանը վերադառնում է դաշտից:

— Տղերք, էգուց կուլտիվացիայի պիտի գնաք:

— Ուզում ես, էսօր գնանք, դեռ տարի օր կա:

— Զէ, ես որ ասում եմ կուլտիվացիա կարելի է, էս  
«տարի օրն» էլ եմ հաշվի առել:

Գարունը ճամփեքով եկել, մտել է Վարդաքար: Ու մար-  
դիկ տեր են կանգնել: Փողոցներում երեխաները ձեռքները  
ցեխոտած «տուն» են կառուցում: Զյունաճերմակ մազերով  
մարդիկ գրասենյակի դռանը նստած փորփրում են հիշողու-  
թյունները. «Մեկ էլ ո՞ր թվին է գարունը էսքան շուտ գյուղ  
եկել... էդպիսի բան չի եղել»: Ժորան և Հովհաննեսը մոզի-  
ներին խամից են հանում: Աղջիկները, ծաղիկների անունով՝  
Վարդ, Մաղիկ, Շուշան, Սուսան, ջերմոցներում են:

Մարագի կտուրին մի շուն անհասցե հաշում էր, թու-  
լեքը նրա տնազն էին անում:

— Հիմա դուք ի՞նչ եք անելու,— Պարույր Գալստյանը  
ուզում է իմանալ, թե դեռ շա՞տ հարց ու փորձ պիտի անեմ:

— Գուցե գյուղում մի քիչ ման գամ:

— Այդ դեպքում ինձ կներեք, ես աղջիկների մոտ պի-  
տի գնամ,— մեկնում է ձեռքը, նայում մեխանիզատորնե-  
րին,— տղերք ջան, էսօր էլ ման արեք, Դե, ես գնացի:

Ես հիշեցի նախորդ օրը ճաշկերույթում արագ-արագ  
հաց ուտող մարդուն, որ վերջին պատառը դռան մոտ կուլ  
տվեց ու գնաց: Պարույր Գալստյանը շատ էր նման նրան-  
եմ՝ էր...

Հաջորդ օրը նմանին հանդիպեցի նաև

— Ռաֆիկ, տանդ հիմքը ե՞րբ ես փորելու:

Ռաֆիկը կոլտնտեսության հովիվներից էր, հարցնողը՝ կոլտնտեսության վարչության նախագահ Սամսոն Խաչատրյանը:

— Էս տարի տուն կառուցել չեմ ուզում:

— Ոչ մի դեպքում, հենց հիմա գալիս եմք հատակագիծը տանք, — սա էլ պարտկազմակերպության քարտուղար Մամիկոն Առաքելյանն է:

— Այ մարդիկ, գուցե ուժս չի պատում, ստիպո՞ւմ եք:

— Հա, ստիպում ենք, — բրիգադիր Վարդան Եղոյանն է: Ես առաջին անգամ էի տեսնում այդպիսի «ճնշում»: Հովիտ գյուղի կոլտնտեսության վարչության անդամները կանչել են մարդուն, ստիպում են. «Տուն կառուցիր»: Քար կա, Արթիկի հանքավարչության պետի հետ կարելի է պայմանավորվել՝ այն քարակտորները, որոնք չեն առաքվում՝ «նվիրի»: Ավտոմեքենա կա: Քարը տեղափոխելուց, շարելուց օգնող-օժանդակողներ չեն պակասում: Մա՞ծկն է մնում. կոլտնտեսությունը փայտ ու շիֆեր ձեռք կբերի: Միջոց չկա՞ փայտ ու շիֆեր գնելու համար. ահա քեզ վարկ:

— Էլ ինչո՞ւ չես ուզում կառուցել: Մի օր տունդ փուլ կգա, ողջ գյուղը կընկնի մեղքի տակ: Վերջ, էլ չենք խոսում, որոշված է, այս տարի տուն ես կառուցելու:

— Լավ, ձեր ասածը թող լինի:

Հովիտը փոքրիկ գյուղ է: Կարող ես բարձրանալ թիկունքի ժախի սարը, տները հաշվել մինչև 50, ոչ ավել: Սարից հնամենի մի քանի տնակները չեն թաքնվի պայծառադեմ տների ետևում: Խարխալված այդ տնակները շպետք է լինեն, և դա հենց այս գարնան գործ է, պետք չէ ուշացնել:

— Ով միջոց ունի, կստիպենք, կօգնենք, նորը կկառուցի: Ով չի կարող, կոլտնտեսության միջոցներով կկառուցենք: Կոլտնտեսության վարչությունը որոշել է Հայրենական պատերազմի հաշմանդամ կյուղվիգ Կարապետյանի համար հանրային միջոցներից տուն կառուցել: Գյուղում հին տուն չպետք է մնա:

Գյուղի և մարդկանց մասին ունեցած իր խոհերով, պարզ ու հաստատուն որոշումներով՝ անկեղծ հարգանք է ներշնչ-

չում կոլտնտեսության վարչության երիտասարդ նախագահ Սամսոն Խաչատրյանը:

— Մարգու մասին եթե շատ ծեցիր, գործ էլ չես կարող պահանջել: Բաղնիքն ինչ է, որ գյուղը բաղնիք չունենա: Այստեղ բաղնիք ենք կառուցելու: Գուք եկեք մեզ մոտ երկու տարի հետո. հին տուն ու առանց մայթի փողոց չեք տեսնի:

Համոզված եմ: Մի փողոցի մայթեզրը ուրվագծված էր արդեն: Նորելուկ գարնան հետ գրասենյակ էին կանչել նաև նախարարական Խաչատուր Կարապետյանին, մեխանիզատորներ Բարկեն Կարապետյանին ու Գարեգին Առաքելյանին, կթվորուհի էմմա Կարապետյանին: Կանչել էին, «ճնշել», «նոր տուն կառուցեք»:

Գարնան հետ տասը նոր հիմք է փորվելու՝ թիկունքը ժախի սարի գեմ արած, Հովիտ փառք գյուղում: Գարնան հետ գյուղից սրբվելու է տասը խարխուլված տուն:

Գարուն է, և հովիտցիները ռաբի վրա են: Սաշայի ավտոմեքենան պտավում է, իջնում է լեռնային ճանապարհով, վերջին երթ պարարտանյութն է դաշտ տարել, հտ է դառնում:

Մամիկոնը արևն առել է ուսերին, հոտը քշում է սարն ի վեր:

Աղջիկները՝ Գեղեցիկը, Ռիտան, Լենան, Փամարան, հավաքվել են հողակտորի եզրին, Կանչ-Կանչի ևն տալիս. այս տարի կոլտնտեսությունը առաջին անգամ ժխախտտ է մշակելու: Նոյաթյուն նաև հովիտցի աղջիկների համար:

Կոլտնտեսության հաշվապահը վերադառնում է շրջկենտրոնից.

— Ճակնդեղի սերմացուի փողը փոխանցեցի, մի քանի օրից կստանանք:

Գարեգինն ու Լավրենտին տրադտորները պարկից գուրս են բերում, հասնում մինչև օտարապետ ու հտ գալիս. «Բան պակաս չկա»:

Նախագահը ցուցակ է կազմում, իրար ետևից՝ հիսուն ժխատիրոջ անուն, անունների դիմաց թվեր. էսքան-էսքան խնձորի, էսքան տանձի ծառ:

Տնամերձերում ցանում են գարի, քաշվում մի կողմ: Իսկ



ինչո՞ւ չի նի պտղատու ծառ՝ և գեղեցկության է, և հարու-  
տություն:

Աւրի՞շ:

Դե, գարունը ժամանել է, և արթնացիւնները ձեռքածու-  
մով ու սրտաբաց հյտարընկալել են:

### ՀՈՎՎԱԿԱՆ ՄԵՂԵԳԻ

Իրար ի՞նչ են գալիս հովիվ ընկերները: Ընկերներ՝ եւ:  
Եղբայրներ՝: Երկուսը միասին՝: Զգիտեմ: Բայց հիմա, այս  
պահին այնպե՞ս եմ ուզում հասկանալ հովիվ ընկերների  
հարաբերությունները: Իրաք ի՞նչ են գալիս հովիվ ընկեր-  
ները: Այդ մասին ես մտածել եմ երբեք հետևյալ պատմու-  
թյունը լսելուց հետո:



Մնչում էր հոտը: Սուրենն ու խաչիկը հոտի կողքին  
մեկնված լուռ նայում էին ծնծղան երկնակամարին: Մի  
ասուպ սուրաց: «Պատերազմի ժամանակ կկասկածեինք-  
ա՞ստղ ցուլաց, թե՞...», — մտածեց Սուրենը, տեքաց, որ չի  
մոռացել, որ չի մոռացվում:

Խաչիկը նայեց սուրացող ասուպի լուսավոր հեաքին և  
հիշեց տատից լսած հեքիաթը. «...Փախցրեց աղջկան, նըս-  
տեց ձին, գիրկն առավ և... Ձին հրեղին էր, քամուց արագ  
էր գնում, և պոչը լուսավոր, երկար մտրակի պես ցույց էր  
տալիս, թե ուր տարավ...»: Հիշեց, անհանգիստ շարժվեց,  
փնչաց ու նայեց Սուրենին: Սուրենի աչքերը կկոցած էին:  
Ինչ-որ օտար մի բան կար այդ հայացքի մեջ: Օտարոտի  
այդ հայացքը խաչիկն այն ժամանակ էր տեսնում ընկերոջ  
աչքերում, երբ նա հիշողություններ էր պատմում պատե-  
րազմի մասին:

Աւր որ է կսկսի...

Իսկ Սուրենը մտածեց, որ խաչիկը վերջերս, իրոք, ան-  
հանգիստ է, լուակյաց է դարձել: Ավելի շատ սուլում է և  
սուլում մի տեսակ ազնիւի լուով, մի բիշ թախժոտ, բայց շա՛տ

Քաղցր: Հեռավոր մի բան էր տեսնում Սուրենը այդ սուլոցի մեջ, հեռավոր, բայց ծանոթ մի բան: Մանոթ: Հարազատ: Քաղցր: Ի՞նչ էր դա: Դժվարանում էր հիշել: Թվում էր նրան, որ ջահել ժամանակ ինչ-որ տեղ մի օր թանկ մի բան կորցրել է: Բայց ի՞նչը, ի՞նչ կորավ, ախր: Երբեմն փորձում էր սուլել, սուլել այնպես, ինչպես հաշիկը: Չէր ստացվում և այդպիսի պահերին էր Սուրենը հիշում, որ ինքը հաշիկի երկու տարիքն ունի: Որ պատերազմի մասնակից է:

— Սուրեն:

— Հը:

— Կարգին պատասխանիր,— հաշիկը ընդոստ նստեց, երբեք այդպես չոր, մի տեսակ տիրաբար չէր խոսել: Սուրենը զգաց, որ նրա ձայնի մեջ, իրոք, լրջություն ու խորհրդավորություն կա: Ընկերոջ աչքերն այդպես կրակված առաջին անգամն էր տեսնում:

— Սուրեն... Սիրում եմ...

Սուրենը ձեռքերը հանեց գլխատակից, նստեց, ուշադրությամբ նայեց ընկերոջը: Այնպես նայեց, կարծես առաջին անգամ էր տեսնում: Նայեց ու հասկացավ այն, ինչ չէր հասկանում մի ամբողջ տարի: Հտակացավ, թե ինչու էր դուր գալիս հաշիկի սուլոցը: Իմացավ, թե որտեղից էր ծանոթ: Կոխվ գնալուց առաջ ինքն էլ էր այդպես սուլում: Գնաց՝ կիսատ մնաց: Մինչև վերադարձավ, կոխի դաշտում, փլատակների տակ էր մնացել իր մեղեդին: Կոպերը տաքացան, սրտում խտրտացին չթափված արցունքները: Ավելի մոտեցավ հաշիկին, ավելի զննող նայեց նրա աչքերի մեջ...

— Ծիշտ է,— ապաց, ավելի շուտ շնչաց, կարծես ինքն իր համար,— ճիշտ է, սիրում ես... Ո՞ւմ, հաշիկ:

Այդ առավոտ արևը շատ մեծ էր և այնքան մոտ, որ Սուրենին թվում էր, եթե մի քիչ վաղի, կհասնի արևին և եթե ուզենա՝ կգրկի կամ գլորելով կբերի հաշիկի մոտ:

հաշիկը սուլեց իր մեղեդին: Արևը՝ արև մնաց, հալվեց, փոքրացավ, և միջօրեին Սուրենը մահական ուսած գլուղ իջավ: «Հիվանդ եմ, հաշիկ, ճար շունեմ, ուղիղ բժշկի մոտ եմ գնում»:

Գլուղում լուրը բերնեբերան անցավ: Գլուղ էր, հտգար

շունչ, հազար բերան... «Սուրենը սարից խնամախոս է եկել»:

Մի քանի օր հետո գյուղը «ամփոփեց». Մարիայի թաշկինակը Սուրենը սար տարավ, Սարից իջան, հաշիկի ու Մարիայի հարսանիքն է:



— Զավեն:

Զավենը քար նետեց հոտը քաշող ոչխարին, հենվեց մահակի վրա:

— Ի՞նչ:

— Զավեն,— Հրանտի տոնը լուրջ էր, խիստ գործնական,— ասում են հաշիկն աղջիկ է ուզել:

— Ի՞նչ հաշիկ:

— Մեր հաշիկն, էլի՜:

Զավենը աչքերը ճպճպացրեց, հետո այնպե՛ս լայն բացվեցին աչքերը: Հանկարծ հիշեց, որ Հրանտն իր եղբայրն է: Միասին նույն օրը ծնվել են: Երկվորյակ են: Եվ անգեղակոթցիները քեռի Կարապետի տուն աչքալուսանքի են եկել երկուական շիջ գինով: Դպրոց են գնացել միասին: Բանակ՝ միասին... Հովիվ են նույն հոտում, տասը տարուց ավելի է:

Իրար ի՞նչ են գալիս տասը տարի սար ու ձորում միասին հովվութուն արած մարդիկ: Մոտ ընկերներ են: Եղբայրներ: Իսկ եթե, իրոք, նրանք եղբայրներ են և՛ երկվորյակ, ի՞նչ են գալիս իրար Զավենն ու Հրանտը՝ անգեղակոթցի Կարապետի օջախի որդիները, երկվորյակ եղբայրները: Այս հարցը հիմա, այս պահին այնպես է զբաղեցրել ինձ: Գիտեմ, նրանք, եղբայրներ լինելուց բացի, ինչ-որ էլի ուրիշ բան են: Ի՞նչ: Ա՛յ, դա է, որ ուզում եմ հասկանալ:

Հրանտը սարերի ցողաթաթախ առավոտվա Զավենի «բարի լուսն» է: Մո՛ւր, մութ գիշերներին՝ Զավենի հոգու արիութունն ու անվախությունը: Կարկուտից պաշտպանող ժայռեղեն կիրճը: Նաև այն մարդը, որը երկրից «կտրված» երկնամոտ սարերի վրա Զավենին կապում է աշխարհով լցված մարդկանց հետ: Մարդկային մի ողջ հասարակություն է Հրանտը Զավենի համար: Նաև... Ին՞չը: Զգիտեմ:

— Հա, — ժպտաց Հրանտը, — հաշիկը աղբի է ուզել:

Իսկ Ջավենը՝ հակված մահակին, անշարժացել, լաջն բացած աչքերով նայում էր: Հիշել էր, որ Հրանտը իր եղբայրն է. որ հաշիկն էլ իր եղբայրն է, իր և Հրանտի հալալ եղբայրը... Աղջիկ է ուզել, իսկ իրենք չեն իմանում: Ե՞րբ է ուզել: Երկու շաբաթ է չեն հանդիպել: Մի քանի օր առաջ հեռվից նկատեց. մահակը թափահարեց օդում: Բարևեց հովվին, ոչ եղբորը:

Ո՞վ է ուզել: Ո՞վ է իրենցից մոտ՝ իրենց եղբորը: Սուրենը. էլ ո՞վ: Սուրենն է ուզել: Ժպտաց, հարազատություն զգաց Սուրենի նկատմամբ, տեսնելու մեծ ցանկություն ունեցավ:

— Սուրենը էտք ո՞ր ուղղությամբ տարավ հոտը, կեսօրին որտե՞ղ կնստեցնի:

Երկար լուծյուն և լսածի հետ կապ «շոնեցող» մի պատասխան: Հրանտը երբեք չզարմացավ:

Հանգիպեցին Սանդով աղբյուրի մոտ:

Այգ օրը հանգիպեցին երեք եղբայր և մի ընկեր:

Երկվորյակները սեզմեցին Սուրենի ձեռքը և ձեռքսեղմումի մեջ հարցեր տվեցին և առան պատասխան. «Դո՞ւ ես ուզել աղջիկը»: «Հա՛»:

Երկվորյակները սեզմեցին իրենց կրտսեր եղբոր ձեռքը և ձեռքսեղմումի մեջ՝ կատակ-հանդիմանություն. «Ձե՛ն էլ չես հանում»: Խաշիկը հայացքը կախեց: Հովվական իր կյանքում՝ սարերի վրա, կիրճերում, վրանների դռանը, աղբյուրների մոտ... հանդիպումների ժամանակ առաջին անգամ հատկապես հիշեց, որ Ջավենն ու Հրանտը իր եղբայրներն են...

### ԼԵՌՆԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ

#### ՋԱՐԳԱԾ ՀՈՎԱՐՈՎ ՄԱՐԴԸ

Շենքի քիվերից անձրևի կաթիլներ կան կախված: Երեկ, մյուս օր, ողջ գիշեր անձրև է եկել: Առաժոտը արևով է բացվել, և անձրևի կախված ամեն մի կաթիլ՝ պսպսուն մի գլորուս է՝ աշխարհի բոլոր գույներով, աշխարհի շափ մեծ: Նայում եմ ու մտածում. ինչքա՞ն մեծ են այս կաթիլները,

խոր ու մեծ, ամեն մեկը քոչ մի հարիզոն է արտացոլել իր մեջ, արեն էլ հետք...

— Բարի լույս:

Հին ծանոթի պես բարե տվողը անծանոթ է, դրա համար էլ պատասխանում եմ ավելի ջերմ: Գլխարկի հովարի կեսը շարզվել, կախվել է ճակատին: Կռահելը դժվար չէ. անձրևի տակ շատ է ընկել: Երբևէ գույն է ունեցել գլխարկը, գուցե հենց գարնան սկզբին: Հիմա... «Ի՞նչ գույն ունեցած կլինի», — համառորեն մտածում եմ և ծիծաղում մտքումս, որ գլխարկի գույնը որոշելը այդքան հետաքրքրում է ինձ:

— էս ժողովը, թե հավաքը որտե՞ղ պետք է լինի, — հարցնում է դժգոհ: Զգացվում է, որ մի քիչ կոպտաբար է, բայց ոչ իզուր:

Աչքերը անհանգիստ շարժում է, և ես այնքան նմանութուն եմ գտնում՝ խլվլան, արևի շողերի գունավոր փունջը բեկող այդ աչքերի և դիմացիս ծառի տերևներից կառչած, տերևների հետ մեղմօրոք, արևի հրդեհով բռնված անձրևի կաթիլների միջև:

- Ձեր գյուղում խոտ քաղո՞ւմ են:
- Մեր գյուղը ո՞րն է, — ժպտում եմ ես:
- Ես մե՞րն է, մեկը կլինի, էլի՞:
- Հանկարծ մի ծանոթի է նկատում:
- Ե՛յ, — ձայն է տալիս, — կանգնիր հլա:

Առավոտ էր՝ բարի լույս տվեց: Բարևի համար անպայման ծանոթներ լինել պետք չէ: Ծանոթին տեսավ՝ առանց ավելորդ ձևերի հեռացում ինձանից: Իսկ ես սկսեցի մտածել...

«ԽՌՈՎԱՐԱՐՆԵՐԸ»

Շրջկամի բակը մարդաշատ է դառնում: Անմիջապես հասկանում ես, թե գրանցից ովքեր են հրավիրված հավաքին: Նայում են անսամպ երկնքին և անհանգիստ շարժումներ անում:

- Փամանակ գտան ժողովի, — բարձրաձայն գժգոհում է մեկը, — երեկ, մյուս օր լիներ, չէ՞ր լինի: Հաղթվ մի կարգին օր արեց, էն էլ ժողով:
- Եկեք ետ գնանք, ուշ չէ: Առաջարկությունը քննարկ-

ման» է դրվում: Շատերը համաձայն են. «Իսկական խոտ հավաքելու օր է»: ԼԿՅՄ շրջկոմի քարտուղար Յու. Ճշմարիտյանը անհանգստանում է. «Ընկերներ, ընկերներ, հասկանանք իրար, ի՞նչ եք կարծում, որ իմանայինք այսպիսի արևոտ օր կլինենր, կկտրեի՞նք ձեզ աշխատանքից: Կարծեցի՞նք՝ երեկվա, մյուս օրվա նման անձրևային է լինելու, մտածեցի՞նք՝ հավաքվենք մի քիչ զրուցենք մեր անելիքների մասին: Ինձ թվում է, պետք է սկսել հավաքը»:

— Լավ, համաձայն ենք, միայն թե շուտ վերջացնենք:

— Ի՞նչ շուտ, այ մարդ, որ սկսվեց՝ մինչև իրիկուն աչքի տակ ունեցիր: Հլա էս հայտարարությունը կարդա: «Հավաքից հետո գեղարվեստական կինոնկար՝ «Լեռնային քայլերգ»: Իսկը կինո տեսնելու օր է:

Համոզվեցին, որ հավաքը կազմակերպողները պակաս չեն փսոսում՝ հավաքը այդքան լավ օրվա հետ զուգադիպելու համար:

— Լավ, սկսենք, միայն թե շուտ ենք վերջացնելու:

«ԾՍ ԷԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ ԽՈՍԵԼ»

— Ստեփանավանի շրջանի գյուղատնտեսության երիտասարդ առաջավորների հավաքը հայտարարում եմ բացված «Անասնակերի կուտակումը և կոմբիտական կազմակերպությունների խնդիրները» հարցի մասին ձայնը տրվում է ԼԿՅՄ շրջկոմի քարտուղար ընկեր՝ Ճշմարիտյանին:

Ստեփանավանի շրջանի հողի երիտասարդ մարդիկ միշտ էլ ապացուցել են իրենց աշխատասիրությունն ու եռանդը, գոյությունները հաղթելու, արդյունքի հասնելու իրենց համառ ձգտումները: Անցյալ տարի շրջանի երիտասարդությունը ամենաակտիվ մասնակցությունը ունեցավ խոտհնձի, սիլոսացման հանրապետական երիտասարդական միասնայակին, շահեց առաջնությունը՝ և պարզևատրվեց ԼԿՅՄ Կենտկոմի պատվոգրով:

— Անցած տնտեսական տարում շրջանի երիտասարդների ուժերով կուտակվեց 550 տոննա խոտ, 550 տոննա սիլոս, հսկայական քանակությամբ ծղուռ Կերի կաշուն բազայի ստեղծումը եզավ մեր անասնապահների ոգևորված

աշխատանքի ու հաջողությունների հիմքը: Մինիմումի հասցվեց անկումների տոկոսը, ավելացավ կաթի արտադրությունը: Այս տարի, անցած հինգ ամսում, շրջանում կաթի համախառն արտադրությունը հասցվեց 4623 տոննայի, 604 տոննայով ավելի անցած տարվանից, մեկ կովի օրվա միջին կաթնատվությունը կազմեց 9,2 կիլոգրամ: Կաթի արտադրության հարցերը հաջողությամբ են լուծվում Սվերդլովի, Ուռուտի, Վարդաբլուրի կոլտնտեսությունները:

Դահլիճում նստածներից մի քանիսը անհամբեր վրա են տալիս. «Իսկ մե՞րը, իսկ մե՞րը...»: Զգում ես, որ շիկացած մթնոլորտ է առաջացել, հավաքի երիտասարդ մասնակիցներից ամեն մեկը ուզում է, որ իրենց գյուղի անունը լսվի դահլիճում. խոսվի իր և իր համագյուղացիների լավագույն աշխատանքի մասին: Դա յուրօրինակ մրցություն է, արժանապատվության հարց: Կոմերիտմիության շրջկոմի քարտուղարը ձայներից է ճանաչում նրանց՝ ավտովարորդ Սարգիս Նավասարդյանին, հորթապահ Իվան Բեջանովին, Վուրդյա Մելոյանին և, առանց կտրվելու զեկուցագրից, ժպտալով ավելացնում է նաև նրանց գյուղերի անունները՝ «Կողեսի», Պուշկինոյի կոլտնտեսությունները, Կուլբիշևի սովխոզը և այլն»:

Ստեփանավանի երիտասարդ դաշտավարները հանրային հոտերը կերով ապահովելու ուղղությամբ ավելի համարձակ առաջադրանքներ են դրել իրենց առջև: Կուտակել 1.200 տոննա խոտ, 22.500 տոննա սիլոս, 500 տոննա ծղոտ: Դա կազմում է շրջանում կուտակվող անասնակերի 70 տոկոսը: Այդ նպատակով կոմպլեկտավորվել են կեր հայթայթող 45 բրիգադներ ու օղակներ, մեքենայական 6 ագրեգատ: Հուլիսը նրանց խիզախումների ամիսն է: Որ գյուղի կոմերիտականներն ու երիտասարդները կդառնան խոտի կուտակման միամսյակի հաղթողները, մրցանակակիրները, երիտասարդական հաջորդ հավաքի «ամենաարտոնյալները»:

— Սկսված է կերի կուտակման հաղթարշավը և արդեն առկա են առաջին հաջողությունները: Գյուլագարակի, Կուրթանի, Ագարակի...

— Բա մե՞րը: Բա մե՞րը...



Յու. Ճշմարիտյանը ետրից է ոտըդում իր «սխալը», էլի ետր անուեններ է ափեկացնում:

Հարուստ է Ստեփանավանի բնությունը, գեղեցիկ ու հարուստ: Թողառ սարը, Պուշկինյան լեռանցքը, կալվարը, փարդավառի սարը կանաչ են, ծաղկազարդ: Հիանալը բիչ է: Գյուղացու համար ավելի գեղեցիկ կլինեն լեռներն ու լեռնաշղթաները, եթե խոտի բլուրներ կանգնեն սարերի պես: Բայց հույսը միայն սարերի վրա չպետք է դնել: Երբեմն սխաբսւմ են»: Թվում է, թե «ծով» խոտ կա, բայց...

— Լ. Բերդում, էեջանում, Յաղդանում բարձր հիմքերի վրա շեն գրել եգիպտացորենի պլանտացիաների մշակութայն կուլտուրան, շեն կիրառվում բերքատվության բարձրացման բաւոր միջոցները. օքինակ՝ պարտաացումը: Յաղդանի և Ստեփանավանի սովխոզների կոմերիտականներն ու երիտասարդները կերթ ճակնդեղի մշակութայն աշխատանքների դանդաղ ընթացքը չպետք է կապեն հաճախակի տեղացող անձրևների հետ, որովհետե Պյառգյառում, Ագարակում, Կիրովոյում նույն պայմանների առկայությամբ, մարդիկ հակառակն են ապացուցել:

— Ճիշտ եք, ճիշտ եք,— հավանությունն են տալիս գահլիճից:— Այդ սովխոզներից ո՞վ կա այստեղ, անպայման ձայն ավեք:

— Թող քեզ ձայն տան,— նեղացած պատասխանում է մեկը,— տեսնենք գու ի՞նչ ես արել, որ այգպես մեծ-մեծ խոսում ես:

Դահլիճը «մտքերի փոխանակում» է կատարում, նախագահը ծլնգացնում է զանգը: Չէ՛, սրանք տաքացան, մոռացել են արդեն, որ շէին ուզում հավաքին նստել: Ժողովը կերկարի:

Եվ երկարում է. Անցել է երեք ժամ, առանց ընդմիջման: Զեկուցումը վաղուց է ավարտվել: Երջանի խիզախ երիտասարդության մասին խրախուսական իր խոսքն է ասել պարտշրջկոմի քարտուղար ընկ. Գ. Հունանյանը, արտագրական վարչության պետ՝ ընկ. Ք. Մաժինյանը:

Հատկապես մեխանիզատորներին է դիմել «Հայգյուղտեխնիկայի» շրջանային բաժանմունքի ինժեներ Նիկոլայ Մինչակը:

Կատարած և կատարվելիք իրենց գործերի մասին են խոսել Կույբիշևի սովխոզի ԼԿՄ կազմակերպության քարտուղար Վ. Մելոյանը, Ազարակի կազմակերպության անդամ Արմենակ Չոբանյանը, Պուշկինոյի կուլտնտեսության հորթապահ, տնտեսակեր կուտակող երիտասարդ օղակի ղեկավար Ի. Քեչանովը, Գյուլագարակի կուլտնտեսության մեխանիզատոր Վիլեն Գոխոլյանը, Ուուուտի կուլտնտեսության ԼԿՄ կազմակերպության քարտուղար Մ. Մարգարյանը, բայց ելույթ ունենալու համար ցանկություն հայտնողներ կան: Հիմա, ԼԿՄ շրջկոմի քարտուղարն ինքն է պահանջում սահմանափակել ելույթները:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ**

— Հավաքն ավարտված է, ընկերներ: Այժմ ձեզ համար կցուցադրվի «Լեռնային քայլերդ» գեղարվեստական կինոնկարը:

«Շնորհակալ ենք, ախպեր ջան, այսօր կինո նայելու օր չէ: Մենակ շմոռանաք, որ մի կինո պարտք մնացիք»:

Հավաքի մասնակիցներից և ոչ մեկը չի երկմտում՝ կինոնկար դիտել, թե՛ գնալ խոտհնձի, շնայած օրվա կեսն է մնում: Կես օր— մեծ ժամանակ է ամառվա կես օրը:

Երեկ, մյուս օր, մյուս օրերը անձրեք շթողեց, որ օրվա կես րոպեն էլ պետք գա: Հիմա...

Եվ կոտրված հովարով երիտասարդը ընկերոջ ուսին խփելով, արագ բարձրանում է ավտոմեքենայի թափքը:

Նրանք գնացին՝ Թողաս սարում, Պուշկինյան լեռնացքում, Հալվարում, Վարդավառի սարում «Լեռնային քայլերդ» «վավերագրական կինոնկար ցուցադրելու»:

**ՆՈՐ ՇԵՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ**

Քասախ գետը Աշտարակի ոտքերին փաթաթվելով՝ գնում է ու հնամենի իր երգն է ասում: Մշ ափում ամեն գարունքի նոր հանգերով արձագանքվում, հագարապատկվում է այդ երգը, որովհետև այնտեղ մի շենացած Աշտարակ կա,

տասը հազար հոգի ու սիրտ, իսկ ձախ ափում Քասախի  
երգը համբանում է, որովհետև ափը անապատ է, որովհետև  
խճոտ է ու քարոտ:

Քասախի ձախափնյա ժայռերից մինչև Բմբլաձոր երկու  
կիլոմետր է: Այնտեղ՝ Բմբլաձորի կողքին, գորշ մի սարի  
մոտ, պահակ Սիմոնի տնակն է, ոչ բոստան-բանջարանոցի,  
այլ «խոխեքից» ապահով է պահում մի վերամբարձ կուռնկ,  
մի բուլդոզեր, մի կոմպրեսոր: Այնտեղ, անապատի վրա, նոր  
շեն է ծնվում: Արզնի-Շամիրամ ջրանցքը սար ու ձոր կրտ-  
րելով, ջրաշինարարների ոտնահետքերով գալիս և արդեն  
Բմբլաձորի պուռնկով դեպի Արայի լեռը բարձրացող անա-  
պատ տարածություններին շունչ է տալիս: Այսինքն՝ արգեն  
կարելի է ձորապուռնկին գյուղի հիմք փորել: Արդեն հիմա  
այնտեղ երեք երկհարկանի շենք է բարձրանում, իսկ մնա-  
ցածները՝ հիմք ու պատով, դուռ ու երդիկով, հատակագծի  
վրա են: Իսկ ձմեռնամուտին 48 երդիկից ծուխ կելնի, գու  
կտա սառած օդին, հետո էլի կբարձրանա ու կդառնա հա-  
վերժի ճամփորդ: Ապա, երբ հատակագծի վրայից շենք-  
շինությունները մեկ-մեկ կվերցնեն, կդնեն հողին, երկնի  
տակ կանգնող ծխասյունները կդառնան 240, ու պահակ Սի-  
մոնը կթողնի ամեն ինչ, տուն կգնա:

— Գիշերն էստեղ խաղաղ է,— ասում է Սիմոնը:— Առա-  
ջին օրը, որ եկա, շուն բերեցի հետս, անտերը գնաց, մնա-  
ցի մենակ...

Հետո էլի ինչ-որ բաներ պատմեց Բմբլաձորի գիշերների  
մասին, բայց մտքումս անցած գիշերն էր, գիշերվա կեսին  
հորս արած հարցումը.

— էդքան գիրք կկարդաս. մեր գեղի անուն չե՞ս գրտ-  
նում մեջ (հորս գյուղը Մշո Փեթարն է), շիմացանք, շունչ  
կա՞, չկա՞... Ավեր գեղ երկրի համար քոռ աչկու նման է,  
ոչ կծիծղա, ոչ լաց կեղնի...

Ես սուս մնացի, և հայրս շարունակեց. լռության մեջ  
հասկացանք իրար այնպես, ինչպես քանդված կամուրջի եզ-  
րին նստած ճամփորդները:

— Մի բան հարցնեմ,— գործավար Ալբերտ Պետրոս-  
յանը կտրում է մտքիս թելը,— ազգակցիս եթե հրավիրենք  
այստեղ, չի՞ գա:

Ալբերտը հպարտ է, որ աշխարհի շախմատի թագակիրն ազգանունից ունի:

— Գա ի՞նչ անի:

— Մի քար թող գցի շենքի հիմքում, որպեսզի էդ տանը մեծ շախմատիստ ծնվի:

— Իսկ շախմատի ո՞ր թագակիրը քար գցեց Տիգրանի պապի տան հիմքում, հակառակը, հիմքը քանդեցին, բայց Տիգրանը ծնվեց...

Ալբերտը սուս մնաց մի քիչ, ծխեց, տաք ափով սրբեց քրտնած ճակատն ու ասաց.

— Տես, վարպետ Քոչարը հիմա քարը քարի վրա է դնում, տուն կառուցում, Եթե գիշերով ավազակի մեկը գա քանդի նրա դրած պատը, հիմքն էլ հետը, ես չեմ համարի, թե Քոչարի շինած տունը քանգվեց: Քանի որ առավոտյան նա ՚կգա, մուրճը կառնի ու, ատամները սեղմած, ավելի ամուր կկաշի գործին: Իսկ եթե հանկարծ Քոչարը վաղը գա և հայտարարի. Ալբերտ, անունս ցուցակիցդ հանիր, էլ չեմ ուզում աշխատել: Այս դեպքում, իրոք, հիմնահատակ կլինի նրա կառուցած այս շինությունը: Ինչո՞ւ: Որովհետև նրա հոգու մեջ են արդեն փուլ եկել սեփական ձեռքերով կանգնեցրած պատերը, մեռել կառուցման ձգտում ու տենչ: Այնպես որ, ինչ մարդու մտքի ու արյան մեջ կա, դա արդեն իր սեփականն է, ոչ ոք, ոչ ոք չի կարող առնել-ավերել:

Ես նայում եմ Ալբերտի շառագունած դեմքին, որ չգիտեմ արևի՞ց է, թե՞ հուզմունքից, և մտածում, որ նա իր «փիլիսոփայությունը» ուզում է ասել՝ այս շենքը, որ կառուցում են, արդեն կա, որովհետև հարյուր-հարյուր Ալբերտի ու Քոչարի նման մարդկանց մտքի ու արյան մեջ է:

— Ճուտո՞ չան, ջուրը մի բեր այստեղ,— բանվոր-որմնադիրների համար դույլով ջուր տանող տղային կանչում է գործավարը:

Ջրկիր տղան նեղացած մոտենում է. տղան արդեն ահագին բան է հասկանում, գնահատում է իր արածը. իրեն համարում են շեն կառուցող, իսկ մարդիկ ասում են՝ «Ճուտո»: Ալբերտն էլ է նկատում այդ, նայում է էդիկի նոթոտ դեմքին, աչքով անում ինձ:

— Հայերը շուտ են հասանաճում,— ասում է և շնչում ջրի բույրը:

Արևը կրակ է թափել Բմբլաձորի պռունկին: Սուրիկի բուլղոզերը տնքում է, նոր հիմք է փարվում, մեքենայի վահանն ու քարերը բախվում են իրար, կայծեր են պոկվում: Ալքերտը գործի է գցում կոմպրեսորը, հետո մոտենում, Վազգենի ձեռքից առնում է հորատիչը, բուլղոզերի վահանը հանդիպել է անշարժ մի քարի, նեղն է ընկել, օգնել է պետք:

Ամառ է, Շատ շոգ: Մայր հողի նման անժպտուն ու անաղմուկ երկնում են մարդիկ: Մի նոր շեն պիտի ափելանա աշխարհում: Հիմա դեռ անուն չունի: Թող գյուղ լինի, անուն չի պակասի: Հորս մի բերան հարցնեն, երազ դարձած հազար անուն մի շնչով կասի, հալալ կանի նոր ծնվող շենի համար: Վերջին մի քանի տարում Աշտարակի շրջակայքում, էլի անապատի վրա, հինգ նոր շեն են հիմնել: Մրգաշեն, Պոռչյան, Քասախի, Արայի, իսկ մեկը՝ Սասունիկ: Սարերի վրա թռած մի փոքրիկ գյուղ կար Սասունիկ անունով, որտեղ ոչ հող կար, ոչ ջուր: Իսկ մարդկանց հող էր պետք և ջուր: Լեռներից վար իջան, բնակեցին դեռ թաց ծեփոն շինություններով գյուղը և նոր բնակատեղին կնքեցին սարից հետները բերած անունով՝ Սասունիկ:

— Էս շենի անունը Սիսակյան է լինելու,— ասում է գործավար Պետրոսյանը,— ողջ աշխարհը մասնակցեց թաղմանը, մարդ կարողանար այդքան բարձրանալ:

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հանգուցյալ ակադեմիկոս Նորայր Սիսակյանը Աշտարակում է ծնվել: Երբ դուրս է եկել իր ծննդավայրից ու կանգնել աշխարհի մեծ ճամփեքի վրա, երևի մտքով չի անցել, թե ինչ փառք կբերի իր ժողովրդին, օրինական հպարտություն՝ իր ծննդավայրի մարզկանց, և որ անունը ողջ աշխարհը պտտվելուց հետո ետ կգա ու կդառնա Քասախի ափին հայտնված մի նոր շենի անուն: Հետո տարբեր տեղերից մարդիկ Սիսակյան գյուղի ճամփան կհարցնեն, կգան. ամեն մեկն իր համար շեմ ու օճորք կընտրի, ամեն մեկն իր համար լույս կվառի: Եվ այդ լույսերի մեջ կթեղղվի Քասախի ձախ ափում մրափած անապատի լուսթյունը...

Անապատի տարի՞քը...

Անապատը տարիք չունի, ախր! Ժամանակը քամու պես է անցնում անապատի վրայով, այնպիսի քամու, որը փոշուց բացի ուրիշ ոչինչ չի թողնում իր ետևում:

Ժամանակը սահում է անկարգ, աշխարհում բազմերանգ ծաղիկներ են կյանք առնում ու մահ, գետեր են դառնում փրփրաբաշ: Շա՛տ բան է փոխվում, բայց աշխարհի հետ ծնված անապատը չի ապրում:

Անապատը նաև պատմություն չունի՝ արևի երես շտեսած քարերի պես, բայց ոչ կործանված ու թաղված այն քարերի, որոնց վրա սեպագրեր կան: Սեպագրեր... Դե, բոլոր պատմություններն էլ մարդն է ստեղծում, պատմությունը սկզբվում է մարդու ոտնահետքերի հետ:

Աշխարհում անապատներ շատ կան, Կա նաև մեր մի բուռ Հայաստանում, ուր արդեն ծայր է առել մի հերոսապատում:

Թալինի ցածրադիր գոտու ղոների պատմությունը սկսվեց այն օրից, երբ մարդիկ ճեղքեցին Արփաշայի ժայռեղեն ավիր, երբ Թալինի շրանցքի մայրուղին ու բաժանարարները փրկվեցին անապատում, որպես բանուկ բազկի արյունատար երակներ: Եվ հետո, երբ մի օր Արմենը կանգնեց, հայացքով թրատեց անապատի քար լուծությունը, այրեց, ոտնատակ տվեց առաջին փուշը, երբ հողի երես հանեց պատմություն չունեցող մի քար...



Ուզում եմ ակնարկ գրել Արմենի մասին:

Արմենը... Աչքերի ու մազերի գույնի մասին ոչ մի խոսք: Ում՝ որը դուր է գալիս, թող տա, կսազի նրան: Այ, ուրիշ է հայացքը: Անապատի խստություն կա նրանում, քարի տակից ժպտացող մանուշակի քնքշանք, հաստատակամ է, համար, անզիջում, նաև ներող: Եվ մանկական անմեղություն կա նրա հայացքում:

Եվ ուրիշ են նրա ձեռքերը: Ափերը՝ հողագույն են, ճաք-

ճրքված, սղոցող: Բայց երբ շոյում է իր մանկան այտերը, ափերը դառնում են թավշյա, նուրբ: Բազուկները պիրկ են, մկանուտ: Կարծես գարնան խենթ վտակներ լինեն մկանները և որպեսզի ափերից դուրս շթուեն՝ աներևույթ մի ձեռք թաղանթով պատել է դրանք...

Այժմ, վարագույրի ետևում թողնելով նրա մանկական ու պատանեկան տարիները, սկսենք հենց այն օրվանից, երբ...



Արմենը ծածկեց դուռը, կողպեց: Ոչ դռան ճոռոցը դուր եկավ, ոչ փականքի շրխկոցը: Ինչ-որ անծանոթ ու շտրամադրող շեշտ կար նրանցում:

Տան պատերից կրի հոտ էր գալիս...

Երեկ իրիկնապահին մեկը ուղեկցել էր իրեն այդտեղ, րանալին հանձնել ու սեղմել ձեռքը՝ «Ուրախ օրեր անցկացնես»:

Մի քանի քայլ և՛ փոշեպատ ճանապարհն էր: Մեկը բարեկեց, ժպտալով, հին ծանոթի պես:

Միասին քայլեցին:

...Ձէր եղել, առաջին անգամ էր տրորում անապատը: Մի քանի անգամ հեռվից տեսել էր՝ գնացքի պատուհանից, երբ լենինականից Երևան էր գնում: Եվ պատանեկան երեվակայությամբ անապատում ստեղծել էր լայն-լայն տերևներով ծաղիկներ: Հիմա... Կանգնել ու սևեռուն հայացքով նայում էր Արմենը: Չորացած փշերի արանքից հողի ճաքերը համառ հայացքով պատասխանում էին: Չգիտես ինչու, հիշողությունները ետ տարան: Գյուղում, իրենց հարևանը մի պառավ կին էր, հարազատներ շուներ՝ նստում էր դռան քարին ու նվաղող հայացքով նայում անցնող-դարձողին: Երբեմն իրենից ջուր էր ուզում: Վազելով բերում էր: Պառավը վերցնում էր ջուրը, օրհնում իրեն: Խմում էր, նորից օրհնում և այդ պահին նրա մրմնջացող շուրթերի վրա կնճիռները հավաքվում էին, խտանում, այ, այսպես՝ գետնի այս մեծ ճաքի շուրջը ընկնող քարակ ճեղքերի նման... Հետո Արմենին թվաց, թե փշերի տակից երևում են նաև ծերացած,



մարմրող աչքեր... Հայուցինացիա է: Նա ամուր փակեց աչքերը, նորից բացեց ու ոտքով ամուր խփեց փշի բնին: Փուշը թռավ: Մնաց հողի ճաքը՝ օրհնանք մրմնջացող շուրթերի նման բաց:

— Ոտքով չի լինի, երիտասարդ, հրդեհես պիտի, հրդեհես: Արմենը սթափվեց և...

...Հրդեհը ատելի է: Ավերիչ է, կործանարար, Իսկ երբ փուշն է այրվում ճրթճրթալով: Հաճույք է դա: Բայց էլի մի տհաճութուն զգում ես՝ ծուխը գետնատարած սողում է, ոլոր-մոլոր օձի պես: Այ, ուրիշ է երդիկից բարձրացող ծուխը: Սյունի է նման:

Երեկոյան Արմենը թուղթ ու մատիտ ճարեց, նստեց անկողնուն: Այնքան շատ էին օրվա տպավորությունները, ի՞նչ գրի նամակում... «Հավ եմ: Բնակարան ստացա: Այսօր աշխատել եմ: Պետք է, որ հոգնած լինեմ, բայց չի զգացվում: Իմ որոշումը մեկն է՝ մնում եմ, իսկ ձեզ սպասում եմ: Եթե հանկարծ չեք... Բայց եկեք, անպայման և որքան շուտ, այնքան լավ, բարևում է ընկերս՝ Հայկը: Արմեն»:

Վերջին բառերի տակ նա գիծ քաշեց, թող շեշտվի, թող տանեցիները իմանան, որ նոր բնակավայրում արդեն ընկերունի: Իրոք, ի՞նչ հետաքրքիր է առավոտյան դեռ անծանոթ, հիմա՝ ընկեր: Մի քանի ժամ է անցել... Ախր, ուրիշ ժամեր էին. միասին փուշ էին վառել, միասին զզվել գետնատարած սողացող ծխից, բազուկները ձուլել էին իրար ու քար գցել մեքենայի թափքը, անբացատրելի զգացում էին ունեցել, երբ հոնդացող տրակտորը երևացել էր, խոփը գցել հողը՝ բացել առաջին ակոսն ու խաչ քաշել անապատի դեմքին:

Թաց աշուն է, տնկում պետք է կատարել՝ խաղողի վազ, ծիրանի ծառ, Նորութուն Արմենի համար: Մինչ այդ նա գիտեր, որ ծառերը (վազին էլ նա ծառ էր ասում) գարնանն են տնկում, միայն գարնանը: Հիմա...

Վերցրել է խաղողի արմատակալն ու կանգնել փոսի մոտ: Դողում են ձեռքերը. ախր, անապատում խաղող պիտի տնկվի, խաղող, առաջին «Արարատին»: Եվ թվում է Արմենին, որ տնկման պահին արտակարգ մի բան կկատարվի: Անպայման: Ասենք, անձրևաբեր ամպերը կբախվեն իրար,

աշխարհով մեկ կգտա երկինքը, անձրևը կթափվի ունց որ  
կժի բերանը բացեալ

— Հը՛, Արմեն, ի՞նչ ես մտածում, տնկիր, արձատները  
շուտ են մքսում:

«Արձատները շուտ են մքսում»: էլի մի բան սովորեց:  
Նա արմատակալը մոտեցնում է հողին և... Նրան թվաց, որ  
այնուամենայնիվ, երկինքը մի տեղ ճայթեց, անձրև կաթեց  
վերևից...

Քանի՞ հեկտար ծիրանի ու իաղողի այգի հիմնվեց այդ  
օրը, այդ աշնանը: Պատկերացրեք, որ դա այնքան էլ կարևոր  
չէ: Անապատը սկսել էր պատմություն ունենալ: Մարդն էր  
կանգնել անապատում՝ Արմենը: Եվ բավական էր, որ ձմեռ-  
նամուտին նորաստեղծ ավանում հարսանիք եղավ: Ավանի  
բոլոր բնակիչները հավաքվել էին: Ամեն մեկը երեկվա իր  
գյուղի ադաթով օրհնեց Արմենին և նրա կնիքին տոնիխած  
նստած ճերմակ պսակաշորով աղչկան:



Գարուն էր: Երկինքը ցածրացել էր, ամպերը իրենց ծե-  
րացած մեջքը քսում էին գետին, Քալինի ղոներին դիպած  
աշխարհի առաջին գարունը եկավ Արմենի ոտքերի հետ:

Գարուն էր: Ապրիլ: Այդ օրը Արմենի համար անակնկա-  
լությունների օր էր: Անցած աշնանը իր ձեռքով տնկած ծի-  
րանենու վրա... ծաղիկ տեսավ: Ծաղիկ: Շփոթվել էր Արմենը:  
Գուցե աչքի՞ն է երևում...

Իսկ իրիկնապահին նա խենթի պես վազում էր փոշեպատ  
փողոցով: Տեսնողները տարակուսած շարժում էին ուսերը:  
Մեկը կանգնեցնում է. «Ի՞նչ է պատահել»:

— Մարդ ծնվեց, մա՛րդ...

Անապատում կառուցվող ավանում մարդ ծնվեց, առա-  
ջին երեխան... Լուրը սարի ետևից դեմքը նոր հանած արևի  
առաջին շողի պես, ամեն դռնից ու պատուհանից ներս մտավ,  
դիպավ նոր բարձրացող բնակարանների կիսատ պատերին,  
զրնդաց վարպետի մուրճի հետ, կտրեց-անցավ Մաստարա  
սելավը, դիպավ ծիրանենու առաջին ծաղկին և... ծաղկի  
ապիտակ պսակաթերթերից մեկը պարելով իջավ վար...



Անցել է 6—7 տարի:

Բայց անապատում բացված առաջին ակոսը, տնկված առաջին արմատակալը, առաջին ծաղիկն ու ողկույզը, առաջին... հուշ են գառնում Արմենի համար:

Հիմա մեկը չէ, է՛, չգիտեմ քանի քարաբլուրներ են կանգնել՝ ձեռակերտ սարեր, կանգնել են որպես Արմենի մկանուտ բազկի կոշտ ու կոպիտ հուշարձաններ: Եվ ալիքվում է մի կանաչ ծով՝ պտղատու աւ խաղողի այգիներ, որը հայացքով չի կարողանում ընդգրկել Արմենը:

Նույնան մնացած տարածություններ էլ դեռ կանաչ ծովի մեջ կան:

Հիմա Մասիսներին ժպտացող Արմենի տան ծուխը նրա տղային է թվում սլացիկ բարդի, որով կարելի է մագցելմագցելի դեպի երկինք...



Բայց վերջապես, ո՞վ էր Արմենը: Ազգանունը չգրվեց գոնե, ոչ էլ բնակավայրը:

Արմեն՝նը...

Այստեղ կուզենայի գրել 1550-րդ համարով վերջացող անունների մի ցուցակ՝ Թալինի արտադրական վարչության Արագած, Արտենի, Կարմրաշեն և Օրջոնիկիձեի անվան այգեգործական սովխոզների բանվորների անունները և խընդրել ընթերցողին՝ շնորհի, բաց չթողնի ոչ մի անուն և ոչ միայն կարգա՝ նաև հիշի, անպայման հիշի:

Թվաբեկներ մի քախսին:

Արմենը գու հս, արագածցի ՄԵՐՅՈՒԱ ՍԱՀԱԿՅԱՆ: Դուք՝

ԱՄՋՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՌԻՓՄԻՄԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԻՄԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նրանցից ամեն մեկը մի մտեկալիուն ու պատանեկու-

թյուն է թողել ինչ-որ տեղ և շահել հոգու կրակը սրտում, բազուկներում ուժ ու կորով, կանգնել անապատում: Քարեր է դրել իրար վրա, շենքեր կանգնեցրել՝ աշխարհում նոր շենքեր...

Մարդը խախտել է անապատի քար լուսթյունը, գոտեմարտել խիզախորեն և ամրակուռ իր բազուկներով անապատից քաղցրություն քամել:

### ԵՎ ԱՄԱՌՆ Է ԱՅԴ ՁԵՌՔԵՐՈՒՄ

Այս տարվա նոյեմբերի 15-ին Քալիֆնի շրջանի Արագածի այգեգործական սովխոզի կուլեկտիվը նշելու է սովխոզի հիմնման տասներորդ տարեդարձը:

Տոն՝ աշխարհի մի անկյունում դարերի լուսթյունը խախտող ամենախոս ծուխ-լեզվակների ծննդյան համար:

Տոն՝ անապատին «ձեռնոց նետած» մարդկանց՝ թալինցու, կիրովականցու, արթիկցու, ապարանցու, սպիտակցու, աղինցու տասնամյա ծանոթության ու բարեկամության:

Տոն՝ բնության քմահաճ խաղերի ու սխալի դեմ մարդու գոտեմարտի ու հաղթության:

Տոն՝ մկանուտ բազուկների երդվյալ միասնության:

Միաձույլ այդ բազուկները «սև խաչ» քաշեցին անապատի դեմքին: Միաձույլ այդ բազուկները կանաչով են ներկել երեկվա անապատը: 916 հեկտար խաղողի ու պտղի այգի՝ վազերն ու ծառերը անապատին դեմ քվեարկող ձեռքերի նման երկինք են պարզված: Միաձույլ այդ բազուկները անապատի քարացած քաղցրությունից պատառիկներ են պոկել արդեն ու մեկնել աշխարհին: Իսկ անցած տարի նոր հաղթանակի հասան, որը վերջերս ամփոփվեց այսպիսի մի որոշման մեջ. «Անցած տնտեսական տարում այգիների մշակությունը բարձր հիմքերի վրա դնելու, պետական պարտավորությունները կատարելու, արտապլանային օգուտները գերակատարելու համար Հայկական ԽՍՀ գյուղատնտեսական մինիստրության և արհմիությունների փոխանցիկ դրոշր և առաջին կարգի մրցանակը շնորհել Քալիֆնի շրջանի Արագածի այգեգործական սովխոզին»:

Ակամա մտածում ես. այդ երբվանի՞ց թալինը դարձավ այգեգործական շրջան (շատերին դեռ հայտնի չէ): Եվ երբ-վանի՞ց այդ շրջանի տերիտորիայի մեջ մտնող այգեգործական սովխոզը առաջինը դարձավ հանրապետութունում: Բայց աշխարհում շատ բան է փոխվել ու պիտի փոխվի: Եվ ոչ հրաշքով. մարդկանց մտքի ու բազկի ուժով:

Հիշում եմ. անցած տարի, հենց այս օրերին, երբ նույն Արագած սովխոզի մասին «Աշնանը կբացվի առատության սուփրան» վերնագրով մի հոդված էր պատրաստված տպագրության, հոդվածի հեղինակը զանգահարեց խմբագրութուն.

- Խնդրում եմ հոդվածս չտպագրեք:
- Ինչո՞ւ:
- Սովխոզի այգիները երեկ կարկտահարվեցին:

Հոդվածը ցավով միացրեցինք չտպագրվող նյութերին: Հետո զանգահարեցինք սովխոզի դիրեկտոր Սարգիս Խանոյանին.

- Կարկտահարութունից շա՞տ են վնասվել այգիները:
- Ի՞նչ վնասվել, մեր այգիների վրա կարկուտ չի եկել:
- Ուրեմն, կարելի է հոդվածը տպագրել:

— Տպագրելը ձեր գործն է, իսկ որ կարկուտ է եկել, դա իրոք այդպես է: Բայց մենք չենք ուզում ընդունել դա. եթե բնության քմահաճույքներն ու բնական աղետները իշխեին մեզ վրա, անապատի վրա այգի չէինք տնկի:

Մեզ ուրախացրեց մարդու լավատեսութունը, անընկճելի համառութունը: Բայց ականատես չեղանք, թե հողի վրա կարկուտի արած ամեն փոսի մեջ, ծառերի ու վազերի վրա արած ամեն քերծվածքի մեջ քանի կաթիլ քրտինք կաթեց սպեղանու պես:

Մենք ականատես չեղանք: Մարդիկ ամեն ինչ անում էին «աչքից հեռու», ոչ հեռուստացույցով «աշխարհին» ցույց տալու, ոչ թերթի միջոցով՝ պատմելու համար: Պարզապես մարդիկ էին՝ լցված հողի իմաստությամբ, հողի բարությամբ ու շնորհով, ազնվացած հողի պես, Մարդիկ էին՝ օժված քրտինքով:

Սխալվել էինք, ժամանակին իզուր չէինք տպագրել հոդվածը: Ահա փաստերը. «Թալինի շրջանի Արագածի այգե-

գործական սովխոզը պլանով նախատեսված 4.800 ցենտների փոխարեն արտադրեց և պետությունը վաճառեց 6.040 ցենտներ պտուղ: նախատեսված 45 հազարի դիմաց պետությանը տված սովխոզի արաապլանային օդուտը կազմեց 112 հազար ուրլի»:

Բնության քմահաճ խաղերի վրա ժիծաղող, բնության «սխալը» շտկող Մանուկը, Գուրգենը, Սերյոժան, Գրիգորը, Մերուժանը, Յուլիկը, Պատվականը, Հասմիկը, Ազդանուշը, Կիման, Աբրահամը, Սեդան, Համլետը, Կարպիսը, Սմբատը... մարդիկ հաղթել էին, հյուսել էին համառ աշխատանքի մի հերոսապատում, որը վերջերս ամփոփվեց վերը բերված որոշման մեջ:

Հիմա դաշտի ցողաթաց ճամփաներն ու այդ ճամփեքին սովոր ոտքերը օրը երկու անգամ նորից հավում են հողին՝ «բարի լույս», «բարի գիշեր» ավետող ձեռքերի նման: Խորհուրդ կա, իրոք, դաշտի ճամփեքին դաջվող ոտնահետքերի մեջ: Դրանց հետ ճամփեքին շաղ եկած խոհեր, երազներ, հույզեր կան... Բայց դործնական լինենք, թեկուզ այնպես, ինչպես արտահաստիքային մեր այն թղթակիցը, որը մի տարվա ընթացքում խմբադրությունը հասցեագրած մի քանի թղթակցություններից երեքի վերնադիրը համառորեն կրկնում, նույնն է թողնում. «Աշնանը կբացվի առատության ուսիքան»: Նույն՝ Արագած սովխոզի մասին: Հարցականի տակ շղնենք՝ նրա «համառությունը կհաղթի» համոզմունքը՝ օգտադործենք նյութը:

«Այս տարի Արագածի այգեգործական սովխոզը պետք է արտադրի 1.500 տոննա խաղող, 100 տոննա պտուղ: Իհարկե, արագածցիների ջանքերը պլանային այդ առաջադրանքների կատարմանը չեն ուղղված միայն: 310 հեկտար խաղողի, 52 հեկտար պտղի բերքատու այգիների կողքին սովխոզն ունի նաև, համապատասխանաբար, 190 և 364 հեկտար ոչ բերքատու այգի, շխոսենք դեռ գյուղատնտեսական մյուս կուլտուրաների մասին: Հասկանալի է, ուրեմն, աշխատանքի ծավալը: Իսկ նրանք՝ սովխոզի պտղաբույծներն ու խաղողագործները, մեխանիզատորներն ու դաշտավարները, կանաչ դաշտերի հրամանատարները 450-ն են: Եթե հաշվելու լինենք, ամեն մեկին մոտ 2,5 հեկտար մշակվող տարածություն է

ընկնում, հիմնականում՝ խաղողի ու պտղի այգի: Հեշտ չէ՝  
Բայց նքանք, որ ընդամենը 7—8 տարվա ընթացքում 1.060  
հեկտար անասատ դարձրեցին այգեստան, որ գծվարություն-  
ների գեմ խոնարհվել չգիտեն, հիմա էլ շին վհատվում: Իսկ  
հաղթողի վճռականությամբ ամեն օր այգիները մտնող սով-  
խոզի մարդկանց 85 տոկոսը կոմերիտականներ ու երիտա-  
սարդներ են, լցված ուժով ու եռանդով:

Արդեն ավարտվել է ծառերի բաժակափորը, այգեփորը,  
այգիների միջշարային վարը, առաջին և երկրորդ բուժում-  
ները, խազողի և պտղի այգիների գարնանային մշակու-  
թյան բոլոր աշխատանքները: Իսկ առջևում գործեր դեռ շատ  
կան և, ինչպես սովխոզի դիխավոր ագրոնոմ Աղասի Կարա-  
պետյանն է ասում՝ բոլորն էլ առաջնահերթ:

Արդեն ամառ է: Հողը շիկացել է: Այգիները լցվել են  
արևի բարկ շողերով: Բայց ավելի ջերմ են վազերին ու ծա-  
ռերին հավող ձեռքերը:

Կգա աշուն, և սովխոզի այգիները կբացվեն սուփրի պես՝  
լցված առատությամբ ու բարությամբ:

Թղթակիցներ ունենք, որոնց՝ մեզ սուղարկած թղթակցու-  
թյան ոչ մի տող կասկածի տակ չենք առնում. գրում են  
զուսպ, առանց չափազանցությունների և հիմնավոր լավա-  
տեսությամբ: Այդպիսին է նաև հողվածում մեջբերված թրղ-  
թակցության հեղինակը: Մենք հավատում ենք նրան, Ինչ-  
պես միշտ, այս տարի էլ գարունը արագածցիների բանուկ  
ու ամուր ձեռքերում է եղել: Եվ ամառն է այդ ձեռքերում:  
Արևի շողերը հավաքում և, որպես կաթիլ-կաթիլ քաղցրու-  
թյուն, այդ ձեռքերն են քամում այգիների վրա:

### ԿԱՆԱԶԱՓ ԱՌՎԻ ԵՐԹԸ

Ճանապարհը Մայիսյան սովխոզ է տանում (թե՞ այնտե-  
ղից է գալիս. ճանապարհները միայն մի ուղղություն չու-  
նեն): Երիզված է բարդիներով: Բարդիները՝ երկնի կապույտ  
կտավին քսվող վրձիններ՝ թաթախված կանաչ ներկապնա-  
կում: Ճամփի մի կսզմում խաղողի այգի կա: Եվրձիններից  
կանաչ ներկ է կաթկթացել վազերի վրա: Մյուս կողմում



ծիրանենու այգի: Անցած տարի խորը էտ են կատարել «երիտասարդացում». ծառերի բներն են թողել, մեկ էլ՝ բացված գրկի նման թևերը՝ բնի նման շերտ-շերտ, ծոցավոր կեղևներով: Եվ նուրբ շիվեր են ծլարձակել: Ճոճվող «վրձիններից» կանաչ ներկ է կաթկթացել շիվերի վրա:

Դիմացից մի խումբ մարդիկ են գալիս: Բահ ունեն, այգու մկրատ, ծակծկված ձեռնոցներ: Ճամփի վրա նաև՝ մանկապարտեզի երեխաները: Ճանապարհը կանաչ ամպերով առվի նման է:

— Երեխաներին ինչո՞ւ են շուտ դուրս բերել զբոսայգի, — ասում է սովխոզի ճյուղային ագրոնոմ Մորիս Սադոյանը (հանդիպել ենք ճամփաբաժնում, միասին ենք քայլում): Խմբում հայրենադարձներ կան, անցած տարի նոյեմբերին են եկել:

— Հիմա ես փորձեմ ասել, թե դրանցից ովքեր են հայրենադարձները:

Մորիսը հարցական նայում է:

— Ճանաչվում են. նրանց հայացքում հարցականն ու կարոտը՝ անպակաս են:

— Բարի լույս...

Խմբի մի մասը, նրանք, որ աչքերում կարոտ ունեն դեռ, զսպանակի պես հարցական, երբևէ կասկածել են՝ բարի կլինի՞ լուսո առավոտը: Իսկ հիմա այն առավոտի հետ են, ուր արևի շողերը շեշտի պես է ընկնում աչքերի մեջ: Այն ճամփի վրա, որին երիզող ծառերը սլացքի մեջ են: Հիմա հասցե ունեն հավերժ մնայուն: «Հայաստան, Հոկտեմբերյան, Մայիսյան սովխոզ»: Հայնամիզի պատուհաններով տուն ունեն: Մայիսյան առավոտը կխուժի ներս և կհիշեն... Ի՞նչ: Անցած, նախանցած... մայիսյան առավոտնե՞րը: Չեն հիշի. տուն չունեցող մարդը տոն կունենա՞: Չեն ունեցել:

Մայիսյան առավոտ, դու Անդրանիկին, Հակոբին, Պետրոսին, Տիգրանին, Մարիամ մայրիկին, Զարուհուն, Մարիին... ավելի ջերմ ժպտա, այնպես ժպտա, որ հարուժյուն առնեն մայիսմեկյան խեղված առավոտները:

Ավանը արևկող էր արել և ականջում էր մուրճերի երգը:

— Այս տարի բնակելի թ նոր շենք է շահագործման հանձնվելու, 56 բնակարան:

Կառուցում են. կյանքի ու բախտի կողմնացույցը առանձին քարավաններ պիտի ընկնեն ճամփա, նաև օջախներ են կիսվում՝ հզորացած, «պարս» տվող մեղվարնտանիքների պես:

Երկհարկանի շենքի շրհորդանում ճնճղուկը բույն է դրել: Բույն՝ շրհորդանում: Կքշվի: Այ, ա՛յ, շինարարներ, մոռացել եք ճնճղուկներին. ձեր կառուցած շենքերի քիվերում ճեղքեր թողեք, բույն է հարկավոր ճնճղուկների համար:

Սովխոզի հաշվապահ Մելիքյանը շխկշխկացնում է համրիչը: Նա համաձայն չէ, որ համրիչի հատիկների շխկշխկոցը միօրինակ ու տաղտկալի երգի նման է:

«100 անգամ 64 հավասար է 6.400» — այս տարի սովխոզում արտադրվող բերքի քանակն է:

«167 անգամ 41 հավասար է 6.847 ց» — արտադրվող պտղի քանակն է:

«160 գումարած 278 հավասար է 438» — խաղողի ու պտղատու երիտասարդ և բերքատու այգիների քանակը:

Միօրինակ չէ, յուրաքանչյուր հաշվարկ համրիչի վրա իր ձայնն ունի, և Մելիքյանը նույնիսկ ոգևորվում է «կատարման» ժամանակ:

Իսկ այնտեղ՝ այգիներում, համրիչի վրա շրխկացող թվերի երգն են ձուլում սովխոզի մարդիկ՝ Գրիգոր Գևորգյանը, Պատվական Տոնոյանը, Բադր Շամոյանը, Հակոբ Հակոբյանը, Շողիկ Սողոմոնյանը, Վոլոդյա Ասատրյանը... Նրանք հողոտ ու մեծ ափերից առատության, աշխարհը շենացնող երգի նոտաներն են պոկվում:

...Բրիգադավար Միշա Չախալյանը ուղղում է Մարիի սխալը: Սա այն բրիգադն է, ուր աշխատողների մի մասի համար խաղողագործությունը նորություն է:

Սա այն բրիգադն է, ուր աշխատողների մի մասի համար հայոց հինավուրց որթատուկը նորություն է, նաև՝ հայոց տանն ու լեզուն:

— Ես լավ չի հասկանամ, ինչ ըսի, լո՛ւ, — իրենն ուղղած հարցերից նեղսրտում է Մարին:

Իսկ Զարուհին այդքան քիչ չգիտե, բրիգադավարը ձեռքը շարժումներով է խոսում նրա հետ:

— Անդրանիկ, դու այնտեղ՝ Սիրիայում, ի՞նչ էիր աշխատում:

Մարդը լարվում է, աշխատում է լրիվ հասկանալ հարցը:  
— Հա՛, Ֆլլա կաշխատենք:

«Ֆլլա» — վարձված բանուժ:

Անդրանիկը, Հակոբ Հակոբյանը, Հակոբ Կիրակոսյանը, Մովսես Կիրակոսյանը... ուժ են վաճառքի հանել, գնվել է օակարկումներով:

Հիմա նրանց ձեռքերին մայրենի հողի համբույրը կա: Նրանց ոտքերի տակ՝ մի քարքարոտ հող, ուր ծիրանենին ու խաղողի վազը այնպե՛ս են խորացնում արմատները:

— Էս հողակառուում խաղող ենք տնկելու, — ասում է Մորիսը, — սովխողը 20 հեկտար տնկման պլան ունի, 17-ը Միշայի բրիգադում է:

— Այ, էս ձեռքերով կտնկեմ, էս ձեռքերով, — Անդրանիկը ավերը կպցնում է իրար, — 20 տարի Ֆլլա են եղել:

Այդ ձեռքերով Մայիսյան սովխողի վազերի վրա ողկույզները կքաղցրանան, «երիտասարդացված» ծառերի վրա ծիրանը կառնի իր գույնը, դաշտերը կկանաչեն: Այդ ձեռքերը կվերցնեն առաջին դասաբանցի Ազնիվի այբբենարանը, կշփեն հրաշք և խորհրդավոր տառերը և կդողան հուզմունքից:

Ձեռքերն այդ այս առավոտ բացել են պատուհանի փեղկերը և նորարաց օրը խուժել է տուն: Տուն հայրենյաց:

Այսօր գաշտամիջյան ճամփաները դատարկ են. մայիոն է Մայիսյան սովխողում: Գուցե և թմբուկ շղարկեն, գուցե և շքերթ շինի ավանում: Երևի դպրոցականները կանցնեն բաց պատուհանների տակով և վերջ: Նրանց՝ մայիսյանցիների շքերթը աշխատանքային է, ամենօրյա:

## ՇՈՒԲԵՐ ԹՐՀՆԱՆՔԻ ԵՎ ՃՇՄԱՐՑԱՐԱԹ

Քեռի Պետրոսը խմած էր. Աշքերը փոքրացել-շաղվել էին, ձեռքերը ավելի դողդոջ են դարձել: Աջում ձեռնափայտն էր գողում, ձախում՝ կուլան:

— Վազգեն ջան, երկար արև ըլնեա, առաված եռութիկներիդ կյանք տա, վերկալ մի եայի՛ ընչի՞ շի եռում:

Վազգենը գինեգործ է: Սև մազեր ունի, սև փայլուն աչք

քեր, և երիտասարդ է երևում այնքան, որ պետք չէ հասկա-  
պես ազգանունով դիմել: Բայց 17 տարի գինու նրդ է լսում:  
Զորս տարի Գալարում է աշխատել, տասնմեկ տարի՝ Գե-  
տաշենում: «Գետաշենի գինու գործարանում լավ հարմարու-  
թյուններ կային, լավ նկուղներ՝ տրամագրում էին աշխա-  
տելու: «Վերնաշեն»-ի վրա երկու տարի աշխատեցի և սաաց-  
վեց»:

Իսկ ես ամենևին չեմ մտածել, թե «Վերնաշեն» էլ հե-  
ղինակ ունի: Մտքովս չի անցել, որ այդ գինետեսակի «վրա»  
էլ աշխատող է եղել, արևորականչը անթարթ աչքերով դի-  
մավորող: Հիմա էլ, երկրորդ տարին է, այստեղ՝ Հոկտեմ-  
բերյանի կոնյակի գործարանի գինու մշակման Արմավիրի  
և Հուկաշինի կետերի գինեգործն է:

— Զի եռում, էլի՛, օրհնածը, չգիտեմ ընչի, Վազգեն ջան,  
աստված...

Գինեգործը ծերունու ձեռքից վերցնում է կուլան, կկո-  
ցած նայում: Կուլայում՝ արևի կտորտված շողեր և մի քա-  
նի կում քաղցու, չի եռում «օրհնածը»: Կուլայի կոկորդը  
կլթկլթում է: Բաժակում մերկանում է քաղցուն. սպիտակ-  
սպիտակ, ավելի, քան պետք է:

— Է՛, քեռի Պետրոս, շտապել ես, շուտ ես քաղել խա-  
ղողդ:

— Ճիշտ է, Վազգեն ջան, երկար արև ըլնես, չհամրե-  
րեցի, ախր տղիս պիտի կարգեմ, քեզ էլ մատաղ, Մուկու-  
չին էլ, ասի քաղեմ, քանի փորձանք-մորձանք չի եկել գըլ-  
խին, Գիտես չէ՞, շաբը բարուն հակառակ է, մեկ էլ տեսար...  
Աստված ճանրիդ երկար կյանք տա, օրհնածը մաճառ ե՞րբ  
կդառնա:

Բարի ծերունի է, խոսքի սկզբին ու վերջին՝ օրհնանք:  
Մի՞շտ այգպես է:

— Երբ խմած է լինում, այգպես է. օրհնելով ման է  
գալիս: Մանոթին, անծանոթին, նույնիսկ երկնքով անցնող  
թռչունին էլ օրհնում է:

Քեռի Պետրոսը խմած էր և օրհնում էր: Զգիտեր, թե  
ում: Զգիտեր լսող կա՞, չկա՞: Օրհնում էր: Լսում էի ու  
մտածում, «էս ծերունու շուրթերով գինին է խոսում կամ

գինին ինքը՝ օրհնող շուրթ է, իմաստությամբ ու բարո-  
թյամբ լցված ծերունական օրհնող շուրթեր»:

Եվ այդպես է: Ես էլ, երբ գինով լի գավաթն է ձեռքս՝  
մաղթանք եմ անում: Միշտ: Թեկուզ մտքով: Մտածում եմ,  
որ խոսք՝ գինով լի գավի վրա, այսպես կոչված, բաժակա-  
ճառը մեզնից է սկսվել: Եվ վատ չէ: Բա ինչ, բաժակդ դա-  
տարկելուց առաջ մի բան ցանկացիր, էլի, թեկուզ և այս-  
քանը, «Երկար կյանք ունենաս»:

— Ախպեր ջան, հո չնեղացա՞ր... Եսիմ, Քեֆս լավ է:  
էսօր գործի շեմ գնացել: Մեր տնամերձի խաղողը քաղեցինք:  
Մի կտոր տեղ է, այ էսքան: Բայց դե, մի տոննայից ավել  
եղավ, հանձնեցի էստեղ՝ գործարանին: Գցած գինին էլ իբ  
հերթին: Գնացի տուն, ընկերոջս հետ լավ խմեցինք: Հո  
չե՞ս նեղանում... Եսիմ:

Կարմիր գինի էին լցրել Երվանդի աչքերի մեջ:

— Բայց էս Վազգենը լավ մարդ է: Մեր գինեգործ Վազ-  
գեն Աթինյանին ճանաչո՞ւմ ես... Լավ մարդ է: Մեր գյու-  
ղացիները, արևիկցիները, տանձուտցիները... Վերջը, էս  
շրջակա գյուղերի մարդիկ իրենց տնամերձի խաղողը էստեղ  
են հանձնում, մեկը դժգոհ չի մնում: Գրամ-գրամ կշռում,  
մարդավարի ընդունում են: Լավ մարդիկ են՝ Վազգենն էլ,  
էդոն էլ... էն բոյով էդիկին ճանաչո՞ւմ ես, տեխնոլոգին...  
Մարտունի՞ն, որ հետդ խոսում է, գիտես, որ համալսարա-  
նավարտ է: Զուլալի՞ն... Լավ մարդիկ են: Բոլորն էլ լավ են:

«Ինչպես արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ...»:

Օխ, ընենց եմ ուզում խմեմ: Խմեմ ու ձեռքս խփեմ սե-  
զանին... Բայց մերս նեղանում է, գիտե՞ս, որ շատ եմ  
խմում, Իսկ որ մարդ է ըլնում հետս՝ ձեն չի հանում: Արի  
գնանք խմենք, հա՞, դու լավ տղա ես երևում, խմենք ու եր-  
գենք:

Երվանդի քունքերի երակները բարձրացել են: Արյան  
հոսքը երևում է: Զի շարժվում, խուժում է արյունը, այնպես  
կլթկլթոցով, ինչպես ապակյա խողովակաշարով շաները  
գնացող քաղցուն:

չ

Խենթ է այդ երակների արյունը, գինեխառն:

...Գրասեղանին, կուբայում գինի կա՝ աշնան իրիկնապա-  
հի հրդեհված ամպ: «Արևային գինեհյութ», — այսպես է

կոչվում և՛ ոչ պատահական. գինեկուծով լցված տակաոց մի ամբողջ տարի արևի տակ է պահվել, արևից գողացել համ ու գույն:

— Արևային գինեկուծի 10 տոկոսի մասնակցությունը բավական է՝ բարձր տեսակի «Պորտվեյն» պատրաստելու համար:

— Ուրեմն արևը գինեգործ է:

— Էդպես է որ կա, իմ կոլեգան է: Մեր արևը աշխարհի ամենահին, ամենահմուտ գինեգործն է: Տեսա՞ր, քեռի Պետրոսը շուտ էր քաղել խաղողը, փախցրել էր արևից՝ կրակն էր ընկել:

Իսկ հայոց հնձաններում խաղող է գալիս այն այգիներից, ուր շոայլությունից փշուր-փշուր է եղել արևը: Արևի պատանները գիշերն էլ կարելի է հավաքել որթատունկերի տակից:

— Ուրեմն՝ էս պունկտում՝ Զուլալի ղեկավարած պունկտում... (լավ անուն է... չէ՞), խաղող են հանձնում տեղի՝ Արմավիրի կուտնտեսությունը, Արևիկը, Հայկավանը, Տանձուտը, Այգեշատը, Մարգարան, Արգավանդը, Երասխահունը, Արազափը և Վարդանաշենը: Զհաշված Այգեշատը, մյուս գյուղերի անունները ինձ դուր են գալիս: Այգեշատ: Անո՞ւն է, թե՞ կոչում:

Վազգեն Աթինյանը գյուղերի անունների «գնահատականը» տալիս է շատ լուրջ: Ընդհանրապես, լավ բան է գեղեցիկ անունը, մեկ էլ տեսար մի անուն էնքան տրամադրեց, որ սկսեցիր մտածել համանուն մի բան ստեղծելու մասին, ասենք՝ գինի:

— Գիտե՞ս, թե Թալինը ինչ հեռանկարներ ունի: Սեղանի գինեգործության կենտրոն կդառնա: Պատրաստվող նոր տեսակի գինիների անունների մասին հիմիկվանից եմ մտածում:

Արևային գինով լցվում են բաժակները:

— Գինով՝ գինեկուծի կենացը, — ասում է Մարտուն Գյուլազյանը: Լաբորատորիայի վարիչն է:

— Դա ի՞նչ նորություն էր:

«Վերադասից» եկած ընկերոջ և Մարտուն Գյուլազյանի «չուրը մի առվով չի գնում»:

— Մենք և դուք պրակտիկ կապի մեջ պետք է լինենք, —

տաքացած շարունակում է Մարտունը: Կես ժամ է վիճում են, բայց մի խոսքի չեն գալիս,— մի երկու ժամով գալիս եք՝ գնահատում. «Ամեն ինչ կարգին է» ու գնում: Բայց այ, ամեն ինչ կարգին չէ: Ձեր կողմից, որպես նոր տեխնիկա, առաջագրված քամիչը իրեն չի արդարացնում, հիմնական տեխնոլոգիային չի համապատասխանում:

— Գուցե դու ճիշտ ես:

— Էլ ինչո՞ւ գուցե:

— Ճիշտ ես, էլի:

— Այ, այդպես,— Մարտունը ժպտում է,— մինչև մի երկու բաժակ շխմեցինք՝ չհամաձայնվեցինք: Հիմա, կարծեմ, հասկանալի է, թե ինչու պետք է խմել գինով՝ գինու կենացը:

...Գրասենյակից դուրս ենք գալիս: Գինեգործ-արևը շաղ է եկել գործարանի բակում՝ տակառների վրա, ոտքի տակ ընկած-ճխլված մի ողկույզ խաղողի, կշեռքի վրա կանգնած ավտոյի: Պոկ չի գալիս՝ շարժվում է ավտոյի հետ, մեղրաճանճերի ըզըցոցով վերջին անգամ օծում խաղողով լցված տակառներն ու արկղերը:

— Ախպեր ջան, էն կողմ գնա: Արմավիրցի կյուզվիզը այնպես արագ է դատարկում արկղերը, որ ճզմող մեքենան «խեղդվում» է:

3500-րդ տոննայի քաղցուն էր հոսում Արարատյան հովտի Արմավիրի հնձանում: Հոսում էր՝ հունցած արևով, մայրական խոսքի քաղցրությամբ:

Իսկ շաներում քաղցուն գինի էր դառնում: Գինին՝ ըլրլացող, շատախոս մանուկ: Նաև՝ ամրակուռ բազկի ուժ:

Գինին՝ շուրթեր օրհնանքի և ճշմարտաբառ:

### ՏԱՔ ՁԵՌՔԵՐՈՎ ՄԱՐՊԻԿ

Ցուրտ է: Իջնում են աստղափայլ, աստղաձև փաթիլներ: «Հայգյուղտեխնիկայի» Կրասնոսելսկի շրջանային բաժանմունքի կառավարիչ Կարլեն Բորյանը ոգևորված խոսում է և չի նկատում, որ ես ուզում եմ նշումներ կատարել, բայց ձեռքերս դողում են ցրտից: Հետո նա գիմում է գիմացից եկող երիտասարդին:



— Մարտուն, ե՞րբ ես եկել:

— Հենց նոր:

— Ո՞ւր են տրակտորները:

— Մի ժամ հետո այստեղ կլինեն:

— Մնաց Մարտունու կոլանտեսության մի տրակտորը:

Մարտուն Մելքոնյանը «Հայգյուղտեխնիկայի» Կրասնոսելսկի բաժանմունքի տեխնիկայի վերահսկողության գծով ինժեներն է: Այս օրերին նա հաճախ է լինում կոլտնտեսությունում ու սովխոզներում՝ հետևում տեխնիկայի ապահով պահպանմանը, շտապեցնում, որ հիմնական վերանորոգման կարիք ունեցող տրակտորները բերվեն բաժանմունք:

— Հա, ի՞նչ էի ասում,— շարունակում է բաժանմունքի կառավարիչը,— անցած տարվա շորրորդ եռամսյակում և այս ամսում մեզ մոտ պետք է կատարվեր 20 տրակտորի հիմնական նորոգում, բայց այսօրվա դրությամբ արդեն 26-ը վերանորոգել ենք, մի քանի օր հետո ութ հատ էլ դուրս կգան վերանորոգումից:

Մտնում ենք արհեստանոց: Զրուցում ենք բարձրաձայն, արհեստանոցի կամարների տակ փորձարկման ստենդն է ուժեղ ազմկում, փոթփոթում է մի տրակտոր, մուրճերի զրընգոցն է լսվում, մարդկանց բարձրաձայն կանչեր:

— Ամեն ինչ նորմալ է,— հայտարարում է գլխավոր ինժեները,— կարող եք տեղադրել շարժիչը:

Տրակտորների շարժիչները վերանորոգելուց հետո մինչև մեքենաների վրա նորից տեղադրելը՝ անպայման փորձարկվում են սաենգի վրա, ստուգվում են վառելիքի ծախսը, հզորությունը, ինչպես գլխավոր ինժեներն է օիրում ասել՝ «ստուգվում է ոտից-գլուխ, ինչպես գործարանում»:

— Կարող եք վերցնել,— նորից է կրկնում Գ. Մարկոսյանը, և տղաները գործի են անցնում, պողպատյա ճոպանք մոտեցնում են «ապաքինված» շարժիչին ու... երկու ժամ հետո տրակտորը՝ 26-րդը, հզոր հոնդում է արհեստանոցի կամարների տակ, դուրս է գալիս այնտեղից և ուղղություն վերցնում դեպի Կրասնոսելսկի սովխոզի մեքենատրակտորային պարկը:

Արհեստանոցից դուրս եկած, վերանորոգված ամեն մի տրակտոր արտակարգ աշխուժություն է առաջացնում բա-

Ժամանակների ինժեներատեխնիկական անձնակազմի, արհեստանոցի աշխատողների մոտ՝ նրանց, որոնց ձեռքերի տակ օրեր շարունակ ջերմացել, փայլ ու շունչ են առել «հալից ընկած» մեքենայի պողպատյա սառը մասերը: Եվ ահա, արհեստանոցի մուտքի մոտ կանգնած խառատներ Վասիլի Սեմյոնովը, Սուրիկ Ապրեսյանը, եռակցողներ Գրիշա Կանավալովը, Ռուբիկ Միդոյանը, դարբին Հարություն Սարիբեկյանը, արհեստանոցի վարիչ Նասիբ Ապրեսյանը, ինժեներ Ֆամիլ Յաղաբովը և մյուսները հայացքով ուղեկցում են բաժանմունքի բակից դուրս եկող տրակտորին՝ ՁՅ-րդին:

— Լավ, շատ մի նայեք, աչքով կտաք,— կատակում է մեկը և «ուղեկցողների» խումբը նորից արհեստանոց է մտնում: Նիկոլայ Գարբուշովը նորից է մոտենում տրակտորին, վերսկսում կիսատ թողած գործը: Մի քանի րոպե, և նրա հմուտ ձեռքերի տակ նոր պտուտանցք է բացվում տրակտորի շրջանակի վրա:

Արհեստանոցում ձեռքերս մի քիչ տաքանում են, և որոշում եմ կիսատ մնացած «փաստերը» լրացնել:

— Դուք շասացիք, ընկեր Բորյան,— դիմում եմ բաժանմունքի երիտասարդ կառավարիչին,— վերջնականապես ե՞րբ պատրաստ կլինի շրջանի կոլտնտեսությունների ու սովխոզների տեխնիկան:

— Ասեմ, հիմա 90 տոկոսով պատրաստ է, երկու շաբաթ հետո պատրաստ կլինի 100 տոկոսով:

— Խոսքը վերաբերում է նաև ընթացիկ վերանորոգում պահանջող տրակտորներին և գործիքներին, այդպես չէ՞:

— Այո՛: Տրակտորների ընթացիկ վերանորոգումը և գյուղագործիքների պատրաստումը հիմնականում կազմակերպեցինք աշնանը, մեծամասամբ կոլտնտեսություններում՝ բաժանմունքի մասնագետների օգնությամբ, իսկ շորս կոլտնտեսություններ՝ Աղբուլազի, Գյուլբենդի, Նոր Բաշքենդի, և Մարտունու տեխնիկայի ընթացիկ վերանորոգումն էլ այստեղ՝ մեր արհեստանոցում կատարեցինք. տեղերում արհեստանոցային հարմարություններ չունեին տնտեսությունները:

— Ճանապարհ, ճանապարհ... Արհեստանոցի մուտքի մուտք բարձրագույն ձայները և մեքենաների աղմուկը խառնվում են իրար:

Ճանապարհ, տրակտոր է գալիս:

Արհեստանոցի մուտքի մոտ տրակտորը դանդաղեցնում է ընթացքը, որ ներս մտնի, բայց հանգչում է:

— Ո՞ր գյուղից ես:

Երիտասարդ մեխանիզատորը զարմացած նայում է. բաժանմունքի բոլոր աշխատողներին անձամբ ծանոթ է, բայց երբ նկատում է, որ հարցնողը ես եմ, պատասխանում է.

— Ես նոր Բաշքենդից եմ, ախպեր շան, անունս Մամիկոն է, Գալլաբյան Մամիկոն, դո՞ւ որտեղացի ես:

— Բայց հանել ես տրակտորի հոգին,— նկատում է բաժանմունքի կառավարիչը,— քանի՞ հեկտար փափուկ վար ես կատարել այս տարի:

— Էդ մեկը մեր հաշվապահը գաղտնի ա պահում, ընկեր Բորյան, ես գիտեմ էն, որ 700 աշխօր եմ արել:

— Ուրեմն, բացահայտենք ձեր հաշվապահի «գաղտնիքը». մոտ 900 հեկտար փափուկ վար էս կատարել:

— Բա ասում ե՞ս, նշանակում է տրակտորն է իմ հոգին հանել:

Մի քանի րոպե հետո արհեստանոցում շարված տրակտորների շարքում ավելանում են նաև նոր Բաշքենդի կոմերիտական տրակտորիստներ Մամիկոն Գալլաբյանը և Աթաբեկ Սահակյանը. «քանակցություն» են վարում բաժանմունքի վարիչի ու գլխավոր ինժեների հետ. «Ծ՞րբ սկսենք: Հենց հիմա՞: Քանդե՞մ: Քանդելուց լավ եմ»:

Ես նորից կիսատ մնացած «փաստերն» եմ լրացնում:

— Ինչպե՞ս է, ընկեր Բորյան, պահեստային մասերը ապահովո՞ւմ են:

— Որ իմանամ հասնելուն պես ինձ մի վագոն պահեստային մաս կուղարկես, կասեմ՝ ոչ մի հատ չկա,— ծիծաղում է նա,— որովհետև ինչքան էլ տալիս են, էլի պահանջ ունենում ենք, բայց որ ասեմ, թե այսինչ մասի համար դորժը մի շաբաթ կանգնել է, դա էլ այդպես չէ: Տալիս են, ունենք: Ծիշտ է, պատահել է, որ հարևան հանրապետությունների ծանոթներից նույնիսկ պահեստամասեր ենք բերել, բայց գործը չի կանգնել:

— Գրիշա, ապարատը այստեղ բեր,— շիկահեր պատա-

նու ձայնը արհեստանոցի մի ժայրից մյուսն է հասնում, —  
Գրիշա, շտապիր:

Եռակցող Գրիշա Կանաձալույր շտապում է:

— Ի՞նչ է, հրդեհ պետք է հանգցնես, որ այդպես շտապեցնում ես Գրիշային:

— Մեր հրդեհն էլ էս է, պտի շտապենք, բա ինչ, — ընդդ պատասխանում է մեխանիզատորը, — Դուք ինժեներ եք:

— Ոչ, ես ինժեներ չեմ, բայց չի խանգարի, որ ծանոթանանք, — մեկնում եմ ձեռքս:

— Ծանոթանանք, բայց առանց ձեռքի, — նա ցույց է տալիս վառելանյութով ու յուղով ծեփված ափերն ու ժպտում, — ինձ կոչում են Պավել Վասիլիչ:

Արհեստանոցից դուրս ենք գալիս: Ցուրտ է: Իջնում են աստղափայլ, աստղաձև փաթիլներ: Ես ափերս եռանդով շփում եմ իրար, որ տաքանան: Իսկ բաժանմունքի երիտասարդ կառավարիչը խոսում է և, չգիտես ինչու, ամեն քայլին թևիցս բռնում կանգնեցնում է ու այդպես շարունակում զրույցը: Այդ պահին ես մտածում եմ, որ Կ. Բորյանի ձեռքերը ընդհանրապես չեն մրսում: Չեն մրսում նաև արհեստանոցում աշխատող մեխանիզատորների ձեռքերը (չե՞ն մրսում), որոնք առավոտից երեկո ափերով շփում են ցրտից զրնգացող մեքենաների սառը մասերը, տաքացնում, փայլ ու շունչ տալիս նրանց:

Եվ այդ տպավորության տակ էլ ծոցատեարիս մեջ խըզմըզում եմ գրվելիք հողվածիս վերնագիրը՝ «Տաք ձեռքերով մարդիկ»:

### ՀՊԱՔՏ ԺԱՂԱՎՈՒՐԳ ԵՆ

Նստած ենք գետափին: Արժայի աչքագեմի աչդ հատվածի տերը, ափերի մացառ ու քարերով, երեկ կեչուտ գյուղն էր, կեչուտցիներն էին: «Տերը» հիմա ինժեներ Վաչե Երզրնկյանն է: Թունելում հերթափոխի պետ էր, կանչեցին դուրս:

«Ուշացնում ենք. պիտի սկսել ամբարտազի շինարարությունը՝ քեզ ենք հանձնում»:

— Միբայն չի կտրվում թունելից,— վաշեն ձեռքը մեկնում է դիմացի ափը՝ Արփա-Սևան թունելի մուտքը,— այնտեղ ավելի լավ էր, գործին ու տղաներին ընտելացել էի: Բայց ամբարտազի կառուցումը խիստ մասնագիտական գործ է՝ հրաժարվել չէր լինի:

Նորից լսում ենք ու նայում ալիքներին: Ես ուզում եմ որոշել ալիքների սկիզբն ու վերջը, մտքումս ծիծաղում անիմաստ փորձիս համար, հետո լարվում եմ՝ ձայնագրել եմ ուզում ալիքների երգը և մտածում եմ. «Եթե դա ինձ հաջողվի, եթե կարողանամ ալիքների երգը առենիմ-տանեմ, դատարկեմ մի ցամաք տեղ, մի բեմահարթակի վրա՝ ծափերի փոթորիկ կլինի, այս ջրի ալիքները արբեշումե քզանցքներ դարձած կպարուբեն ինձ, և ես, շոշված ու տաք, գիշերվա լույսերի ուղեկցությամբ, կգնամ տուն: Իսկ այստեղ մարդիկ կան, մեկն էլ՝ տոհմիկ ազգանունով այս վաշեն, որոնք երբեք չեն փորձել որոշել Արփայի ալիքների սկիզբն ու վերջը, դահլիճների համար հնչյուններ չեն հավաքում գետից: Նրանց համար այս գետի բոլոր ալիքների սկիզբը հենց սա է, որ կա, Կեչուտի այս կիրճը, նրանց համար այս գետի բոլոր ալիքների վերջն էլ է հայտնի՝ Սևանն է: Եվ Արփայի ջրերի երգը նրանց երակների մեջ է, ու նրանք սուս ու փուս, ատամները սեղմած, տանում են...»

— Մի երկու ամիս առաջ Երևանից տղաներ էին եկել թունելում աշխատելու,— կտրում է վաշեն,— մի քանիսը հաջորդ օրը փախան: Բայց դրանցից մեկը ճամփի կեսից դարձավ-եկավ, ասում էր՝ խաշիկի քմծիծաղը սմբողջ կյանքում կճնշեր ինձ:

- Խաշիկն ո՞վ է:
- Մեր հորատանցողներից է:

«Հա՛, իսկապես, թունելագործները հպարտ ժողովուրդ են,— վաշեի պատմածով ճշգրտած, շարունակում եմ միտքըս,— և հպարտություն են ներշնչում մարդկանց»:

Քիչ առաջ, երբ քայլում էինք գետափով (որտեղ մի քանի տարի հետո այլևս ոչ մի ստա չի դիպչի), և վաշեն իր տուրքն էր տալիս ինձ՝ լրագրողիս. «Պատենելը կանգնելու

է այստեղ, հիմքի լայնութիւնը 200 մետր կլինի, բարձրութիւնը 45 մետր... Էս լանջերը պետք է մաքրվեն՝ թույլ են, ջուր չեն պահի, այստեղ վերին միջնորմն է լինելու, այնտեղ՝ ներքինը... Սա շախտային ջրթափն է, մասնագիտական լեզվով կոչվում է մարգարիտկա, խցանվել է, ներքևից պայթեցնելը վտանգավոր է, վերևից՝ հնարավոր չէ, ելք ենք որոնում... Պատենշն ու ամբարտակը կառուցելու համար ոչ այնքան բանվորական ուժ է հարկավոր, որքան տեխնիկա և լավ մեխանիզատոր: Չկա, մեկը եկավ, ջարդեց բուլղոզերը, թողեց գնաց: Այո, բուլղոզեր է հարկավոր և լավ մասնագետ... Կինս հիմա այստեղ է, բայց ասպիրանտուրա է ընդունվելու. հեռանալու ենք... Ազատ ժամերի՞ն... Ուրիշ ի՞նչ, երբեմն կինոնկար ենք դիտում...

Երկար զրուցում էինք, և ինձ թվաց, թե քաղաքում ժընված, մեծացած, Մոսկվայում ու Երևանի նախագծային ինստիտուտում աշխատած ինժեներ Երզնկյանը երկընտրանքի մեջ է:— Բուլղորովի՞ն, ուրիշ տեղ աշխատել մտքովս չի անցնում, եթե էս դժվարութիւններին չդիմանամ, աչքիցս կընկնեմ: Միայն թե մի բանից եմ վախենում. եթե այսպես գնա, թունելի շինարարութիւնը կավարտվի, իսկ ամբարտակը պատրաստ չի լինի: Բավարար քանակի տեխնիկա և հմուտ մեխանիզատորներ. ուզածս սա է»:

— Երևանում ի՞նչ կա,— Վաչեն նորից խախտում է լուսթիւնը:

- Վաղո՞ւց չես եղել:
- Ամսից ավելի է: Ամեն գալուց աչքիս փոխված է երկվում:

Իրիկնապահի փափուկ խաղաղութիւնն իջավ կիրճ, ծտերի թևերի հետ քսվեց գետի ալիքներին, ձորիձոր գնաց: Տղաները բաճկոններն ուսած բարձրացան լանջն ի վեր, լանջի միակ բուլղոզերը լոեց, և թվաց, թե աշխարհի այս անկյան, բնության այս պատառին, որ Կեչուտի կիրճ է կոչվում, ոչինչ չի պատահել, ոչինչ չի սպասվում և գալիք բոլոր իրիկնապահերը կիջնեն ու կժվարեն գետափի մացառների մեջ:

— Մեկ-երկու հերթափոխով բան դուրս չի գա. երեկ պետք կլինի նաև լուսարձակների տակ աշխատել. ամբար-

տակի կառուցումը ուշանում է,— ասում է վաշեն ու ել-  
նում:— Գնանք ավան:

Շինվարչության գրասենյակի գոանը կանաչ հարթություն  
կա, մեծ ու փոքր իրար խառնված ֆուտբոլ են խաղում, մեծ  
ու փոքր քարերին նստոտած նայում են: Գեոդեզիստ Դա-  
նուշ Մոսիսյանը լարված հետևում է, երբեմն-երբեմն զգու-  
շացնում Թբիլիսիից հյուր եկած տղային.

— էդիկո՛, կամաց վազիր:

— Հիմա լավ է, երեխաները մեկ-մեկ հյուր են գալիս  
մեզ,— ասում է շինվարչության պետի տեղակալ Գ. Վար-  
գանյանը,— էգուց-մյուս օր... Գևորգ, հասի, Գևորգ,—  
դառնում է ֆուտբոլ խաղացող որդուն,— ափսո՛ս:

Արևամուտ էր. վարգանյանը օրվա խոնջանքն առած նրս-  
տել էր քարին, ճերմակող քունքերն էր շփում ու ոգևորում  
Երևանից հյուր եկած տղային.

— Գևորգ, հասիր, Գևորգ...

ԴՈ՛Ւ ՆԱՅԻՐ, ԴՈՒ...

Մինչև կեսգիշեր հարսանքատանն էի: Հիմա առավոտ է,  
նստած եմ գրասեղանի առջև. պիտի գրեմ հարսանիքի մա-  
սին: Բայց չգիտեմ ի՞նչ գրեմ: Տպավորությունները շատ-  
շատ են, և չեմ իմանում, թե որտեղից պետք է սկսել:

Գուցե զուռնայի առաջին կանչից, որը Արարատի ձյու-  
ներին դիպած արևի շողերի նման էր:

Գուցե թմբուկի առաջին որոտից, որը ձորերով գնացող  
գարնան հեղեղի նման էր:

Չէ, դրանք այդ հարսանիքի սկիզբը չեն: Դա ուրիշ հար-  
սանիք էր: Ուրի՛շ:

Գուցե սկսել Աբրահամի ու Լուսիկի սիրո պատմությու-  
նից: Հա, այս մասին՝ ամենից առաջ: Հարսանիքի ժամա-  
նակ որոշեցի գրելիս մոռանալ այդ:

Չե՛մ կարող: Եվ պետք չէ՛:

...Դավիթ հայրը մահացավ, և որդի Աբրահամին թողեց  
պանդուխտի մի ցուպ:

Երբ Լուսիկը աչք բացեց, մայր Մարիամը նրա աչքերում



գրեց թափառող հայացք. «Ո՞րն է, քարո, մեր հայրենիքս: Նրա հայացքն էլ դարձավ ծնողների հայացքի պեո՝ պանդուխտի ցուպ: (Յ՞ թողոր հայրենադարձներին ճանաչում եմ աչքերից):

Եվ շիկացած, տաքեր այրող սիրիական հողի վրա մի օր հանդիպեցին նրանք՝ Արրահամն ու Լուսիկը: Աղջկա աչքերի հայելում սվաղված կարոտ-թախիժ կար: Հենց դա թըրթիռ դարձավ Արրահամի հոգում: Նա շհարցրեց. «Հայ ե՞ս». աղջկա աչքերի մեջ գրված էր: Չհարցրեց. «Կուզի՞ս հայրենիք երթալ». աչքերի մեջ գրված էր: Հարցրեց.

- Հայրենիք ե՞րբ կերթանք:
- Չեմ գիտե՛լ, քարավանի կապառինք:

Նրանք հանդիպեցին Ղամիշլու քաղաքում, մի ցուրտ օր: Հետո էլի հանդիպեցին, ու երազները դարձրին մեկ:

«Ես հայրենիքը շա՛տ, շա՛տ, շա՛տ կսիրեմ»:  
«Ես ալ...»:

Եվ այս է եղել նրանց սիրո խոստովանանքը՝ ասված սրտի դողով, շաղված երկնագույն երազներով: Եվ սիրո մի երգ ունեին նրանք.

«Այ քարավան, այ քարավան  
Կարոտիլ իմ քեզ,  
Հայրեն՝ քիս անուշ ճամփեն  
Դու ե՞րբ կրճես»:

...Կարոտի քարավանը տեղ հասավ տարեմուտին, դեկտեմբերի 7-ին: Օտար երկրների փոշին ոտք ու գլխից թափ տվեցին տարեմուտին: Լեռ ու սարեր նրանց երազների թևից իջան, գետնին նստեցին տարեմուտին: Դադրած ոտքերին կառչած աշխարհի ճամփեքի խճճված կծիկը կտրվեց տարեմուտին:

Լա՛վ տարի էր 65-ը: Տարի կա 50 տարի արժե:

...Ողջ գիշեր հարսանքատանն էի: Արրահամի ու Լուսիկի հարսանիքն էր: Չէ՛, չստացվեց, ոչինչ շատացի ես «հարսանիք» բառով: Ախր, ուրի՛շ հարսանիք էր գա: Ամեն ինչ խառնվել էր իրար: Հարսանեկան կաղապարված «օրենքները» խախտվել էին: Կենացներ էին մաղթվում, որոնցից ոչ մեկը



երբեք իմ մասնակցած հարսանեկան կենացների ցանկում չեն մաղթվել:

«Օտար երկիրներում տակ կեցած հայերուն կենացը»:

«Անդուռ ու աներգիկ մնացած տներուն կենացը»:

«Օտար երկրներուց մեր հայրենակիցներուն տուն բերող քարավաններուն կենացը»:

«Հայերու օգուխներում եղնող... հարսանիքներու կենացը»:

«էս աներբ մեզի համար շինած հայրենակիցներու կենացը»:

է, չեմ հասկանում, հայերը ինչո՞ւ այդքան շատ կենացներ պետք է ունենան...

Տարեց հայրենագարձների մաղթանքի խոտքերն ինձ հասնում էին... Քարգմանչի միջոցով նրանք հայերեն չեն իմանում: Նրանցից ամեն մեկը հոնքերի փոխարեն մի կոունկի բզկաված, ճերմակած թեք աչքերի վերևն առած՝ նստել էր Հայացքս չեմ կարողանում կտրել Առաքել քեռու կապտամշուշ աչքերից: Հայացքներս հանդիպում են իրար: Ես ժպտում եմ, փորձում է նաև ինքը, չի ստացվում: Դե, նա գաղթի կեդարքս ճամփա է անցել: Աստուծից թալին հասել է 50 տարում, հիստ՝նր Որբա՞ն ճամփա պիտի առած լինի ոտքերի տակ, հետն էլ՝ իր ժպտը: Բւ թե մի քիչ էլ ժպտ կա՝ նոր է, տարեմուտից, էս մի ամսում է բույն դրել, ծվարել, տաքանում է նրա շուրթերի արանքում: Եվ մեծք՝ ես ու Առաքել քեռին, միմյանց հետ խոսում ենք աչքերով: Լավ է հասկանում ինձ: Նայում է, լուռ քարձրացնում է բաժակը, ձախ ձեռք դնում կրծքին... խոնարհվում, կոնարհվում... Հասկանում եմ. բնագը էր՝ տերեր է ունեցել, աղա ու քեկ. ճոն է մեջքը: Բայց՝ միայն մեջքը, ոչ երբեք հոգին: Դա էլ աչքերից իմացաւ և գրգռած էք ճակատի կնճիտների արանքներում:

Նրանք նաև իրենց տխուր երգն են առած եկել: Հարսանիք է, երգ պետք է ստել, Իրենց իմացած երգերն են սուսում: Որբախ սկսում են ախուր երգը:

«Զանրմ, աղ երգերուն վերջ տվեր»:

Եսբայել քեռին չի լսում, այսք դրեղ է ձախ արին, ասում է իր երգը՝ հայի ստեղծած է, հայի մատին, բայց քրեիբնե «Եսբայել» բավ է, աղ մի երգեա:

Թխագործի ուն տեղին Եսբայել քեռին պատասխանում է

երգն ավարտելուց հետո: Խոսում է կրքոտ, բոցկլտալով: Ի՞նչ է ասում: Թարգմանում էն:

Ինչո՞ւ չասի, ախր, ինչո՞ւ չասի: Ուրախ է, ուզում է երգել: Հարսանիք է, էն էլ հայրենի հողի վրա. ուզում է երգել: Երգը հասել է կոկորդը, խեղդում է, շերտի՞ քառ լսիր, այ Հարություն, լսիր, ճիշտ է՝ հարսանիք է, ճիշտ է՝ ուրախ երգ պիտի ասել, բայց, ախր, մենք սովոր ենք ամենածանր պահին թեթևություն գտնել, մի պայծառ բան, տխրության մեջ ուրախություն գտնել: Եվ էդպես ենք ապրել, չէ՞: Թե կուզես ճիշտն իմանալ, ուրախության կողքին մի քիչ տխրություն պիտի բերես կանգնեցնես, որ ուրախությունը հասակով երեւի, ավելի մե՛ծ երևա: Հիմա՝ էս հարսանիքն ու էս տխուր երգը: Չլսեցի՞ր, շիմացա՞ր երգի բովանդակությունը: Ասում է թե՛ «վայ լե, վայ լե, վայ լե...», զուռնա ու դհուլ էլ չկա, լռել են, լռել են, լռել են: Աշուն է, շենից-շեն ման եմ գալիս՝ ոչ մի շենում, ոչ մի տան մեջ հարսանիք չկա: «Չկա՛, չկա՛, չկա՛»: Բա էդպես չի՞ եղել: Էդպես է եղել: Թե կուզես ճիշտն իմանալ, այ Հարություն, կամ հենց գու չգիտե՞ս. տարի է եղել, որ ոչ մի հայ օջախում պսակ ու հարսանիք չի եղել: Հասկանո՞ւմ ես, չի եղել: Մոռանա՞նք: Երգ են դարձել, որ շմոռանանք, երգենք: Ու երգենք ոչ թե տխուր ժամին, այլ, թե կուզես ճիշտն իմանալ՝ ուրախության մեջ: Տխրության պահին թե մարդ ես՝ ուրախացի, շեղած տեղից մի բան արա, ուրախացի, ուրախ երգ ասա: Հիմա հարսանիք է: Ինչքան կուզես տխուր երգ ասա՝ հարսանիք է ու հարսանիք: Էն է՛, հարս կա՛, պսակաշոր կա՛, կարմիր-կանաչ կապած փեսա կա, դհուլ ու զուռնա կա... Կա էլի, կա՛: Դե ինչքան կուզես ձեռքդ դիր ականջիդ ու ասա. «վայ լե, վայ լե, վայ լե»: տարի է պատահել, որ հայի ոչ մի օջախում հարսանիք չի եղել: Ինչքան ասես-երգես՝ էս ուրախությունը, էս հարսանիքը էնքան կմեծանա: Հասկացա՞ր: Էլ ինչո՞ւ ես թևից քաշում՝ մի երգի, մի երգի: Թողեք մարդ երգի, էլի՛...»

— Լավ, քեռի Իսրայել,— թամադան՝ սովխոզի դիրեկտոր Եղիշե Կարապետյանը, ոտքի է կանգնում,— դու ճիշտ ես, ճիշտ, մի կենաց մաղթեմ, էլի երգի, դու ճիշտ ես,— նորից է կրկնում, հանկարծակի բոցով բռնված մարդու խոս-

քերից ազգվել է, — իրոք այդպես է, ամեն հայ ընտանիքում  
եղած հարսանյաց ուրախություն դուրս է գալիս այդ ընա-  
նիքի սահմաններից: Կոնկրետ այս: Սրան սոսկ հարսանիք  
ասելը քիչ է, շատ-շատ քիչ: Սա տոնահանդես է՝ մեր ժողո-  
վըրդի վերածննդի ու հավերժության, հերքումը՝ երբևէ ծըն-  
ված քո տխուր երգի:

Պետրոսը թարգմանում է թամադայի խոսքերը: Իսրայել  
քեռին ուրախանում է, որ հասկացել են իրեն: Ի նշան շնոր-  
հակալության, ոտքի է կանգնում, ձեռքը դնում կրծքին, խո-  
նարհվում:

— Քեռի Իսրայել, էդպիսի բան երկրորդ անգամ չանես:  
Մարդը շտկում է մեջքը, մեղավոր ժպտում:

— Հիմա խմենք «ժողիկների» կենացը: Ցանկանանք՝ մեր  
հող ու ջրին արժանի ընտանիք կաղմեն: Նորապսակներին  
այսօրվանից տալիս ենք նոր բնակարան՝ անհրաժեշտ կա-  
նույթով: Թող մի նոր ընտանիք ավելանա մեր ավանում,  
սոր օջախ՝ մեր հողի վրա, նոր ծուխ՝ մեր բարձրիկ երկրն-  
քի տակ: Ողջություն:

Իսրայել քեռին ձեռքը բարձրացնում է: Երգել է ուզում:  
Հիմա արդեն ոչ մեկը չի քաշում ձեռքից, ինչ ուզում է՝  
երգի, ուրախության համար է երգում, սիրտ է դատարկում:  
Խաչատուրը, Պետրոսը, Հակոբը ձայնակցում են նրան, Կա-  
րապետը՝ իր ջութակով:

Կարապետյանը ոտքի է կանգնում, աջով առնում է կող-  
քին նստած քավոր Արրահամի ձեռքը, ձախով՝ սովխոզի  
պարտկազմակերպության քարտուղար Հմայակ Հովսեփյա-  
նի ձեռքը: Հետո... Սեղանների շուրջը ոչ մեկը նստած չի  
մնում, բոլորը ոտքի վրա են, բոլորի թևերը իրար են եկել,  
ուսերը սեղմվել, բերդապատ դարձել՝ հաց ու գինով խա-  
չակնքված սեղանների շուրջը: Քոչարի է, հատակը դողում  
է, շիշ ու բաժակ զրնգում են, հարսի ճերմակ պսակաշորը  
թրթռում, ալիքվում է տոնական այդ պարի թափից: Սիրտս  
ուռչում է, կոպերս տաքանում են, կրծքիս տակ փոթորկ-  
վող հուզմունքից ուզում եմ գոռալ:

«Աշխարհ, հե՛յ, աշխարհ, մի աչք դարձիր հիմա ու պա-  
տուհանին թառած-պլշած կիսալուսնի փոխարեն, օդանցքից  
գլուխը ներս խոթած էս մանչի փոխարեն դու նայիր, դո՛ւս

Քեզ շատ է հարկավոր նայել էս պատուհանից ներս, տեսնել այս հարսանիքը՝ տոնը հավերժության, հերքումը՝ Իսրայել քեռու տխուր երգերի»:

«ԱՆԱՆՈՒՆ» ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐՈՎ

Շրջկոմից դուրս եկանք կոնկրետ նպատակով. գնում էինք Այգեվանի կոլտնտեսության մեքենատրակտորային բրիգադի բրիգադավար Սերյոժա Դավթյանի մոտ:

Սևեռուն դեմք ունի, խելացի, ամեն ինչին ուշադիբ դիտող աչքեր՝ միշտ մտազբաղ, մազերի մեջ ժամանակից շուտ՝ սպիտակ թելեր, հոնքերի արաչքում՝ բարակ կնճիոներ:

— Հնկերնեքը ուզում են տեսնել գութանիդ աշխատանքը,— ասում է գլուղատնտեսը:

— Գութանիս: Գութանը կար, ես միայն որոշ բաներ եմ ավելացրել, մեխանիզացիայից հասկացող ամեն մարդ նույնը կարող է անել:

Հիմա, իհարկե, «կարող է անել», բայց կյանքում ամենաչնչին նորը դժվարությամբ է ծնվում: Դրա համար պետք է լինել կյանքը սիրող, պրպտող, համառ, հոգնել, բայց չքզգալ: Սերյոժա Դավթյանը այդպիսին է:

— Այդ դեպքում դնանք դաշտ, գութանս,— ժպտալով երկարացնում է քառը,— աշխատում է:

Խաղողի այգու միջշարային տարածությունով շարժվում է «Տ-38» մարկայի տրակտորը, հտևից՝ ցնցվող գութանը: Առաջին հայացքից իսկ զգում ես, որ այդեմիջյան այս վարքը ինչ-որ տարբեր է շատ անգամ տեսածներից: Հետո նկատում ես, որ շարքի վարվող տարածությունը, շուտ եկած հողը մինչև վազի բունն է հասել: Տրակտորը հասնում է շարքի վերջը, շրջադարձ կատարում և մտնում նոր շարքը: Այս անգամ արգեն վարվում է միջշարային տարածության հակառակ կողմը: Շրջադարձին ագրոնոմը ձեռքով է անում, և Ռազմիկը կանգնեցնում է տրակտորը:

— Ահա իմ, եթե կարելի է ասել, նորարարությունը,— Սերյոժան մատնացույց է անում գութանի շրջանակի վրա ավելացրած խոփը,— այս՝ ԿԴՊ մարկայի գութանը 5 խոփ

ունի, ըստ հարմարեցրելի հմ Յ-րդը, առաջին խոսքից 15-ամ հեռավորության վրա և այնպես, որպեսզի թմբի հողը աջ շուռ տա: Մրանով 30 սանտիմետրով վարը մոտենում է վազի բնին: Թմբի յուրաքանչյուր կողմից վարը այդքան մոտեցնելով, փաստորեն, միջշարային տարածության չվարող տարածությունը ամեն շարքի համար պահասում է 60—65 սանտիմետրով:

— Եվ միջշարային տարածությունը փորելու-փխրեցնելու համար ձեռքի աշխատանքի կարիք չի զգացվում, մնում է միայն՝ միջվազայինը, — ավելացնում է գյուղատնտեսը:

— Բացի այդ, որոշ փոփոխության հմ ենթարկելը նաև գութանի հիմնական խոփերը, — շարունակում է Մերյոժան, — այնպես որ վարելուց հետո, ինչպես տեսնում եք, ոչ թումբն է խախտվում, ոչ միջշարային տարածությունն է էջվում հողով:

Ա՞ր այգեգործին հասցանի չէ այգեփորի ծանրությունը, թե որքան բանվորական ուժ է հարկադար խաղողի այգու յուրաքանչյուր հեկտարը փորելու համար և այն լարվածությունը, որը գարնան գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ ստեղծվում է այգեփորի հետևանքով: Այգեվանի կոլտնտեսությունում նույնպես ամեն գարնան այգեփորի աշխատանքը դառնում էր № 1 գործ՝ իր ծանրությամբ, ծավալով ու կարևորությամբ: Ահա և յոթերորդ դասարանի կրթությամբ, կյանք մտած մի երիտասարդ վերացնում է այդ դժվարությունը: Այո, Սեբյոժա Դավթյանը ոչ ինժեներ-մեխանիկ է, ոչ տեխնիկ-մեխանիկ և ոչ միջնակարգն է ավարտել: Նրա դպրոցը կյանքն է եզել: Տրակտորիստի օգնական, տրակտորիստ, մեքենա-տարկտորային բրիգադի բրիգադավար: Վերջինը, իհարկե, այնքան էլ կարևոր չէ, նա առաջին հերթին մեխանիզատոր է, պրպտող, անհանգիստ մտքով, ամենակատարելագործված մեխանիզմին ու մեքենային հարցական հայացքով նայող. «էս մասը, իրո՞ք, այդտեղ պետք է լինի և այդ ձևի՞»: Իսկ եթե այսպես լինի, ավելի լավ չէ՞...»: Մարդ, որ շատ դեպքում արսիոմաների հետ նաև համաձայն չէ, մտածում է և փորձում ապացուցել, որ Չ անգամ Ց «մեկ-մեկ» նաև... հինգ է անում: Այգեվանի կոլտնտեսությունում չկա նոր ստացված մի մեքենա, որի

վրա Սերյոժան որևէ բան ավելացրած չլինի, մի բան (թեկուզ աննշան) չլինի փոխած:

— Իսկ հաշվարկը կատարե՞լ եք. աշխատող ձեռքերի ու միջոցների որքա՞ն խնայողութուն է ստացվելու Սերյոժայի նորարարութունից,— դիմում ենք գյուղատնտեսին:

— Ճիշտն ասած, հանգամանորեն չենք հաշվարկել դեռ, քանի որ նոր է, բայց մոտավորապես ասեմ: Ունենք 155 հեկտար խաղողի այգի, որի յուրաքանչյուր հեկտարը փորելու համար միջին հաշվով պահանջվում է 40—45 մարդ: Հիմա ձեռքով փոր պետք է կատարվի միայն միջվազային տարածութուններում: Դրա համար յուրաքանչյուր հեկտարին 8—10 մարդ բավական է: Հետո, ախր, գութանի վրա մի ուրիշ բան էլ է ավելացել, Սերյոժան չի ասում, դուք էլ չեք հարցնում, թե սա ինչ է: Տեսեք, տեղադրել է նաև պարարտանյութի բունկեր, վարին զուգընթաց նաև պարարտացվում է այգին և այն նորմայով, ինչ կուզենաք: Ամենակարեվորն այն է, որ պարարտանյութի կորուստ չի լինում և տրվում է հողի ամենաարդյունավետ շերտին: Ձեռքով այսպես պարարտացնել հնարավոր չէ: Վերջը, խնայողութունների ու առավելութունների մասին չխոսենք, փրկեց մեզ, փրկեց:

— Սերյոժա, ձեր գտել ես, շատ արտադրի, էլի, այդ քո մարկայի գութանից,— կատակում ենք,— լավութուն արա հարևան կոլտնտեսութուններին:

— Մեր հարևանները՝ Փոքր Վեդու, Խալիսայի, մյուս կոլտնտեսութունների մեխանիզատորները ամեն օր են այստեղ: Գալիս են, թե՛ «Սերյոժա» մարկայի (մեր գյուղացիները, հարևանները մարկան կնքել են արդեն) գութանը մի երկու օրով, մի օրով տվեք մեզ: Ախր, օրական 3—4 հեկտար վար կարելի է կատարել, այգեփոր, քիչ չէ: Մենք երկուսն ունենք: Օրական՝ 6—8 հեկտար: Խնդրեմ: Նախանձում են,— ծիծաղելով ավելացնում է գյուղատնտեսը:

— Ոչ պետք է գութանը գյուղից գյուղ քարշ տալ, ոչ էլ նախանձել, ես մի քանի անգամ ասել եմ՝ եկեք սովորեցնեմ, ի՞նչ կա այստեղ,— ասում է Սերյոժան և այնպիսի տոնով, թե՛ մարդիկ գլուխ չեն ուզում ցավեցնել, այլապես...

Իսկ պրպտել, «գլուխ ցավեցնել», ամենակատարելագործված մեքենայի վրա մի մաս ավելացնել պետք է, և մեքենայի մի «մասնիկը» դարձած ամեն մեխանիզատոր այդ բանը կարող է անել, միայն պետք է լինել այգեվանցի Սերյոժա Դավթյանի նման համառ ու ինքնամոռաց:

— Մինչև կեսգիշեր արհեստանոցում աշխատում էր, ստիպելով էինք տուն տանում:

Անանուն մարկայի գութանը չէ միայն Սերյոժա Դավթյանի նորարարությունը: Հինգ տարի առաջ, գարնան մի օր, երբ հետևում էր բամբակացան շարքացանի աշխատանքին, անձրև սկսեց՝ ստիպեց գործը դադարեցնել այն պահին, երբ հողակտորի երրորդ մասն էր մնացել ցանելու «Եթե շարքացանի ընդգրկման լայնությունը կիսով չափ էլ ավելին լիներ, ցանքը կիսատ չէր մնա, Եվ ինչո՞ւ այդպես չեն պատրաստել, միևնույնն է՝ տրակտորը կարող էր քաշել» — մտածեց: Բայց՝ ուղեղից չպոկվեցին ու հեռացան խոհերը: Հոնքերի արանքում բարդված կնճիռներին մեկն էլ ավելացավ և մի շաբաթ հետո շարքացանի վրա շորսի փոխարեն սերմի վեց բունկեր երևաց: Կիսով չափ ավելացել էր շարքացանի ընդգրկման լայնությունը:

Անցած տարի Այգեվանի ամեն տուն իր «պատվիրակն» էր ուղարկել ձմերուկի բոստանը: Այդքանով եթե սկսեին ձմերուկ հավաքել, մի շաբաթում էլի չէր վերջանա, բայց նրանք ձմերուկ հավաքելու չէ, որ եկել էին, Սերյոժան ձմերուկ հավաքելու իր մեքենան պետք է փորձեր: Տարեց մարդկանցից մեկը նայել է մեքենայի եռակցած, մետաղալարերով կապկպած երկաթներին, ձեռքը թափ տվել. «Ձմերուկի պոչը որ ձեռքովդ շուրթես-կտրես, էն ձմերուկի մեջ հա՞մ կմնա: Հիմա կտեսնենք՝ էդ մեքենան ձմերուկները ջարդուփշուր կանի»: Բայց... օրվա վերջում ձմերուկի բլրակներ էին կանգնել բոստանի եզրին և ոչ մեկի «քիթը արևոտած չէր»:

— Սերյոժան այս տարի մի այսպիսի աուջարկությունք է դիմել վարչությանը (կարող է շատերի համար անհավատալի թվալ, բայց մենք արդեն ընդունել ենք նրա առաջարկությունը, քանի որ գիտենք ում հետ գործ ունենք): Մարդը ասում է, — գլխավոր գյուղատնտես Սուրեն Մկրտչյանը հո-



զի վրա մի քառակուսի է գծում— տվեք ինձ այսպիսի մի հո-  
ղակտոր, 5 հեկտարանոց և ձմերուկի սերմ: Ոչ մի աշխա-  
տող, ոչ մի օգնական չեմ ուզում ձեզանից, մեն-մենակ  
մշակեմ, նախատեսված պլանից էլ ավելի բերք տամ:

— Բայց դա ինչպե՞ս է հնարավոր:

— Հնարավոր է,— ժպտում է Սերյոժան,— ընկեր Մկրտ-  
չյանը մոռացավ ասել, որ խոստացել եմ ձմերուկի միջշա-  
րնրում մշակել նաև ճակնդեղ: Եթե դրա հիմքը ստեղծած  
չլինեի, վարչությանը այդպիսի առաջարկությամբ չէի գիմի:

— Նա ձմերուկ ցանող շարքացան է պատրաստել:

Մեքենատրակտորային պարկում կանգնում ենք շարքա-  
ցանի կողքին: «ՄԿԴ-6» մարկայի եգիպտացորենացան շար-  
քացանը քանդել է, ձևափոխել, հավաքել՝ հարմարեցրել ինչ-  
պես կամեցել է: Շարքացանի 2,8 մետր երկարությամբ շըր-  
ջանակի երկու եզրերին տեղադրված բունկերները ձմերուկի  
սերմի համար են, իսկ կենտրոնում (միմյանցից 70 սմ հե-  
ռավորությամբ) եղած բունկերները՝ ճակնդեղի սերմի հա-  
մար: Չի անտեսված նաև պարարտացման հարմարանքը:

— Սրանով կցանեմ, մշակումը լրիվ կարելի է մեխանի-  
զացնել՝ փխրեցումը, բուկլիցը, բուժումը, բերքահավաքը,  
կմնա միայն ոռոգումը: Չմոռանամ ասել, որ այս շարքա-  
ցանի պատրաստման գործում հատկապես մեծ մասնակ-  
ցություն ունեցավ մեր մեխանիզատորներից Ասատուր Հով-  
հաննիսյանը:

Արժեքավոր շատ նորությունների հեղինակ է Սերյոժա  
Դավթյանը, մտահղացումներով ծանրացած, եռանդով լի:  
Յոթերորդ դասարանի կրթությամբ կյանք է մտել և գտել իբ  
ճանապարհը: Հմուտ պրակտիկից շատ բան ունեն սովորելու  
մեր երիտասարդ մասնագետներն ու մեխանիզատորները:  
Եվ ինքը՝ Սերյոժան, սովորելու շատ բան ունի, նաև՝ մեծ  
ցանկություն: Գյուղմեխանիզացիայի և էլեկտրիֆիկացիայի  
տեխնիկումի մուտքը սիրով կբացվի երիտասարդ այդպիսի  
մասնագետի ու մարդու առջև:



Ալֆրեդ Խաչատրյանը ակորդեոնը սեղմել է կրծքին՝ «քոչարու» հնչյուններն է քամում: Տղա, աղջիկ թև-թևի տված թնդացնում են գետինը: Ծվ ժպտադեմ հանդիսատեսն է հոծ, ավելի են խմբվում, փողոցով անցնողը կանգնում է: «Էս ջահելները որտեղի՞ց են, ինչո՞ւ են հավաքվել», մի ծերունի հենվում է ձեռնափայտին, քաշում կողքին կանգնած երիտասարդի փեշը:

— Մեր շրջանի այգեգործական սովխոզներից են, հավաք է, քեռի ջան, բերքի տոն, խաղողի բերքի տոն:

— Հա՛... Լավ է, ապրեք դուք, ապրեք...

— Թալինի արտադրական վարչության Արագածի, Արտենիի, Կարմրաշենի, Օրջոնիկիձեի անվան այգեգործական նորաստեղծ սովխոզների խոպանն այգեզարդած երիտասարդ մարդկանց հավաքը՝ «Ավանգարդ» թերթի երիտասարդական բերքի տոնը, հայտարարում եմ բացված, — ԼԿԾՄ արտադրական կոմիտեի քարտուղար Ալինա Հովհաննիսյանի վերջին բառերը կորչում են փոթորկվող ծափերի մեջ:

Ամբիոնին է մոտենում արտադրական վարչության գլխավոր գյուղատնտես Մանուկ Մելքոնյանը: Նա պետք է զեկուցում կարդա՝ «Այգեգործությունը և նրա հեռանկարները Թալինի արտադրական վարչությունում» թեմայով:

Գլխավոր գյուղատնտեսի զեկուցումը դուրս է գալիս «զեկուցում» շրջանակից, գառնում պատմվածք՝ անցյալի, այսօրվա ու վաղվա մասին, պատմվածք՝ հայոց մագլցող որթատունկի, Աբտենի սարահարթի անապատի ու Թալինցի մարդու միջև եղած Ց-ամյա գոտեմարտի մասին:

Իսկ արդյո՞ւնքը: Ահա:

— Ութ տարի, մի կարճ ժամանակ, անծայր ժամանակում միայն մի ակնթարթ և երեկվա անապատում այսօր 2752 հեկտարի վրա աշխարհին ու մարդուն է ժպտում «Արարատին» ու «Ոսկեհատը», «Երևանին» ու «Գառան դմակը», նոր ծնված խաղողի տեսակներ՝ Թալինի, Սևանի, Գառմուս... Հայոց ծիրանի ծառն է, մագլցող վազն է արմատները խորացնում անապատում և մարդու ջլապինդ բազուկներն ու

դարավոր խոսանի ուժը՝ քաղցրութիւնն դառած հոսում է հնձաններում:

Հերոսական պատմվածք էր Մ. Մելքոնյանի զեկուցումը, պատմվածք՝ երեկվա, այսօրվա, վաղվա մասին, անապատի ու մարդու գոտեմարտի մասին:

«Ավանգարդի» «Երիտասարդական բերքի տոնը» Քալինի նորաստեղծ սովխոզներում: Շատերի համար, նաև մեզ համար դա պարզապես բերքի տոն է և վերջ: Իսկ նրանց, Քալինցիների՝ Շատ ավելին: Հավաքույթում ելույթ ունեցողներից և ոչ մեկը չկարողացավ թաքցնել իր հուզմունքը: Եվ ինչո՞ւ ջանք գործադրեր դրա համար:

— Ուզում ես ամբիոնից բացականչել. «Ինչեր ասես, որ շեն անում ամբոխները իմաստնացած»— և իրոք, ամբողջ ուժով բացականչում է կոշտացած ձեռքերով աղջիկը՝ Կարմրաշենի այգեգործական սովխոզի երիտասարդական բրիգադի բրիգադավար Քնքուշ Շահոյանը:

Ա. Կարապետյանը, Վ. Գրիգորյանը, Ա. Միքայելյանը... շատերն են հուզված կանգնում ամբիոնի մոտ:

— Հոկտեմբերի 11-ը անմոռաց կմնա Քալինի աշխատավորների համար, դաշտավարների, ծխախոտագործների, անասնապահների, մեխանիզատորների... ուրիշ այլ հավաքների են եղել Քալինում, բայց այգեգործների հավաք, այգեգործների բերքի տոն՝ առաջին անգամ է: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ «Ավանգարդ» թերթը այս տարվա իր առաջին բերքի տոնը այստեղ՝ Քալինում կազմակերպեց: Նոր էջ է բացվում Քալինի արտադրական վարչության գյուղատնտեսական արտադրության պատմությունում. այգեգործությունը տիրական քայլերով դառնում է վարչության առաջատար ճյուղը, հիմնական ուղղությունը,— ասում է կուսակցական կոմիտեի քարտուղար քնկ. Ն. Այվազյանը: ...«Ապրեք դուք, ապրեք, ջահելներ, կանաչ բազուկ լինեք... հե՛յ դիտի», երիտասարդների կողքին նստած ծերունու ձայնը անցնում է դահլիճի մի ծայրից մյուսը՝ «Ապրեք դուք»... Բեմահարթակում մեկը ամուր սեղմում է ժենիկ Գևորգյանի ձեռքը, շնորհավորում նրան ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով պարգևատրվելու առթիվ, հետո էլի ? երիտասարդներ ու աղջիկներ կարմրատակում են բեմահարթակում պատվոգրերը

ձեռքներին, երկուսը՝ Արագածի սովխոզից Սովիկ Գրիգորյանը և կարմրաշենցի մեխանիզատոր Արտավազդ Գրիգորյանը՝ «Ավանգարդի» մրցանակին արժանանալու համար: Եվ նրանք ջնորհակալության համար խոսքեր են փնտրում...

Առաջավոր այգեգործներն ու մեխանիզատորները նվերներ են ստանում սովխոզների դիրեկցիաների կողմից:

Բեմում Արագածի միջնակարգ դպրոցի ինքնագործ խումբն է: Ծնորհալի երեխաներին ծափահարում են բոլորը:

Հետո Հայֆիլհարմոնիայի մենակատար, ջութակահար Հակոբ Վարդանյանը հավաքի մասնակիցներին հուզում է... «Կոունկ», «Միրանի ծառ» երգերի կատարմամբ:

«Հորովելն» է թևածում դահլիճում՝ այն կատարում է երիտասարդ երգիչ Ռուբեն Մաթևոսյանը:

...Դահլիճը տակտ վերցրած ծափահարում է, իսկ բեմում կանգնած մեծատաղանդ մարդը ձեռքով հասկացնում է՝ «Բավ է, բավ է»: Բեմում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը:

— Իմ շատ սիրելի, իմ շատ ուժեղ, իմ շատ լավ բարեկամներ: Նախ թույլ տվեք այս երեխաներին մի անգամ համբուրեմ,— նա հուզված մոտենում է բեմի անկյունում խմբված ինքնագործ խմբի երեխաներին ու միանգամից զրկում նրանցից մի քանիսին:

— Մի ժողովուրդ, որ այդպիսի երեխաներ ունի, ձեզ նման երիտասարդներ, ամեն ինչ լավ կլինի: Հիմա, ինչ կարող եմ անել ձեզ համար, սիրելի բարեկամներս: Ես ձեզ համար կարտասանեմ մի քիչ «Օթելլոյից», մի քիչ «Համլետից», մի քիչ «Մակբեթից»:

...Դահլիճը փոթորկվում է ծափերից, իսկ նա սրբում է աչքերը. «Բավ է, բավ է»...

— Ես շատ սիրեցի ձեզ, էլի կգամ...

Երիտասարդական բերքի տոնը ավարտվեց, բայց խուպանը ծառազարդողները նոր պայքարի կելնեն՝ հավաքում ստանձնած պարտավորությունները պատվով կատարելու համար:

1. ԽՈՂՆԵՐ ԿԱՆԱԳԱՐԶԻՆ

Բարձրանում եմ ավտորուս, տեղ գրավում կաշվե սև բաճկոնակով երիտասարդի կողքին: Ծանոթ է ինձ: Ասենք, այսպիսի ծանոթ պատահում է՝ փողոցով անցնող անծանոթներից մեկը գրավում է ուշագրութունդ և, չդիտես ինչու, սկսում ես խորհրդածութուններ անել նրա մասին: Հետո, պատահականորեն, երբ նորից հանդիպում ես նրան, թվում է քեզ, թե ծանոթի ես հանդիպել: Իսկ նա անցնում է կողքովդ, առանց իմանալու, որ դու իրեն նայել ես ծանոթի նման, մտորում ես իր մասին: Բաճկոնակով երիտասարդն այսպիսի ծանոթ էր ինձ համար: Մի քանի անգամ տեսել էի փողոցում. ձեռքերը՝ բաճկոնակի գրպաններում, միշտ արդուկած շալվարով, միշտ սափրված, գեղեցիկ սանրված: «Ինչո՞վ է զբաղվում», — ամեն հանդիպելուց մտածում էի, փորձում մարմնավորել նրա կերպարը:

Հիմա նույն զգեստները հագին՝ գնում է ծառ տնկելու

— Եկեք ծանոթներ լինենք:

— Խնդրեմ, — մեկնում է ձեռքը, — Ռոբերտ:

— Ո՞ր ինստիտուտից եք:

— Բժշկական: Առաջին կուրս:

— Իզուր չեք զգեստափոխվել:

— Նախապես չէին հայտնել: Եվ հետո, եթե հայտնած էլ լինեին՝ չէի փոխի, այն նպատակի համար, որ մենք գնում ենք, ես կասեի, ամոթ է կոշիկի ու բաճկոնի մասին մտածել, ափսոսալ... Հետո մի ուրիշ բան. ինձ թվում է, այսօր ամենալավ զգեստները պետք է հագնել. եղեռնի նահատակների հիշատակին ծառ տնկելը սոսկ հողագործի աշխատանք չէ: Ծիշտ չե՞մ ասում:

— Երեխեք, եկեք երգենք, — ավտորուսի ընդհանուր աղմուկի մեջ շսելի դառնալու համար ամբողջ ձայնով առաջարկում է նրբակերտ մի աղջիկ:

— Ի՞նչ երգենք... Ո՞րը...

Աղմուկով էլ համաձայնվում են. «Երևան»:

Երգը հնչում է: Աղջիկը շափ է տալիս: Նրա դալար ձեռ-

քերը ալիքվում են: Նայում եմ և մտածում. «Երբևէ բա՛հ ու  
բլունգ վերցրե՞լ է»:

Ավտորուսն անցնում է Ավանը: Երևում է մոտ սարա-  
հարթը՝ հորիզոնականների ուղղությամբ ակոսներ են բաց-  
ված, որձաքարեր են գուրս եկել հողի տակից, Մառատունկը  
սարահարթում է լինելու: Ավտորուսից նայում եմ երկար և  
մտածում. «Այգտեղ երբևէ անտառ եղել է, հողում արմատ-  
ներ մնացած կլինեն»: Եվ թվում է ինձ, եթե երկար նայեմ՝  
ծառերը հողի տակից գուրս կգան, կողք-կողքի կշարվեն  
ակոսների մեջ...

2. ՎԱՐՊԵՏ ԱՆԻՐԱՆԻԿԸ

Կանգնած ավտորուսները, մարգատար, բեռնատար, ջրցան  
ավտոմեքենաները մատների վրա շես հաշվի: Խառնվել են  
իրար, ազդանշան են տալիս՝ ճանապարհ պահանջում:

— Վարպետ Անդրանիկ, ազատ ես, շտապիր,— տնկա-  
նյութի վերջին խուրձը ավտոմեքենայի թափքից ցած նետե-  
լով, քաղխորհրդի կանաչապատման գծով ավագ ինժեներ  
Գեղամ Եղիազարյանը դիմում է փոս փորող սպիտակ մա-  
զերով մարդուն:

— Մինչև 56 ծառ շտնկեմ, շեմ գնա:

— Կուշանաս, վարպետ Անդրանիկ, այնտեղ ինչպե՞ս  
պայմանավորվեցինք: Հետո կտնկես:

— Որ գնացի, ինձ էջմիածին են ուղարկելու: Ինչ իմա-  
նամ, մեկ էլ կուղարկե՞ն էստեղ կամ մի տեղ, որ ծառ են  
տնկում: Մինչև շտնկեմ, շեմ գնա,— համառում է:

Գեղամը ժպտում է ու հեռանում:

Մոտենում եմ վարպետին:

— Վարպետ, ինչո՞ւ անպայման 56:

— Մեր գերդաստանից այդքան զոհվել են 1915-ին:

— Օգնեմ ձեզ, շուտ վերջացրեք:

— Չէ, տղա ջան, ես ուզում եմ իմ ձեռքով տնկել: Շո-  
ֆերություն գիտե՞ս... Այ, եթե շոֆեր լինեիր, ես մեքենաս  
էսօր կվստահեի քեզ, հասկանո՞ւմ ես, մեքենաս կվստահեի,  
որ շոֆեր տղիս շեմ վստահում և մինչև իրիկուն ծառ կտնկեի  
էստեղ, մի երկու, երեք հարյուր ծառ: էգուց երևի մեքե-  
նան կանգնեցնեմ:

Հանդարտ անձրև է մաղում: Յողվել է սարահարթը, որձաքարերը, բացված ակոսների խճախառն հողը:

— Ընկերներ,— հատկացված տարածության եզրին հավաքված ուսանողները՝ համալսարանի տնտեսագետները, լուռ են,— թույլ կտա՞ք առաջին ծառը ես տնկեմ:

Մափեր: Եվ Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հ. Բատիկյանը վերցնում է բահը, բացում առաջին փոսը, հետո... Ուղիղ կանգնում է ջահել ծառը: Փորձում էմ որոշել ծառատեսակը. «Ինչ էլ լինի, ես սրան կաղնի կանվանեմ: Այս հողում արմատները խորացնող ամեն ծառ կաղնի է»

— Դուք ինչպե՞ս կանվանակոչեիք ձեր տնկած ծառը, ընկեր Բատիկյան:

Մի փոքր լուռ է, հետո.

— Չիմանաք, թե անուն գտնելու մասին եմ մտածում: Ձեր անվամբ կկոչեի, իմ անվամբ, այ, այն սիրունատես աղջկա անվամբ, մյուսի, մյուսի... Ինչպես էլ կոչես՝ այգ սնունդով նահատակ ունեցել ենք: Բայց սա առաջին հերթին ծառ է՝ կաղնի, այստեղ տարիներ հետո խիտ կաղնուտ կլինի:

Կաղնուտ կլինի: Այդպես է: Եվ սարահարթում զրընգացող երգն ու ծիծաղը՝ մեր հին կաղնու ընդհատված շառաչն էր: Քարքարոտ հողում ծառի փոս փորող, որձաքարերով շողված հողում ծառ տնկող հարաճ արմատներ էին և աճակված շիվերը...

Համալսարանական էդիկ Մինասյանի լայն ճակատին քրտինքի ու անձրևի կաթիլները ձուլվել են: Հայրենադարձ է: Իր քարոտ հողում առաջին ծառն է տնկում: Ո՞վ իմանա, ի՞նչ փոթորիկ է ծնվել հոգում, ի՞նչ հույզեր է խառնում տունկերի արմատները ծածկող հողին, Հապա Անո՞ւշը, Ասատո՞ւրը, Լեո՞նը...

Համալսարանականներին կից աշխատում են ապագա բժիշկները: Ռոբերտի սև կիսաբաճկոնը ցեխոտվել է: Փըպտում է հին ծանոթի պես:

— Խանգարո՞ւմ է անձրևը:

— Անձրևը սրտովս է,— պատասխանում է,— արև լինիր, ես այնքան հաճույք չէի զգա,— ուզում եմ լավ թրջվել, լավ հոգնել: Ազնիվ խոսք, չգիտեմ ինչպիսի, մի տեսակ հետաքրքիր զգացում է ծնվել... էլիզա, ծառ բեր:

— Զբաղված եմ:

Ռոբերտը նայում է նրան:

— Վահ, սրան մի տես, լինգ է օգտագործում, էդ քո գործը չէ, գնա ծառ բեր:

էլիզան նրբակերտ, ալիք թևերով այն աղջիկն էր, որ ավտոբուսում շափ էր տալիս երգին: Լինգը վերցնում եմ նրա ձեռքից:

— Քարը դուրս է գալիս արդեն,— ժպտալով ասում է և ցեխոտ ձեռքով քաշում Ալվարդի թևից,— գնանք ծառի:

Հողը ցեխ է դարձել: Զրցան մեքենան տեղապտույտ է տալիս:

— Տղերք,— վարորդը օգնության է դիմում: Մի խումբ վազելով գալիս է: Գյուղատնտեսներն են: Նրանք արդեն կատարիչ են օրվա առաջադրանքը, բայց շարունակում են աշխատել:

— Մերոնք պետք է որ առաջինը լինեն,— ասում է ինստիտուտի կուսկազմակերպության քարտուղար Գերասիմ Գավթյանը,— շնայած այստեղ առաջին լինելը ապագա մասնագիտության հետ այնքան էլ կապ չունի:

— Այո՛, կապ չունի,— հաստատում է ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Արմենակ Խաչատրյանը,— տեսեք ինչ են անում համալսարանը, բժշկականը, ֆիզկուլտուրնիկները...

Սարահարթի եզրին կողք-կողքի շարված են ցուցանակները. «Ֆիզկուլտուրայի ինստիտուտ», «Քիմիական տեխնիկում», «էլեկտրատեխնիկում», «Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ», «Առևտրի տեխնիկում»... Հիմնականում ուսանողների ուժերով է անտառապատվում սարահարթը:

Քարքարոտ սարահարթում արդեն 35.000 ծառ է տնկվել:

Օրեր առաջ սարահարթում տնկված առաջին կաղնիները անվանական են՝ Վարուժան, Զոհրոպ, Սիամանթո, Սևակ... Հայ գրողները սրտի դողով տնկեցին այդ ծառերը:



Անձրերը տեղատարափ է դառնում: Ոչ ոք չի փորձում թողնել դաշտը: Խմբերի ղեկավարները անհանգստանում են. «Քնկերներ, դադարեցրեք, կմրսեք»: Հարկ է լինում անվանական դիմել: Ճամփին կանգնած ավտոբուսներն են ազդ դանշան տալիս:

...Ձրնդում է երգը: Էլիզան չափ է տալիս: Զգեստներից ջուր է կաթում: Մի հովիվ հենվել է ձեռնափայտին և հայացքով ուղեկցում է ավտոբուսներին: Երգը նրան է հասել, լսում է:

Ավտոբուսի պատուհանից նայում եմ սարահարթին և ինձ թվում է, թե այնտեղ մարդիկ են մնացել, ձեռքով են անում...

### ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐ

Գաղթականի համար ի՞նչ ճամփա: Թե տուն շունես, ճամփա որտեղի՞ց լինի, ճամփի սկիզբ ու վերջ որտեղի՞ց: Մարդիկ բնավեր էին դարձել, և Երկրի վրա եղած ամեն ճանապարհի սկիզբ՝ վերջ էր նրանց համար, իսկ ամեն վերջ՝ սկիզբ, «Երկինքն էր խռովե մեր գլխուն, մոլորվել էինք, լառ»:

Եվ նոր, խճճված կածաններ դաջվեցին աշխարհի դեմքին: Քեռի Նահապետը Արաքսի ձախակողմում բնակավայրից բնակավայր էր անցնում: Ու եթե ինչ-որ բան հիշեցնում էր Սասունը, առժամանակ մնում էր, հետո... «Ձէ, ջանքմ, Սասուն ուրի՞շ էր...»: Մի ամի հարթութուն էր տեսնում, նմանեցնում էր Մշո դաշտին, հետո... «Ձէ, ջանքմ, Մշո դա՛շտ...»:

Եվ գալարվում էին Նահապետ պապի, Առաքելի, Վառոնանի, Կրկեի, Կիրակոսի... գաղթական մարդկանց ճամփաները:

Շուղ տված մի բուռ կորեկի պես ամեն տեղ ընկան-մնացին: Իսկ մի բնակավայր շատերին ձգեց. Թալինն էր, Արագածի քարաշատ լանջը: Զգեց, որովհետև... Որովհետև այդ տեղից Մասիսներն էին երևում, հայոց լեռնապարը՝ միշտ սուզված մշուշի մեջ:

Փրկվածներից շատերը Թալինը համարեցին հանգրվան և փոքեցին հիմք: Բուն դրեցին «մեջ կազերուն» երդիկ բացին «մեջ ամպերուն»...

Գյուղացին առածուն աղոթք է արել հող ու ջրի համար: Բակհհատիկ սերմի համար, որ մեկը հազար դառնա, արտի համար, որ անվնաս մնա, կանաչափ առվի համար, որ միշտ թաց զինի...

Գյուղացու պաշտամունքը հողն է և ջուրը: Ժսկ Թալինում..

Թալինում արտերը՝ լաթ-լաթ, սեղմված լեռների կրծքին, մասրենու թփի պես կախ ընկած ձորերի պսունկին: Թալինում ջուրը «պուտ-պուտ» դուրս է գալիս ժայռաճեղքից, ժայռատակից: Նաև երկինքը շատ չի նոթոտվում պապակ սար ու արտի վրա:

Կարծես հենց թալինցիների մասին է ասված «քարից հաց են քամում» խոսքը: Աշխարհում ոչ մի հողագործ այնպես չի քրտնում, որքան թալինցին: Ախր, նա հողը չի վարում՝ քարն է հող դարձնում...

Շրջանի ցածրադիր մասում բլուրներն ու լեռները խումբ-խումբ մի կողմ են քաշվել՝ տեղ բացել... Կուլի՞, թե՞ պարի համար: Հետո՞ հազար տեղից ծունկ տվող մի գետահուն: Կովոզներին իրարից բաժանելով, թե՞ պարոզներին գրկելու համար: Գետահունը կար, ջուր չկար: Հատակը թացվում էր միայն, երբ ձնհալ էր: Եվ չգիտես ով կնքել է՝ «Մաստարա սելավ»: Սելավի հետ ձգվում-ոլորվում է հարթավայրը: Պապակած շուրթեր ուներ, փշոտ դեմք: Թշշում էին անձրևի կաթիլները: Զուր էր պետք: Հողը կար, ջուր չկար:

### ԵՐԿՈՒ ՊԱՅԹՅՈՒՆ

Կառուցվելիք ջրանցքը հանրապետության ջրային մինիստրությանում անվանակոչվեց «Թալինի ջրանցք»: Սկիզբ պիտի առնեն Ախուրյան գետից:

...Պայթյուն: Խաղաղ պայթյուն... Զրի ճամփա էր բացվում: Պատերազմից առաջ էր դա: Թալինի ամեն գյուղ իր պատվիրակներն էր ուղարկել՝ որձաքարերի ծիջով թունել բացող, ժայռեր ճեղքող ամրակուռ մարդկանց: Հազար զարկ, ամեն զարկի հետ հազար ուրախություն:

Բացվում էր բանտարկված ջրի դուռը...

...Պայթյուն, Երկրորդ աշխարհամարտի առաջին պայթյունը: Արկերի պայթյուն՝ գուժկան արձագանքով: Ախուրյանի ափին խաղաղ պայթյունները լռեցին մի քանի օր: Մարդիկ քլունգները վար դրեցին, ուսեցին հրացանները: Իսկ ջրանցքի շինարարությունը, այնուամենայնիվ, շարունակվեց: Ամենադժվարին պահին մարդն ամենաուժեղն է: Որտեղի՞ց էր աղջիկների այդ ուժը: Ախր, երեկ նրանք քլունգը գետնից վերցնել չէին կարող: Նրանք թունելափորներ դարձան, պատաններ էին պոկում որձաքարերից՝ մի ափի շափ, մի եղունգի:

Այն ճամփան, որով մարդ մտքով անցնում է առանց վարանելու, ոտքով էլ կանցնի: Իսկ Թալինի ջրանցքի ուղին մտքով բոլորն էին անցել, բոլոր նրանք, ում համար հողն ու ջուրը պաշտամունք է:

Ջուրը մտավ թունել, փրփրաբաշ դուրս եկավ, ծունկ տվեց, ձգվեց: Մայրուղու, ջրատարների, բաժանարարների, մարդու սրտից հողի սիրտը գնացող կապտափայլ ջրանցքի երկարությունը՝ մոտ 400 կիլոմետր էր:

## ՈՍԿՅԱ ՇՂԹԱ

«Մի քանի օր հետո Թալինում կավարտվի այգեկուլթը»:

«Թալինո՞ւմ»:

«Թալինում»:

Հանրապետությունում շատերի համար սա նորություն է: Իսկ Թալինում այգեկուլթի առաջին տարին չէ: Արագածի, Արտենիի, Քարակերտի, Դալարիկի խորհրդային տնտեսություններում առաջին ողկույզի բերկրանքը մարդիկ ապրել են 6—7 տարի առաջ: Եվ առաջին գավ գինին են խմել՝ ամենաթունդը, ամենահամովը: Հանրապետությունում սեղանի դառը գինիների հայրենիք կդառնա Թալինը:

Աշուն է: Այգիներում արևի գույներն են կաթկթացել ծիրանենիների, դեղձենիների, տանձենիների, խնձորենիների վրա: Ոսկյա գոտի են դարձել այգիները՝ փաթաթվել լեռների մեջքին և «Մաստարա սելավին»:

Աշուն է: Զուլալ է «սելավի» ջուրը: Ժամանակ ունե՞ս, նստիր ափին, հաշվիր հատակի քարերը: Այդպես ջինջ է նրանց՝ ավանների մարդկանց հոգին: Զինջ ու խաղաղ. ախր, հողի սրտից փուշ են հանել, Ախուրյանի ջրի կեսը բերել են, խառնել իրենց հող ու քարի հետ ու ստացել բերք ու բարիք, գինի:

Հիմա Արագածի, Արտենիի, Քարակերտի, Դալարիկի խորհրդային տնտեսություններում մոտ 3.800 հեկտար խաղողի և պտղի այգի է հրդեհվում աշնան բոցերով: Իսկ թե ինչ գնով, ոչ ոքից հարցնել պետք չէ, նայիր սարերի կողքին կանգնած ձեռակերտ նոր քարաբլուրներին, լո՛իր և մտքումդ դրանց կողքին նորերը կանգնեցրու: Մեկուկես տասնամյակ հետո այգիների տարածությունը կավելանա էլի 3.200 հեկտարով, նոր ավաններ կկանգնեն Արագածի փեշին, Մասիսների կանչող հայացքի տակ:

### ՂԱՐԻՔ... ՀԱՅԱՍՏԱՆ...

Զէ, երբ կոպերդ վար ես բերում, և աշխարհը լցվում է մթով, արևի խավարում չէ:

...Մի սև ձեռք իջավ երդիկի վրա, և փակվեց օջախի աչքը: Յաթաղանով կտրվեց երդիկից տուն մտնող արևի խուրճը, ու արյուն կաթկթաց թոնրի մեջ:

Մի մեծ գերդաստանից մնաց մի տղա, անունը Միքայել: Անհանգրվան ճամփեքի վրա մեծացան- ոտքերը: Թաթերը լայնացան, երկարեցին...

Որտեղ քար տեսավ, և ճարվեց տասը ոտնաչափ հող, տուն շինեց: Շինեց երակներում հոսող արյան բնազդով:

Վերջին անգամ Սիրիայում փորեց հիմք: Ունեցավ դուռ ու երդիկ, դուռն առաջ՝ ծիրանի ծառ ու որթատունկ: Օրը մի քանի անգամ դուռը ճռնչալով բացվում էր: Բայց դուռ էր: Շարաթը մի անգամ երդիկից ծուխ էր ելնում մեջքակոտոր: Բայց ծուխ էր: Միրանենին շփոթում էր ծաղիկ տալու օրն ու ժամը: Բայց ծաղկում էր:

...Բախտակից մի ընկեր ճարեց, անունը՝ Զաբել: Լուռ ու մունջ սիրեցին իրար: Լուռ ու մունջ: Համբուլյրների մեջ,

հետվում, յաթիւ սարից այն կողմ մնացած հող ու շրի կարտը կար, համբույրների մեջ՝ ազերակ տունն աւ գաւա, իրար փաթաթված հայացքների մեջ՝ կարտաւած կաթաններ՝ գյուղի պոունկից սարի վանքը տանող, ձորի ազրակից ցորենի արտը տանող...

Առաջինը տղա ունեցան: Անվանակոչեցին Ղարիբ: Ղարիբ... Անունները պատմութեան նման բան են, ամեն անուն մի կյանք-աշխարհի պատմութեան է:

«Ղարիբ տղա եմ...»:

Լուռ ու մունջ սիրեցին իրար: Միքայելը հաց աշխատեց: Զարեյը շաբաթը մի անգամ ծուխ հանեց երգիկից:

Մնվեց երկրորդը, երրորդը... ութերորդը...

...Միքայելը վերջին անգամ նայեց տանը և զգաց, որ իրենից պոկված հարազատ մի բան մնում է: Դե, օջախ չէ, բայց բնակարան էր եղել: «Շնորհակալ եմ, շնորհակալ», կրկնեց մտքում, իսկ ականջներում, արդեն մի շաբաթ, նույն տողն էր զնգում. «Գնա, քարավան, էլ հտ մի նայի»: Երգը լրիվ գիտեր, բայց բոլոր տողերը մոռացել էր, մնացել էր մեկը, իրենը, իր սիրտն էր շարել բառերն իրար կողքի:

Ու մի քարավանի հետ, իր երամ կոունկների գլուխն անցած, սկիզբ ու վերջ ունեցող, հանգրվան ունեցող իր ճամփան բռնեց դերգաստանի տեղը:

1965 թվական, դեկտեմբերի 4: Աշխարհում նշանավոր տարեթիվ ու օր շատ կա: Այս մեկն էլ Միքայելի համար: Մոռացվո՞ղ տարի է, մոռացվո՞ղ օր: Երկիր մոլորակի վրա օջախ ունեցավ, սեփական հասցե, Հայկական հանրապետութիւն, Թալինի շրջան, Արագած ավան: Վերջին հանգրվանը, Աշքեթի առջև երազ Արարատն է, թիկունքին՝ Արագածը:

...Շեմ ու երգիկ ունենալուց երեք օր հետո ծնվեց իններորդը: Աղջիկ էր: Անվանակոչեցին... Հայաստան:

Հայաստան... Տղա էլ լիներ, անունը գա էր: Միքայելն ու Զարեյը էլ շնայեցին իրար. «Անունն ի՞նչ դնենք»: Անունը կաթ արցունքի հետ լընկավ բարուրի վրա, թոավ ծիծաղի միջից:

Անունը անդրանիկ որդու անվան հերթումն էր:



Չէ, չէ, երբ կոպեղդ վար ես բերում, և աշխարհը լցվում է մթով, արևի խավարում չէ: Պարզապես աչքերը փակողն է զրկվում լույս ու արևից. երկնի կապույտից ու մանիշակագույն հորիզոնից:

Իսկ արևը կա, լուրթ երկինքը կա, և կա հորիզոնը...

## ԼԵՌՆԵՐ ԹԱՄԲՈՂ ՄԱՐԴԸ

Այնտեղ, ժայռոտ ձորի այդ մասում, Քասախը գալարվում է, ծանծաղում, արևին ցույց տալիս հատակում պահված ողորկ քարերը, հետո հավաքում իրեն, քչքչում, լիզում մամուռ ափերն ու գնճճում, գնճճում...

Այնտեղ, ժայռոտ ձորի այդ մասում, շատ է նստել հաշիկի պապը՝ դեմքին ամուսն արև, քրտինք ու ցորենի քիսու: Նստել է, մի ափ ջրով հովացրել դեմքը, թրջել պապակած շուրթերն ու ափսոսանքով նայել անտարբեր խշշացող ջրին, գետը կալող ժեռոտ ափերին: Աչքերի առջև կանգնել է իբր արտը՝ ջրի սիրուց ճաքճքված, երկինքն անիծող հազար բերան դարձած սևահող իր արտը, ու երազե՛լ, երազել է նա ջրի մասին: Քշել է Քասախը հաշիկի պապի երազները, խփել ափերին, գարձրել փրփուր...



Իրար ետեից ձորն ենք՝ իջնում: Չմեռ է, հաստաշերտ, բայց փխրուն ձյուն, բարակ կածան: Այդ կածանը երեկ չկար: Դե երեկ Ապարանի ջրամբարի հառակագիծն էլ չկար, և այդ շաղիվը առաջինը բացած խաշիկը դեռ «Ծրևանգեսում» էր ժայռ փորում: Ու երեկ ձորում միայն ջրի խշշոցն էր, մեկ էլ քարափի քար լուռթյունք: Հիմա...

Քարափը մի սառած աչք դարձած նայում էր: Այնտեղ, ուր Քասախը գալարվում է, ծանծաղում և հետո քրքչում ու շարունակում իր մաշված ճամփան, ջրի քրքիչին խաշիկի ծիծաղն էլ խառնվել, ջրի հետ նրա երգն էլ է հոսում, հզոր

երգ՝ պոկված ամրակուռ այդ երիտասարդի ժայռակուփ ձեռքերի տակից: Այդ երգից կիրճը դրմփում է, քարափը՝ դողում: Հիմա Քասախի այդ մասում գիշեր էլ չկա: Վազող ջրերի մեջ հազար տեղով բռնկված հրդեհ կա՝ էլեկտրալամպերի պատկերներ: Եվ թունելագործ խաչիկն իր բրիգադով ելքեմն գիշերն է իջնում կիրճը հերթափոխի:

Թունելախորշ... Անսովոր մարդը դժվար է շարժվում այդտեղ, էլեկտրալամպերը հազար ու մի ստվեր են գծագրում, Մի բռպե առաջ քայլում էի սովորական քայլվածքով, ոտքերիս տակ ձյունն էր, ձյան վրա պեծպեծացող լույս ու արև, գլխիս վերև՝ կապույտ երկինքը: Թունելախորշում վախվխելով եմ փոխում քայլերս: Իսկ աշխղեկ Ս. Սարգսյանի համար դա պողոտա էր:

— Ահա խաչիկը, — ականջիս մոտ բղավում է աշխղեկը:

Ես խաչիկի լայն թիկունքն եմ տեսնում միայն: Նրա ձեռքերում հորատիչը թունելախորշով մեկ աղմկում էր, ճշում և մխրճվում ապառաժի կուրծքը: Խաչիկի մարմինը մի պլակված աղեղ էր դարձել: Յնցվում էին նրա բազուկները, ուսերը, ամբողջ մարմինը, գլխին դրված սաղավարտը: Աչքերս կկոցած նայում եմ ու... ցավում է թիկունքս:

Ծանոթանում ենք: Նա աջը մեկնում է ինձ, Թվում է, թե մի ծանր, շիկացած ապառաժի կտոր եմ բռնել: Փորձում եմ տեսնել խաչիկի դեմքի մանրամասնությունները: Զի հաջողվում, թունելախորշում էլեկտրալամպերը հազար ու մի ձևի ստվեր են գծագրում: Բայց մարդու մասին գրել ու շտեմնել՝ դեմքը, զրուցել հետն ու շնայել՝ աչքերին:

— Վիկտոր, ծակիր մինչև կգամ, — ասում է ընկերոջն ու միասին շարժվում ենք:

Թունելախորշից դուրս գալով, ես նայում եմ խաչիկին և ոգևորությունից նորից բարևում ձեռքով. նա իմ վաղեմի ծանոթն էր: Այո՛, ծանոթը, վաղուց իմ երևակայության մեջ այդպիսի մի թունելագործ նստած էր, այդպես սլացիկ և ամրակուռ, այնպես առնական դիմագծերով, ինչպես խաչիկն էր՝ թունելված լայն ճակատով ու աչքերի մոտ հավաքված կնճիռներով:

Նստել ենք ժայռաբեկորին: Նրա գեմքին, ծալքերի արան-



քում քրտինքն ու քարից պոկված փոշին խառնվել են իրար  
և այն աստիճանով սրբում է:

— Կմբսեք, քրտնած եք»

— Գարուն է, չեմ մրսի,— ու ցույց է տալիս մեր կող-  
քով անցնող փոքրիկ վտակը: Իրոք, բնության հերթական  
տարօրինակութուններից մեկն էլ դա էր. ձմեռ, Ապարա՛ն,  
բայց ձյունը հալվում է ու փոքրիկ վտակները վազելով գը-  
խիվայր իրենց դցում են Քասախը: Զրուցում ենք, և ես  
նշումներ եմ անում ծոցատետրիս մեջ. «Խաչիկ Գևորգյան,  
ծնվել է Ապարանի շրջանի Մելիքգյուղում 1928թ., ամուս-  
նացած է»: Երեխաների անուններն եմ գրում. և վերջում  
ամենափոքրի անունը՝ Հասմիկ:

— Հասմիկը լավ անուն է,— ասում եմ:

— Վարպետ Բաբկենն է դրել:

— Միասի՞ն եք աշխատում:

— Չէ, հիմա Տաթևում է, բայց իմ վարպետն է եղել  
Գյումուշում:

— Վեց տարի Առաջին անգամ Գյումուշում եմ թունել  
մտել, 19 տարեկան էի: Փորելու ձևն էլ չգիտեի ու հա զոռ էի  
տալիս թևերիս: Գալիս էր վարպետ Բաբկենը ու քաշում  
թևիցս. «Դու ուժ ունես, բայց փորձ չունես, խնայիր ուժերդ,  
մի օրվա համար չէ: Կամաց որ գնաս, շատ կգնաս»,— խրա-  
տում էր ինձ, ու Խաչիկի աչքերում մի քաղցր կարոտ է  
այրվում:

...Հմուտ մի թունելագործի փորձ է միացել Խաչիկի ուժին  
ու երկարել է նրա ճանապարհը՝ լեռների ու մարդկանց սըր-  
տերի միջով: Քայլել է այդ ճանապարհով Խաչիկը, և նրա  
ոտնահետքերով ջուրն է եկել, քայլել է ու լույսերով լցված  
մետաղալարերն են ձգվել, երկարել այդ ճանապարհի հետ:

Գյումուշ, Արզնի, Երևանգէս... տասնվեց տարի ձեռքերիս  
նման սովորական իր ձեռքերով ժայռ է փորել-հղկել նա,  
լեռներ թամբել: Լեռան մի ծայրից մտել ու դուրս եկել մյուս  
ծայրից՝ քրտնաթոր, պրկված բազուկներով: Ու ճանապարհ  
է բացել ջրի համար, որ մի տեղ փշի փոխարեն խաղողի  
որթ աճի, որ մի տեղ նավթի ճրագը մարեն ու ջահ վառեն:  
Իսկ հիմա Ապարան: Զրամբարի պատնեջը կառուցելու հա-  
մառ որոշ տարածության վրա Քասախի հունը պետք է փոխ-

վի: Քունի է հարկավոր դրա համար՝ 500 մետր երկարու-  
թյամբ: Պետք է Եվ Խաչիկը... պրկված մի աղեղ է դարձել,  
կայել է սարի կրծքին՝ ծակում է սարը, քանդում:

Մ՛վ դիտե, Ապարանի ջրամբարի կառուցման, այդ թու-  
նելախորշը բացելու համար մեկ էլ ո՛վ է այնքան ուրախ,  
որքան Խաչիկը:

— Ախր Ապարանն իմ ծննդավայրն է: Աչք եմ բացել  
ու գնացել եմ այնտեղից: Մինչև հիմա քիչ բան եմ արել մեր  
շրջանի, մեր գյուղի համար: Միշտ ինձ թվացել է, թե ես  
դասալիք եմ,— ծիծաղում է և ավելացնում,— հիմա արդեն  
մեղքերս կքավեմ:

Երևասարդական ուժ, 16 տարվա թունելագործի փորձ  
ու պարտքի զգացում այն հողի նկատմամբ, որն իրեն սնունդ  
է տվել, իր մանուկ օրերին՝ ծաղիկ: Վաղը արդեն, գալիք  
մայիսին այդ հողում բացվող կարմիր վարդերից գիրկ-գիրկ  
կրերեն մարդիկ, կհանձնեն Խաչիկին և իր ընկերներին, երբ  
երկու կողմերից սարը ճեղքող թունելագործները կհանդի-  
պեն իրար: Կհանդիպեն, կգրկախառնվեն ու շեն բաժանվի:  
Կկանգնեն մի ուրիշ սարի մոտ և առաջինը Խաչիկը մի քա-  
րաբեկոր կպոկի ժայռի կրծքից: Այս անգամ արդեն կա-  
ռուցվող թունելը մետրով չի շափվի՝ մոտ 9 կիլոմետր եր-  
կարություն է ունենալու այն: Զրամբարում կուտակված  
ջուրը այդ թունելով դուրս կգա և 7.500 հեկտար հող կծած-  
կի իր դարավոր մերկությունը... Խաչիկի դեմքից պոկված  
քրտինքի կաթիլները լուսաշաղախ ցող կգառնան մի թարմ  
գարնան հետ՝ ծաղկած ծիրանենու սպիտակաթերթ ծաղիկ-  
ների վրա: Խնձորի այգի կաճի, խաղողի վազ, ցորենի արտ  
կծփա, հիմա դեռ մի ծիլ կանաչի կարոտ, Աշտարակի ու  
Ապարանի շրջանների այդ հողերում:



...Քայլում եմ ու մտածում. երկու տարի հետո այս հո-  
ղի վրայով էլ չեմ կարողանա քայլել. այստեղ ջրամբարի  
հատակը կլինի: Զրամբարի՛: Ութ հարյուր հեկտար մակերես  
ունեցող այս կապուտակ ջրին ապարանցիները լիճ կանվա-  
նեն: Շատերը: Եվ արժե: Ի՞նչ անուն կտան լճին, Ծաղ-

կունեաց, Կապուտա՛ւ, Ջովունի՛... Մի սիրուն անուն պետք է, որպէսզի... բանաստեղծների երգերի մեջ պրոզայիկ շնչը չի: Կերպեն, գիտեմ, շատերը կերպեն վաղ ապագայի գեղեցիկ այդ լիճն ու նրա կղզին: Հանգստյան տուն կունենա, պիտներական ճամբար...

Ու մի օր էլ ճամբար եկած լճակ աչքերով մի պատանի կնատի ստվերի ջրի մեջ գցած ուռենու տակ, ահանջը ջրի ծփանքին: Կապտաջինջ կոհակները կվազեն իրար ետևից ու կպատմեն նրան նորօրյա լեզունդը լճի մասին, կշշնջան դրանց հետ լեռները թամբող նրա հերոսների անսւններն ու խաչիկի անունը:

### ԱՐԱԳԱՄԻ ԲԱՅՎԱՍ ԳՐԿՈՒՄ

Պատշգամբից Արարատի լեռնաշխարհն է երևում ու քառագագաթ Արագածը՝ գագաթին աշնան թափառուն ամպերը՝ անաբատ ձյուն գարձած, Տան դիմաց այգին է, այգում՝ ջահել ծառեր՝ շալախ ծիրանենի, դեղձենի, կեռասենի, ընկուզենի: Կովք, հորթի հետ, ցանկապատի տակ շաղոտ կանաչներն է հոտոտում պոկում:

Աշուն է, կովերն էլ արոտի շեն գնում: Աշուն է, Հոռոմսիմ մայրիկը պատշգամբում ցորեն է մաղում: Ուշացել է Հոռոմսիմ մայրիկը: Հարեանի պատին ձմռան համար թրխված լավաշը շորանում է արդեն, իսկ ինքը գեռ ցորեն է մաղում: Ուշացել է, վերջին մի քանի շաբաթներում նա ուրիշ կարևոր գործով է զբաղված եղել, պատրաստվել է, պատրաստվել ու վերջում... «լաց է եղել», երբ նվագը տանից դուրս է եկել՝ աղմկող ջահելների հետ, երբ զուռնաչին շընչակտուր զլել է «Տանում են»-ը... Օրեր առաջ, Ոսկեվազում, Հոռոմսիմ մայրիկենց տանը հարսանիք էր, աղջկա՝ Եղիսաբեթի հարսանիքը: Եղիսաբեթը Սահակ Ինչիղուլյանի ընտանիքի դուստրերից ու որդիներից այն վերջինն է, որ Պարսկաստանում է ծնվել՝ Սպահանի մոտ, Դովլաթարազ գյուղում:

Եղիսաբեթի մանկական տարիների կեսն է միայն անցել օտար երկնքի տակ, բայց նրա բառապաշարում պարոկա-

կան բառ կա, լեզվում՝ օտար շեշտ: Իսկ-Նրանտը, Մարիամը, Խաչիկը, Աբրահամը, Գալուստը՝ այդպես չեն, ամեն օր դրա-  
րոցից, իրար հետևից վազելով, տուն են գալիս ու տուն են  
բերում մաքուր հայերենով սովորած մի նոր բառ: Հիմա  
ծնողներն են նրանցից հայերեն սովորում: Իսկ շիկահեր  
մազերը աչքերին թափած Զեմմայի լեզուն դեռ նոր է  
պատում, ու ջարդվում են բառերը նրա մանկական լեզվի  
տակ, բայց ջարդվում են հայավարի:

Հայրենադարձ Սահակ Ինչիղուլյանի վերջին վեց երեխա-  
ները այստեղ են ծնվել՝ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյու-  
ղում:

Սահակը հայրենակից դարձավ համագյուղացի ոսկեվազ-  
ցիների համար 1946 թվականին, արևաշող մի օր, այն օրը,  
երբ իրեն սպասող նորակառույց տան, դեպի Արագածը նա-  
յող, բացված դռնից ներս մտավ ու կրակ վառեց: Այն օրից  
Սահակի տան ծուխն էլ է միանում հայոց տան ծխին: Նրա  
ձեռքով տնկած ծիրանենին ամեն գարնան ծաղկում է հա-  
յոց հինավուրց ծիրանենիների հետ, վազը «լաց» է լինում,  
հայոց բարկ արևը նրա այգում էլ կարմրայտ դեղձ է դառ-  
նում, գինի... ու ամուր կեղևով ընկույզ... Ամեն առավոտ,  
այն օրից, Սահակի օջախից բարձրացող կապույտ ծուխը  
ձգվում է դեպի երկինք ու հետո դառնում ամպ Արագածի և  
մշուշ՝ Արարատի գագաթին:

Այն օրից, ամեն առավոտ, ճանապարհը նույն տեղն է  
տանում Սահակին ու կնոջը՝ կոլտնտեսության ֆերմա: Սա-  
հակ քեռին անասնապահ է, Հոռոմսիմ մայրիկը՝ կթվորուհի:  
17 տարի անընդմեջ: Բայց 17 տարի առաջ, երբ Սահակ  
Ինչիղուլյանը ոտք դրեց մայր հողի վրա, գոտու փոխարեն  
մեջքին փաթաթված շորի մի երկար կտոր կար, պարսիկ  
աղայի «կիսրար» տված հողը կիսել էր Սահակի ուժը, մեջքը  
ջարդել:

Զլատված բազուկները ուժ են առել հիմա հայրենի հո-  
ղից, ուղղվում է մեջքը...

Տասնվեց տարի առաջ Արագածի մայրաբար բացված  
գրկում հայ մի ընտանիք էլ իր տունն ունեցավ, իր տունն  
ունեցավ:

Արտենի: Իրար նման շենքեր՝ մեկը մյուսի լուսանկարը: Ավանին երիզող ասֆալտապատ ճանապարհ կա: Ճանապարհից քիչ հեռու՝ երկաթգիծ՝ պսպղան ուղիներով: Գնացքով Մոսկվայից Երևան եկողը այդ գծով է անցնում: Կայարանի գորշ շենքն ու գծի կողքի հաստաբուն բարդին նույն տարիքի են՝ հին կյանքի լուռ վկաները: Շա՛տ բան են տեսել: Ու զարմանքի՞ց, թե՞ ժամանակի ծանրությունից, շենքը ճաքել է, իսկ բարդին... խեղդել է ծարավը, արմատները խորացրել հողում, շնչել անապատի շունչը, կովել մրրկասյան հետ... ու հաղթական նայել, շուրջը անապատ է, ինքը՝ անընկեր: Կատաղել է երբեմն բարդին, մենակությունից խենթացել, ճյուղերը խառնել իրար, ուզեցել է պոկվել անապատի կավահողից: Բայց արևի առաջին համբույրի հետ հանդարտվել է և հոգնած ու ամոթահար գլուխը կախել: Համբերել է: Ու մի օր ինքն էլ դալար ճյուղերն ու տերևները բերել իրար, ծափ տվել, երբ խամրող աստղերի հետ աքլորականչ է լսել: Իսկ Արտենիում առաջին աքլորականչը 8—9 տարի առաջ է եղել միայն... Անցնում ես բարդին, հատում երկաթգիծն ու քարապատ, անմշակ մի տարածություն է՝ նեղ ու երկար: Անապատ մնացած այդ պատառում փուշ չկա, եղել է, հիմա չկա: Այստեղ արահետները հատում են իրար, ոլոր-մոլոր գալիս ու հավաքվում մի տեղ՝ քարափի վրա՝ սելավի ժայռոտ ափին: Երկու ձգված գերան, գերանների վրա՝ մեխված տախտակներ ու ձորակի ափերը կապվում են իրար հետ՝ կամրջվում է «Մաստարա սելավը»: Սելավի հատակին մաշված քարեր կան, երևում են, աշնան ջուրը զուլալ է, երեսին՝ փշրված ջուր՝ սպիտակ փրփուր...

Կամուրջից այն կողմ Իշխանի բրիգադն է: Աշնան քամին ծառերից ամեն մեկի վրայից հազի՛վ մի քանի տասնյակ դեղին տերև պոկի. ծիրանենիները ջահել են դեռ, ձյան ան արևից դողացող: Բայց Ռոզան հող է հավաքում բների մոտ ու կտրվում է ծառերի դողը: Բրիգադը խաղող էլ ունի, պտղատու այգու շարունակությունը: Կանգնում է Իշխանն ու բրիգադի հեռու մի մասում աշխատող մի բանվորի ձայն տալիս, ինչ-որ բան է ասում: Իշխանը «Չենով Օհանն»

է: Իսկ Աննա մայրիկի ձայնը հազիվ հասնում է հաջորդ շարքում խաղող հավաքող Զարեհին ու Աստղիկին: Աննա մայրիկը փոքրամարմին է, մեղմ ու ժպիտն էլ չի իջնում դեմքից: Նա այդ բրիգադում էր աշխատում սկզբից էլ: Ծրեկ խաղողի մատեր էր տնկում, հիմա այդ «մատերից» ողկույզ է պոկում:

Վերևից ներքև իջնող այգեմիջյան ուղիղ մի ճանապարհ՝ սիզապատ, տրորված: Թվում է, թե ոչինչ չփոխվեց: Եվ իրոք, չփոխվեց, ճանապարհ է ու երկու կողմը խաղողի վազ՝ դեպի շպալերայի լարերը մագլցած շվեր, դեղնականաչ տերևներ: Բայց չէ՛, Թովմասը համաձայն չէ. ճանապարհի այն մասի «Գառան դմակը» իր բրիգադինն է, Աննա մայրիկը այն «Ռեկածիթելու» կարմրած ողկույզը պոկելու «իրավունք չունի»: Վարդուշն է պոկում ու խնամքով տեղավորում դուլլի մեջ, Արաքսին...

Փոքրիկ Վաչիկն էլ իրավունք չունի, բայց նա թաքուն մտնում ու պոկում է: էլ ի՞նչ «Թովմասի այգի», որ մի երեխայի մեկ-երկու կիլոմետր վազել շտա: Բրիգադի խաղողի այգիներն արդեն 5—6 տարի է դարավոր անապատից, Ռաֆիկի, Ռուբիկի... շատերի բազուկներից ուժ են վերցնում, հարյուր տասը տոննա խաղող կտան: Ու 5—6 տարի առաջ էր, որ Թովմասի բրիգադը «Մաստարա սելավ»-ի ձախափին ծիրանի ծառ էլ տնկեց: Անցած գարնանը, փեշերից դեպի ձորակը վազող պղտոր ջրերի հետ, ծիրանենիները սպիտակ ծաղիկ տվեցին... արևաներկ ծիրան՝ 1 տոննա:

Կանաչ առուն շատ չի ծոմովում: Զգվում է ու վերևից սահմանափակում Թովմասի ու Իշխանի բրիգադների այգիները: Առվի ափին հողիկն է, հալիկի դիմաց՝ Վահագնի բրիգադի այգիները: Զորս տարեկան խաղողի վազ կա բրիգադում ու այգեկույթ, խնձորի ծառ կա, սալորի, ծիրանի ու երեք տարեկան դեղձ՝ «Լոձ», «Նարինջ»: Բայց արդեն երկու տոննա 200 կիլոգրամ դեղձ է հավաքվել այս տարի ու քնկեր Ավագյանն արդեն հայտնել է իր կարծիքը.

— Լավ է, շատ լավ է:

Ավագյանը հին ագրոնոմ է, փորձադաշտի վարիչ, Վահագնի հարևանը: Ու, չնայած Ֆլորան, Լիդան, Ռիման, Հաբեթը... այնպես են մշակում փորձարկման խաղողի տարբեր

տեսակներն ու պտղատու երիտասարդ ծառերը, ինչպես պետք է, բայց Ավագյանն էլի «կոպում» է վահագնի հետ.

— Դու քո այգին ավելի լավ ես մշակել տալիս, քան իմը,— կոպում է ու հետո ձեռքը մեղմորեն դնում վահագնի ուսին:— Ադա՛, մի նեղացի, բա ի՞նչ անեմ, աշխատանքն առանց խալմաղալի չի ըլի, էն դրադի ծառը լավ չի ջրվել, կչորանա, է՛, ափսոսա:

Նորից այգեմիջյան սեզոն ճանապարհ ու նորից ինչոր բան փոխվում է: Վահագնի փոխարեն Սրբոյանն է տեր կանգնում այգիներին: Նրա բրիգադում հիմա ոչ մեկը չի աշխատում, այգին շատ ջահել է, բերք չունի, ու թաղելու համար էլ Ռազմիկն ու Արիստակեսը դեռ չեն շտապում, վագերը թող լավ հասունանան, թող գունատվեն տերևները աշնան շնչից, ցուրտ ուտեն:

Ժորայի բրիգադում էլ դատարկ արկղերը այս աշնանը դեռ խաղողով չեն լցվում: Ու մեքենավարներ ժորժիկը, Հայկարամը, Մրազը, Մուշեղը... չեն կանգնում այդ բրիգադների մոտ, արագ անցնում են, կանգնում Քյարամի մոտ, Վարիկի, Հայկազի, Աշոտի, Ղուլիխանի, Միրաբյանների՝ Հովհաննեսի ու Մկրտչի մոտ ու ծանր ետ դառնում... Ու այսպես, սելավի այն կողմը միայն Արտենիի սովխոզը 13 բրիգադունի, շուրջ 630 հեկտար խաղողի ու պտղի այգի՝ իրար շարունակությունը, կպած իրար, մեկը մյուսի վրա ստվեր գցող, ձգված, աշնան նրբերանգ գույներով ներկած մի հոտի՝ փաթաթված «Մաստարա սելավի» գալարուն մեջքին՝ 6—7 կիլոմետր: Սելավը հրճվանքից քչբչում է, հոգու ծիծաղը կոհակ-կոհակ երեսին հանում, աշնան քամուց խլում դեղին տերևներն ու քշում, տանում, որ մյուս գարնանը ետ բերի, ափ հանի՝ որպես արևի սիրուց պայթող բողբոջներ:

## ԿԱՏԱՐՈՒՄ ԵՄ ՀԱՅԿՈՒՇ ՄԱՅՐԻԿԻ ՊԱՏՎԵՐԸ

Փոքրիկ կամրջի տակ Շաղվերդ գետն է՝ թափանցիկ ու մաքուր իր ջրերով: Գետի հատակին կանաչ, լպրծուն, անհանգիստ տարուբերվող ջրիմուռներ կան, կողքին՝ թարմ բուրոզ դաղձ, երեքնուկ, հազարանուն կանաչ ու ծառեր:



Ճյուղատարած ուռենին օրնիրուն իր դալար շվերն է լվանում ջրի երեսին: Փշատենին կամրջում է Շաղվերդը: Ստվարախիտ ընկուզենին չի թողնում, որ հոգնած արևը գոնե միջօրեին լողանա գետակի սառը ջրի մեջ: Ընկուզենու կողքին կանգնած ջահել բարդին նեղանում է դրա համար ու խռոված ձգվում, ձգվում է դեպի կապույտ երկինքը:

Կամուրջը անցնում ես թե չէ, կանաչ գյուղն է՝ Բաղմաղբյուրը: Շաղվերդը իր կանաչ ու կենդանի ափերով ամուր գրկել է նրան՝ երկու կողմից: Գյուղը ուր-մուր փողոցներ ունի: Փողոցների վրա ժամանակից շուտ ծառերից պոկված դեղին ու շորացած տերևներ կային, ծուռտիկ քայլերով ոտաբոբիկ մանուկներ:

Մխախտտի շորանոցը գյուղից դուրս է: Գնացել եմ, որ օղակավարուհի Ժենյա Շարոյանի մասին ակնարկ գրեմ: Կոմունիստ է ու լավ է աշխատում: Պետք է գրեմ: Նստել ենք օղակի անդամների մոտ ու շենք խոսում՝ ես ու Ռաֆիկը: Ռաֆիկը բրիգադիր է: Մխախտտագործուհիներն էլ շեն խոսում, բայց միալար մի ձայն լսվում է. չբ, չբ, չբ՝ երկար ասեղներն են ծակում հաստ տերևակոթերը:

— Բա ո՞նց կլինի,— ականջիս շշնջում է Ռաֆիկը:

— Բա ո՞նց կլինի,— սրտնեղած մտածում եմ ես,— ակնարկիս հերոսը չկա, Երևան է գնացել, բա ո՞նց կլինի: Հետո ի՞նչ, որ օղակավարուհու յոթերորդ դասարանցի աղջիկը՝ Անահիտը, մոր տեղը աղատ չի թողել ու արագ-արագ էլ ծխախոտ է շարում... Ակնարկիս հերոսը չկա, ինչպե՞ս կլինի: Տրամադրությունս ընկել է:

Մխախտտագործուհիներից մի քանիսը գլուխներն ավելի են կախում ու... խեղզում ծիծաղները: Հասկանում եմ. ծիծաղում են, որ Ժենյայի բացակայութունը այդքան մտածել է տալիս մեզ: Չէ, խոսել պետք է: Բայց ինչի՞ց սկսեմ: Հարցնեմ, «Ինչպե՞ս եք»: Պատասխանը մի բառ պետք է լինի՝ լավ ենք: Հետո՞... Ա՛յ, էն աղջիկը... սե աչքեր ունի, հարթ նստած մաղեր, դեղնաչիթ զգեստ: Անիկն է: Աչքի տակով սրան-նրան է նայում, մեզ, բայց ձեռքերը արագ-արագ շարժվում են, ու ծխախոտի տերևները ճշտորեն գրտնում են իրենց տեղը ասեղի վրա: Չհարցնե՞մ, թե այդ ինչպե՞ս է, որ չի սխալվում... Նայում եմ մյուսների ձեռքերին:



Նույնը... Լսում եմ էլի ու շղայնացած մտածում, «Ժենյան հենց այսօ՞ր պետք է Երևան գնար»... Ինչ վատ է լռությունը։  
Սև խոպոպիկներով երկու գլուխ մոտենում են։ Հետո մեկը դիմում է ինձ.

— Օղակավարի տեղակալը ես եմ։

— Դո՞ւք եք։ Ի՞նչ եք ուզում ասել։ Ձեր մասին գրե՞մ,— կատակելու միտք չունեի, բայց ինչ լավ սիրտ ունեն արագաշարժ մատներով այդ ծխախոտագործուհիները։ Ոչ ինքը՝ Շուշիկը վիրավորվեց, ոչ՝ ընկերուհին՝ Ռենիկը, և ոչ մյուսները։ Օղակը չէ միայն, ամբողջ բրիգադը միանգամից ծիծաղեցին իմ «կատակի» վրա։ Լռությունը խախտված էք և այն էլ ինչպե՞ս։ Հիմա արդեն զրուցելն ու կատակելը հանգիստ է.

— Ո՞չ։ Ձեր մասին չեմ գրի, հիմա մայրիկը կասի, թե ձեր օղակի ամենալավ աշխատողը ով է։

...Ժամանակը Հայկուշ մայրիկի մազերի մեջ սպիտակ թել է դարձել, դեմքին՝ կնճիռներ, աչքերում՝ մշուշ։ Ժամանակը շատ անողոք է եղել Հայկուշ մայրիկի նկատմամբ. հարազատներ չունի, մենակ է։ Չունի՞, մենա՞կ է... Բա ինչպե՞ս է, որ այդքան ամուր պահել է հոգու արիությունը։ Աշխույժ ու կատակասեր է Հայկուշ մայրիկը։ Նայում է ինձ, ժպտում ու.

— Ես եմ ամենալավ աշխատողը, ես,— ասում է։ Միծաղում ենք։

— Բա ինչ։ Մի սրանց մտիկ տուր,— նա ձեռքը մեկնում է իրար մոտ նստած Աստղիկին ու Մաղիկին,— տեքերկին են, որ թողնեմ, մինչև իրիկուն կկռվեն՝ թե իրենցից ով է շատ շարում։ Ես որ ցույց եմ տալիս շարածս, ձեները կտրում են,— ընդհանուրի ծիծաղի մեջ ամենաբարձրը «տեքերկիներին» ծիծաղն էր ու Հայկուշ մայրիկինը։ Նա խփում է կողքին նստած Հայաստանի ուսին, հետո լռում, լրջանում է ու շարունակում,— կատակ եմ անում, տղա չան,— մի պահ լռում է էլի,— բա ինչ անենք... Մեր օղակում վատ աշխատող չկա։ Էն մարդը, որ էս ամռան շոգին տանիցը դուրս է գալիս, աշխատանքի է գնում, նա վատը չէ։ Որի մասին ուզում ես գրի, հենց ամբողջ բրիգադի մասին գրի։ Ա՛յ, տեսնում ես էն հարսին, ամբողջ տարին մի օր

չի բացակայի աշխատանքից, շնորհիվ պատճառ էլ անի, սեզննար՝ շէր գա: Մարիամը ամոթխած նայում է նրան, գլուխը կախում:— Կամ էս միներ, անունը իմ անունից է,— Հայկուշ մայրիկի լուրջ տոնը փոխվում է նորից,— հատուկ ասեղ է պատրաստել տվել, ու ամեն օր էրեխուն էլ հետն է բերում՝ թող օգնի,— առում է,— շուտ պրծնենք: Ծաթերին էլ խրատում է, թե քո էլինային էլ բեր:

Ծա բռնե՞նա՞նք մեջ իրար հետևից գրում եմ օղակի անդամների անունները, մեռած է միայն մեկը:

— Զեր անունը ինչպե՞ս է,— հարցնում եմ:

Նա նայում է ինձ, գլուխը կախում ու ամոթխած ժպիտը դեմքին, կողքանց նայում ընկերուհուն: «Ամաշում եմ, գուսաս»: Հասկանում եմ նրան ու նայում ընկերուհուն:

— Ասա՞րիկ է:

...Ում համար շորանոց էի մտել, չկար: Քայց ինձ համար ներկա էր արդեն: Տարված գրուցում էի: Հայկուշ մայրիկը զգուշացնում է.

— Թե շես ուզում Հենդիկը կռիվ անի հետդ, մեր մոտից գնա:

— Հենդիկն ո՞վ է: Ո՞ւր գնամ:

— Էն սիրուն աղջիկն է, ջահելների օղակավարը, նրանց մոտ գնա: Գնա տես, ինչ սիրուն աղջիկներ ունենք:

Դժվարանում եմ միանգամից նստած տեղից բարձրանալ ու գնալ աղջիկների մոտ:

— Գիտեմ, գիտեմ, մայրիկ, — առում եմ, — երիւասարդ եմ՝ ուրեմն գեղեցիկ: Ի՞նչ էթես դրան ագիլացնենք և այն, որ աշխատում են լավ, ավելի քան գեղեցիկ են ձեր աղջիկները:

Ճիշտն ասած, եթե միայն Հայկուշ մայրիկի տեսակետով էլ մտանալու լինեի՞նք գեղեցիկ բառին, երիտասարդական օղակի բոլոր անդամներն էլ գեղեցիկ են՝ Անահիտն էլ, Աղավնին էլ, Մարուսյան էլ, խոր ու երազուն աչքերով Զվարթը, Ռիման, Գոնարան, դարբասկաններ Հեղինեն ու Առնիկը գեղեցիկ էին: Ու գեղեցիկ էր Վազգուշ մայրիկի աչքերում նստած ջերմ կարոտը. նա երկու որդի ունի բանակում: Երկվորյակ են: Այս չէ, մյուս աշնանը գալու են: Բարով գան: Վազգուշ մայրիկը խոստացել է ինձ հարսանիքի հրավիրել:

— Տղա ջա՛ն, ազա՛ ջա՛ն, մի բառեղ արի,— շարունակեցի մյուս ծայրին գլխի մոտ բարձրացված մի ձեռք կառ Գլախն ալեկի սպիտակ է, քան ձեռքը: Աղխատանքից կոշտացել, մեծացել է ափը: Մորս ձեռքերն եմ հիշում...

— Ար շկանչեի, մեզ մոտ շէիք գա, շէ՛:

— Ինչպե՛ս շէ, կգայի, մայրիկ:

— Դե որ եկել ես, գրի մեր օղակաւարի անունը՝ Մուշեղյան Գոհար: Չէ՛, սկզբից մորը գրի, հրեն, Հայկուշ է անունը: Էն կողքի նստածն էլ մյուս ազգիկն է, էն էլ Արմիկն է, մեր օղակի կոմսոմուլը: Սա Չյունիկն է, կողքինը՝ Հասմիկը, էն էլ իմ ընկերն է՝ Տիդանը: Անցած անգամ նկարը թերթով եկաւ,— նա մի պահ ընդհատում է ու հարցնում.

— Գրո՞ւմ ես, թե՞ խզբզում:

— Գրում եմ, Արաքայա մայրիկ, ինչո՞ւ պետք է խզբզեմ: ...Բլոկնօտիս մեջ եղած նշումները վերջանում են: Կարգում եմ գրածս ու մտածում, հիմա որ տանեմ խմբագրի մոտ, կկարգա ու կառի.

— Իսկ ո՞ւր է ակնարկիդ հերոսը:

— Երևան էր գնացել,— կայտասխանեմ,— երկրորդ բրիգադի ծխախոտագործուհիների մասին եմ գրել: Յոթ ու կես հեկտար ծխախոտ են մշակել: Բույսերը բարձր են, տերեւները՝ խոշոր: Հիմա քաղում են ու շարում: Հալ են աշխատում: Նրանցից ամեն մեկն էլ ակնարկի հերոս է: Ծիշա էր ասում Հայկուշ մայրիկը. «աշխատող մարդը վատը չէ»:

Կհամաձայնվի խմբագիրը, գլխեմ: Աւ կհամաձայնվեր, եթե մյուս բրիգադի ծխախոտագործուհիների մասին էլ գրած վիճեի, գյուղի մյուս մարդկանց մասին էլ: Բազմադրյուրը գեղեցիկ գյուղ է, ու մարդիկ ունի աշխատող:

### ԱՄԵՆ ՄԱՐԴ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐ ԱՆԿՅՈՒՆՆ ՈՒՆԻ

Ամեն մարդ աշխարհում իր անկյունն ունի, իր տունն ու հայրենի ծխանն ունի այդ անկյունում ամեն մարդ: Ո՞ր անկյունում է Կաթնաղբյուրը Չգիտեմ: Աղխարհի համար մեր գյուղը միայն մի կետ է, իսկ ինձ համար, համագյուղացի-

ներիս, իմ հարեան Հակոբի համար՝ Կաթնաղբյուրը աշխարհի կենտրոնն է:

Հակոբը Կաթնաղբյուրում է ծնվել: Աշխարհի այդ մասի հողն է առաջին անգամ սնել նրան, ուժ տվել, որ ոտքի կանգնի և այդ ոտքերը առաջին անգամ հենարան են ունեցել երկրագնդի այդ պատառիկ քարքարոտ հողը: Աշխարհի այդ անկյունն իր բաժին արևից մի փունջ շող է ձգել լուսամուտից ներս՝ Հակոբի համար: Բռնել է մի օր այդ շողից Հակոբն ու դուրս եկել տանից... տան կողքով անցնող կանաչ առվի հետ իջել է փողոց... Կանգնել դպրոցի մուտքի մոտ մի օր...

Ծաղկել է տան դիմացի սալորենին, էլի 7—8 տարի և մի օր էլ մի դալար շիվ է կտրել այդ ծառից Հակոբը ու կոլտնտես սուժյան կովերը արոտ քշել... Քշել ամառանոց:

Երեք-չորս գարուն ու աշուն ոտքի տակ տվեց Հակոբը իր գյուղի հանդը, մտերմացավ ամեն ձորի ու սարի հետ, իր մտերիմ քարն ունեցավ ամեն ձորում, ամեն սարում՝ իր զուլալ առուն ու կանաչ պատառը: Երեք-չորս ամառ յայլաղ բարձրացավ, իր հոտի հետ Հակոբը, ոտքի տակ տվեց Արագածի կանաչ գորգը, կապվեց, հարազատ դարձավ պատանու համար ամեն փոքր ու մեծ, զուլալ ու սառնորակ աղբյուր, Արագածի ամեն մի կապտավուն ու ողորկ քար հանգիստ տվեց իր վրա ու իր ստվերում Հակոբին: Ծվ այդ երեք-չորս տարում գյուղը ավելի շատ սիրեց ու գնահատեց իր աշխատասեր ու ջահել որդուն:

Ու մի օր էլ իջավ սարից Հակոբը և երեք տարով հրածեշտ տվեց իր տանը, տան դիմացի սալորենուն, կանաչ առվին՝ սալորենու տակի և հարազատ գյուղի սերը սրտում մեկնեց խորհրդային բանակ:

Գյուղը կարոտն աչքերում սպասեց իր որդուն:

Ուկրաինայում ծառայեց Հակոբը, երկաթուղային էր և Երկաթյա զնգուն ռելսերի վրայով քաղաքներ անցավ՝ մեծ ու գեղեցիկ և հիշեց Կաթնաղբյուրը, հոյաշեն բազմահարկ շենքերից ներս մտավ ու հիշեց իր տունը, անտառներ տեսավ ստվերախիտ ու նրա աչքի առջև շնկշնկացին ջրաղացի ձուլի ծառերը, նրանց մեջ փնտրեց իր ծառը, իր հարազատ ուռենին: Ծովերի վրայով անցավ նա, գետերի, Դնեպրի

ալեկոծ ջրերին նայեց երկար ու հիշեց դարձյալ իր գյուղի բարակ առուն ու առվից վերև փոքրիկ ջրամբարը: Սարեր, տեսավ շատ, բայց միշտ իրեն գտավ իր սիրած սարերի վրա՝ Արագածի փեշին...


Չէ՛, աշխարհում գեղեցիկ բնակավայրեր, սարեր երկնասլաց, անտառներ ու ջրեր գերող շատ կան, կան աշխարհում գեղեցիկ անկյուններ, բայց Հակոբի համար ամենագեղեցիկը իր անկյունը մնաց, իր գյուղը, մնաց՝ սարերը գյուղի ու համեստ տունն իր սարերի միջի:

...Անցյալ տարվա դեկտեմբերյան մի առավոտ գյուղ մտավ նորից Հակոբը, տուն մտավ, նորից նստեց իր հարազատ հարկի տակ:

— Ուրեմն կարգին մասնագիտացել ես գնացքի նոր գծեր կառուցելու ու վերանորոգելու մեջ: Ուզում ե՞ս, գնա մի երկաթուղային կայարան աշխատի, էլի գծի վրա, — երեկոյան խոսակցության ժամանակ փորձեց հայրը և նրա սիրտը թրթռաց: Ի՞նչ կպատասխանի Հակոբը: Կգնա՞:

Ո՞ր հայրը կկամենա, որ որդին հեռու ապրի իրենից, իր հայրենի օջախից հեռու լինի ու տան դուռը բացի երբեմն-երբեմն, որպես հյուր: Չէ՛, Հակոբը հյուր չդարձավ իր տան համար...

Գարնանը կոլտնտեսության 400 գլուխ գառների հետ նորից այցի գնաց իր սիրած սարերին, Արագած բարձրացավ էլի, ջուր խմեց իր զուլալ աղբյուրից, հանգստացավ իր քարի վրա:



Ամեն մարդ աշխարհում իր անկյունն ունի, իր տունն ու իր հայրենի ծխանն ունի այդ անկյունում ամեն մարդ:

Հակոբի համար ամենագեղեցիկ, ամենալավ անկյունը, աշխարհի կենտրոնը իր գյուղն է, իր հայրենի տունը:

### ՈՍԿԵՎԱԶԻ ԳՈՒՍՏՐԸ

Աշտարակում բոլորը նրան «գաղթական Արսեն» էին կանչում: Հայրենի տունը Արաքսից այն կողմ էր թողել Արսենը՝ գանգրահեր մի սարի դռշին: Ու Աշտարակում մի հո-

լիկ ունեի միայն՝ կլոր երգիկով, ճոնչացող դռնով:

Ամեն առավոտ, արևածագից առաջ, ճոնչում էր դուռը, և Արսենը կանգնում էր Աշտարակի կենտրոնում՝ կուշ եկած տրեխներով, մի մահակ ձեռքին...

Աշտարակի տավաշած գաղթական Արսենը...

Ու մի օր էլ վերջին անգամ ճոնչաց խրճիթի դուռը: Շալակն առած ողջ ունեցվածքը՝ պարանով կապված մի կապոց, Արսենը կնոջ հետ դուրս եկավ գյուղից, Նորածին երեխայի՝ Հասմիկի ճանապարհը կյանքում ձգելու համար մի հույս Արսենին Աշտարակից Երևան տարավ:

Դա 1918 թվականն էր:



Հայոց լեռների վրա բացված արշալույսը շթողեց, որ գաղթական Արսենի կապույտ երազները մշուշ դառնան: Արսենի հաստոցի ձայնը աղմկեց մի գործարանի կամարների տակ, Հասմիկի ձայնը՝ խանջյանի անվան դպրոցի բակում:

Հետո... Այն ե՞րբ էր, ինչպե՞ս հանդիպեցին Հասմիկն ու ոսկեվազցի Գուրգենը: Հասմիկը չի մոռանում: 23 տարի առաջ էր, այս գարնան պես թարմ գարուն: Երևանում հանդիպեցին, փողոցում, հենց այնպես, պատահական: Հետո էլ... ոչ պատահական, և Հասմիկը դարձավ ոսկեվազցու հարս: Դեռ նոր էր հարսնանվագի հնչյունները մարել Գուրգենինց օճորքի հաստ գերանների տակ, երբ նա բանակ գնաց, և պատերազմը ընդմիջտ փակեց նրա դարձի ճանապարհը:

Գույնզգույն գլխաշորերը շատացան Ոսկեվազի դաշտերում: Դրանցից մեկն էլ Հասմիկինն էր: Այգի փորեց՝ Գուրգենի փոխարեն: Ոսկեհասկ ցորեն հնձեց Գուրգենի, զինվորական զգեստներով էլի ուրիշ մարդկանց... նորածին Ռիմայի համար, որն այդպես էլ... շտեսավ հորը:

Անցան տարիներ: Հասմիկի մատները խաղողի որթի քնի պես կոշտացան ու կնճռոտվեցին՝ նա հմուտ այգեգործ դարձավ: Մխախտի պլանտացիաներում արևի շողերը

կանաչ տերեւների հետ նրա մազերի միատարր սևն էլ խախտեցին, և Հասմիկը ճանաչված ծխախոտագործուհի դարձավ: Հետո, կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայում խղճով մի աշխատողի, մի կթվորուհու պահանջ կար, և նա կթվորուհի դարձավ:

Չորրորդ տարին է:

Ամեն օր լուսաբացից առաջ տանից դուրս է գալիս և բռնում ֆերմա տանող ճանապարհը:

Կթվորուհի է, պլան էլ ունի, պարտավորությունն էլ է ընդունում ամեն տարվա սկզբին: Բայց ամեն բոպե ոչ պլանն է կանգնած աչքերի առջև, ոչ պարտավորությունը: Դե պլան կատարելու համար չէ, որ մաքրում է անասնագոմը: Անասնապահ է ինքը, գիտե իր գործը՝ կովերի տակը միշտ մաքուր պետք է լինի, շոր: Այդպես պետք է լինի: Կիթը սկսվելուց առաջ խողանակով մաքրում է «Թարխան»-ին, կիթը սկսում է նրանից և ավարտում է «Արար»-ով: Փորձված է, այդպես աճելի լավ է: Այդպես մի շիթ կաթ ավելի է ստացվում:

Եվ երբ ավարտվում է տարին, և ֆերմայի վարիչը ի մի է բերում արդյունքները, պարզվում է, որ Հասմիկը կաթի արտադրության և պլանն է գերակատարել, և պարտավորությունը:

Այդպես էր և անցած տարին: Պլանավորված 2000 կիլոգրամի և սոցիալիստական պարտավորությամբ ստանձնած 2200-ի փոխարեն իր խնամքին հանձնված 14 կովերից ամեն մեկից նա 2350 կիլոգրամ կաթ ստացավ, Հիմա էլ նոր պլան ունի և նոր պարտավորություն: Եվ ամեն օր, լուսաբացից առաջ, տանից դուրս է գալիս ու քայլերն ուղղում ֆերմա:

Աշխատում է: Տարվա վերջին ֆերմայի վարիչ Խ. Գյուլենազարյանը թղթապանակը կբացի, կշխկշխկան համրիչի հատերը և.

— Հասմիկը այս տարի իր խոսքի տերը եղավ,— կասի:

Ոսկեվազում ամենքը գիտեն, հավատում են, որ այդպես կլինի: Ու թե այդ հավատը չլիներ, ոսկեվազցիները իրենց ժողովում Հասմիկ Արսենի Համբարձումյանի թեկնածու-

թյունը չէին առաջադրի Ոսկեվազի № 163 ընտրական օկրուգում՝ որպես ՀեՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատութեան թեկնածու:

### ՃԱՆԱՊԱՐՀԸ ՍՐՏՈՎ Է ԱՆՑՆՈՒՄ

Գարնանը գյուղին շուրջպար բռնած սարերը, Ցամաքասարի անջուր սարերը շկանաշեցին՝ երկինքը չլացեց սարերի վրա:

Բնութեան շար կատակ...

Նայեց գյուղը իր դիմացի սարին, արտերին՝ սարերի, դիմացի ու տնփաց ցավից. «Երաշտ է»...

Այնուամենայնիվ գարուն էր:

Դաշտ քշեց անասուններին քեռի Սաղոն: Իսկ մի իրիկուն խռոված սրտով բացեց գրասենյակի դուռը.

— Մտածիր, Գեղամ ջան, անասունները դաշտում հող են լիզում, մեր հանդը մեր անասուններին այս տարի չի պահի:

Մտածի՞ր: Իսկ մի՞թե չէր մտածում այդ մասին Գեղամը՝ Ցամաքասարի կոլտնտեսութեան նախագահ Գեղամ Ներսիսյանը: Իհարկե մտածում էր... և մի օր էլ անասնապահներին հաղորդեց, որ ֆերմաները փոխադրելու են Ղուկասյանի շրջանի ամառանոցները: Առաջարկությունը բնական էր և բոլորը սրտանց համաձայնվեցին ու այժմ Ղուկասյանում հաջողությամբ շարունակում են անասունների արածեցումը: Գեղամը չի մոռանում նրանց: Ինչպես ասում են մի ոտքը գյուղում է, մյուսը՝ Ղուկասյան՝ հովիվների մոտ:



Սրանից 8 տարի առաջ, մի երեկո, քնելուց առաջ գյուղը որոշեց. Ներսիսյանը մեր նախագահն է: Հաջորդ առավոտ, արևածագից առաջ, Գեղամը Ցամաքասարի նախագահն էր, ընկեր նախագահ էր Շաքրո քեռու համար, ընկեր Ներսիսյան՝ Գուրգենի համար: Հաջորդ առավոտ գյուղը դեռ լրիվ



Գեղամինը չէր ու ինքը՝ գյուղին: Հաջորդ առավոտ Սաղոյի սիրտը դեռ լրիվ բաց չէր Գեղամի համար:

Իսկ շա՛տ դժվար է ճանապարհ բացել դեպի սրտերը: Շա՛տ: Այնքան շատ, որ մարդիկ երբեմն ապրելով տասնյակ տարիներ, դար, չեն կանգնում նույնիսկ այդ ճանապարհի եզրին ու կյանքում անցած բյուր ճամփաներից և ոչ մեկը մի բաց սիրտ չի տանում նրանց:

Եվ որքա՛ն դժվար է ճանապարհ դրել մի գյուղի սրտով, գյուղացու, հողի աշխատող մարդու, հողի պես ամենաստեղծ ու մաքուր սրտով: Իսկ Գեղամը, այնուամենայնիվ, բացել է արդեն այդ ճանապարհը, բացել է իր կյանքի ճամփան սրտերի միջով— սկսվում է այն սարի տակ ծվարած իր անշուք տնից, հասնում «Խարթալներ» դաշտամասում կորնգան հնձող մարդուն, հովվին՝ կռնթած իր հաստ մահակին, սարերի վրա՝ մի գառնարածի, անցնում «Դուզաների» ցորենի դաշտով, կոմբայնը շարժող մի ջահելի սրտով...

Եվ մի՞թե դա նրա համար միայն, որ Գեղամը գիտե նույնիսկ, որ կոլտնտեսության հավերից մի քանիսի կատարները կապտել են՝ հիվանդութուն է, հարկավոր է բուժել նրանց: Կամ գիտե, որ Դուխիկը յուրաքանչյուր կովից արդեն 1.400 կիլոգրամ կաթ է կթել և թե ինչ պետք է անել, որ ստացվի ևս 100 կիլոգրամ ու կատարվի նրա սոցիալիստական պարտավորությունը: Նրա համա՞ր միայն, որ հանրային հոտի կերի պակասը լրացնելու մասին մտածում է Գեղամը, երկար ու հանգիստ չի քնում գիշերը... Եվ նրա՞, որ երաշտ է տարին, որ Ցամաքասարի ցամաք սարերից և գյուղի սահմաններից դուրս կուտակել է այնքան կոշտ կեր, որ մսուրային շրջանում երաշտի հետևանքներ չեն դրացվի, որ կոլտնտեսականները, այնուամենայնիվ, ամեն մի աշխօրին 60 գրամ կարագ են ստացել, 90 գրամ՝ պանիր, հացահատիկ էլ կստանան, դրամ էլ:

Ո՛չ, քիչ են, շատ քիչ են դրանք: Որ գյուղն ու Գեղամը մի սիրտ են ու մի հոգի նաև նրա համար, որ ցամաքասարցու ուրախությանը Գեղամը ուրախացել է բոլորից շատ, բոլորից շատ ցնցվել դժբախտությունից ցամաքասարցու, տնքացել մի հիվանդի հետ և օգնել նրան ժպտալու նորից:

Դիմել է գյուղացին նրան մի հարցով, խնդրանքով, գի-

Վտանգի Չի նախել Գեղամը պատուհանից դուրս, չի կախել գլուխը գրասեղանի վրա՝ խզրզել թղթին ու շարտել պատասխանը, չի ասել, գնա, հետո կգաս, Պատասխանել է ու հայացքը հասել նրա կողմ ու արևահար գեմքին, թափանցել սիրտը՝ ծփո՞ւմ է պատասխանը սրտում, թե՞ ճմլում է անշնչապես է մարդը՝ սրտում Գեղամի ջերմ հայացքը:

Մի ջերմ հայացքն էլ ճանապարհ է բացում դեպի սրտերը: Առավոտ է, աշնանաչին առավոտ: Նատած եմ գրասեղանի վրա անկյունում ու նայում եմ լուռ, լսում ցամաքասարցիներին: Գրասենյակի դռանը շարժմանը պատրաստ ավտոմեքենա կա: Մեքենայում՝ մարդիկ, գերանդիներ, փոցխեր: Արագածի այգեգործական սովխոզում որոշ տարածություններ նրանք ստոգել են և այսօր պետք է գնան հնձեն: Մարդիկ մտնում, դուրս են գալիս, վերջին խորհուրդը հարցնում, պայմանավորվում:

— Գեղամ... Գեղամ ջան...

Այսպես ջնկերն է դիմում քնկերոջը: Եվ թե ինչ է հետեվում այդ երկու բառերին, կարևոր չէ գա. գյուղի մի ընդհանուր հարցի մասին է:

Նախագահը դուրս է գալիս գնացողներին ճանապարհելու:

— Հրիվ եք, չէ՞: Գործիք, հաց, անհրաժեշտ որևէ ինչ, մեկն ու մեկը, խոմ չե՞ք մոռացել: Դե լավ, գնացեք, երկրորդ տեղսին գալու եմ, Հաջողություն ձեզ...

## ՀԱՅԻ ՊԵՍ ՀԻՆ Է ԵՐԳԸ ՀԱՅՈՑ

Բեմի վրա չի ծնվել երգը, հայոց երգը հինավուրց: «Ապրել է շինականը բնության գրկում և բնությունը՝ շինականի սրտում» (Կոմիտաս) ու... ծնվել է երգը: Մնվել է մի խոր ձորում, սարերի վրա արևամոտ, ծիրանենու տակ մի ծաղկած, տափարակում՝ ծալքը երկնի կապույտի հետ շաղած, առվակների ասիին բարակ ու զուլալ, գետերի վրա պղտոր ու հորգահոս, «լափին» տվող Արազի մոտ... ճամփերի վրա գաղթի՝ փշոտ ու քաբոտ... գեղերումների ժամանակ՝ օտար երկնի տակ է հացի վիշտն ու մրմունջը երգ դարձել, գարձել «Վոունկ»... ու «Անտունի»... ծնվել է արախության ժա-

մանակ ու հերոսության... տխրության ժամանակ է ծնվել  
երգը հայի, երգը հինավուրց ու նոր:

Արշալույսի հետ դաշտն է բշել, սերմով ու հույսով բար-  
ձած, իր սայլը հայր ու բնության վաղորդյան շշուկներից ու  
սայլի անխնայների ձայնից իր երգն է հյուսել՝ երգը բնության  
ու զգացմունքների: Մաղկել է բնությունը, պտղել սար ու  
դաշտ: Երգել է կկուն իր երգը՝ հին ու միօրինակ, սոխակն՝  
իրը: Բողբոջել է սերը սրտում մի հայուհու ու դիմել է նա  
պանդխտության ցուպը առած իր պաշտելուն. «Զինար ես,  
կեռանալ մի... հեռանալ մի... հեռու ես, մոռանալ մի...»:

Բնության զարթոնքի հետ ու գարուն օրով մերժվել է,  
կտորվել է մի սիրտ ջահել, ձնծաղիկը ձյան փաթիլ է երևա-  
ցել նրա աչքին, դարձել հույզ, երգ ու... ծնվել է «Գարուն  
ա, ձուն ա արել...»:

Արբեցել է երիտասարդ հայր, խենթացել է սիրուց ու եր-  
գել ուրախ, պարել հողմի պես: Աշո դաշտում է պարել նա,  
Սև սարի վրա, Արագածի փեշին. Արարատից ու Արագա-  
ծից իջնող քամու պես թեթև է պարել նա իր ուրախ ժամերին:

Սիրել է հերոսությունը հայր, հերոսացել, սիրել քաջի  
բազուկը արդար ու երգել իր Մոկաց Միրզաներին ու  
նրանց կորուստը: «...Հազար ափսոս Մոկաց Միրզա...»՝  
ինչո՞ւ ձմերուկի հետ թույն էլ առար նամարդ արարի դա-  
վադիր ձեռքից:

«Մոկաց Միրզան» այնքան հին է, որ երևի Չենով  
Օհանք երգել է, իսկ Դավիթը լսել» (Կոմիտաս):

Ամենուրեք է ծնվել երգը, ծնվել նույնիսկ ռազմի դաշ-  
տում, երբ ազատության ու արդարության ցուբը ծալրին,  
շողացել է հայ մի հերոս ռազմիկի, զորավարի սուրբ... Հին  
է, շատ է հին երգը հայոց, հայի պես հին:

Ո՞վ է եղել աշխարհի առաջին հայր, կի՞ն, թե՞ տղա-  
մարդ... նրա առաջին ճիշը երգ է եղել... անզեն պայքարը  
տանփաստանի վազրի հետ ու առյուծի, բարբարոս աղաղակ-  
ները նրա հրեփանքի ու հաղթության, հերոսության երգ են  
եղել:

Ու ամեն սերունդ իր երգն է հյուսել, երգել է իր երգը՝

ուրախ կամ տխուր, գարկել լարին հայոց տավիղի ու անցել կյանքի իր ճանապարհը:

Մնացել է երգը գալիք սերունդներին, անցել բերնից-բերան... իսկ հետո, մի երգասանի շուրթերի հետ, թափ հետ, զուռնի ու քյամանչի հետ բեմ ելել, այնհեր ու շատ ջահել մի ժողովրդի երգ որպես, որպես արվեստ ու կուլտուրա:

Եվ շրջկենտրոնի աշխատավորության համար կազմակերպված երաժշտական դասախոսության հերթական պարապմունքում արվեստագիտության թեկնածու Ռ. Աթայանը ավարտում է իր զեկուցումը՝ «Հայ ժողովրդական երաժշտությունը» թեմայի մասին:

Ռ՞վ չի լսել ժողովրդական արտիստ Լևոն Մադոյանի «Ոչխարի կանչը», «Սոխակը» նրա:

Բայց այստեղ՝ Արագածի փեշին, լեռնոտ այս գյուղում ուրիշ ձևով է կանչում իր ոչխարներին դուդուկի վարպետը: Չէ որ սարերի վրա է ծնվել «Ոչխարի կանչը»՝ հովվի շուրթերին: Կանաչ գարունքին է երգել սոխակը:

Երիտասարդ է Ռուբեն Մաթևոսյանը, շատ երիտասարդ: Կանգնած է բեմում ու խոնարհում է գլուխը. դահլիճը հենց սկզբից է ծափահարում նրան, դեռ չերգած ծափահարում է ու նրա համար, որ ջահել է շատ, բայց վստահ կանգնած երգել է ուզում, ուզում է երգել հին «Հորովելը»: Մի պահ վախենում ես նրա փոխարեն, կկարողանա երգել իր պապի երգը, նրա պես հորովել կանչել, եզին ախպեր ասել՝ ջերմ ու սրտաբուխ: Եվ ռադիոկոմիտեի ու հեռուստատեսության մրցանակաբաշխության 1962 թ. մրցանակակիր Ռ. Մաթևոսյանը երգում է իր նախահոր պես... Բեմը կիսացել արտ է երևում դահլիճին, փայլուն կոշիկները նրա՝ տրեխ, սև կոստյումը՝ ճտպտուն շուխա:

Չես կարող հոգուդ խորքից բարձրացող «ջանը» զսպել, երբ վալյա Սամվելյանն է երգում ու թե այդ երգը՝ «Սիրեցի յարս տարանն» է:

Եվ թող ՀեՍՀ վաստակավոր արտիստ Ա. Մեջինյանը իր քյամանչի լարերը լացացնի՝ երեկվա անտուն մի հայի նման, նրա պես աղերսի «Կռունկին»՝ «Կռունկ, մեր աշխարհեն, խապրիկ մը շունի՞ս...»: դահլիճը արտիստին չի

տեսնում ու նրա քյամանչեն՝ հնչյունների հետ է, հայի վշախ, հեա...


Ու, դահլիճը շէր տեսնում կարծես և ուղիովի մենակատար Ա. Նիկողոսյանին ու նրա թառը, այլ գլխահակ անցնում էր մի պահ «Մայր Արաքսի ափերով»:

### ԿՅԱՆՔԻ ՈԼՈՐԱՆՆԵՐՈՎ

Արաքսի այն կողմ է Աշոտի առաջին ճիշը ձուլվել աշխարհի կյանքին: Արաքսից այն կողմն է աչք բացել նա, երկինք ու արև տեսել առաջին անգամ, տեսել, որ իրենց գյուղի թիկունքին բարձր սար կա, դիմացը՝ հարթավայր, գյուղի կենտրոնում՝ հորդահոս գետ: Բայց շհասցրեց լողանալ այդ գետում Աշոտը, սուղվել ու ջրի տակից հանել կլոր ու ողորկ քարերից այն մեկը, որոնք նրան միշտ ներկած ձու էին թվում: Չհասցրեց հասկանալ, թե ինքը այդ օրը ինչու այդքան շուտ, քնկոտ ու կիսամերկ դուրս եկավ տանից, ու թե արևը այդ առավոտ ինչո՞ւ էր տխուր ու արնագույն... Ու շհասկացավ Աշոտը, հասկանալ շէր կարող, որ «Յաղուլշա» սարից «զանգուկեր» վզից կախ ու ճերմակ-ճերմակ այն փոքրիկ գառից իրեն բաժանողը թուրքի արշյունաթաթախ սուրն էր, ուղեզն էր ինչ-որ մի հանսի:

Մանուկ գաղթական էր Աշոտը: Ճանապարհի փշերը ոտքերն էին ծակում, իսկ սիրտը հաց էր ուզում: Հոր՝ Ազանիկի սիրտն էին ըզկտում գաղթի ու կյանքի փշերը:

Արփաշայ ու հետո անհայտ ու անորոշ ճամփաներ: Ուր տանում են թող տանեն, գնա, միայն փախիր թուրք յաթազանից: Արթիկ, Ապարան, Գառնի, Երևան, էջմիածին... է՛, Աշոտի բոբիկ ոտքերը շա՛տ ճամփեքի վրա են հետք թողել, թողել արյան հետք շա՛տ քարերի վրա, որպես դառը հուշ աշխարհի համար: Ու թե ինչպես ինքն էլ մի քարի տակ շմնաց անգերեզման, տաշեղի պես քշվեց հայոց կարմրած ջրերի հետ, անհայտ շկորավ իր քրոջ նման... օ՛, դառը հուշեր...



վերին Քալինի 1920—21 ուսումնական տարվա ցուցակն էր ու ցուցակում՝ Աշոտ Նիկոյան...

Գողացող ձեռքերով, հուսով ու հավատով մի տնակ է կառուցում Արեգում, ու մարդիկ ասում են՝ Աղանիկ Նիկոյանի տունն է: Մոայլ «Յաղուջան» երևում է տան մոտից, հեռու չէ... Յոթերորդ դասարանի ավարտական վկայագիր են գրում ու վկայագրերից մեկում՝ «Տրվում է Աշոտ Նիկոյանին»:

Լենինականն էր... Նորաստեղծ կոլտնտեսության գրասենյակի պատին փակցված աշխօրերի ցուցակն էր ու ցուցակում՝ Աշոտ Նիկոյան... Գյուղը թնդում է հայոց հինավուրց զուռնայի սրտամոտ ու բարձր հնչյուններից: Սպիացած վերքերով մարդիկ սրտանց «ջան» են ասում, ու Աղանիկի տան մուտքից ճերմակ պսակաշորով մի աղջիկ զգույշ ներս է մտնում: Նրա թևից բռնած նրբակազմ պատանին Աշոտն էր...

Լենինականում մեխանիզացիայի դպրոց, Քալինում մեկի կողմից կնիքվող գործուղման թերթիկներ ու թերթիկներից մեկում՝ Աշոտ Նիկոյան...

1936 թվական: Գարուն: Արևը ջերմ էր, հողը՝ ծխացող: Սարունչի «գուլրան արտերը» իր մաճկալին էր սպասում: Աշոտը գնաց, գութանով չէ, տրակտորով գնաց նա, «Դուրան արտերը» առաջին անգամ էին տրակտոր տեսնում, Աշոտը կյանքում առաջին անգամ պետք է գութանը հող գցեր:

Գարուն, առավոտ, ծխացող հող ու բացված առաջին ակոս: Մարտի 8-ն էր դա: Աշոտը երբեք չի մոռանում: Հետո խորացան ու ձգվեցին, կյանքի հետ երկաթեցին այդ ակոսները: Սուսեր, Գետափ, Հակկո, Արեգ... Քալինում մի գյուղ, սարի վրա թառած միայն մի գյուղ՝ Շղարշիկը: Այստեղ է միայն, որ չի եղել Աշոտը:

Ամառ է, արևը կանգնել է զենիթում ու չի շարժվում, կրակ է թափում: Հաջորդ առավոտ Քալինի ՄՏ կայանի մեխանիզատորները պետք է գյուղեր մեկնեն բերքահավաքի: Ու կինոյի շենքում ժողով է: ...Բայց Աշոտի ընկերներին կապույտ թերթիկներ են տալիս՝ պատերազմ է: Աշոտն էլ

է պահանջում: Մի ձեռք գողալով մեկնվում է դեպի նաև ու  
 ետ քաշվում: Յոթ կոմբայն կանգնած էին մնացել... Չեռքը  
 ետ է քաշվում կապույտ թղթի հետ:

Ցորենի հասած, լայնատարած արտ, տրակտորաքարշ  
 կոմբայն, կոմբայնի ղեկի մոտ Աշոտն է: Դժվար է: Մեխա-  
 նիզատոր ընկերներն ի՞նչ եղան, այս ամռան կեսին ո՞ւր են  
 գնացել: Հնձվոր էին, մարդ կերակրող... Կռիվ է: Մարդիկ  
 կռվում են կյանքի, ապրելու համար: Իսկ ապրելու համար,  
 կռվելու համար հաց էր պետք, առաջին հերթին հաց: Դժվար  
 է: Գետնին հասած ցորեն կա, փշրվող, թափվող ցորեն, բայց  
 բենզին չկա: Բենզինը ինքնաթիռներին պետք է օդ բարձրաց-  
 նի: Թող նավթով աշխատի կոմբայնը, ու աշխատում է:  
 Աշոտ Նիկոյանին «Կոմբայնի վարպետի» կոչում, Լենինի  
 շքանշան: 1943 թվին էր դա: Հետո... Աշոտ Նիկոյանին  
 «Աշխատանքի արիության համար» մեդալ:

...Նիկոյանին պարտք ենք՝ «Աշխատանքի գերազանցի-  
 կության համար» մեդալ... «Կարմիր դրոշի» շքանշան:

... Նիկոյանին՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս:  
 Հայրենիքը պարտք է... Նիկոյանին՝ ՀեՍՀ Գերագույն խոր-  
 հրդի գեպուտատ...

Կոմունիստական աշխատանք... երկրով մեկ ծավալվեց  
 հզոր շարժումը, հորձանք տվեց, հորդեց, ինչպես լայնա-  
 հուն գետ: Հազարավոր առուններ հոսեցին նրա մեջ, Առու-  
 ներից մեկն էլ Աշոտ Նիկոյանինն էր՝ նրա բրիգադը: Ապրել  
 ու աշխատել ինչպես վայել է կոմունիստին, պայքարել  
 բարձր կոչման համար: Աշոտի ղեկավարած բրիգադը ըն-  
 կերացավ արևի ու լուսնի հետ, գիշեր ու ցերեկ հոնդացին  
 երկաթե նժույգները, գործեցին անխափան, ոսկեհատ ցո-  
 բենի լեռներ դիզեցին: Եկավ բաղձալի օրը՝ բրիգադը կոչ-  
 վեց կոմունիստական:

Պարտավոր եմ... Չէ՛, պարտք չի մնա Աշոտը կյանքին  
 ու հայրենիքին, Աշոտը մաճկալ, Աշոտը՝ սերմնացան,  
 Աշոտը՝ հնձվոր ու հերոս:



Չմեռ է: Բայց Քասախի այն կիրճում, ուր կատարվում է Ապարանի ջրամբարի շինարարության աշխատանքները, զօր ու գիշեր աղմուկ կա՝ մարդկանց, մեքենաների:

Կանգնած Քասախի ափին, աշխղեկ Ս. Մարգսյանը պատմում է այն աշխատանքների մասին, որը պահանջվում է Ապարանի ջրամբարը կառուցելու համար: Քիչ է ասել ջրամբար: Երկու տարի հետո 800 հեկտար մակերես ունեցող այդ տարածությունը մի գեղատես լիճ կլինի՝ իր կղզով:

Քասախ գետի համեմատաբար նեղ մասում, նախքան ջրամբարի 300 մետր լայնությամբ, 190 մետր երկարությամբ ու 52 մետր բարձրությամբ հսկա պատնեշի կառուցումը, անհրաժեշտ է, որ այդ մասում փոխվի գետի հունը: Եվ ահա այդ նպատակով 500 մետր երկարությամբ մի թունելախորշ է փոխվում: Թունելագործները աշխատում են հերթափոխելով՝ գիշեր ու ցերեկ: Նրանցից մեծ մասը թունելագործի հմուտ փորձ ունեն արգեն, Ահա Ռուսովը և նրա երկու որդիներ Գեորգին ու Խարիտոնը, Անտոնը, Խաչիկը...

Խաչիկը անհուն բերկրանքով լսեց Ապարանի ջրամբարի կառուցման մասին: Նա Ապարանի ծնունդ է: Տասնվեց տարի թունելագործ է եղել Գյումուշում, Արզնիում, Երևանգէսում: Ահա և հասել է պահը օգտակար լինելու իր ծննդավայրին:

Թունելը փորվում է երկու կողմից: Թունելագործները մի օր պետք է հանդիպեն իրար: Թունելախորշի ոչ այս ոչ այն մուտքի մոտ արգեն հորատչի ձայնը չի լսվում, մի կողմից 90, մյուս կողմից 170 մետր ծակել և խորացել են արգեն:

— Բրիգադներում աշխատանքները բաժանված չեն բրիգադի անդամների միջև: Նրանցից յուրաքանչյուրը հորատում է, քարաբեկորները վազոնիկներով դուրս տանում, բետոնապատում թունելախորշի պատերն ու առաստաղները,— բացատրում է աշխղեկը և ուղեկցում մեզ դեպի թունելախորշ:— Այս հերթափոխում Անտոնի բրիգադն է աշխատում:

Ահա և նա, երիտասարդ բրիգադիրը: Հորատիչը ամուր սեղմել է ապառաժի կրծքին ու ծակում է: Նրա ողջ մար-



մինը, գլխին դրված սաղավարտը ցնցվում է: Աշխղեկը, բարձրաձայն, ինչ-որ բացատրում է, բայց մենք չենք լսում, հորատչի աղմուկը խլացնում է ամեն ինչ: Հետո, Սարգրսյանը ձգում է Անտոնի թևից: Առանց ընդհատելու գործը, դեմքը շրջում է դեպի մեզ: Աշխղեկը ձեռքով նշան է անում, թե՛ ընդհատիր գործը:

— Քանի գնում, գրունտը ամրանում է,— դիմում է աշխղեկին:

— Քանի գնում, դուք էլ եք ամրանում, ոչի՛նչ,— ժրպտում է աշխղեկը: Հետո շարժվում ենք թունելախորշում: Շրխկ-շրխկ-շրխկ. Վահանը, Ծսային, Վուլոդյան թունելախորշի պատերը բետոնապատելու համար կաղապարներ են նախապատրաստում, և նրանց մուրճերի ձայնը թունելախորշի անկյուններում հազարաձայն արձագանքում են, գրմփում:

— Ճանապարհ, ճանապարհ,— գոչում է Լիպարիտը: Մենք սեղմվում ենք պատերին, իսկ նա, Անտոնին աչքով անելով ու ժպտալով, առաջ է տանում քարաբեկորներիով բարձած վագոնիկը:

Լեռան հակառակ ծայրի թունելախորշում խաչիկ Գևորգյանի բրիգադն էր աշխատում: Փայտամածի վրա կանգնած, խաչիկը հասակով մեկ պրկվել էր: Հորատիչը նրա ձեռքում աղմկում, ցնցվում ու խորանում էր լեռան կրժքում, կոտրում ապառաժի համառությունը: Մեզ նկատելով՝ ժպտում է, ընդհատում գործը: Մանուկը անձայն մոտենում, իր ձեռքն է վերցնում հորատիչը:

— Կաղապարները փոխո՞ւմ եք արդեն, ստուգե՞լ ես, լավ ամրացե՞լ է բետոնը,— հարցնում է աշխղեկը:

— Ստուգել եմ: Գնանք դու էլ տես:

Թունելախորշի պատի տակ, ստվերոտ մի անկյունում, մի երիտասարդ երկաթյա ուղղանկյուն կաղապարը ծայրից բռնած՝ քարշ էր տալիս:

— Գամարջորա Կիմաձե,— վրացերեն բարձրաձայն ասում է աշխղեկը:

— Բարե,— կարճ պատասխանում է երիտասարդը:

— Կաղապարները քանզո՞ւմ եք արդեն:

Վիճաձեի մաքուր հայերենով տված պատասխանը հիաց-  
նում է մեզ:

— Վիճաձեն վաղուց է ապրում Հայաստանում: Լավ էլ  
թունելագործ է,— բացատրում է Խաչիկը:

Բետոնի տակից ազատված կաղապարները Սարգիսն  
ու Վիկտորը թունելախորշի մի նոր հատվածի վրա են տե-  
զադրում: Իսկ Ի. Հախոբյանը բետոնաշաղախն էր լցնում ու  
ամրացնում՝ արդեն տեղադրված կաղապարների մեջ: Թու-  
նելախորշի այդ մասում հորատումն ու բետոնապատումը  
զուգահեռ են գնում:

Ձմեռ է: Բայց դա կարծրակուրծք սարը ճեղքող մարդ-  
կանց համար այնքան էլ նշանակութուն չունի: Մի  
վայրկյան չի դադարում աշխատանքը թունելախորշում, Ան-  
տոնի կամ Խաչիկի բթագողը գուրս են գալիս թունելից ու  
կիրճից, Ռուստովն է մտնում՝ բրիգադի իր անդամների հետ,  
կամ Ալեքսեյ Կյուտոկովը:

Փորում են թունելը, սարի հակադիր կողմից բնդառաջ  
գալիս իրար ու, հիմա, գեռ ականջ չեն գնում, ձայն չի լրս-  
վում: Թունելախորշը միացնող ծայրերը գեռ 240 մետր հե-  
ռու են իրարից: Իսկ գալիք գարնանը թունելագործները, մի  
օր, կհանդիպեն իրար: Կհանդիպեն, կզրկախառնվեն ու քեֆ  
կանեն Քասախի տոփին՝ ի նշան իրենց անգույ պայքարի  
հաղթանակի:

### ՊԱՏՎԱՆԴԱՆՆԵՐԸ

Խշիշան բարակ թուղթը բաց էր, գետնին պարզած: Մե-  
լիքսեթը հակված էր նրա վրա, նայում էր: Ծա էլ: Թղթի  
վրա սև ու կանաչ գծեր կային՝ ղուգահեռ, հատվող հազար  
ու մի խզրզանք: Դա ինձ համար էր այդպես: Իսկ նրա՞,  
ինժեներ Մելիքսեթ Մուրադյանի՞: Հարազատ մայրենիով  
գրված բաց մի գիրք էր դա. ու կարդում էր: Գծերը նրա  
համար դառնում էին ուղղաշար պատեր՝ փաթրիկ բացվածք-  
ները՝ դուռ ու լուսամուտ... Ու ողջ հատակագիծը՝ մի եռա-  
հարկ շենք, 24 բնակարանով:

Մեխիքսեթը հատակագիծն էր կարդում, հետո ստքի կանգնեց:

— Խաշիկ, կուները բեր,— ասաց:

Ու...

Երեկ Մեխիքսեթը մի նոր շենքի հիմքն էր նշահարում: Ձեռքերի վրա ու զգեստին փռշի կար, դեմքին՝ սև մի մազափունջ ու ամուսն արև, սևորակ աչերում՝ հրազ կյանքի ու ջահելության:

Ջահելություն... Կյանքը սիրում է ջահելներին, նրան, ով ուժ ունի բազուկներում, ուղեղում՝ առկայծող միտք, նրան, ով մի կանաչ ծիլ է տալիս իրեն, մի սրտոտ բառ, մի տաշած քար... Մի շենք... Մեխիքսեթն էլ երիտասարդ է: Երիտասարդ է ու սիրում է կյանքը... Ուր իրեն սպասողներ կան: Ո՞վ է: Գաղթի փշոտ ճամփեքը դեռ հիշող ծեր ծնողները, քո՛ւյրը, եղբա՛ւրը... գարուն սրտով մի աղջի՞կ: Ոչ միայն: Թաբինում էլ, կառուցվող համար շորրորդ շենքի մոտ էլ, ամեն առավոտ, սպասում են նրան: Մանվելն է սպասում, Կնյազը, Խաշիկը, Լենդրուշը... Ու սպասում են և մարդիկ, որոնք գուցե չեն էլ ճանաչում երիտասարդ աշխղեկին ու ոչ էլ աշխղեկը՝ նրանց ավարտվող շենքի վաղվա բնակիչներին: Սպասում էր և, շատ սովորական, մի թերթի կտոր՝ № 5 շենքի նախագիծը, որին երեկ նա սկսեց շունչ տալ... Սպասում է... կյանքն ու Մեխիքսեթն էլ չի ուշանում, չի ուշանա, գիտեմ: Իր ջահել սրտով մեկ, աշխատանքից կոշտացած իր մոր ձեռքերի շափ Մեխիքսեթը սիրում է կյանքը:

...Շոգ է: Ավարտվող կից շենքը № 4-ն է: Բայց արդեն կարող է հյուրընկալել մարդու: Ուզում եմ նստել պատի տակ, սավերոտ տեղ: Ուզում եմ Մեխիքսեթն էլ նստի, գրուցենք, իմանամ, թե այդ շենքի հիմքն էլ ինքն է նշահարել, մյուսի՞ն էլ: Իրար նման են երկուսն էլ՝ տուֆաշեն, հոահարկ: Բայց նա գծագրեր է անում գետնի վրա՝ ձգված, գուգահո թելեր է անցկացնում, շափումներ անում № 5 նախագիծն է՝ թղթից փոխադրումը հողի վրա:

Շոգ է: Թրիկ-թրիկ-թրրրիկ: Շենքից է գալիս ձայնը, ժորան մանրատախտակներից հատակ է խփում, տղաները՝ վերելակներ են պատրաստում...

Քարակույտերի մոտից մուրճի ձայն է լսվում, վարպետներ կնյազն ու Մանվելն են, քար են տաշում:

— Մելիքսեթ,— շենքի տանիքից ձայն է տալիս մի երիտասարդ,— շաղախը պատրաստ է:

— Լավ, գալիս եմ:

Ժամանակավոր վերելակով միասին բարձրանում ենք շենքի տանիքը:

Մելիքսեթը վերցնում է բահը, խառնում, ստուգում շաղախի որակն ու.

— Լցրեք, ա՛յ այստեղ,— ցույց է տալիս նա: Տղեքը լավ են աշխատում, մի եռամսյակ առաջ ընկանք,— ժպտում է:— Հետո մի ծխախոտ է վառում ու աչքերի մեջ առնում ամբողջ գյուղը: Նայում է երկար:

Զգիտես ինչու, այդ բոպեին ինձ թվաց, որ եռահարկ շենքը չէր, պանելապատ տանիքը չէր Մելիքսեթի ոտքերի տակ, այլ՝ մեծ ու արևամոտ մի պատվանդան, իսկ նա՝ կենդանի մի արձան այդ պատվանդանի վրա:

— Բավական գեղեցիկ բնակարաններ են կառուցվել Թալինում,— խոսում է, բայց հայացքը չի կտրում գյուղից: Ու նրա հոնքերը միանգամից մոտենում են իրար, ակոս կազմում: Դեմքի վրա մի ծա՛նր ամպ է նստում:

— Ինչո՞ւ մոայլվեցիր:

Նա լռում է մի փոքր ու միանգամից շուռ է գալիս դեպի ինձ:

— Գիտես,— ասում է,— երբ փոքր էի, տնակ էի կառուցում մեր բակում, պատերի տակ, ճամփեքի եզրին: Բայց մի ընկեր ունեի, մի փոքրիկ «ագրեսոր», գաղտնի ու հաճախ իմ ներկայությամբ քանդում էր կառուցածս տնակը: Կովում էի հետը, քաշքշում մազերից, ոտքերով խփում, լաց լինում ու կրկնում անընդհատ. «Ինչո՞ւ ես քանդում իմ տունը»:

Հիմա, երբ հիշում եմ, որ աշխարհում, ինչ-որ տեղ, ռումբ են պատրաստում ու փորձարկում, մտածում եմ, թե միանգամից որքան ավերածություն կարող են անել, ակամա մտաբերում եմ անցածը: Հիշում եմ մանուկ օրերիս ասած խոսքերը: Հիշում եմ ընկերոջս արածը, այն այնքան էլ մանկական անմեղ խաղ չի երևում աչքիս, իսկ իմ լացն ու կռիվը արդարացնում եմ:

Իջնում ենք: Աւ հս մտքումս կրկնում եմ. «Ինչո՞ւ եմ քանգում իմ տունը, ինչո՞ւ ես...»: Սայթաքում եմ վերելա- կի վրա:

— Զգո՞ւյ՛ջ, կընկնես, սովոր չես:



Երեկ Մելիքսեթը մի նոր շենքի հիմքն էր նշահարում: Զեռքերի վրա ու զգեստին փոշի կար, դեմքին՝ սև մի մազափունջ ու ամռան արև, սևորակ աչքերում՝ երազ՝ կյանքի ու շահելության... Կկառուցվի՞, դեռ «մի հոամսյակ առաջ» կընկնի, գիտեմ: Այն խշխշան ու բարակ թղթի վրայի գծերը վաղը կգառնան ուղղաշար պատեր... կդառնա բնակելի մի նոր շենք՝ հոահարկ, տուֆաշեն ու կդառնան... պատվանդան՝ Մելիքսեթի ու նրա կառուցող ընկերների համար՝ բարձր ու արևամոտ:

Այնտեղից Արագածը կերևա՝ լազուր երկնակամարով ու Արարատը՝ գլուխը մշուշի մեջ թաղած:

## ԼՈՒՐԹ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ, ՄԱՅՐ ՀՈՂԻ ՎՐԱ

Լուկաշինի անվան սովխոզում ում ուզում եք հարցրեք Արամի մասին. պատասխանը երկու սեղմ բառ է.

— Լավ տղա է:

Բանվոր է, այգեգործ:

Ուզո՞ւմ եք ծանոթանալ: Բացենք անձնագիրը. Սուքիասյան Արամ նիկողոսի, ծնված 1929 թվականին Պարս...



Ամառ էր, կեսօր, Արարատյան հովիտ, բարձր, կապույտ-կապույտ էր երկինքը: Մի պատառ ամպ շկար արևի ճամփին: Հողը շիկացել էր, տապից առուն կուշ էր եկել, եզրի փշատենին ավելի էր խոնաջվել, որ ջուր խմի, ծառերի սաղարթներում ճնճողուկները թաքնվել էին՝ կտուցները բաց: Այգիներում ողկույզները գրկախառնվել էին արևի հետ՝ համբույրից շիկանում էին, քաղցրանում...

Ամառ էր, կեօօր:

Արաքսայան հովիտը երկնում էր Հոկտեմբերյանի շրջանի Լուկաշինի անվան սովխոզում մի դուռ կար բաց, տիրոջն էր սպասում: Իսկ տերը...



Աշխարհում էլ ո՞ւմ համար է նշանավոր 1946 թվականի հուլիսի 18-ը: Զգիտեմ: Գուցե շատերի, ի՞նչ կա որ, աշխարհը մեծ է, մաթդիկ շատ, օրը՝ մեկ: Բայց ես մեկին եմ ճանաչում միայն, որի հետ երեկ ծանոթացա: Նրա համար սովորական այդ օրը... սովորական չէ, առանձնահատուկ է, նշանավոր, անմոռանալի և շգիտեմ թե ինչ է ամառային այդ օրը նրա՝ Արամի համար: Ու թե մի դար էլ գլորի նա, էլի չի մոռանա... Առաջին անգամ հայրենիք ունեցավ Արամըն այդ օրը: Եվ չի մոռանում, չի կարող:

Բայց չի հիշում, սահմանազրին, երբ կանգնեց գնացքը, հո՞ղը շուտ համբուրեց իր ոտքերը, թե՞ ինքը՝ մայր հողը: Կանգնեց գնացքը: Կանգնեց Արամը հայոց լուրթ երկնքի տակ, մայր հողի վրա և հետևում մնաց օտաք մի ավի՛ Պարսկաստան, մի Սուլթանաբադի շրջան, մի գյուղ՝ Զանխոջ, մի խան, խանի «կիսրար» հողերի մեջ կորած թրտինքի կաթիլներ՝ իր ու իր պապերի, մնաց... Կարոտով ետ նայելու համար ոչինչ չէր մնացել այն կողմ:



Գնացքի գիծ է, կողքին ուղղաձիգ բարդիների շարքը, բարդիներից այն կողմ՝ մի կանաչ գոտի ու սկսվում են խաղողի այգիները: Երիտասարդ չեն, կնճոտաված բուն սեննե վազերը: 17 տարի առա՞ջ էլ այդպես են եղել, այդպես հաստաբուն ու թևաարած: «Հա», կասի Արամը, եթե հարցնես: Դե, Արամը կասի, անընդհատ նրա աչքերի առջև են եղել վազերը, 17 տարի, գարնանամաստից ձմեռնամուտ, առավոտից երեկո: Այդ ես կարող եմ նկատել վազերի աճը, ես, որ երեկ, երբ այգի մտա, Արամը մի հաստաբուն «խարջի» էր էտում, և վազը՝ մի կանաչ տերև էլ չուներ: Մեկ էլ

Խ՛վ գիտեի, գուցե այգեկութիւն հանդիպեմ «Խարչուն» ու Արամին: Իսկ նա... վազերի հետ է շնչում: Եվ ինչպե՛ս իմանա՜ ամեն բոպի ինքն ինչպե՛ս շնչեց, վա՞զն ինչպե՛ս: Վա՞զն ինչպե՛ս աճեց ամեն բոպի:

Վա՞զն ինչպե՛ս... Ես գիտեմ, երբ փորում է այգին Արամը՝ հոգնում ու ծանրանում է շնչառութիւնը, վազերը սկսում են... լավ շնչել: Արամի՞ հաշվին: Թերևս: Ոչ մի արմատ չի խորանա հաստաշերտ կավահողում, Արարատյան դաշտի բարկ արևը քաղցրութիւննից ճաքող ողկույզ չի դառնա ոչ մի վազի վրա, Արարսից եկող պղտոր ջրերը կանաչ շիվ ու տերև չեն դառնա այնտեղ՝ ճամփեզրի այն այգում, թե չլինի Արամը: Իսկ երբ պրկվում են նրա երակները, վազերը արմատները խորացնում են հողում, շիվ ձգում դեպի երկինքն ու արևը: Երբ հոգնութիւնն ու արևի շողերը շիկնանք են դառնում նրա դեմքին, քրտինքի տաք կաթիլներ՝ հազիվ ակոսված ճակատին, վազերը նորմալ կանաչ են լինում, վազերը՝ ուրախ, շնկշնկան: Ու երբ նրա դեմքից պոկված քրտինքի կաթիլները խառնվում են ջրերի հետ և ծրծրվում հողում, հասնում վազերի արմատներին՝ արշալույսին, նոր բացված դեռ դեղին մի տերևի վրա ջող են դառնում նրանք՝ լուսաթաթախ ու նուրբ: Երբ...

Այսպես՝ 17 տարի: Այն օրից, երբ Արամը հայրենիք ունեցավ, հայրական իր օջախն ունեցավ մայր հողի վրա, մի բարձր ու մաքուր երկնքի տակ, այն օրից բանվոր է Արամը, այգեգործ: Միշտ նույն օղակում:

Ասե՞նք թե ինչպե՛ս են կապվել միմյանց այժմ նրանք՝ այգին ու մարդը: Պետք չէ: Եվ Խ՛վ կարող է լրիվ պատմել նրանց (օրերի չէ և ոչ էլ ամիսների) տարիների կապը: Այնքան ամուր է դա, որ...

Անցած տարի նրա ղեկավարած օղակի 16 հեկտար այգու յուրաքանչյուր հեկտարից 130 ցենտներ խաղող ստացվեց իրենց բրիգադում և սովխոզում ամենաբարձրը:

Ինչպե՞ս ստացվեց:  
— Գեղամը, Անիկը, Հովհաննեսը... — օղակի անդամների անուններն է թվում Արամը, — լավ աշխատեցին:

Իսկ իր մասի՞ն: Դե հիմա հասկանալ է հարկավոր հոգեբանութիւնն ու ապրումները մի մարդու, որին, հա-

մենայնդեպս, թվում է թե ինքը շատ-շատ է դեռ պարտք հայրենիքին, կողքին նստած մարդկանց, դիմացը փոված այգուն, որի հետ կապել է իր կյանքը: Եվ այսօր էլ դեռ ամիսսում է այն օրերի ու տարիների համար, որ օտար երկնքի տակ, մի խանի հողի վրա մաճ է բռնել:

— Ախր ինչո՞ւ պետք է քրտինք թափեի, ո՞ւմ համար էր...

Արամը Մոսկվա է գնալու: Չի եղել:

Ոչ գնահատական մարդկանց կողմից, ոչ արժանի հատուցում՝ այգիներում իր կատարած աշխատանքի նկատմամբ, այդպես չի հաշվում իր Մոսկվա գնալը, այլ մի նոր պարտք հայրենիքի հանդեպ, նոր պարտավորություն մարդկանց նկատմամբ, հայրենի հողի ու կանաչող իր վազերի:

## ԲԱՐԵՎ, ՀՈՐԵՂԲԱՅՐ ՋԱՎԵՆ

Մենք անծանոթների ենք, բայց նամակ եմ գրում այնպես տրամադրված ու սիրով, ինչպես կգրեի իմ հին, իմ լավ ծանոթին: Քիչ առաջ ես զրուցում էի ձեր աղջկա՝ Գահարի հետ:

Նա ավելի շատ ձեր մասին էր խոսում, քան՝ իր:

— Իմ գոյություն համար, իմ կյանքում կատարվող ամեն մի լավի համար ես պարտական եմ իմ հորը:

Իսկ նա՝ գաղթական հայի ժառանգը, իրոք, կարող էր նաև գոյություն չունենալ:

Եվ նրա համար, որ դուք շատ բան եք կորցրել կյանքում, կամեցել եք, որ ձեր երեխաները գտնեն:

Սովորել չեք հասցրել ու երազել եք կրթված տեսնել ձեր բոլոր երեխաներին:

Հեշտ չի եղել ձեր կյանքն ու ապրուստը, գիտեմ, միակ աշխատող, իսկ տուն բերած ձեր վաստակին սպասող՝ 6 աղջիկ, մի տղա: Բայց ինքնամոռաց աշխատել եք, համառել, միայն թե երեխաները մաքր դառնան:

Երեսուներեք թվականից սկսած, երկու տարին մեկ անգամ, մեկի թևից բռնած տարել եք դպրոց: Ինչ զգացում ունեցած կլինեք ամեն երեխայի դպրոց տանելու ճամփին,



ամեն երեխայի փորձնական թուղթի հանելու օրը: Ուղրւմ էմ հասկանալ, բայց գովարանում եմ: Գոհարին հերթը հասավ 37-ին: Նա լավ է հիշում. «Հայրս ինձ հասցրեց դպրոցի դուռը, համբուրեց գլուխս և ասաց՝ շվախենաս: Թբիլիսիում այդ դպրոցը՝ № 36-ը, հիմա էլ կա, հայկական զբայրոց է»:

Դպրոցն ավարտած ամեն մի երեխայի համար ուրախության սեղան էք բացել, իսկ Գոհարին հասունության վկայագրի հետ միասին տրված մեղալի համար ձեր աչքերը ուրախության արցունքներից շաղվել են:

— Խնշույքի ժամանակ, ստացած մեղալս նվիրեցի հորըս, դա նրան էր պատկանում,— զրույցի ժամանակ ասաց Գոհարը:

Իսկ դուք շեք վերցրել, դուք արդեն լի ու լի վարձատրրված եք եղել ձեր երրորդ ժառանգի տուն բերած մեղալով:

Հիմա ի՞նչ էր պետք անել: Գոհարին հուզող այդ հարցի պատասխանը ձեզ էլ է մտածել տվել: Կամեցել էք, որ ազջիկն ինքը որոշի իր անելիքը, բայց շեք համբերել, միջամտել եք:

«Աղջիկս, գեղեցիկ է մեր երկիրը, լավ, սուրբ օրենքներ ունենք, բայց օրենքին քար գցող, մարդու հոգին պղտորողներ կան: Դրանք չպիտի լինեն: Ինչ ուզում ես դարձիր, մենակ թե մարդուն սիրիր, մարդու իրավունքն ու օրենքը հարգիր»,— 17 տարի է անցել, բայց Գոհարը բառառ հիշում է ձեր խոսքերը:

Շնորհակալություն, հորեղբայր Զավեն, Գոհարին տված մարդասիրական խորհրդի համար: Ուշիմ և հասկացող մի աղջկա (թեկուզ ձեր աղջկան) տված բարի խորհուրդը խորհուրդ է մեր հասարակության մի անդամի: Եվ այդպես է: Այսօր Գոհարը ավելի շատ հասարակությանն է, քան ձերը:

Դուք սրտի դողով եք հետևել ձեր զավակների, նաև Գոհարի արած քայլերին:

1953 թվականին Գոհարը, երբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, առաջին կարգի դիպլոմով եկել է տուն, դուք երկար եք խորհել և՛ ձեր փոխարեն, և՛ Գոհարի, Նա աշխատանքի է անցել արդարադատության մինիստրությունում, կյանք մտել, դուք գարձել եք նրա ուղեկիցը:

Իրավաբանական խորհրդատուների կալեզրայի նախագահութիւնում՝ որպէս օրենքների համակարգիչ:

Հայկական ԽՍՀ Գերագույն դատարանում՝ նոտարի գծով ավագ կոնսուլտանտ:

Գերագույն դատարանի պլենումի քարտուղար:

Հանրապետութեան դատախազութեան ընդհանուր հրահանգի կողմից քաժնի դատախազ:

Գոհարը աշխատանքային իր քայլերն է արել, անցել կյանքի ճամփան՝ դուք նրա կողքին:

«Հայրս՝ Քրիլիստիում, ես՝ այստեղ, բայց միշտ այնքան մոտ է եղել նա ինձ: Հայրս իմ ստվերի պէս ինձանից չի հեռացել», — ասում է Գոհարը:

Այժմ, հորեղբայր Զավեն, կամենում եմ ուրախացնել ձեզ մի լավ լուրով, ձեր աղջկան՝ Գոհար Զավենի Ղազարյանին, ժողովրդական դատավորի թեկնածու եմ առաջադրել Երևանի 26 կոմիսարների շրջանում:

Գոհարը որոշել էր այդ մասին հայտնել, հաճելի անակրնկալի բերել ձեզ՝ ընտրութիւններից հետո: Մարդու իրավունքի պաշտպանութիւն: Մե՛ծ վստահութիւն ձեր դատեր նկատմամբ, իսկ դրա հիմքը ինքը՝ Գոհարն է տվել, և՛ բաժին ունեք նաև դուք:

Քիչ առաջ, երբ զրուցում էինք, Գոհարն ասաց. — «Ընտրովելուց անմիջապէս հետո կհանդիպեմ հորս: Ես արդեն դիտեմ, թե նա ինչ խորհուրդ կտա ինձ: Արդար կլինես, — կասի, — լավ կպահես մարդու իրավունքն ու պատիվը»:

Հորեղբայր Զավեն, նորից շնորհակալութիւն քեզ՝ լավ դուտոր, մեր հասարակութեանն արժանի մարդ դաստիարակելու համար:

### ԳՈՒ ՃԻՇՏ ԵՍ, ԱՇՈՏ

Ես կուզենայի, որ այս հոգիվածը շարվեր: Այնքան գոհ, այնքան վարձատրված կզգայի թե՛, եթե կարողանայի օգնել Իջևանի շրջանի Ուզունթալա գյուղի բնակիչ Աշոտ Ամիրջանյանին, և հարկ չլիներ գրելու:

Մինչև Աշոտի հետ զրուցելն էլ ես հասկացել էի, որ նա

երկար մտածելուց հետո է նամակ գրել խմբագրությանը, գրել վերջին հույսով: Ափսոս, խմբագրությունը օգնել չկարողացավ: Աշոտին այս հոգվածից էլ ոչ մի օգուտ չկա, նա վերջում, նույնիսկ խնդրեց, որ կնոջ անունը չգրեմ կամ անվան առաջին տառը երևա միայն: Ես կգրեմ անունն էլ, ազգանունն էլ. Վալենտինա Սարիրեկյան (Ամիրջանյան):

Իսկ ի՞նչ է պատահել: Սրբագրված տեսքով մեջ բերենք Աշոտի նամակը. «1958 թվականին, բանակից զորացրվելուց հետո, ես գյուղ չեկա, աշխատեցի հանքում: Երկու տարի հետո այնտեղ հանդիպեցի Վալյային (հայի աղջիկ է, լավ ծնողներ ունի): Մենք ամուսնացանք: Ծնվեց մի տղա, անունը դրեցինք Յուրա: 63 թվականին որոշեցինք գալ Հայաստան, ապրել մեր գյուղում: Եկանք: Գալուց որոշ ժամանակ հետո, ճիշտն ասած, ես որոշեցի գնալ խամ ու խոպան: Եկա, տեսնեմ Վալյան չկա, Յուրային վերցրել, գնացել է Երևան, ծնողների մոտ: Գնացի բերելու, չեկավ, ասաց՝ դու արի էստեղ, էսպես մի տարի է: Ամուսիններ ենք, բայց նա Երևանում է ապրում, ես՝ Ուզունթալյում: Ես՝ ուզում եմ մեր գյուղում ապրել, ունեմ 90 տարեկան տատ, 60 տարեկան հայր, 50 տարեկան մայր: Նտ էլ ասում է՝ արի Երևան: Մեզանից ո՞վ է ճիշտ»:

Խնդրում եմ, և Վալենտինան գալիս է խմբագրություն: Ընթերցում է Աշոտի նամակը: Քմծիծաղ է տալիս:

— Իբր ինչու է գրել: Սա մեր անձնտկան գործն է, մենք բաժանված չենք, Նոր տարուն էլ մեզ մոտ էր:

- Ի՞նչ որոշեցիք:
- Որոշակի ոչ մի բան, տեսնենք:
- Չե՞ք ուզում գյուղ գնալ:
- Ինչո՞ւ չէ, միայն թե՛ գարունը բացվեց, նա պիտի գնա խամ ու խոպան: Այս դեպքում, կարծում եմ, միտք չունի գյուղ գնալ: Ուրիշ բան է, որ նա հիմնականում հաստատվի մի տեղ, թեկուզ իրենց գյուղում:

Վալենտինայի վերջին պատասխանը անկեղծորեն ուրախացնում է ինձ, եթե խանգարողը դա է, հնարավոր է անդունդի եզրին կանգնած ընտանիքը փրկել գլորվելուց, կկանչեմ Աշոտին, կզրուցենք և ամեն ինչ լավ կլինի:

— Ես Աշոտին նամակ կգրեմ, կգա, ձեզ էլ կկանչեմ,

կզրուցենք. կհասկանանք իրար, Ձեր պահանջը ճիշտ է, և Աշոտը, գիտեմ, կընգունի դա: Պայմանավորվեցի՞նք:

Վալենտինան ոտքը կախ է գցում:

— Լավ, բայց... եթե միջամտում եք, մի ուրիշ կարևոր բան էլ կա, դա էլ պետք է հաշվի առնեք:

— Ո՞րն է դա:

— Գիտե՞ք, երեխայի դաստիարակության հարցն է:

— Ի՞նչ է: Երեխային գյուղում դաստիարակել հնարավոր չէ՞: Եթե այդպես լինի...

Նա ընդմիջում է ինձ:

— Գիտեմ, ինչ պետք է ասեք, բայց... ես ուզում եմ երեխաս մուղիկա սովորի:

Ոգևորությունս անցնում է: Հասկանալի է. Վալենտինայի քիչ առաջվա խոսքերի մեջ անկեղծություն չկար:

— Եթե ձեր երեխան երաժշտական ընդունակություններ ցուցարների, Իջևանում երաժշտական դպրոց կա:

— Դե... Իջևանն ուրիշ, Երևանն ուրիշ:

— Լավ, համենայնդեպս պայմանավորվենք մեր գրույցը շարունակել Աշոտի ներկայությամբ:

Աշոտը սպասածից ավելի անկեղծ դուրս եկավ:

«Յուրան գիտե՞ս ինչ տղա է, Որ գնում եմ մոտը, երե- սիցս պոկ չի գալիս»:

«Մեր գյուղը, գիտե՞ս, շատ լավ գյուղ է, որ Վալյան գա, լավ կլինի: Գլուխս մի անգամ քարի առել է, գնացի էստեղ-էնտեղ թափառեցի, ջերերս դատարկ ետ եկա: Էլ գնացողը չեմ: Գլուխս կախ աշխատում եմ սովխողում: Որ լավ աշխատեմ, ավտո էլ կտան, շոֆեր եմ: Չտան էլ, ոչինչ, որ Վալյան գա, ուզենա կաշխատի, ուզենա չի աշխատի, կապրենք»:

«Լսիր, ախպեր ջան, որ էստեղ եկա, ի՞նչ պիտի անեմ: Ոչ տուն ունեմ, ոչ տեղ ունեմ, ոչ բարեկամ ունեմ: Ի՞նչ պիտի անեմ: Ասենք մի կերպ դասավորեցի, մի գործ ձարեցի, ի՞նչ պիտի անեմ, աշխատավարձիս կեսը կտամ տան վարձ, կբաշվեմ դրադ»:

«Մի բան հարցնեմ, Վալյան խոմ չէ՞ր ասում՝ Աշոտը խմող է, դես է, դեհ է: Չէ՞: Տեսնո՞ւմ ես: Գլուխս կախ աշխատող տղա եմ, ի՞նչ վատ կլինի, որ գա, տուն ունենք,

ծառեր ունենք: Յուրան տակին խաղ կանի: Անասուն ենք պահում... Կապրենք: Համ էլ, որ բոլորը քաղաք գան, բա գյուղում ո՞վ մնա, ո՞վ աշխատի: Ճիշտ չէ՞»:

— Լավ, Աշոտ, գնա, Վալյայի հետ միասին արի, գրուց ենք:

Աշոտը գնաց, հաջորդ օրը խմբագրություն եկավ Վալենտինայի... բացատրագիր-նոտան ձեռքին: Ուզում եմ այն ընթերցողներին ներկայացնել ամբողջովին, ավելացնելով միայն կետ ու ստորակետ.

«Ինչպես արդեն հայտնի է ձեզ, մեր ընտանեկան անհամաձայնությունները, այսինքն, կնոջ գյուղ շքնալու և ամուսնու քաղաք շապրելու կապակցությամբ առաջացած անախորժությունները բերում են ընտանիքին դժբախտություն և երեխային ծնողազրկություն: Այդ մեր կողմից կատարված անվայել և անթույլատրելի քայլը կատարված է համաձայնեցված կյանքի անդասավորման պատճառով, որում չի կարող օգնել ոչ մի խմբակ, կազմակերպություն՝ հաշտեցնելու և միացնելու գործում: Ուստի ինքս՝ Ամիրջանյան Վ. խնդրում է ձեզ շխառնվելու մեր ընտանիքի գործին»:

Հետո Աշոտը գրպանից հանում է մի ուրիշ թուղթ-գրություն, վերնագիրը՝ «Համաձայնություն»:

- Դա ի՞նչ է:
- Սա էլ ինձ է տվել:

«Ես թույլատրում եմ Աշոտ Ամիրջանյանին ազատ կերպով ամուսնանալու ուրիշի հետ»: Վերջ:

Օհո՛, Վալենտինան իր Աշոտ «ճորտին» վերջապես ազատություն է տվել:

...Հիմա մի փոքր խոհ:

Մտածում եմ, որ Աշոտը ճիշտ է՝ գյուղը շքողնելու իր որոշման մեջ: Ինչո՞ւ:

Ընկերս մի պատմվածք է գրել «Քարանձավները» վերնագրով: Պատմվածքի միտքը հետևյալն է. ամեն մարդ աշխարհում իր տեղն ունի: Բայց պատահում է, որ ամբողջ կյանքում մարդ իր տեղը չի գտնում: Եվ, իրօք, այդպես է: Աշոտը երկար թափառումներից, հազար ու մի բան ու

որո՞՞՞ ձեռք վաթկեցուց հետո վերադարձել է գյուղ, ձեռք  
սեկնել հողին:

Տարիների այդ թափառումները որոնումներ են եղել եթա  
կողմից՝ իր սեղը աշխարհում գտնելու համար: Եվ ՅՁ տա-  
րեկանում գտել է: Գյուղն է իր սրտովը, հարևաններն էլ,  
իրենց տանն էլ, ծառերն էլ, և դաշտն ու դաշտի ճամփան:  
Քվտո էլ շտան, հող չէ:

Եվ հետո, կրկնենք Աշոտի ասած խոսքերը: Հանուն ին-  
չի՞ նա պետք է թողնի սեփական դուռն ու օճորքը և անօթե-  
վան թափառի ասֆալտապատ մայթերի վրա: Գուցե նրա  
համար, որ չքայքայվի ընտանիքը, չբաժանվի Վալենտին-  
նայից: Բայց Սարիբեկյան (Ամիրջանյան) Վալենտինյան,  
եթե հարգանք ունենալու է ընտանիքի նմամբ, հիմա  
բնակավայրի տեղը առաջին պլանի վրա չէր մղի:  
Շա՞տ կարևոր է, թե որտեղ որտեղ է բացվում՝ ձորա-  
պտունկին, այդու վրա կամ ժխորով լցված փողոցի: Թ՛չ:  
Կարևորն այն է, որ դուրս խողողությամբ բացվի: Բացված  
գունից բարին դուրս գա, Իսկ եթե Վալենտինյան քաղաք ու  
մայթից չբաժանվելու համար բաժանվում է հրեմնի իր  
ամենամոտ մարդուց (չեմ կասկածում, եղել են օրեր,  
երբ նա քաղաք ու գյուղ, աշխարհն է չափել Աշոտով),  
ապա Աշոտի մեծ զոհողությունը իբրև է: Թող նա ձեռք  
չբաշի աշխարհի իր անկյունից, 90 տարեկան իր տատից,  
60 տարեկան իր հորից, 50 տարեկան իր մորից- միևնույն  
է, Վալենտինայի հետ կարկատած-վերականգնված իր  
ընտանիքը սուրբ չի լինի: Աշխարհի առջև դուրս խողողու-  
թյամբ չի բացվի:

Գուցե Աշոտին պետք է վերանալ ամեն ինչից, նստել  
ավտո, Երևան գալ, խոնարհ հայացքով կանգնել Վալյայի  
դիմաց՝ թե քո ասածը թող լինի, համաձայն եմ, և դա նրա  
համար, որ Յուրան անհայր շնորհանա: Հա՛: Արժե երեխա-  
յի համար ամեն մի զոհողություն: Բայց մի բան, արդյո՞ք,  
երեխայի որբությունը ծնողներից մեկն ու մեկի բացակա-  
յությունը պետք է բացատրել: Զէ՛: Որբություն առաջին  
հերթին նշանակում է՝ գուրգուրանքի պակաս երեխայի  
նկատմամբ, ընտանիքում սեր ու հարգանքի պակաս և վեր-  
ջում՝ հացի: Եթե այդպես է (իսկ դա այդպես է), նշանա-

կում է անառողջ ընտանիքում, հոր ու մորով, հաց ու ջրով մեծացող երեխան նույնպես կարող է որբ լինել:

Ուզում եմ լավատես լինել, արդարացնելով նաև... վալյայի արածը, մտածելով, թե՛ ի՞նչ անենք, նա էլ է ուղում աշխարհում իր տեղը գտնել: Չէ, չի ստացվում: Նա էլ է գյուղում մեծացել, մի քանի տարի է, որ դարձել է Ծրեանի բնակիչ: Մի լավ բան, եթե ծնվել է նրա հոգում, ծնվել է գյուղի սար ու ձորից, դաշտ ու անլից: Հազիվ թե երազած լինի՝ Ծրեանի տրամվայի և տրոլեյբուսի № 2 ենթակայանում (ուր աշխատում է հիմա) անպայման հերթապահ դառնալու մասին:

Պարզապես հարգանք շունի իր կազմած ընտանիքի նկատմամբ և մայթը փոփսում է մարդու հետ

ԱՐԱՔՍ, ԳԻՏ ԱՐԱՔՍ. .

— Շտապեցե՛ք, շտապեցե՛ք...

Հեռախոսի լռափողում ճաքճառեցին զինվորական կրտսուկ ու տազնապով լի վեբջին բառերը: Հոկտեմբերյանի ջրապին տնտեսության գլխավոր ինժեներ կիմ կիրակոսյանը գցեց հեռախոսափողը և դուրս թռավ...

Շտապեցե՛ք, շտապեցե՛ք: Հայոց լեռնապարից ու Ֆրագածի ստորտառի մեհալից գոյացած վտակները գոռում-գոչյունով ընթանալ են վազում իրար, վազում են ու խենթի պես գլխիվաչր նետվում Արաքսի գերկը, գրկվում: Եվ հուզախուժ գետը՝ փորփրված հատակով Արաքսը փրփրել է, ուռցրել մեջքը, լափին է տալիս: Փառս է լինում, թրոտում է իրեն կալող աչ ափի խոժոռ ժայռերը, սրտանց ու ամբողջ ուժով փարվում է ձախափնյա մայր հողին և հուզմունքից խելքը թոցրած լափում, քշում-տանում է հողը ու դրանից ակնի է սղտորվում: Բայց ախր, ձախ ափից, մի տեղ՝ Պարահալայում, սկիզբ է առնում Հոկտեմբերյանի ջրանցքի մայրուղին: Պարուն է, գծվել է Արաքսը, շփտե ինչ է անում: Մայրուղու սկզբնամասից 9—10 մետր հուզաշերտ որ պոկի տանի, էլ բան չի մնա, կհասնի ջրանցքի



բետոնյա կապերին: Կխփի, կխփի, հետո կմտնի տակը... շուռ կտա:

Սահմանապահի ձայնում մեծ էր տազնապը, թե՞ հեռախոսով այդպես լսեց Կիմը: Վաղ առավոտյան սակավամարդ փողոցները կտրում անցնում է, վազում է նա: Երևի սկզբից կուսակցական կոմիտե է հարկավոր գնալ...

Շտապե՛ք, շտապե՛ք... Ավտոմեքենաներից՝ մարդատար, բեռնատար վազանց են կատարում իրարու, կարգ են խանգարում, բայց արգելող, կանգնեցնող չկա: Կարակալապետք է հասնեն՝ խենթացած Արաքսի ափին, ջրանցքի մայրուղու մոտ: Միլիցիայի աշխատողները կանգնել են խաչուղիներում, կանգնեցնում են հանդիպած բեռնատար ավտոմեքենային՝ ծանոթ, անծանոթ, Երևանի կլինի, Լենինականի, Կիրովականի, Հոկտեմբերյանի, Թալինի... միևնույնն է ու անմիջապես փոխում ուղեգիրը՝ «Կարակալա»: Վերջ, Ո՞վ կարող էր, իսկ հրաժարվող կա՞, հուզախոով Արաքսը տեսնել, փրկել ջրանցքը փլուզումից, չորանալուց՝ խաղողի վազերն ու ծաղկած ծիրանենիները, կանգնած ուռենիներն ու սլացիկ բարդիները... Ո՞վ չի կամենում:

...Վայրենի, վայրենի գեղեցկություն...

Գալիս էր Արաքսը՝ մեջքը գալարելով, փրփրած, պղտոր:

Գալիս էր և այնտեղ, ուր հունին հակառակ ամուր ու անկտրում 34-ամյա պատնեշն է կանգնած (ամռան ամիսների սակավ ջրերը կուտակելու և ձախից մեր ջրանցքի մայրուղուն հուն տալու համար, աջից՝ Թուրքիա գնացող թունելին) այնտեղ, պատնեշին շհասած՝ քիչ գանդաղեցնում էր ընթացքը, ծփալով փուլում-դառնում ավելի լայնահուն, ապա նորից հավաքվում, խտանում, պրկվում և պատնեշի կտր վերնածայրը պարուրած ցած սողում: Ավելի քան երկու մետր հաստություն ունեի սողացող շերտը: Նայում ես ու թվում է թե ջուր չէ, այլ տաք մի լավա՝ սեփալով, խիտ, այնքան խիտ, որ, եթե շխանգարի արագութունը, կարող ես քայլել վրայով ու շուրջվել, քայլել այնպես, ինչպես հարթ ու կոկիկ ասֆալտապատ մայթով: Բայց, այնուամենայնիվ, ջուր էր, պատնեշը տակով արած վայրկյանում 650 խորանարդ մետր պզտոր ջուր: Պատնե-



շից հետո մի որոշ հատվածում Արաքսը խառնվում էր իրար  
 ու մոլորված կորցնում հունը: Հետալիքը կատաղած խփում  
 էր պատենեշի վրայից գահավիժող ջրի պրկված շերտին՝  
 պարտվում, փշրվում, բզկտվում ու եփ գալիս: Մոլորված  
 հունում քլքլում է Արաքսը, հազար ու մի ումբ էր պայ-  
 թում գետի մաշված ու քարոտ հատակում: Պայթում էր ու  
 բզկտում, փոշիացնում ջուրը, պայթում էր ու... ծուխ անում  
 և դրանից հեղեղատի հոտն էր գալիս, հողագուլյն ջրի հոտը...  
 վայրենի Արաքս, վայրենի: Աշխարհով մեկ գոռում-գոշ-  
 յուն էր դրել... նայում ես՝ սիրտդ տեղից շարժվում, ալե-  
 կոծվում է վարարած ջրերի պես և տարօրինակ մի ցանկու-  
 թյուն ես ունենում. նետվել Արաքսի մոլորված հունը և դառ-  
 նալ նրա քլքլացող, խոյացող, ըմբոստ մի ալիքը... Հետո  
 մոլորված գետը գտնում էր հունը ու խրտնած ձիու նման  
 բաշը քամուն տված սուրում...

Եվ հենց այդ մասում էր, որ Արաքսը կատաղած թքո-  
 տում էր աջափնյա ժայռերը՝ մամռատ կոպերով հին աշ-  
 քերը ծրարած, բզկտվող ջրերի մեջ հայացքը սուզած խո-  
 ժոռ ժայռերը, իսկ ձախից շափում էր հողը, ջրանցքի բե-  
 տոնապատ թեք պատերը պահող հողաշերտը՝ 180—200  
 մետր երկարությամբ:

Շտապե՛ք, շտապե՛ք... հենց այդ շպետք է թույլ տալ  
 խենթացած գարնան գետին:

34 տարի առաջ, ջրանցքի սկզբնամասում, Արաքսի և  
 ջրանցքի միջև եղած ամենապակաս լայնաշերտը 55—60 մե-  
 տրը է եղել: Ամեն գարնան Արաքսը փորփրել ու իր բա-  
 ժինն է տարել, իսկ այս գարնանամուտին, որոշ հատված-  
 ներում, գետի ձախ ափի և ջրանցքի աջակողմյան պատի  
 միջև կծկված մի շերտ էր մնացել միայն՝ 9—10 մետր լայ-  
 նությամբ: Գիժ է գարնան Արաքսը, դա էլ կտանի, ամրաց-  
 նել է հարկավոր: Եվ ապրիլի 4—6-ը շինարարական աշ-  
 խատանքներն ավարտվեցին՝ եղած հողաշերտը քշվելուց  
 պաշտպանելու համար: Իրար վրա շարվեցին ժանր քարերով  
 լցված գաբիոնները (երկաթյա ցանցեր), մետաղալարերով  
 ագուցվեցին իրար և 80 մետր երկարությամբ ու մի քանի  
 մետր բարձրությամբ մի ամուր պատ կանգնեց՝ թիկունքը  
 հենած գետափի հենաշերտին, կուրծքը՝ Արաքսի ծփացող

ալիքներին: Ամուր էր դիմադիրը, հուսալի: Բայց կառուցումից հետո անցել է մի քանի ժամ ոչ գիմադիրը կա, ոչ հողաշերտը: Գիշերը վարարել է Արաքսը (վայրկյանում 900 խորանարդ մետր հոսք) պատենեշի վերնածայրով 3 մետր խտացած շերտով գահավիժել, կատաղած փորել հատակը, լափել այդ մասի ձախափնյա հողաշերտը պաշտպանելու համար կանգնեցված պատենեշի տակի հողը ու տապալել պատը: Քարերով լցված ու մետաղալարերով ագուցված գաբիոնները բաժան-բաժան արել, քշել տարել և լափել ափի հողը:

Շտապե՛ք, շտապե՛ք, տազնապ է...

Մարդիկ հավաքվել են Արաքսի ափին, ջրանցքի մոտ: Տագնապահար նայում են. որոշ հատվածներում գետի ձախափը՝ ջրանցքի բետոնապատ պռունկն է 40—50 սանտիմետրի Փրկել է հարկավոր ջրանցքի մայրուղին: Բայց ինչի՞ց սկսել: Ծրեի վաղման փականներից ջուրը ժայթքում էր ու փորփրում, ավելի թուլացնում ափի դեռ կանգնած մնացած հողաշերտը: Փրկել է հարկավոր: Կարծում եք հանգի՞ստ է: Քրարից առաջ անցնող ալիքները կռվում են երկաթյա փականների հետ, հազար ու մի տեղից ջարդվում, բայց շեն ուզում թեքվել, համառում են: Համառում են և ժարգիկ փակում են: Դա Մյոմտ Ներսիսյանն է, Կիմ Կիրակոսյանի, Ռազմիկ Հակոբյանի, ջրային տնտեսության ինժեներատեխնիկական անձնակազմի առաջին ճիշտ որոշումն էր: Բայց գրանով ի՞նչ: Անցա՞վ վտանգը: Եթե հուզված Արաքսին հանգստացնելը այդքան հեշտ լիներ: Պատենեշի վերնածայրը պարուրած ջրի շերտը ավելի հաստանում, ավելի է խտանում, պոկվում ու սուրում ցած: Ծրկու օր առաջ բանակցությունները թուրք պատվիրակների հետ տպարգյուն էր անցել. նրանք չէին կամեցել փակել հենց մեք ջրանցքի սկզբնամասի ուղղութայամբ գետի դիմացի ժայռեղեն ափից սկիզբ առնող թունելի ջրափակոցները: Թունելի մուտքի մոտ ջուրը ամեհի պտույտներ էր գործում և ավելի կատաղի ալիքներ ուղղում ջրանցքի մայրուղին գետից բաժանող կծկված ու թուլացած հողաշերտը: Եվ եվրոպական կապտավուն մեքենային թիկնած մի խումբ թուրքեր գետի հակառակ ափից, ծերացած ու սպիտակամազ վարդապետի

արդեն երկնքին շնայող աչքերը ծալծալ կնճիռներն հիշեցնող ժայռեղեն ավից նայում են... նայում են, թե դեռ կանգուն մնացած հողաշերտը ե՞րբ կլափի Արաքսը, ե՞րբ կմտնի ջրանցքի բետոնապատ պատերի տակ ու շուտ կտա: Չէ, փրկել է պետք, փրկել: Բա այսքան մարդ ինչո՞ւ են հավաքվել: Նրանք լավ են տեսնում և ծեր վարդապետի աչքերն ու ծալծալ կնճիռներ հիշեցնող ժայռեղեն ավիք, և եվրոպական կապտավուն մեքենան ու նրան թիկնած մարդկանց, և հուզախոով Արաքսը, և ջրանցքին սպառնացող վտանգը:

Ու վարպետ Անդրանիկը, որին շփտեն որ խաշուղում նոր ուղեգիր էին տվել՝ Կարակալա, տենդոտ վրա է տալիս. «Մի քանի քար քարծուղ նստեք մեքենա» սասնաշենցի մի երիտասարդ վարորդ, մեքենան միանգամից տեղից պոկում է և հետո դգում, որ քար քարծուղ շվերցրեց...

Բնության քմահաճ խաղերից դուրս հանող չկա. քարն էլ հավասար չի բաշխել քարաստան-Հայաստանում, մատակարարում, 13—14 կիլոմետր հեռվից պետք է բերվի: Եվ քար կրող մեքենաները բազմաթիվ ուղիներ գծեցին դռերում...

Միջօրին Հոկտեմբերյանի ջրային տնտեսության 1200 գաբիոններն արդեն լցվել էին քարերով, կողք-կողքի շարվել, մետաղապարերով ագուցվել իրար ու թիկնել ամենաթույլ ու ամենաշատ հարվածը կրող հողաշերտին: Հարկ եղավ նոր գաբիոններ բերել Երևանից, Շահումյանից, էջմիածնից: Երկաթբետոնյա սալիկներ բերել տալ: Ավազը մատ է. լցնել պարկերը և շարել հողաշերտի ու ծառա ելնող ալիքների արանքը: Արագ պետք է լցնել պարկերը, արագ՝ ամենից ուշը մի ժամում ավազով լցված հազար պարկ պետք է դարսել իրար վրա: Վտանգը կանխելու համար ճիշտ որոշումներ կլինի միայն, արագաշարժ ձեռքեր կան:

Իրիկնապահին Կիմը շափում է ջրի մակարդակը: 100 խոթանարդ մետրով ավելացել էր:

— Նշանակում է գիշերը ավելի կբարձրանա, — մտախոհ առում է ջրային տնտեսության մինիստրի տեղակալը Եկ. Գուլեցյանը:

Շատ հավանական է:  
Քայց Հոկտեմբերյանի կուռակցական կոմիտեի քարտու-

ղար Վ. Դարբինյանի ձայնում ժամեր առաջվա տազնապը չկար. ուժեղ, պրկված ու շտապող ձեռքերը շատ-շատ են, ամեն մեկը կատաղած մի ալիք կփշրի:

Գիշերը Արաքսը ավելի է վարարում, հոսքը հասնում է վայրկյանում 1000 խորանարդ մետրի: Մեկ էլ 12 տարի առաջ է Արաքսն այսպես կատաղած եղել (1.100 խորանարդ մետր վայրկյանում) և ձորի վրա կախված պլշած աստղերի ու ափը լուսավորող լուսարձակների ցուրը շարդ ու փշուր անող խենթ ալիքների հետ դիշերն էլ կովեցիե մարդիկ... Հաջորդ օրը Արաքսը շհանգստացավ:

Հաջորդ օրը աշխատանքները շարունակել և էլի ինչոր բան մտածել պետք էր: Գիժ Արաքսն է, ով դիտի երբ կհանգստանա: Հարկավոր է քշվող հողաշերտի և գետի միջև կանգնեցվող դիմադիր պատի աշխատանքները երկու ծայրերից սկսել: Բայց ամրապնդվող ափի ամբողջ հատվածում, մի տեղ, գետափը ջրանցքի պռունկն է միայն՝ 30—40 սանտիմետր: Այդտեղով ավտոմեքենա կանցնի՞, որ շինանյութ հասցնի մայրուղու սկզբնամասը: Ուրեմն ջրանցքի ձախափնյա թեք լանջը կտրել-կառուցել ճանապարհ և ջրանցքի վրա կամուրջ կապել: Մինչև էքսկավատորներով ու բուլդոզերներով 350—400 մետր երկարությամբ ճանապարհ պատրաստվեց, գորամասը կապիտան Բեգլարյանի ղեկավարությամբ կամուրջ կապեց ջրանցքի վրա: Առաջինը Ռոբերտ Հարությունյանի ավտոմեքենան է անցնում այդ ճանապարհով, կամուրջով և ետ ու առաջ տալով զգույշ շրջադարձ կատարում Արաքսի պռունկին: Զգույշ պետք է լինել, զգույշ, ղեկանիվի մի փոքր անզգույշ շարժում և մեքենան կարող է գլորվել գետն ու տաշեղի պես քշվել: Եվ գալիս են քարերով բարձած ավտոմեքենաները նաև այդ ճանապարհով, դիմադիր պատի կառուցում է սկսվում նաև այդ ծայրից:

Քարերով լցված գաբիոնները ջուրն են իջնում, ազուցվում իրար, հենվում իրար ուսի ու բարձրանում դառնում պատ՝ երկշարք, եռաշարք: Գաբիոններ են դրանք, երկաթյա ցանցեր՝ քարերով լցված, ազուցված իրար, թե մարդիկ՝ իրար ձեռքից ամուր բռնած, թիկունքներով ափի հողաշերտը պահող, կրծքերով հեղեղատի փրփրած ալիք-

ների հետ կովող մարդիկ: Հիմա ես կգրեմ մի տասնյակ անուն, առանց հաշվի առնելու, թե անվան տերը Մլաս-նիկյանից է, Փոքր Շահրիարից, Նալբանդյանից, Նաիրիից, Մրգաշատից... Թող Արաքսի ափին լարված աշխատող յուրաքանչյուր ոք հաշվի, որ այդ անուններից մեկն ու մեկը իրենն է: Ահա նրանք՝ Հայկ, Արամ, Արմեն, Վարդան, Հովսեփ, Արծրուն, Մեսրոպ, Աշոտ, Վահան, Լևոն, ... Երեկ, մյուս օր առաջ նրանք այստեղ էին՝ Կարակալայում, Արաքսի ափին, իրենց ջրանցքի մոտ: Հիմա էլ են այնտեղ: Արաքսը դեռ չի հանգստացել: Գալարվելով գալիս է, ճանապարհը կտրող պատնեշի մոտ մի քիչ հանդարտվում, շունչ առնում, հետո հավաքվում՝ պատնեշի վերնածայրը պարուրած պրկված շերտով սուրում ցած, փշրվում, եփ գալիս, ծխում և այդտեղ հեղեղատի հոտն էլ է գալիս:

Արաքս, գիժ Արաքս...

1964

### ՓՈԹՈՐԻԿ

- Մգրո, ավեր տուն, թուղթն ինչպե՞ս տվիր:
- Թուղթն ո՞վ առավ քո ձեռքից, Մգրո:
- էդ անտեր թուղթը հաստա՞տ սև գույն ունի, Մգրո:

Փոստատարը առաջին «սև թուղթն» էր հասցրել Ջորագյուղ: Գյուղի գզգզված գլխին ումբ էր պայթել, և գրասենյակում ծերունիները շրջապատել էին «մեղապարտ» փոստատարին:

- Թուղթը Նազոյի՞ն տվեցիր, Մգրո:
- Մգրո, հազար երանի քեզ, որ երեխա չունես:
- Ի՞նչ կուզեք, այ մարդիկ, ինձնից ի՞նչ կուզեք,— ծեր փոստատարը շղիմացավ,— գեղի համար բայդո՞ւշ դարձա: էգուցվանից ձեզնից մեկ թող դառնա նամակատար:



Բայց առավոտ շուտ Մգրոյի ուսին էլի փոստատարի պարկն էր, ոտքերին սառած տրեխները,— ճը՛ռ-ճը՛ռ, ճը՛ռ-ճը՛ռ,— ճտպտուն գլխաշորով փաթաթված ականջների տակ նվում էր ձյունը: Գյուղեզրի մոտ հանդիպեց Նազոյի հար-

սին: Սև գլխաշորի տակից սև աչքերն էին երևում միայն: Փոստատարը կամեցավ խուլյա տալ, ճամփեն թեքել, ուշ էր...

— Բարի լույս, քեռի Մգրո:

Փոստատարի շուրթերը շարժվեցին, դողդողացին:

— Անգին, գառ,— ու ձայն դուրս չեկավ: Հայացքը բեկ-բեկեց պեծպծացող ձյան վրա, սարսուռաց, քաշվեց կոպերի տակ, դարձավ ձյան մեջ թշաշող մի գունդ տաք արցունք:

— Դու ի՞նչ մեղք ունես, քեռի Մգրո, իմ բախտն էր:

Նազոյի հարսին որտեղի՞ց էր այդքան ուժ. աղբյուր ջրի է եկել, թոնիր պիտի վառի, ամեն օրվա պէս գործ կանի, հետո էլ... պիտի նստի հացի: Չէ՛, «մարդու հոգին խորն է, կռիվ մարդու ուժ կբերե»: Եվ փոստատարի ձեռնափայտը քայլ առավ: Ճը՛ռ-ճը՛ռ, ճը՛ռ-ճը՛ռ, տաքերի տակ ձյուն, գլխի վերև ձյուն, քանի աչքը կտրու՞մ էր՝ ձյուն: Մինչև ո՞ւր, մինչև ե՞րբ: Ուսապարկում երեսուն նամակ կար, երեկ առավոտ՝ երեսունմեկն էր: «Սև թուղթ» բերեց, և կռիվ գնացող նամակները դարձան երեսուն: Սմբոն... ախր, էդ ո՞նց կլինի. ազրայել մի տղամարդու փոխարեն Ամպաձոր պիտի իջներ-բարձրանար ու գյուղ մտներ երկու մատ թո՛ղթ: Ուրեմն Սմբոն էլ «չղարա» չի փաթաթի տա իրեն, չի հարցնի. «Քեռի Մգրո, ի՞նչ կասես, սարի արտեր քաղելու չե՞ն»: Բա Անգինը ո՞ւմ ետևից պիտի փոցխ քաշե: «Հե՛յ, տղերք, քեռի Մգրոն պահանջում է մի-մի թաս թանջուր խմենք, մի առակ պիտի պատմե, հավաքվե՛ք»... Ի՞նչ բարձր, անուշ ձայն ուներ Սմբոն:

Ճը՛ռ, ճը՛ռ, ճը՛ռ... Ձյունը փախչում է ոտքերի տակից: Ձյունը հող չէ, հենարան չէ: «Դեղին բոթ տանող դարձա... էս հըլա մե՛կ: Բա որ Ասատուրի տղից թուղթ գա՛, Մելոյի տղից, Անդոյի՞ց... կռիվ է, գենքի մեջ սիսեռ չէ, արճիճ ու արյուն է... Վա՛յ, վա՛յ...»:

Կոշտուկներով պատված ձեռնափայտը առաջ է ընկել, մինչև պորտը թաղվել ձյան մեջ, քաշում-տանում էր փոստատարին:

Լիներ գարուն, հողը անուշ ծխար, տղաները հերկ անեին, ինքը ակոս, ակոս քայլ աներ, գոգնոցից առներ բուռ-բուռ ցորեն, ոսկե անձրև տեղար սև ցելերի վրա: Տրեխները լըցվեին փափո՛ւկ-փափո՛ւկ հողով ու ցանե՛ր, ցանե՛ր, ցորեն

ցաներ կլոր արտում: Փոստատարութիւնը իբր ի՞նչ բանն էր  
կայցրին զոսի:

Ջեռնափայտը շորացած ափի տաքութիւնն էր առնում  
ու շաղ տալիս ձյան մեջ, տրեխները շան զնգզնգացող ատամ  
էին դարձել, իսկ ուսապարկի երեսուն նամակները երեսուն  
վախվորուկ ճնճողուկի պես մի բուռ գոլ էին ժողովել, կրպ-  
ցըրել Մգրոյի թիկունքին...

Կամա՛ց, ճոնշալով բացում է փոստի դուռը, շեմն առ-  
նում ոտքերի արանքը, տրեխի մեկը շեմից ներս, մյուսը՝  
դուրս... Անակնկալ հարվածից պաշտպանվող մարդ է փոս-  
տատարը:

— Քեռի, քեռի շան, աչքալուսանք ունեա. Սմբոյից նա-  
մակ է եկել:

Մերունին օրորվում է, հենվում դռան կշտանոցին: Հե-  
տա... Դիմացի վառարանը, կողքին գրված աթոռի հետ, կա-  
վածեփ պտտերը առաստաղի հետ, աղջիկը թափահարող  
եռանկյունածալ նամակի հետ, ամե՛ն, ամեն ինչ խառնված  
են իրար, պտտվո՛ւմ, պտտվո՛ւմ, պտտվո՛ւմ...



— Քեռի Մգրո, տուն երթանք, էսօր դու գնալ շես կա-  
րող: Մերունին մշուշված աչքերով նայում է աղջկան:

— Ուրեմն, հիվանդանոցի՞ց է գրե,— նամակը նորից  
է մոտեցնում աչքերին,— հա՛, Սմբոյի ձեռաց գիրն է,  
կրճանչնամ:

— Գնանք, գնանք, քեռի շան, կհասկանաս, կքնես,  
էգուց էլի նամակներ կգան, կվերցնես, կերթաս:

— Չէ՛,— դեմքի խորշոմները լցվում են թախծոտ, տան-  
ջահար ժպիտով,— չէ, մեռնիմ էն նախշուն աչքերուն, գե-  
ղի աչք իմ ճամփին է, կերթամ, նազոն լալիկ կենն ուր  
տղի փոթերու վրեն, իմա՛լ շերթամ...

Դռան մոտ ասեղնաշար քամին շուլալվեց Մգրոյին: Մե-  
րունին սորսոփաց, ուսերը բերեց իրար ու ձեռնափայտը  
առաջ տվեց:

Մի երգիկից ծուխը, դեռ լեզու չհանած, բզկտվում, դառ-



նում էր ճերմակ քամի: Մարագի պատի տակ սառած քարին ծուխ ու քամու գույնի մի կաշաղակ շարագուշակ կըրկըռում էր:

— Զո՛ւ, շո՛ւ...

Մզրոն կաշաղակ շէր սիրում: Ուղղեց ուսապարկը, նեղսրբտեց, որ քամին քշում է: Հինգ նամակ կար ուսապարկում: Մեկն էլ ինչ նամակ, հենց երեկ արևմտոցին գյուղ հասած բոթի հերքումն էր տանում: Գյուղում էլ ոչ ոք չի հավատա «սև թղթին»... Հովնանի տունը ճամփի վրա է, կմտնի՝ Մհերից եկած նամակը կտա Հովնանին... Զէ, ուղիղ կգնա Նազոյի տուն, ձեռափայտով, շրխկ, կբացի դուռը և... Անակնկալ ուրախությունից Նազոյի սիրտը շպայթի... «Զէ՛, ջանք, սև թղթին դիմացավ Նազոն»: Նամակը ձեռքին կմտնի ներս, կասի. «Նազո, քու աչք լուս, Սմբոյից նամակ կա, էն... էն թուղթ սո՛ւտ էր, սո՛ւտ»:

Նազոյի ծնկները կծալվեն, շորեքթաթ կգա, կփաթաթվի իր ոտքերին: Զէ՛, չէ՛, թույլ չի տա, թևից կբռնի, կհանի ոտքի: Անդոն կխլի նամակը, դող ընկած մատներով կբացի, արցունքները, խըթ-խըթ, կուլ տալով կկարգա, երեկվա մանչը, որի ափի մեջ դրեց թուղթը, հարայհրոցով կընկնի դուրս ու... Ողջ գյուղը էլի կհավաքվի Նազոյի տուն: Թերթերն ու նամակները հենց այնտեղ էլ կբաժանի: Մարդիկ կհավաքվեն իր կողք ու բոլոր... Հետո ամեն մեկը սրտին սյուն դրած կթողնի, կերթա, ինքն էլ կերթա տուն, Պոծառի մոտ:

Սսը՛ր... Դիմացից, օձի պես մեջքը ուռցրած, ոլորմոլոր, գեռնատարած, սողում էր փոթորիկը: Փոստատարը դեռ պիտի ելներ դիմացի բարձունքը, պիտի իջներ մի ձոր, հետո կտրեր Սնձուտի դուրանը, և ոտատակի կածանը կհասներ Ամպածորի պտուենկին, կկախվեր գյուղի վրա... «Կլոր արտի մոտ հասա, բան չի մնա»: Քայլ-քայլ մոլեգին էր դառնում փոթորիկը: Սար ու ձոր ձեն-ձենի տված գուժկան որոտում էին: Բայց ծերունու հոգին խաղա՛ղ, խաղաղ էր: «Առավոտ քսան-երեսուն պատասխան կբերեմ Սըմբոյին»: Ոտքը փոխում էր, անում կես քայլ, ու քամին աշխարհի երեսից, որը ձյունով էր ծածկված միայն, ջնջում էր Մզրոյի ոտատեղերը: Մերունին հավաքում էր ուժերը ու

կես-կես քայլ ճամփա էր կտրում: Երբեմն շուռ էր գալիս, թիկունքն անում բքին, առնում շունչ ու ձեռնափայտը նորից գցում առաջ: Ո՛չ ճամփա, ո՛չ հորիզոն: Երկինքն ու գետինը եկե՛լ-հասել էին իրար, և աշխարհը դարձել էր ոտատակից փախչող կես քայլաչափ ձյուն: Քայլերը ավելի կարճացան, շատացան դադարները, հետո... գլորվեց: Ուժովեց ծերացած ծնկներին, հենվեց ձեռնափայտին, ելավ ղուտի, բայց շիմացավ, թե որ կողմը քայլ պետք է անի, փոթորիկը հայացքը առել-տարել էր, և աչքերի դիմաց՝ կարմիր, սև կանաչ ու կապույտ գույների հալավն էր: Նորից գլորվեց և թվաց նրան, թե տեղը հարմար է, փոս է, մի քիչ շունչ կառնի, կելնի: Ուսապարկը թիկունքից քաշեց, բերեց առաջ, սեղմեց կրծքին. «Քամին կպոկե-կտանե, շեմ իմանա», — ու կուչ եկավ...

«Հիմա Պոծառ թունդրի կողք նստած գուլպա կգործե»: Սև կող ու կշտով պուտուկից (ճաշի բլթոցն էլ ընկավ Մզրոյի ականջը) գոլորշին կելնի, կպարուրե թոնրի սալաքար-խփին փոված կարպետը, տունը կլցնե տաք ու անուշ բույրով: Կարպետը առաջ ջվալ էր, կես կտտ ցորեն տվեց առավ: Շատ տաքերես էր բռնեմ, կպել էր, թե՛ մեկն էլ առ փողպատը հազիվ պոկեց. «Տաս հատ կառնենք, քուրիկ, է՛ն է, որ ուտող բերան չկա, ես եմ՝ ու իմ պառավը»... Պոծառը շատ սիրուն էր... Իրենց հարսանիքի գահալի Ստնոյի գրվիսին արախչի կար, կարմիր ու կանաչ գույնի պուխով: Սանոն դահուլի փայտերը եռանդով կտկտացնում էր, տակտի հետ օրորում գլուխը, և պուխը թովոում էր Սանոյի գլխին...

Նա փակ աչքերով էր, և կոպերի դիմաց կտրակցվում էր գույների պարը: Աշխարհը փափուկ էր ու տաք, շկար քամու սուլոցը, ձյուն ու ցուրտ շկար և Մզրոյին թվում էր, թե ինքը ամպաքուլաներով փաթաթված լողում է...

Փոթորիկը ձյուն-ճերմակ պատանք էր հագցնում փոստատարին...

## ԱՆՔԵՂՎԱՅ ՈԳԻ

Գիշերը սլառանքեց մորթված գյուղը:

Սևերևս երկինք, երկնքում՝ բզկտված, հալածված մի բուռ ճերմակ ամպ, ամպի թիկունքին՝ դավադիր լուսնի մահիկ: Գիշերվա հետ ագռավները խուժեցին գյուղ: Համրացած գյուղը կռինչներով լցվեց: Սևասաղարթ ծառերի վրա փայլեցին գիշատիչ աչքեր: Հետո՝ իջան ծառերից... Կտցեցին, կտցեցին: Շները լաց-կաղկանձեցին:

Ասկյարները սև հրացանների սև կանգնեցին կտրած-լեզու տների մոտ, արնոտված շեմերի վրա, հացատների անկյուններում էլի մի բան մնացած կլինի, գոմերում շարգված ոտքով՝ էլի մի գառ...

Կրակեցին՝ կաղկանձող շների վրա, մարագների պատերին մլավող կատուների վրա: Շունչ չպիտի մնա, շունչ:



Մարութա սարի գլխին գալարուն պար բռնեցին արնագույն բոցերը:

Գյուղում դուռ ճռնչաց:

Ոչ ոք չկանգնեց շեմին, շխաչակնքեց, շմոտեցավ աղոթարանի մաշված սալքարին:

Հովիվները «ձեն-ձենի» շտվեցին: Արշալույսը գնդակահարել էին, արնոտել դեմքը: Գյուղի ժամացույցը կանգ էր առել:

Մամիկը աչքերը բացեց: Մանր էին կոպերը՝ տաք թոնրին սալքար խփի նման ծանր ու տաք: Գլխի մոտ կծկված կատուն մլավեց: Մամիկը մշուշված հայացքով նայեց կապտափայլ երկնքին, սևացած օճորքին, և հին սովորությամբ ուզեց աղոթել: Չկարողացավ շուրթերը շարժել, գլխի վրա ցավ զգաց... և հիշեց. Հոգու խորքում ճչաց, իսկ չորացած շուրթերի վրա նվազեց ճիչը: Երգիկը մթագնեց, ճոճվեցին մրով թրծված գերանները, օրորվեցին սյուները: Կրակոցներ, ծղրտոց, իրարանցում, թոռների աղեկտուր ճիչ, ամեն ինչ, ամեն ինչ խառնվեցին իրար, դժժացին ականջներում, ջնջիվեցին հրացանի կոթով՝ այն հրացանի, որ իջել էր ճերմակած իր գլխին:

Թուլացած ձեռքերով շփեց գետինը, ուժ տվեց ծնկներին:

Համրացած գյուղում մի դուռ ճոնչաց՝ քարացած բուրբ դռների ծանրությամբ: Մամիկը շեմի վրա օրորվեց, հենվեց դռան կշտանոցին: Երբերալով հասավ սնկսնկացող առվին, դեմքին մի ասի ջուր խփեց: Արցունքի կաթիլները խառնվեցին ջրին:

Ութսուն տարվա արշալույսների կրկնվող քայլերը մի անգամ էլ կրկնեց: Ծունկի եկավ աղոթարանի սալքարի վրա, աջ ձեռքը բարձրացրեց և... մատները անշարժացան ճակատին, ինչպես հանգած մոմեր՝ շեշտ խաչքարի վրա:

— Աստված,— մրմնջաց,— դու կա՞ս,— ուժ առավ,— դու կա՞ս:

Ելավ տեղից, սարի փեշին կպած իր տան բարձունքից աչքերով շափեց գյուղը: Երդիկներին ծուխ չկար, ոչ մի ծուխ՝ «Ես եմ մացե, մենակ՝ ես... Բայդուշ հավք եմ»: Լուսնունը երկյուղի պես սողաց հոգու մեջ, ծնկները ծալվեցին: Կատուն քսվեց ոտքին, մլավեց: Երբեք այդպես չէր շերմացել կատվից: Գրկեց, վախեցավ հեռանա, իրեն մենակ թողնի:

Քիչ այն կողմ Սողոմոն պապն էր՝ մեկնված թիկունքի վրա, ճակատին շորացած արյուն, սեղմված ձեռքում՝ բահ: Ուզեց ճշալ, փախչել հեռանալ: Շուրթերը շարժվեցին, քարացավ տեղում: Դողացող ձեռքով խաչակնքեց: Հետո աչքերը շիկացան բոցավառ թոնրի պես, հոգում մի փոթորիկ ծնվեց: Կատուն շարտեց մի կողմ և ջղածիգ ձեռքերը երկինք բարձրացրեց:

— Անաստված աստված...

Ուզում էր մի ժայռաբեկոր վերցնել ու շարտեր երկինք: Ուզում էր իր շորացած մատներով ճանկեր երկրի հողը ու շարտեր երկինք: Կռացավ Սողոմոն պապի ձեռքից քաշեց բահը: Պապի սևացած մատները այնպես ամուր էին ակցանել բահի պողը: Մի քիչ այն կողմ... Արթենի հարսնուկն էր: Սրունքները բաց էին: Ծածկեց... «Բարի լուս, Մամիկ», ականջում զրնգաց հարսնուկի ձայնը, դեմքի ժպիտն էլ տեսավ: «Երեկ էս ատեն թունդիր կվառեր»,— հիշեց ու ծխաբույր զգաց: Անուշ ծխաբույր: Թունդները լայնացան: Վառված աթարի հոտը շատացավ, մշուշի միջից երևացին ծխի կապույտ քուլաները: Երևացին, շատացան, պարուրեցին

դեմքը: Աչքերը կծկծացին: Ձեռքը տարավ գոգնոցը՝ մոտեցրեց աչքերին և ... սթափվեց: Աչքերի առջև՝ Արթենի հացատան բրգաձև կտուրը, երդիկի վրա՝ կտոտված օձի նման լուսթյունը, աչքերի առջև՝ Լուսիկի գալար-գալար շաղկած սև մազերը:

«Երեկ էս ատեն Լուսիկ թունգիր կվառեր...» Պատրանքով ծնված ծխաբույրը դեռ ունգնեցում էր: Եվ... Մի խենթ ցանկություն վրնչաց մամիկի հոգում... Վառել թոնիրը: Պատին հենված աթարների կույտից մի քանի աթար դրկեց, մտավ Արթենի հացատուն: Պռճկից՝ սառած մոխիրների տակից հանեց անթեղը: Մի տարթ թողեց մոխրի տակ, որ անթեղ գառնա, հանած անթեղի վրա շարեց տարթի կտորները: Մի ծվեն ծուխ ելավ: Կտրվեց: Էլի՛ մի երկու բզկտված ծվեն, և ծուխը լիզեց թոնրի կողերը, թոնրի շուրթերը, հացատան պատերը, սները, սնից կախված ճրսղը, իլիկը, դրտնակը, օճորքը, գերանները... պրկեց մեջքը, երդիկից դուրս ելավ...

Երգիկին շուրջպար բռնած շարք-լուսթյունը խեղդվեց: Մամիկը տանից գուրս եկավ, դոգնոցով սրբեց աչքերը, նայեց բարձրացող ծխին, կոտրատված մեջքով ծխասյանը, ու երևացին ճակատին բարդված մանրիկ կնճիռների ծալքերը՝ նման երգիկից երևացող արշալույսի:

Արթենի երգիկից ծուխ էր ելնում: Արթենի տունը շնչում էր:

Մնացած բոլոր երգիկների վրա խուփ էր գրված: Մնացած բոլոր տների ծուխ-լեզվակները կտրված էին:

Վառե՛լ, վառե՛լ... բոլոր թոնիրները վառել: Մասս ելավ վրնչացող հողին: Նյարգային շարժումներով պոկվեց տեղից: Հետո քայլերը դարձան կանոնավոր, թեթև: Այդպես արագ շարժվում էր, երբ վառման թոնրի վրա դրված կաթի ամանի մոտ պահակ կանգնած թողը կանչում էր. «Մարե, կաթ թափավ, կա՛թ»:

Շրջանցեց Սողոմոն պապին, աշխատեց շնայել, ներս մտավ: Հանեց անթեղը: Թոնրի հատակում նոր անթեղ դրեց...

Դուրս գալուց կանգնեց Սողոմոնի մոտ, մրոտված ձեռքերը մոտեցրեց նրա արնոտ ճակատին. «Սողոմոն, ավեր տուն, էլի, քու թունգիրն եմ վառե, էլի, հերիք է քնիս...»

Հրի՛, ախ տնավեր, հալւոր», — երգեցիկ ձայնով ավելացրեց ու գնաց: Քայլեց արագ: Քայլերը խառնվում էին իրար: Իր Սանթրիկ թոռան պես փեշին կպած կատուն երբեմն հազիվ էր խուլյս տալիս, որ շքնկնի ոտքի տակ: Շտապում էր. «Ասկարներ կգան, կհսատ կմնա...»: Առավոտ էր, թոնիրներ վառելու ժամանակ: Պիտի վառել: Բոլորը, բոլորը, բոլորը վառել, քանի դեռ խուժան ասկյարները նորից գյուղ չեն մտել. մի հացատան անկյունում մնացած կարպետը խլխլելու միմյանց ձեռքից, քանդելու սյուն ու օձորք՝ ձեղուններում «պահված» ոսկին գտնելու հուսով:

Ու շտապում էր:

Մյուսը Հոկո Մանուկի տունն էր: Անկյունում շուռ էր եկել գատաբկ օրորոցը: Դատարկված, երեսնիվար ընկած, հացատան գետինը համբուրող օրորոցը: Մեկ էլ շաղ եկած փետուրներ: Մնկեց թոնրի մոտ, հանեց անթեղը...

Մյուսը Ախոյի տունն էր...

Երեք հարյուր թոնիր՝ մի մամիկ:

...Գլխաշորը սահել-ընկել էր մի թոնրի մեջ, մի ծվեն ծուխ էր դարձել-բարձրացել երդիկից: Ճերմակ մազերը Սև սարի ձնաբուքի պես գալարվել էին, ձնաբուքի ասեղնաշարի նման բզկտվել, շաղ եկել դեմքին, թիկունքին, հեխհե տրոփող կրծքի վրա: Դեմքը պատվել էր մրով, թոնրատակի փոշով շաղված քրտինքով, աթարի ու ցախի փշրանքներով: Բազուկները խազված էին, խազերը՝ նման սար ու ձորում մոլորված անսկիզբ ու անվերջ ճամփաների: Աչքերը անթեղների պես մարմրող էին, անթեղների պես խոր ու թեժ: Ոտքերին «կոնդոռա» չկար, հանել էր, որ թեթև քայլի՝ «կգան՝ կհսատ կմնա...»:

Մյուսը...

Երեք հարյուր թոնիր...

Տանջված մի մամիկ:

Եվ օրորվում էր, հավաքում վերջին ճիգերը: Վառել բոլորը, բոլորը... Պատերի տակ, ճամփեքի վրա, կալերում, բակերում, շեմերի վրա, տանը ընկածներին, կտցահարվածներին չէր տեսնում կարծես: Թոնրի շրթին ընկած մորը մի կողմ էր քաշում՝ մոխրի տակից հանում անթեղը, թաղում թոնրի տակ... Ոչինչ, ոչինչ չէր տեսնում մամիկը,

ծուխ՝ թոնրի շրթին, օճորքի տակ, երդիկի վրա, երկնքի տակ, արևի դեմքին: Արևի դեմքին... ծո՛ւխ, ծուխ, ծուխ:

Մամիկի աչքերը ծխագույն էին: Մամիկը ինքն էլ՝ մի ծվեն ծուխ:

Քզկտված մի ծվեն ծուխ՝ թաղից թաղ էր անցնում, մրտնում տնետուն, գալարվում գյուղի վրա...

Կեսօր էր: Արևը պլշել էր երկնքում, արևը՝ արնախում պլշած աչք:

Մխում էր գյուղը: Ծրդիկներից բարձրացած ծուխը լիզում էր տների կտուրները, տների փոշոտ քարերը. Մարութա սարից իջած հովի պես շոյում արևի տակ անթաղ մնացած մարդկանց, գալարվում, հազար ու մի տեղից ծալք տալիս, քզկտվում, հետո խտանում էր, գառնում ծխասյուն, լեռն ի վեր ելնող քարավանի նման ձգվում երկինք ու ծածկում արևի դեմքը:



Իսկ դիմացի սարին հայտնված ասկյարները ապշել էին. գյուղը կենդանի՞ էր...

1965 թ.

### ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ

Արարատյան դաշտ: Ամառ: Կեսօր:

Արրահամը կռացել է վազի վրա, իսկ ես կանգնած ծխում եմ ու նայում շուրջս: Մի կես հորիզոն ձախ՝ Արադածն ի վեր, մի կես հորիզոն աջ՝ լեռնապարն ի վեր, մեկը՝ ձախ, մեկը՝ առաջ ու գլխիս վերև երկինքը դառնում է գոգավոր օճորք՝ արև-երդիկով և ոտքերիս տակ իմ տան հատակն է՝ հողեղեն ու տաք: Լեռներից այն կողմ էլի այդպիսի մի տուն կա, էլի կա, բոլորը՝ լեռնապատերով, երկինք-օճորքով, արև-երդիկով, խաչակնքված հողե հատակով:

— Արրահամ, հանգստացիր մի քիչ:

Մարդը լուռ ոտքի է կանգնում, շողկում մեջքը, գրպանից հանում «Ավրորա»: Իրար բերած շուրթերի արանքում արևի շողիք են մնում, խլվում են բերանում՝ մի բուռ արև



ոտքերի տակ փշրված արև: Իսկ ստվերը շան լակոտի պես լիզում է նրա ոտքերը, և ես մտածում եմ, «որքան էլ արևը զենիթում լինի, մարդն ու ստվերը անբաժան են: Բոյսվը մեծ ստվեր է ունենում, կարճը... Ուրեմն, Արարատի ստվերը սահմանից սահման է անցնում: Հիմա ստվերը ընկել է Արաքսի մեջ: Անցնում է գետը, ու ստվերը թրթռում է ջրերի վրա, ծումովում, բայց չի կտրվում»:

Արրահամը ծխում է: Թիկունքից ելնող գոլորշին, բերանից ելնող ծուխը խառնվում են իրար:

— Ասում են, գիտնականները առաջարկում են՝ վազերը տնկեք իրարից հեռու, որ տրակտորը վազի շորս կողքով պտտվի: Ճի՞շտ է:

— Ճիշտ է:

— Է, դրանով ի՞նչ, թե գիտնական են, թող մտածեն վազի արմատների մասին, մի բան անեն, որ արմատները շփովեն, շատ տեղ չգրավեն: Մի բան անեն, որ վազի արմատները ավելի շատ ուղիղ գնան, հողի շերտերը իրենց համար բացեն-գնան, շատ շփովեն: Որ երկու քայլի վրա մի վազ ունենանք, ոչ թե շորսի վրա մեկը: Դա է օգուտը, թե չէ...

Մխախոտը նետում է մի կողմ, վերցնում է բահը: Բահի շիկացած շեղքը նախ տիրոջ կուչ եկած ստվերն է կտրում, հետո հողը: Վազի բնի մոտ ծեփված մի թիզ ստվեր թաղվում է մի պահ հողի տակ:

Արրահամի ստվերը ընկել է բահ ու ոտքի տակ, ծումընվում է, բզկտվում:

Բզզացող օդում համրացել է վազը: Հին բուն ունի: Մի օր Արրահամի պապի ստվերն է փշրվել նույն վազի տակ, մի օր՝ Արրահամի հոր, հիմա՝ Արրահամի: Եվ վազի բունը նման է տիրոջ ճմրթված վզին, թևերը՝ տիրոջ պրկված թեփերին, շիվերը՝ տիրոջ մազլցող հայացքին:

Հոգնած է վազը. դար ու կես բերք է տվել, հոգնած է: Հոգնած են վազի արմատները, դար ու կես պտտվում են հողում, քարի հանդիպում, ծոմովում, գնում-հավաքում են սնունդ տալիս բնին: Իսկ բունը կուռը տվել է հողին. ճկոած պահում է մի սաղարթ ողկույզներով ծանր, շիվերով մազլցող:

Դադրած է նաև հողն Արարատյան: Տասը տասնյակ տարիքով տասը տասնյակ այդպիսի վաստակած վազ է ճանապարհել, տեղն ընդունել որթատունկ, մի քիչ հանգրտացել է, հավաքել է նոր ուժ, ոտքի կանգնել ու սկսել նորից:

Դադրել են նաև Աբրահամի ապուպապերը: Շունը են առել, սկսել, շունը են առել, սրել բահի շեղբը, դարձրել նոր շեղբ ու սկսել:

Եվ հոգնած էր...

— Աբրահամ, մի քիչ հանգստացիր:

Արևը հալվել է շիկացած թիկունքին, արևը ջուր է դարձել, խլվում է մարմնի վրա: Պոկում է մի ողկույզ, հողոտ ափերով քամում կուլայի մեջ: Քսան ոսկեհատիկ է պայթում քսան կլորավուն երկրագնդի պես և մի երկինք է սուզվում իր արևով՝ կարմրատակած կուլայում եփվող հող ու բազկի ուժի մեջ:

Աշխարհին ու մարդուն արդար ու գիժ այդ գինուց շատ է պետք...

Արարատյան դաշտ: Ամառ էր: Կեսօր:

Աբրահամը իր ստվերն էր գցել ոտքերի տակ, բզկտում էր սրածայր բահով, իսկ ես ծխում էի ու նայում շուրջս: Մի կես հորիզոն ձախ՝ Արագածն ի վեր մի կես հորիզոն աջ՝ լեռնապարն ի վեր, մեկը՝ ետ, մեկը՝ առաջ և գլխիս վերև կանգնեց մի օճորք, ոտքերիս տակ այրվող մի հատակ:

Դա իմ տունն է:

1967 թ.

### ԱՊԱՐԱՆ

Հին է, ինչպես իր քարերը, միայն թե առաջ, մինչև 10-րդ դարը, Նիգ է կոչվել կամ Նիգադոն՝ Այրարատ աշխարհի գավառներից մեկը, Տրդատ թագավորի նվերը Գընթունի նախարարությանը: Այսօր էլ դեռ կանգուն են Գնթունի Փառած իշխանի ամրությունները, Փառածնակերտն իր բերդերով:

Ապարանը հանգրվան է եղել թափառիկ շատ հայերի համար: Բնավեր, հալածական շատ հայեր քառագագաթ Արա-

գածի շուրջը շուրջը խոնարհված այս ժայռոտ լեռներին են ապավինել: Տարբեր ժամանակներում Ապարան են եկել Հայոց աշխարհի շատ նահանգներից՝ Մուշից ու Ալաշկերտից, Վանից ու Բայազետից... Հալածական են եղել ու դադրած, եկել են, նոր հիմք են փորել, նոր ծուխ հանել հոգնած երկնքի տակ:

Եվ այս կանաչ ձորում ու լեռներում հնչել են հայոց երգերը. ամեն մեկի մեջ հող ու ջրի կարոտ: Այսօր էլ կողք-կողքի ծխացող Քուչակ, Քասախ, Բուժական, Հարթավան գյուղերում մարդիկ խոսում են տարբեր բարբառներով՝ Բայազետի, Տարոնի, Խոյի...

Տոկուն են ապարանցիները, շքեղ, տոկուն՝ իրենց լեռների նման և ըմբոստ՝ լեռների նման: Մի անգամ չէ, որ գիմադիր են եղել թշնամուն, իսկ վերջինը օրհասական էր. պատմությունը շի մոռանա 1918 թվականի Ապարանի ճակատամարտը: Ցաթաղանի դեմ նաև ապարանցի ծերունին էր ու կինը՝ զինված նախ արիություն և ապա՝ ինչով կարող էր:

Գեղեցիկ է Ապարանը: Գրողները երգել ու երգում են Ապարանի բնությունը «Վերք Հայաստանի» գրքում Արովյանը մի պահ ընդհատում է պատմությունը և, հազարամյակներ ետ գնալով, գրում է.

«Հայոց թագավորքը, իշխանքը ու պայազատքը՝ Ապարանի բյուրատեսակ ծաղիկների հոտը և պատվական աղբյուրների համն առնելով իրենց ամառվա ջրերը հովացնում, իրենց հովացած, զովացած սիրտը աստվածային սիրով վառում, իրենց սուրբ սրտի աղոթքն ու մաղթանքը՝ ծաղիկների հոտի հետ խառը թռչնոց ձենի հետ հավասար մեկ բերանով իրիկուն, առավոտ երկինք էին ուղարկում»:

Ապարանի կենտրոնից սկիզբ է առնում հայոց աշխարհի գետերից մեկը՝ Քասախը, որի ակունքի վրա 16 դար առաջ կառուցված եկեղեցին այժմ էլ կանգուն է, և այդ մասին աշխատություններ են գրել ու գրում են հայ, նաև ռուս ու ավրոպացի գիտնականներ՝ հիացած շինության զարդաքանդակներով ու խոյակներով: Եվ համաշխարհային արվեստի պատմության մեջ եկեղեցին մտել է «Քասախի Բազիլիկա» անունով:

Միշտ էլ, առավել և այսօր, ապարանցին իր բնաշխարհի գեղեցկությունն է ունեցել հոգում և այդ գեղեցկությունից ծնված՝ հպարտությունը: Միշտ էլ ապարանցին երազել է ապարանք ունենալու մասին, այնպիսին, որ ներդաշնակի՝ Արագածի ճերմակ գագաթին ծածանվող կապույտ սավան-երկնքի հետ և բյուրականյա լեռների, և խոնավ ձորերի ու խնկաբույր դաշտերի: Եվ ահա 47 տարում իրականացել է ապարանցու երազանքը:

Ապարանի գեղեցիկ բնաշխարհին օր-օրի ավելանում է ձեռակերտ, նոր գեղեցկություն, ավելանում է, ներդաշնակորեն ձուլվում եղածին: Շրջանը 34 շեն ունի, ամեն շեն չգիտեմ քանի ծուխ ու ամեն ծխատեղ իր նոր ապարանքն է կառուցել՝ ամուր հիմքով, արևահայաց քիվերով, երկհարկ, եռահարկ: Մի քանի տարի առաջվանը սրտովը չէ՝ քանդում, նորն է կառուցում: Ապարանի բարձրիկ սարերում խաղաղություն է, հովիվները խարույկ են վառում ու շեն քողարկում խարույկի բոցը, և Ապարանում կառուցում են անդադրում, պապենական սովորությամբ:

Եվ ամեն գարուն նորոգվում է հին հորովելը ու հիմա հորովելը ձգվում է մեքենայի բացած ակոսների հետ: Շրջանի կուտնտեսություններում ու խորհրդային տնտեսություններում գործում են 185 տրակտոր, 90 կոմբայն, գյուղատնտեսական այլ մեքենաներ ու գործիքներ: Մեքենայացման է ենթարկվել նաև անասնապահության բնագավառի շատ աշխատանքներ: Իսկ անասնապահությունը շրջանի հիմնական ուղղությունն է: 70.000 մանր և 13.250 գլուխ խոշոր եղջերավոր անասուն են պահում Ապարանի սարերն ու մարգագետինները: Այս տարի շրջանն արտադրելու է 5.660 տոննա կաթ, 1.296 տոննա բուրդ: Հիմա Ապարանի սարերում գարնան թարմությունը կա դեռ, ամեն աղբյուրի մոտ մակաղած մի հոտ կա ու զանգակ աղբյուրի հետ հովիվների սրինգների շուրթերից ծորացող մեղեղի: Հիմա Ապարանի ցորենարտերում հասկերը խոնարհվել են, շրշում են մեղմ, և շրշյունը կալի երգ է:

Հիմա պտղաբույծ ապարանցի էլ կա: Մերժվել է այն կարծիքը, թե Ապարանի բնությունը պտղատու ծառ չի «սիրում»: Բակերում աճում են խնձորենու ու տանձենու ջահել

տնկիները, շատերն առաջին ծաղկի ու առաջին պտղի բերվ-  
րանք են տեսել արդեն, շատերը տանձ ու խնձոր հավաքե-  
լու համար ուռենու շվերից հյուսած զամբյուղներ ունենի:  
Նաև կոլտնտեսություններն ու պետական տնտեսություն-  
ներն են հիմնել այգիների առաջին հեկտարները: Եթե  
ապարանցուն հարցնես՝ Ապարանի խնձորը աշխարհում ամե-  
նահամեղն է:

Վերջին տարիներին շրջանում մուտք է գործել նաև ար-  
դյունաբերությունը: Ապարանցիների կյանքում կարևոր իրա-  
դարձություն էր տեխնիկական իրերի գործարանի հիմնա-  
դրումը: Կարճ ժամանակում ապարանցիներն ապացուցե-  
ցին, որ ընդունակ են նաև «գլուխ հանել» տեխնիկայի  
ժամանակակից բարդ սարքավորումներից: Գործարանի թո-  
ղարկած արտադրանքը ուղարկվում է Միության տարբեր  
քաղաքների հասցեներով՝ Կիև, Վորոնեժ, Լվով...

Շրջկենտրոնում գործում է նաև գորգագործական ֆաբ-  
րիկան: «Լոռի», «Երևան», «Անահիտ» և այլ տեսակի գոր-  
գեր արդեն միութենական ճանաչման են արժանացել:

Շրջանում կա վեց պանրագործարան, Քուչակ գյուղում՝  
գազգահաշինական գործարան:

Ապարանցիներն իրենց բարձր լեռներից շատ հեռուներն  
են նայում: Հորիզոններն են բացվում նրանց աչքերի դեմ, և  
այդ կապույտ հորիզոնները ձգում, տանում են նրանց:  
Ամեն տարի ապարանցի տասնյակ պատանիներ ու աղջիկ-  
ներ են ընդունվում հանրապետության ու Միության բարձրա-  
գույն ուսումնական հաստատությունները: Նրանցից շա-  
տերը վերագառնում են իրենց ծննդավայրը և ձեռք բերած  
գիտելիքները շնորհում համագյուղացիներին, գյուղին ու  
բնությանը: Այսօր Քուչակ գյուղում աշխատում են բարձ-  
րագույն կրթությամբ 40 մասնագետներ՝ ուսուցիչ, բժիշկ,  
գյուղատնտես... Երևանի բժշկական ինստիտուտն ավարտած  
քուչակցիների թիվը երկու տասնյակից անցնում է:

Քիչ չեն նաև այն ապարանցիները, որոնք հանրապե-  
տությունում վայելում են բարի համբավ: Նրանք աշխատում  
են տարբեր բնագավառներում և իրենց պարտքը կատարում  
են լեռնցու ազնվությամբ ու չեն մոռանում այն հողուշուրը,  
որն իրենց սնել է:

Նոր և մեծ հեռանկար է բացում շրջանի առջև հանրապետության ամենախոշոր արհեստական լիճը՝ Ապարանի ջրամբարը: Ջրամբարն ունի 740 հեկտար մակերես, 91 միլիոն խորանարդ մետր տարողություն, ամենախոր տեղը 50 մետր է: Ջրամբարը հնարավորություն կտա ոռոգելի դարձնելու 7.500 հեկտար հողատարածություն: Այդ նպատակի համար կծախսվի ջրի մի մասը միայն, մյուս մասը կհոսի դեպի Արղնի-Շամիրամ ջրանցքը, որի շնորհիվ հնարավոր կլինի Սևանից տարեկան մոտ 37,5 միլիոն խորանարդ մետր ջուր պակաս վերցնելու: Ջրամբարի ավերին կառուցվելու է երկու ջրհան կայան, որոնք հնարավորություն կտան ոռոգելի դարձնել ևս 2.000 հեկտար տարածություն:

Ապարանի լիճը դարձել է և կդառնա ոչ միայն տեղի բնակիչների սիրելի հանգստավայրը: Լճի ավերին կառուցվելու են հանգստյան տներ, կղզու վրա (լիճը կղզի ունի) կառուցվելու է տասը հարկանի պանսիոնատ: Արդեն երկրորդ տարին է, որ լճափի «Արագած» ճամբարում ամառային արձակուրդներն են անցկացնում հանրապետության տարբեր քաղաքների ու շրջանների պատանիներն ու աղջիկները: Լճակում լողացող մոտորավոր նավակների առաջին ուղևորներից մեկը Անաստաս Միկոյանը եղավ: «Ապարանի այս բնական գեղեցկությունը դեռ լավ չենք գնահատում, սա ավելի գեղեցիկ կարելի է դարձնել, քան Շվեյցարիայի գեղեցիկ անկյունները», — ասաց Անաստաս Միկոյանը:

Էլի մի քանի տարի, և Ապարանի լիճը Միության բոլոր վայրերից իրեն կձգի գրոսաշրջիկների, հանգստացողների, մարդասերների:

Էլի մի քանի տարի, և այսօրվա գրածը Ապարանի համար կլինի բավականին հնացած:

**ԹԱԼԻՆ**

«Թալինի գյուղերը...

Ամեն գյուղ իր սարն ու սարերն ունի, նույնիսկ՝ ամեն թաղ: Ամեն գյուղ իր ձորն ու ձորերն ունի, նույնիսկ՝ ամեն

Թաղ: Ամեն գյուղ կածանի մի ճամփորդ՝ ծխամորճն աստամ-  
ների տակ, հոնքերն իրար բերած, կկոցած աչքերով: Իսկ  
բոլորը միասին՝ աստվածատիպ մի ծերունի, որ թիկնել է  
Արագածին, ոտքերը կախել Արաքսի մեջ, մի ձեռքով բռնել  
ուսին նստած թոռանը, մյուսով՝ ձեռնափայտը սեղմել քա-  
րեղեն հոգին: Պետք է ոտքի կանգնի, քայլ անի գնալու...»:

Սա քաղվածք է «Խորհրդային գրականություն» հանդեսի  
այս տարվա համարներից մեկում Թալինի մասին գրված  
«Կածանի ճամփորդները» ակնարկից:

Իրոք, այդպես է: Ու հաճախ ընկերս հարցնում է.

— Կրիայի մեջք է Թալինը, մարդիկ ինչպե՞ս են ապ-  
րում: Ոչ կարգին հող կա, ոչ ջուր...

Իսկ ես գիտեմ, թե ինչպես են ապրում: Ապրում ու եր-  
գում են «Մշեցու օրորոցայինը»:

Քարը փշրում են, դարձնում են հող, քարերի միջից  
հող են ջոկում, ցանում են կարմրահատ, հնձում բոցեղեն  
ցորեն, արորն ու մանգաղը գցում են մի կողմ, ցանք ու  
հունձ անում տրակտորով, կոմբայնով, իսկ երբ դադրած  
տուն են դառնում, հավաքվում զրուցատեղում. Վերին ու  
Ներքին սասնաշենցիները՝ իրենց, դավթաշենցին՝ իր, աշ-  
նակցին՝ իր, կաքավաձորցին՝ իր... նույն լուրն են առնում.

Մեր էրգիր երկրաշարժ է էղե...

Հսում են ու լռում:

Ձոր ու կիրճում մոլորված մի աղբյուր փաթաթում են  
հայացքը, ոլորում սար ու ձորով, քաշում, հասցնում են  
գյուղի կենտրոն ու կնքում հին ու ծանոթ անուններով:

Ճեղքում են Ախուրյան գետի ժայռեղեն ափը, թունել ու  
ջրանցք բացում, ջուրը բերում, կանգնեցնում են անապատի  
գլխին, հետո Ախուրյանի պղտոր ալիքները փաթաթում են  
իրենց ոտքերին՝ պտտում-տանում են դռերով, մի հորի-  
զոն, երկու, երեք... Ու որտեղ հասնում է ջուրը, այնտեղ  
անապատի վրա հիմք են փորում նսր շեների: Կառուցում  
են, անուն տալիս, մեկին՝ Արագած, մեկին՝ Արտենի, Քա-  
րակերտ, Դալարիկ: Ու որտեղ հասցնում են ջուրը, այն-  
տեղ, անապատում բացում են ակսս. արևերես են հանում  
փշարմատ, շեղջ-շեղջ քարեր և կավահողում դնում ծիրանի  
ծառ ու դեղձենի, որթատունկ ու խնձորենի: Նրանք հորի-



դոն-հորիդոն են շափում հիմնած այգիները, իսկ ինչ-որ տեղ թիվ է գրվում՝ 5.500 հեկտար: Հետո անապատից քամած քաղցրութիւնը դարձնում գինի, խմում են անգույն թասերով:

Ձեռք են զարկում սարերին և հանում խարամ. պատրաստում սալիկներ՝ պատ ու տանիքի համար: Ձեռք են զարկում սարերին և հանում պեռլիտ, ուղարկում Մոսկվա, Լենինգրադ... Իտալիա ու ցափում են, որ լեռները խոնարհվում են, փուլ են գալիս:

Հինը քանդում են, շինում են նոր տուն՝ երկհարկանի, լայն դուռ ու լուսամուտով, ճերմակ տանիքով, քաղաքատիպ: Պրկում են թև ու բազուկ, թափում արդար քրտինք, մի ամիս, երկու, մի տարի, երկու, կանգնեցնում են տունը, վերջին մեխը խփում: Եվ նոր տան «բացման» լուսավոր երեկոյին խմբովի երգում են «Մշեցու օրորոցայինը»:

Այսպես է՝ ապրում...



«...Երկու ամիս առաջ մահացավ Նհո պապը, Սասնա Ճախրկան գյուղում ծնված վերջին մարդը, արևի տակ ապրող վերջին ճախրկանցին: Է հե՛յ, խաբրիկ առեք Ճախրկանի սար ու ձորեր, Նհոն շկա: Վերին թաղի ընկուզենի, թե կաս՝ դողա, էս գիշեր մինչև վերջին տերևը լաց եղի. Նհոն շկա...»:

Նույնպես քաղվածք՝ նույն ակնարկից:

Հա, այդպես է. Թալինից հերթով «գնում են» էրգրում ծնված, հետները դառն հուշ ու անուշ լեզու բերած երկրացիները, որոնց աչքերի հայելում քանդակված կա Միփան ու Մովասար, Անդոք ու Սևսար... Գնում են վերջին մոհիկանի պես: Մեկը անժառանգ է գնում (հազար ու մի պատճառով) և մի տոհմ պոկվում է հողից, դառնում ծուխ ու ամպ լեռների վրա: Մեկը թողնում է և տուն, և ժառանգ, և գծմծված քարտեզ՝ պապենական տան ու գյուղի ճամփի: Որդին հոր «գնալու» լուրն առնում է դաշտում կամ գործարանում, համալսարանի պայծառ լսարանում նստած, կամ... Զգիտեմ որտեղ:

Գնում են սուս ու փուս, աշխարհն ու կածանները որդի-  
ներին թողած և վերջին խոսք ու խնդրանքով.

— Իմ գերեզմանին «Մշեցու օրորոցային» երդեք:

### ՔԱՐԱԿԵՐՏ

- Ուրեմն քեռի Լեոնը չկա:
- Ավանային խորհրդի նախագահ Զարզանդ Հախոյանը աչք  
ու հայացքով կրկնում է՝ «չկա»:
- Հին երկաթուղայիններից ո՞վ է մնացել:
- Մխամատյան նայել պետք չէ. գիտե.
- Բաթոն Հարթենյանը: Իսկ Լեոն քեռուն հիշո՞ւմ ես:
- Հիշում եմ:



...Երեք տարի առաջ էր: Քեռի Լեոնը պառկած էր, կսղ-  
թին անթացուպերը:

«Անապատը մի ոտքս կերավ,— ասաց, հայացքով  
ցույց տվեց անթացուպերը, ժպտաց: Համառ ու տոկուն  
մարդու ժպիտ էր, որի մեջ նաև քմծիծաղ կար:— Ղարա-  
քուտունը մինչև Կարմրաշեն դարձավ, Կարմրաշենը մինչև  
Քարակերտ դարձավ, մինչև ջուրն եկավ, մինչև դուք եկաք,  
անապատը մի ոտքս կերավ»,— կրկնեց:

...Եղել է մի ըմբոստ երիտասարդ՝ Լեոն Մանուկյան:

1903 թվականին դեմ է դուրս եկել տնատեր-հողատե-  
րերի, գլուխն առել-հեռացել է: Վերին Քալինից իջել է Ներ-  
քին Քալին, դուրս եկել, ոտատակի ճանապարհը կտրվել է:  
Դենը՝ սուր աչքի մի հորիզոն՝ կրծքին պեպենոտ քարերը  
սեղմած սար ու լեռ ասես կա՛, ծուռվիզ ու ճաքած շուրթ  
ձոր ու ձորակ կա՛, սարուձորերի արանքներում սողացող  
անապատ ասես՝ կա... Ուրի՞շ... մնացածը՝ ծունկ դարկած  
ծալ-ծալ մշուշ: Ուրեմն Ներքին Քալինից գուրս է եկել թե  
չէ, ճանապարհը վերջացել է: Դենը... էլ ո՞ւր է գնում, էլ  
աշխարհ չկա: Չկա՞...

«Կա՛,— մտածել է,— աշխարհը մեծ է, աշխարհի անար-

դարությունն էլ աշխարհի շափ մեծ է՝ ամեն քայլի վրա կա, էս մշուշի պես ամեն պուճախ հասել է»:

Թե այդպես է, ետ դառնալ պետք է, էլ ո՞ւր է գնում... Չէ՛, հերն էլ անիծած, հեռանալ... և ներքին Թալինից առանց ճամփի քայլել է քսան վերստ, հասել Ղարաբուռուն:

«Ինձանով էդ անտեր տեղը ունեցավ հինգ թե վեց շունչ»։ Եղել է տոկուն մի երիտասարդ: Ուս ու թիկունքով երկաթ ու փայտ է կրել, Ղարաբուռունում կառուցել երկաթգիծ, որ մի օր դնացք գա, որ մի օր գնացք նստի, գնա՛, հեռանա՛, գուրս գա աշխարհից:

Երկաթգիծը կառուցել է:

Կայարանի սեքար շենքը կառուցել է:

Նիկոլ թագավորի զինվորների համար՝ կացարան ու աշտարակ-պահակակետ:

Մի հուլիկ էլ իր համար է կառուցել: Ու սպասել...

Եկել են Նիկոլ թագավորի 13 հեծյալները: Եկել է Նիկոլ թագավորի գնացքը: Եվ զինվոր ու գնացքի հետ հեռու, հեռվի հորիզոններում ապրող մարդկանց տրտունջներն են եկել: «Չէ՛, աշխարհի անարդարությունը աշխարհի շափ մեծ է, ամեն քայլի վրա կա, ամեն պուճախ հասել է»։ էլ ո՞ւր գնա...

Լիներ մի կտոր հո՛ղ, լիներ մի բարակ առու, տնակ պատրաստեր հող ու առվի գլխին, իր վարուցանքն աներ, ապրեր՝ մազութոտ ու խեղդուկ երկաթգծից էլ հեռու, կայարանի սե շենքից էլ, հեռու՝ աշտարակի վրա կանգնած զինվորի անտեզի լրջությունից:

Եղել է գժգոհ մի երկաթուղային: Տաբատի վրա հագել է մի ուրիշը, շուկուշոր փաթաթել մինչև ծնկները, որ անապատից գույն ու թույն առած օձերը շխայթեն, կոպալ է առել և գուրս եկել փոշեպատ իր տնակից: Բռնել է ուղղություն՝ հյուսիս, գնացե՛լ, գնացել է, կոտրված ետ եկել: Հետո քայլել է հարավ: Մի օր՝ արևագալի կողմ: Մի օր՝ արևմտոցի: Օրերով ոտատակ է տվել անապատը՝ միշտ հույսով, հա՛ հույսով, թե ջուր կգտնի:

«Չկա, համոզվիր էլի, չկա՛, քեզանից առաջ որոնող չի՞ եղել...», Բայց ինչո՞ւ չկա, երբ ինքն այդքան շատ է ուզում: Ու ատամները սեղմել է, շարությամբ նայել անապատի

օձասառը աչքերին: Հետո էլ կանգնել է աշտարակի կողքին, պահակ զինվորին ձայն տվել.

— Վլաստ, էդ ի՞նչն ես հսկում:

Պահակախմբի 13 զինվորներին էլ վլաստ է ասել:

Ծղել է երազկոտ մի երիտասարդ (ճարահատ մարդիկ ավելի շատ են երազում), մեկնվել է թախտին, պատուհանից հայացքը հանել է դուրս և հենց ճեղք-պատուհանի տակ իր ու անապատի փուշ հայացքը հանդիպել են: Եվ հենց ճեղք-պատուհանի տակ երազները ծածկվել են, ու հայացքը փախցրել, դրսից ներս է բերել, ծրարել կոպերի տակ, գոց աչքերով կշռել աշխարհի շարն ու բարին: Ամեն գիշեր կշռել է քուն ու արթուն, կշռել և կանգնել այն մտքին, որ բարին՝ բացակա առուն ու ջուրն են, շարը՝ հենց տնակի շեմից սկսվող անապատը: Որ բարին կա միայն իր միտք ու երազների մեջ, շարը...

— Հավա՛ր... ա՛յ, հավա՛ր...

Անապատում խեղդվել է գուլժ-աղմուկը. «հավա՛ր...», — և քուրդ Սուլեյմանի տղան կանգնել է դեմը.

— Քիրվա՛, — լալաձայն ասել է Սուլեյմանի լամուկը, — իմ հոր սպանեցին... մեր ոսկեք տարան...

Սուլեյմանը իր սիրած Թիֆլիս քաղաքում ոչխարները տվել՝ առել է ոսկի, դարձել՝ քարերի մեջ կորած իր տան ճամփեն բռնել և...

— Սպանեցի՛ն իմ հո՛ր...

— Որտե՞ղ սպանեցին:

— Էնտե՛ղ, — ձեռքը մեկնել է Սուլեյմանի տղան, — Արազն էս կողմ անցան սպանեցին իմ հո՛ր:

Եվ լաց է լացել գլուխն ազատած տղան՝ անճարի հույսով նայել աշտարակին կանգնած զինվորին:

— Մեր ոսկեք տարա՛ն...

— Վլա՛ստ, — գոռացել է երկաթուղային Լևոնը, — աչքերիդ առաջ մարդ են սպանում, էլ պահակությունդ ինչի՞ ո է:

— Վա՛յ վլա՛ստ, վլաստ, — քծիծաղ է տվել Նիկոլ թագավորի երկաթուղայինը, Սուլեյմանի տղի թևից բռնել, տարել իր տնակը:

Ուրեմն, քեռի Լևոնը...

Դառնանք օղորձի տանք քեռի Լևոնին:

Զրույցը հին երկաթուղային Հարթենյան Բատոնի հետ է:

— Մերն անցավ, բալա՛մ,— ասում է: Այդ «մերի» մեջ քեռի Լևոնն էլ կա, Բեյբուլթն էլ, և ինքը գիտե, թե էլի ովքեր:— Առաջին անգամ երբ լսեցինք, որ Ղարաբուռունի դռերի համար ջուր պիտի բերեն, Լևոնը լաց եղավ:

Քեռի Բատոնը Կուլյայի բուֆետից նոր է դուրս եկել. մի քիչ խմած է, թուլացել է մի քիչ և քիչ է մնում ինքն էլ լաց լինի:

— Ես ու Լևոնը ջրի համար ինչ երազ ասես երազել էինք, բայց... Բայց մտքներովս չէր անցել, է՛, Ախուրյան գետից ջուր բերել հասցնել Ղարաբուռուն: Թալինի ջրանցքի շինարարությունը որ սկսեցին...

Շեղվել ու խոսում է այնպիսի բաների մասին, որոնք ինձ լավ են հայտնի:

— Բեյբուլթ, ջրանցքի շինարարությունը ե՞րբ սկսեցին, պատերազմից առաջ չէ՞ր... Հա՛, էլի: Հիտլերի վիզը կոտրվի, թողներ հիմա էստեղ տասնհինգ-քսան տարվա այգի կար: Ուրեմն, պատերազմից առաջ...

— էդ գիտեմ, քեռի՛ Բատոն, ես ավանի շինությունների մասին եմ հարցնում:

— Հա՛... Բեյբուլթ, էն արթիկցի Աշոտի տունը, որ շինեցին, 52 թիվը չէ՞ր... Դրոն լավ կիմանա:

— Դրո՛, շինությունները եր՞բ սկսեցիք:

— Ինչո՞ւ:

— էս ախպորս տղին պետք է:

— էդ ախպորգ տղեն սկզբից թող հարցնի հալա ու քեֆըս, հետո... Ուրեմն, անձից շատ եմ՝ յոթ տղա, երեք աղջիկ: Հայկարամ, Վահրամ, չէ՛ Սեթո...,— ամեն անվան հետ մի մատը ծալում է, ստացվում է վեց:— Յա՛,— զարմանում է,— ո՞վ դուրս մնաց,— նորից է հաշվում:— Հա՛, Ֆերդիկը: Հետո աղջիկների անուններն է ծալում մատների վրա:

— Մարգուշը ամուսնացած է, Հովհաննեսին առավ,— ասում է:

— Հովհաննեսն ո՞վ է,— հետաքրքրվում է քեռի Բատոնը: Դե, որտեղի՞ց իմանա, թե Հովհաննեսն ով է. յոթանասուն-յոթանասունհինգ բնակատեղից մարդ ու ընտանիք

է վերարնակեցվել Քարակերտ շենում, հո 1903 թվականի հինգ-վեց շնչանոց Ղարաբուռունը չէ: Երեկ հայրենադարձ Սարգիսը (քսան տարի առաջ եկածներին մինչև հիմա հայրենադարձ ենք ասում, երեկվա եկածներին էլ՝ հայրենադարձ: Սարգիսը Սիրիայից Քարակերտ է եկել 65-ին) դուռը թակեց, մտավ ավանային խորհուրդ, հանեց գլխարկը, ժպտաց:

— Ընկեր Հախոյան, աղջիկ՝ մը ունեցա:

Եվ Սարգսի աղջիկ Մարինեն եղավ ավանի 3087-րդ բնակիչը:

— Հովհաննեսն ո՞վ է,— հետաքրքրվում է քեռի Բատոնը:

Որմնադիր Դրոն հոնքերը բերում է իրար, քիչ լուում, հետո:

— Հայրենադարձ է, ազդանունը չգիտեմ:

Գլխավոր դյուղատնտես Հովհաննես Վարդանյանը, բրիգադավարներ Աշոտը, Կլիմենտը, Շահենը, Ժորան, հաշվապահը, գանձապահը թող իմանան իր փեսա Հովհաննեսի ազգանունը, ինքը քարտաշ Դրոն է: Հովհաննես՝ պրծավդնաց:

— Ուրեմն, անձից շատ ես, վարպե՛տ Դրո:

— Էդպես է, տասը զավակ ունեմ, շինածս տներից՝ երկու բնակարանոց մի տուն, երկու տնամերձ՝ մեկը մշակել, դարձրել եմ այգի, մեկը թողել եմ, որ Ֆիրդուսիս մշակի, թող իմանա, թե ղըռ մշակելը ինչ բան է, ես մեռա, հերիք է:

— Վարպե՛տ Դրո, բանավանի շինությունների մասին չասիր:

— Հա՛,— ուսերին գցած բամբակյա բաճկոնը շտկում է,— ասեմ, ուզիղ 15 տարի առաջ հիմքը դրեցինք: Ես էի, վարպետ Գրիգորն էր, Հովսեփն էր, մեր բրիգադավարը աշակցի Զաքար Ղազարյանն էր, տասնապետ Ղազար Մելքոնյանն էր, Վաչագանն էր, Շողիկը, մեր Հրանտի եղբոր աղջիկ էնզելը... Է՛լ ասեմ, կային, էլի: Հիմք էր, փորեցինք, քար էր, դրեցինք քարի վրա, եղավ տուն: Արթիկցի Աշոտը գերդաստանով եկավ, նստեց, ասինք՝ բարի՛ վայելում: Երկու տարում 150 տուն շինեցինք:

— Յա,— զարմանում է Բեյբուսը:

— Բա՛,— նույն տոնով պատասխանում է վարպետ Դրոն,— Դու Ղարաբուռունի հին բնակիչ կայարանապետ Սիմոն Մկոյանի աջ թևը, շքանշանակիր երկաթուղային ու բանից անտեղյակ:

— Հիմա քանի՞ շենք կա ավանում, վարպետ Դրո:

— Շինելը մեզնից, հաշվելը ձեզնից... Հիմա ես քարտաշ Դրոն չե՛մ, մեռա, էլ հերիք է...



Այս ծիրանենին...

Քարակերտի աչք-պատուհանները դեռ շեն բացվել, սա ծաղկել է: Երկնքից մի սավան ամպ է իջել ու փափո՛ւկ-փափուկ նստել սաղարթին: Ի՛նչ անհամբեր են ծիրանենիները, ազնի՛վ խոսք, հայի բնավորություն ունեն: Ահա, Հովհաննես Չարխիֆալաքյանը քայլում է առվի ափով, ջուրը ոտքերին փաթաթած քաշո՛ւմ-տանում է և հանկարծ նկատում, որ ջրից առաջ է անցել: Առուն ծարավ է, աշունքվանից ջուր չի տեսել: Չէ՛, հազա՛ր-հազար տարի ջուր չի տեսել: Առվի մեջ աշնան շորացած տերևներ կան, սեզ կա, և գոլ է կանգնում, դանդաղ է գնում ջուրը:

— Հովհաննես,— սովխողի դիրեկտոր Գրիշա Հովհաննիսյանը մոտենում, բահը առնում ջրվորի ձեռքից,— ա՛յ տղա, էս սեզերը մի կողմ գցիր, որ ջուրը գնա, էսպես ե՛րբ կհասնի տեղ:— Բզբզում է, ապա բացատրում,— առուն ծարավ է, մինչև չկշտանա, ջուր բաց չի թողնի:— Եվ աչքապոչերից պոկվող կնճիռները դառնում են ժպիտ-ճառագայթներ: Հետաքրքիր դեմք ունի Գրիշա Հովհաննիսյանը, ժպիտը քթածայրերից միշտ կախ է, զայրացած պահին էլ, շփտես ինչպես, ժպիտի մանվածքը չի կտրվում:

Համր հանդարտությամբ ծաղկաթերթեր են պոկվում ծիրանենուց, իջնում վար, և մի գիրկ հողի վրա հազար ճերմակ կնիք կա:

Ինը տարի առաջ, հազա՛ր-հազար տարով որտեղ է եղել ճերմակսավան այս սաղարթը: Երկնքում չվող ա՛մպ է եղել: Ինը տարի առաջ, հազար-հազար տարով որտե՞ղ է եղել ծաղկաթերթերի այս ճերմակ կաթոցը: Եղել է ձմեռնա-



մուտի եղյամ: Ինը տարի առաջ, հազար-հազար տարով  
 ո՞ւր է եղել այս ծիրանի ծառը: Չի՞ եղել:

Եղել է ու՛ հազար-հազար տարով բանտարկված: Է՛,  
 երբ, չգիտեմ մեր որտեղի բուռ հողը մի նոր ծիլ է տվել,  
 և այդ ծիլը եղել է ծիրանի ծառ: Այս չէ, է՛, այն ծիրանե-  
 նին, որ հիմա նորից մի բուռ հող է: Հետո՞ էլի են եկել,  
 էլի գնացել, իսկ այս մեկը... Իսկ այս ծիրանենին հազար-  
 հազար տարի հետո պիտի գար ու՛ կուվով: Այս մեկը եղել  
 է մի մսխալ հող, խորընկա մի ծիլ ու դեռ մի քար էլ այդ  
 հող ու ծիլի վրա:

Եվ այստեղ, այս ծիրանենու համար եղել է կոխվ՛ ճա-  
 կատ-ճակատի են կանգնել մարդն ու անապատը:

Քարակերտի երեխաները հավաքել են մարտադաշտում  
 շաղ եկած «դատարկ պարկուճները», խաղ են անում:

— Ա՛յ օղուլ, ընչի՞ վատություն կենես, ել...

Եվ դպրոցի ասֆալտած բակում մեկը ծնկում է պայու-  
 սակի վրա: Մյուսը մեծավարի առաջ է գալիս:

— Լաո՛, գործ խելքով կանին, քու թևութիկունք մի  
 ջարդե, էդ մի քարով գործ պրծներ, ըսենք հա՛, քու աչք  
 ինչքան կկտրե՛ քար է: Քլունգով չի էլնա՛ լինգ կա, շեղավ՛  
 անցի. տրակտոր կապել-քաշել կա՛, պայթեցնել կա՛...  
 Լաո՛...

— Ադա՛, էս քարի տակ ջանավար կա, օձ ա՛, օ՛ձ...

Մեծավարի տնազ անողը լռում է, երեխաները խառնվում  
 են իրար, աղմկում, ծնվում է պատրանքը և օձ սպանելու  
 կիրք, ապա բարձր մի ձայն լուպազություն է անում աղմու-  
 կի վրա.

— Լավ աշե, օսկի քյամար կեղնի...

Հիմա Քարակերտի երեխաները տնազ-խաղ են անում  
 մարտադաշտից հավաքած «դատարկ պարկուճներով»:

— Ախպար, ա կոս մը կբացեն, ձոր մը քար կելնի,  
 ասանկ չի ըլլա:

Այս ծիրանենին...

Ծաղկաթերթեր են պոկվում, համր հանդարտությամբ  
 իջնում վար: Երբեմն էլ գետին շեն հասնում՝ ձուլվում են  
 Գրիշա Հովհաննիսյանի ճերմակ քունքերին: Եվ դողդոջ մի  
 պսակաթերթի հետ հերքվում է ինչ-որ հավերժություն՝ այս-

տեղ անապատ ո՛չ եղել է, ո՛չ կա, այս քունքերին ո՛չ ան մազեր են եղել, ո՛չ կան:

Եվ դողդոջ մի պսակաթերթի հետ աշխարհը լցվում է լուռ խաղաղությամբ, իսկ կողքի առուն դա էլի է հերքում, հեռո՛ւ-հեռվից բերում է երեխաների դժժոցը, որը պարս է բռնում ականջներիս մեջ, ապա գունդ ու կծիկ նստում իր թառին:

«Այստեղ, այս ծիրանենու համար կռիվ է եղել...»:

Բանտարկված, ա՛յ, էն ծիրանենու համար կռիվ է եղել: Ա՛յ, էն...

Շարք ու կարգով գնում են ծառերը, մազլցում, ելնում են բլրակն ի վեր, գագաթին դառնում ամպերի աղավնաթև չու, հետո սահում-իջնում են ձորակը: Իսկ ձորակը պոնկես-սլոունկ լցված է քար ու քարաքեկորներով՝ ո՛չ երկնքից են իջել, ո՛չ ջուրն է բերել, այնտեղ բլրալանջին կռիվ է եղել...

— Այստեղից սկսվում են խաղողի այգիները, — ասում է սովխոզի դիրեկտորը:

Շողիկը էտ է անում, մկրատը քաշում է թե չէ, բացվում են վազի աչքերը: Որթատունկ չէ, Հևոն քեռու կուլ տված լացն է:

— Բա քեզ թիվ-բան պետք չէ՞, — իր ժպիտն է մանում Գրիշա Հովհաննիսյանը:

— Չէ, — մտքումս ասում ու շարունակում եմ, — այս որթատունկի թաց աչքերը, ի՞նչ իմանաս, անեծքը շուրթերին այստեղով անցած-գնացած ո՞ր մարդու աչքերն են:

— Անցած տարի մի թղթակից էր եկել, ասում էր՝ ընկեր Հովհաննիսյան, քանի՞ կիլոմետր առու ունեք: Դե արի ու իմացիր: Սկիզբը հաշվեցի Ախուրյան գետից, շհամաձայնեց, էն արագահոսից հաշվեցի, շհամաձայնեց...

Հորիզոնը երկնքի հետ կապող լեռան գագաթից պոկվել-իջնում է ճերմակաբաշ ջրանցքը, որին քարակերտցիները արագահոս են անվանում: Հայացքս ջրակաթերի հետ, ցայում է երկնքի գեմքը, իսկ քունք-երակներս խփում են:

«Այստեղ կռիվ է եղել...»:

— Գիտե՞ս ինչքան խաղողի այգի ունենք, 639 հեկտար, 273 էլ՝ պտուղ: Մի քանի օր հետո գաս, ինչքան աչքդ կըտ-

րի՝ կանաչ է: Չէ՛, աշնանն արի, մեր խաղող ու մրգի համն ու տամբ ոչ մի տեղ չկա:

Քարակերտցիներին՝ է թվում, թե՛ այդպես է: Երևի, այդպես է. ախր այս հողը՝ կրծքի քարծանրութունը հեռացնողի, կրծքից փուշ հանողի հա՛ սպասել է: Սպասել է, բայց ամեն դարնան ելած ծիլը դարձել է փուշ ու ծակել դեմքը: Լեռն քեռին այնքան չի տուժել, որքան այս հողը: Լեռն քեռին այնպես չի սպասել այս առվին, այս ծառ ու վազին, որքան այս հողը:



Հեռո՛ւ սարերի վրա քերծվում է արևը, ապա կես է լինում, հետո հեռո՛ւ սարերի վրա մնում է արևի հալավ բարդոցը: Չալոն կարմիր բարդոցին նկատում է կարմիր մի կատու, ծմլտկում-հաչում է, բլրաճեղքի ոլորապտույտից պոկված գնացքն է սուլում, և այդ երկար «ո՛ւո՛ւ-ն», և այդ Չալոյի իրիկնահաչք լռութունն են մաղում դադրած շենի վրա:

— Դամա,— եղունդաչափ կոկ մի քար Բեյբութը դնում է վերջին քառակուսու մեջ, քթի տակ ժպտում:

— էդ ե՛րբ դուրս եկար, շիմացա,— քեռի Բատոնը անակընկալի է գալիս:

էդուց-էլօր Քարակերտը կուլտուրայի պալատ կունենա: Այնտեղ ով ինչով ուզում է թող զբաղվի, հին երկաթուղայիններ Բատոնի ու Բեյբութի «կուլտուրայի պալատը» մնացել է այստեղ, կայարանի մաշված աստիճանների վրա, այստեղ՝ աստիճանի սև քարի վրա Լեռնի ձեռքով փորված դամայի «դաշտի» քառակուսիների արանքում:

Հեռո՛ւ սարերի բարդոցին նստած հալավ կատուն Չալոյի հաչոցից կուշ է գալիս, ապա սահում-դնում է, բարդոցն էլ է այրվում, դառնում մի բուռ մոխիր, և մթնշաղը կապույտ վարագույրներ է կախում Քարակերտի պատուհանների: Արուսյակն իր տան արևն է վառում, բացում իրիկնահացի իր սեղանը, Վարդանուշը՝ իր... Գալուստ պապը աչք մոտեցնում է հացին, կնքում սուփրի արդարութունը... Հովսեփը իր հող ու հացից, իր կամք ու ձեռքով քամած դինով լի թասն է առնում և...

Աշխարհում այդ երեկո շփտեմ ուր ինչ էին անում, Քարակերտ շենը պատմում էր մի հի՛ն առասպել՝ «հաց ու գինու, տեր կենդանու» մասին:

...Գիշերը շեն է մտնում կատվաթաթ փափկությամբ, շենի ծանրացած կոպերը ճպճպում են, և քուն է մտնում դադրաշունչ Քարակերտը:

Աշխարհում այդ գիշեր ուր շփտեմ ինչ էին անում, Քարակերտը անուշ երազի մեջ էր.

«Արևը բարկ երկնքից իջել, լողանում է արագահոսի փրփուրների մեջ, շոգից ուշաթափված մի ծիրան թրմփում է կողքի առուն, ծանրացած վազը խոնարհվել է, այգեմիջյան փոշոտ ճամփեքին սսկվել են տաք ոտնահետքերը, և քաղցրությամբ լցված օդը բզզում է մեղվաճանձի պես...»

1967 թ.

## ԸՆԾԱՑԱԳԻՐ

Թալինում, շրջկենտրոնում, հանդիպում եմ ընկերոջս:

— Արի միասին Արագածի ոչխարաբուծական սովխոզ գնանք,— առաջարկում եմ:

— Ի՞նչ կա:

— Ինձ հանձնարարված է ակնարկ գրել Մնացականի մասին: (Հարկ չկար ավելի որոշակի ասել՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս, հովիվ Մնացական Առաքելյանի մասին):

— Քո խիղճը չմեռնի, Մնացականին նո՞ր պիտի ճանաչես, քսան անգամ տեսել ես:

— Այնուամենայնիվ: Ֆերմայի վարիչ դառնալուց հետո շեմ տեսել:

— էլի էն Մնացականն է: Փոխվե՞ց,— խուզարկու նայում է ինձ,— փոխվե՞լ է:

— Գնանք տեսնենք:

— Ցա... ասում ես՝ փոխվե՞լ է... Չէ, այ մարդ, մյուս օր տեսել եմ. շրջանային պլենումին իրար կողքի էինք նըստած, դուրս գալուց... Հա, սա քեզ կհետաքրքրի, լսիր, ուրեմն պլենումին Նիկոյանը բեմում էր նստած... Աշոտ Նիկոյանին գիտես:

— Արեգցի, Սոցիալիստական աշխատանքի հերոս կոմ-  
բայնավար:

— Հա... Պլենումից դուրս գալուց Մնացր մոտե-  
ց սվ Աշոտին,— Աշոտ, մեկ է ես քեզ կտպանեմ,— ինչո՞ւ,  
ա՛յ տղա,— եթե դու հերոս չըլնեիր, ինձ կհրավիրեին բեմ:

— Տեսնո՞ւմ ես, ֆերմայի վարիչ դառնալուց հետո փոխ-  
վել է:

— Յա... Չէ, ա՛յ մարդ, էլի նույն Մնացականն է... Հա-  
յաստանի 24-րդ համագումարին մի օր մնաց, երկրորդ օրը  
թույլատրություն խնդրեց թե՛ հոտի ծինը սկսվել է. ես գնամ:  
էլի էն Մնացն է: Յոթը տարի էլ անցնի, փոխվող չի:

— Ինչո՞ւ անպայման՝ յոթը:

— Հեքիաթային թիվ է՝ ասում եմ:

Մեկեն միտքս կառչում է «յոթից», և տեղն ու տեղը  
որոշում եմ.

— Արի զնանք Մնացականին մի հարց տանք— քո  
կյանքի նշանավոր օրերից յոթը...

...Մնացականը մտերիմ ժպտում է, մանավանդ ընկե-  
րոջս, նրան դիմում է ազգանունով, բայց խոսքը շարունա-  
կում է այնքան ազատ, որ՝ ազգանունով դիմելը թվում է  
ավելորդ:

— Լավ, Մնացական, քառասունհինգ-քառասունվեց տա-  
րի ապրել ես, դրանից յոթը օր չե՞ս կարող առանձնաց-  
նել,— համառում եմ:

— Ինչո՞ւ շոկեմ, բոլոր օրերն էլ իմն են:

— Բոլորն էլ նշանավո՞ր,— ընկերս ժպտում ու խուզար-  
կու նայում է:

— Բա ի՞նչ,— ծիծաղում է Մնացականը:— Դե լավ,  
էդքան որ ասում եք՝ մի քանի օր շոկեմ:

1

— 45-ի ձմռանը, մի օր փոթորիկը հոտս քշեց:

Ձնաբուքը քշում էր ոչխարի հոտը:

Ճերմակ հոտը փոթորիկի բերանն ընկած փետուր էր,  
քշվում էր անորոշ ուղղությամբ: Զահել հովիվը հարայ էր  
կանչում, բայց հենց շուրթերի վրա ծվատվում էր կանչը,  
և նա գլտորվում էր իր կորած կանչի ու քշվող հոտի ետևից:

Կովի տարվա ձմեռ էր. հոտը կիսաքաղց և, առավոտ-  
յան, երբ ոչխարները միմյանց դնչի մոտից խլխլում էին  
հարդը, լիզում մսուրներն ու կանգնում-մայում, հովիվները  
բացում էին փարախների դռները, հոտը քշում դուրս: Խիստ  
ձմեռ էր, ոչխարանոցի թիկունքի լեռնափեշերը ձյունապատ  
էին, բայց քարերի արանքներում բացումաց տեղ կար,  
ձյունաշերտից գլուխները ցցած փշեր, մասրենիներ: Ոչ-  
խարները թող կոծմոծեն քար ու փուշ, թող ձյուն ուտեն  
կշտանան... Հոտը գաշտ էին քշում:

Առավոտյան, երբ հոտը դուրս եկավ փարախից, օրը խա-  
ղաղ էր, միայն թե ցրտից թռել էր արևի գույնը և մշուշոտ  
երկնքում հազիվ էր նշմարվում տեղը: Ավագ հովիվ Գար-  
սոն հոտն ու իր օգնական Մնացականին ուղեկցեց մինչև  
լանջը ու ետ դառավ: Շները ցրտից կուշ էին եկել, կնձմրն-  
ձում էին, ոտքները կախ գցում, շները ուղեցան Գարսոյի  
հետքով ետ դառնալ, բայց ավագ հովիվը քշեց նրանց:

— Շուն շանորդիներ,— հայոյեց,— դուք որ շուն եք՝  
էլի շեք դիմանում, բա էն խեղճն ինչ անի,— նայեց օգնա-  
կանի կողմ: Մնացը դանդաղ քայլում էր լանջն ի վեր: Հեռ-  
վից, օգնականը՝ հրացանակիր, մինչև կոճերը իջնող զին-  
վորական շինելով օգնականը երևաց բարձրահասակ ու թիկ-  
նեղ. ավելի առնական և, չգիտես ինչու, Գարսոն մտածեց,  
թե Մնացականը չի մրսում: Երկրորդ տարին էր, որ միա-  
սին էին աշխատում, բայց ջահել օգնականից նա երբեք  
տրտունջ չէր լսել՝ ոչ հաց ու թացի պակասի համար, ոչ  
ցուրտ ու կրակի: Եվ եթե հիմա ինքը շասեր՝ դե ես գնացի,  
Մնացն ինքը կառաջարկեր,— Գարսո, դու գնա, կմրսես,  
հրացանը տուր ինձ, դու գնա: Որ մնացիր ի՞նչ: Կմրսես:

— Ումո՞ւղ...

Գարսոն օգնականին ձայն տալու ցանկություն ունեցավ,  
դարձավ կանչեց:

— Այ Ումուղ,— կրկնեց կանչը և զգաց, որ ասելիք  
չունի: Բայց օգնականը լանջից պատասխանեց, և ավագ  
հովիվը հարկ համարեց խորհուրդ տալ.

— Շներին մի բան տուր, խարիր, շներին խարի՛ր  
չփախենն գա՛ն... շներին խարի՛ր...

Օգնականը ձեռքով արեց, թե՛ հասկացա, ուսապարկից

հանեց թեփից պատրաստած մի բոբոն, կանչեց շներին, և ավագ հովիվը համարեց, թե տասժը, իրոք, կարևոր պատվեր էր և նորից կրկնեց.

— Շները շփախնեն գան, Ումուռ՛ւղ...

Առաջինը Ֆերմայի վարիչ Պասկո՞ն էր, ո՞վ էր, Մնացականին կնքեց՝ Ումուռ, բոլոր դործընկերները կրկնեցին և այնպես եղավ, որ նրա իսկական անունը հիշվեց դեպքիդ դեպք, ժողովներում, արտադրական խորհրդակցությունների ժամանակ, աշխատավարձի ու պաշտոնական ցուցակներում: Իսկ Մնացականը տեր էր իր նոր անվան, ոչ գանգատվում էր, ոչ բողոքում:

Արտենի լեռան ուսի ձյունածածկը քամին քշել էր, և սև բացատը քաշում տանում էր հոտը: Մնացականը հետեւեց հոտին, ուղղություն շտվեց, սոված անասուններ են, ուր ուզում են գնան, միայն թե ուտելու մի բան գտնեն: Իսկ հոտը լեռան ճոթ տված ուսով գնալով հեռանում էր փարախներից, գոմերն ու ավանը, որը մի քանի գորշ շինություն ուներ, արդեն շէին երևում: Հովիվը դա նկատեց այն ժամանակ, երբ շիկավուն ու ծեր գամփոը դունչը ցցեց մշուշապատ երկինքն ու երկար ոռնաց: Ջահել հովիվը գիտեր՝ շները միշտ շէ, որ իզուր, հենց այնպես են ոռնում: Նա ծեր գամփոի ոռնոցի մեջ տագնապ զգաց և մտածեց, թե՛ գայլի հոտ է առել: Ակամա նայեց դոմերի ու ավանի կողմ, բայց նրանք ծրարվել էին: Չմեռ է. հոտը ավանից հեռու քշելը միամտություն է. ուզեցավ շուռ տալ հոտի գլուխը, բայց ոչխարների եռանդուն խափշփոցը ետ պահեց նրան այդ մտքից: Եվ հետո գայլից հոտը փախցնելուց ճիշտը գայլի վրա կրակելն է: Հրացան ունի: Նույնիսկ նա ներքին վիրավորանք զգաց. պատերազմ է, իր պես ջահել տղաներ ճակատ-ճակատի կռվում են թշնամու դեմ, իսկ, ահա, իր մտքով անցնում է՝ հոտը գայլից փախցնել: Նա բարձրացավ մի ցից քարի, ուշադիր նայեց շուրջբոլորը և ցանկացավ, որ գայլ... գայլեր հայտնվեն, և ինքը բում... բում... բում... կրակի: Ջահել հովիվը ուզում էր կրակել՝ քիչ առաջ հայտնված ու մարած իր վախի վրա, ուզում էր կրակի այն դնդակը, որը պետք է կրակած լիներ ռազմաճակատում ու շկրակեց: Պարզապես շտացվեց:



Կոնիվ գնաց, երբ տասնվեց տարեկան էր և տասնյոթը շր-  
լորած ետ եկավ, առանց իսկ հրացան կրակելու, բայց...  
վիրավոր: Այդպես կարող էր վիրավորվել առանց բանակ  
գնալու էլ, իրենց գյուղի, Մանթաշի սարերում: Բանակում  
նոր հավաքագրված ձիերն էր պահում, վարժեցնում սանձ  
շտեսած մտրուկները: Իսկ ամպերի հետ թռչող մի մտրուկ  
տապալեց նրան: Ուսը ճմլվեց, ուղեղի ցնցում ստացավ.  
նա երկու ամիս պառկեց հոսպիտալում, հետո զորացրվեց,  
եկավ գյուղ, քշեց գյուղի գառները:

Հիմա նա բարձրացել էր մի ցից քարի, ուշադիր նա-  
յում էր շուրջբոլորը, նա ուզում էր հրացան կրակել, ար-  
ձակել կռվում շարձակած իր գնդակները. ծեր գամփոռ ոռ-  
նաց. երևի գայլի հոտ է առել, դե եթե գայլ է, թող երևա:  
Հետո նա զգաց, որ թիկնամեջքը ծակեց: Եվ այնքան շո-  
շափելի էր թիկունքից հասնող ցուրտը, որ նա ետ նայեց:  
Նայեց և շփոթված իրեն վար նետեց ցից քարից: Լեռան  
լայն շեղբով գետնատարած սողում էր ձնաբուբը: Մեկեն  
ու անսպասելի էր: Գոնե այդ կողմից նա փոթորիկի շէր  
սպասում: Այդ կողմերում, որքան Մնացը նկատել էր, արև-  
մուտքից քամիներ քիչ են լինում, լինում էր գարնանը,  
փչում էր տաք քամի, գալիս, ձյան տակ ջուր էր գցում: Իսկ  
հիմա ձմռան կես էր: Զիմացավ ինչու, հայացքով որոնեց  
շանը և նրան, մյուս երկու ջահել շների հետ գտավ հոտի  
մեջ, ոչխարներին խառնված, պոչերը քաշած ոտքների  
արանքում: Ուժեղ փոթորիկ է լինելու. հոտի մեջ թաքնված  
շները հուշեցին նրան: Իսկ լեռան շեղբին ձյան գետնատա-  
րած ու զիզզազ հոսքը մեծանում էր: Զյունը սողում էր  
օձի պես ոլոր-մոլոր, վտառ առ վտառ, թռչում քարերի գըլ-  
խով, լանջն ի վար: Եվ ամենավատն այն էր, որ քամին  
փչում էր ավանի, գոմերի կողմից: Հովիվը լսեց նաև հե-  
ռու սարերի, գոմերից այն կողմի խորընկա ձորի գոշգոշունը:  
Նրան թվաց, որ սար ու ձորի ձայնը ինքը առավոտյան լսեց,  
երբ նոր էր լեռը բարձրանում՝ լսեց: Բայց ինչո՞ւ այն ժա-  
մանակ Գարսոն չասաց, թե բուք է սպասվում: Զէ, նոր  
սկսվեց փոթորիկը, ձորերը նոր են գոռում: Եվ հենց վատն  
էլ այն է, որ փոթորիկը հանկարծակի սկսվեց: Մեկեն  
սկսվող փոթորիկները սաստիկ են լինում, կարող են ավե-

րածություններ անել, էլեկտրասյուններ շուռ տալ, մարգիկ ու անասուններ քշել:

— Հուռիի... հուռի, հոռ... հոլե, հոլե, հոլլե՛ե՛, — նա տազնապով թափահարում էր մահակը, շուռ էր տալիս հոտի գլուխը, իսկ հոտը չէր ուզում ենթարկվել: Ոչխարները սկզբում լսեցին՝ շուռ եկան, բայց փոթորիկ պոռթկեց դեմքերին, ձյունախառն քամին մտավ պնշները՝ սկսեցին փոռըտալ, քոմվեցին, խտացան, գլուխները թաքցրեցին իրար թիկունքի, և հրաժարվեցին շարժվել:

Հովիվը աչ ու ձախ թափահարում էր մահակը, հարվածում էր, նա հանեց շինելը, ուզեցավ դրանով քշել, բայց փոթորիկը փախցնում էր շինելը, ֆոֆոացնում... Քամին արդեն գետնատարած չէ: Մի բան պետք էր անել: Կառչեց երկու ոչխարից. քաշեց՝ ոչխար են. մեկ-երկուսը եթե շարժվեն, հոտը ճոթ կտա ետևներից... Բայց ոչխարները պոկվեցին նրա ձեռքից և գլխաքարը վազեցին փոթորիկի ուղղությամբ: Լույս չէր հոտը կարծես դրան էր սպասում՝ ճոթ տվեց... Հովիվը շտապեց կանգնեցնել ոչխարների անիմաստ վազքը, բայց ուշ էր արդեն: Ոչխարները փախչում էին փոթորիկից: Ճերմակ-ճերմակ ոչխարների հոտը սկզբում պինդ շղթա էր կազմել, թվում էր, թե ճերմակ քողերի զիզզազ ցանկապատ է, հիմն ի հետ տեղաշարժվել, գնում է:

Փոթորիկը քշում էր հոտը:

Հոտի բոլոր ոչխարները ճերմակ էին: Բոլորը ճերմակ, ճերմակ:

Հենց այդ ճերմակ հոտն էր, որ Փոքր Մանթաշ գյուղի գառնարած Մնացական Առաքելյանին ձգեց-բերեց Թալին, Արագածի ոչխարարուծական սովխոզը: Գառնարած աղայ ոռմանտիկա...

Արագածի ոչխարարուծական սովխոզի ամառանոցը Մանթաշի սարերին մոտիկ է: Առաջին անգամ, երբ նա տեսավ այդ ճերմակ հոտը, պատերազմից առաջ էր: Այն ժամանակ տասներեք-տասնչորս տարեկան էր և գյուղացի տղայի միամտությամբ զարմացավ «չոկածուրիկ» հոտի ճերմակության համար: Եվ հենց այդ ամռանը նա ծանոթացավ ճերմակ հոտի հովվի հետ: Գարսոն էր: Հոր ծխախոտը գողանում, տանում էր հովվին, հովիվ Գարսոն մահակն ա

ճերմակ հոտը հանձնում էր տղային, մեկնվում մի քարի մոտ, հաճույքով ծխում Ուշանի դեղին թուփունից պատ-  
րաստած ջղարան, հայացքով հետևում հոտին և քթի տակ  
ժպտում, որ տղան հոտը քշելու համար հոր ծխախոտը  
գողանում-բերում է:

Հետո, բանակում, Մնացականը շատ անգամ էր հիշում  
Գարսոյին ու նրա ճերմակ հոտը՝ հիշում էր որպես ցանկալի  
խաղաղություն և երբ, մի երեկո, խումբ զինվորներով, բո-  
լորը ջահել տղերք, զրուցում էին, երազում կիսատ թողած  
իրենց բանուգործը, նա, բոլորի համար անսպասելի, ասաց,  
կովից հետո ինքը ճերմակ հոտի հովիվ է դառնալու: Տղանե-  
րը ծիծաղեցին. հովիվ դառնալը ցանկություն է, բայց ինչո՞ւ  
անպայման՝ ճերմակ հոտի: Մնացը փորձեց բացատրել, թե  
էսպես, էսպես՝ ողջ հոտը ճերմակ է, էդ ճերմակ ոչխարները  
ճերմակ գառներ են ծնում... Բացատրեց, բայց զգաց այն չի  
ասում, ինչ զգում է, և զինվորները նորից ծիծաղեցին:

Հետո զորացրվեց, այդ տարի դարձավ գյուղի գառնա-  
րածը, իսկ աշնանը հորն ասաց, որ ինքը գնում է Արա-  
գած սովխոզ հովվություն անելու: Հայրը շքարմացավ, նա  
որդուց հա լսել էր այդ ճերմակ հոտի և ավագ հովիվ Գար-  
սոյի մասին, որին որպես օգնական Արթիկի շրջանից Թա-  
լինի շրջան էր տեղափոխվելու որդին:

— Հովվություն ես ուզում, քո գյուղում հովիվ մնա, էլ  
ո՞ւր ես շրջանից շրջան հասնում,— վիրավորված առար-  
կեց հայրը:

Բայց Մնացականը իր որոշման ու խոսքի տերն էր: Նա  
Գարսոյին խոսք էր տվել, որ աշնանը օգնական է գալու:

Եվ գնաց:

Հիմա փոթորիկը քշում-տանում էր ճերմակ հոտը: Ար-  
տենի սարից ճոթ տված լեռնաշարի լայն շեղքով քշվում  
էր՝ արդեն ցաքուցրիվ: Մնացականը վազում էր փոթորիկից  
փախչող հոտի հտեից, գլորվում, վեր կենում, վազում էր  
ոչխարների հտեից, մի անգամ, երբ սոթ տվեց, և քամին  
գլորեց նրան, տեղը այնքան հարմար թվաց՝ տաք, ճնաբու-  
քից ծրարուն, որ նա դանդաղեց վեր կենալ, բայց զայրա-  
ցավ թուլության համար, հայհոյեց ոչխարներին խառնված,  
վնգստացող շներին և վազեց ավելի շնչակտուր: Թիկունքն

ու ծոծրակը ծեփվել էր ձյունով, ձնաբուքը պատահողմի պես պարուրել էր նրան, շուրջըրըրը, ոտքերի մոտ, գլխին գալարվում էր ձնաբուքը, աչքերը ծեփվում էին, և հայացքի դիմաց գունափոխվում, կտրակցվում էր ճերմակ աշխարհը: Նա արդեն օգնության չէր կանչում: Անօգուտ էր: Այդ մասին նույնիսկ չէր մտածում: Կար միայն մի բան. փոթորիկը թշում է հոտը, փոթորիկը կարող է իրեն պոկել հոտից, թշել-տանել ուրիշ ուղղությամբ... Միայն թե հայացքի գեմից չկորչի հոտը... Չկորչի հոտը:

Մանթաշից Արագած գալու օրը, նույն երեկոյան, նրան գործի ընդունեցին: Գարսան արդեն սովխողի գիրեկտորին առել էր մանթաշի գառնարած շահելի մասին: Մի փոքրիկ սենյակ տվեցին ընդհանուր շենքում և հաջորդ օրն իսկ նա ճերմակ հոտի հովիվն էր: Մի շաբաթ հետո հայտնվեց հայրը: Ինքնատիրությունը թույլ չտվեց, որ սովխողի դիրեկտորի մոտ գնա՝ իր որդուն հտ պահանջի, հուսով էր՝ որդին զղջացած կլինի, հտ կդառնա գյուղ: Բայց Մնացի որոշումը շատ ավելի հաստատուն էր, քան հայրը կարող էր մտածել: Եվ նա Մանթաշ վերադարձավ, մտքում հայհոյելով մոլորված որդուն և սրօռեց այլևս չմտածել նրա մասին: Բայց ձմեռնամուտին նորից եկավ՝ տեր կանգնելու դռերում հոտի հետ շափչփող որդուն, որը ոչ կարգին տուն ունի, տանը՝ ոչ կրակ, ոչ ճրագ: Հոր հետ նաև մայրն էր Մանթաշից Արագած հասել ոտքով՝ սար ու քարերով: Եվ դժվարը դա էր: Մնացը հոր հետ խոսում էր տղամարդավարի, էօպես-էօպես՝ երեկ-մյուսօր զինվոր էի, ես հո երեխա չեմ, որ գյուղ ու տանից հեռանամ թե չէ՝ կորչեմ: Հաշվիր, թե պատերազմում եմ: Վերջ: Իսկ մոր լացուկոծից խեղճանում էր, նեղօրտում և, պահ եղավ, որ պետք է տեղիք տար, վեր կենար, ծնողների հետ վերագառնար գյուղ...

Փոթորիկը թշում էր ճերմակ հոտը: Քշում էր գոմերից ու ավանից հեռու, անորոշ ուղղությամբ: Արտենի սարից ճոթ առած բլրաշաքից հոտը գահավիժեց ձնահոտքի պես և ավելի շող եկավ: Վարը գոգահովիտն էր. և հույժի մի ալիք թայրտաց՝ գոգահովտում գուցե փոթորիկը ուժգին չէ, չթշի ոչխարները: Բայց զիգզագ լեռնաշարի ստորոտում

հոտը ընկավ պտտահողմի բերանը, ոչխարները խառնվեցին իրար, մեկը գլորվեց, շնչահեղձ ընկավ երկրորդը... հետո ոլորապտույտ ձնաբուրքը շեղեց հոտի ուղղութիւնը՝ մի քիչ դեպի հարավ: Մնացականը լավ էր ծանոթ՝ շատ անգամ էր հոտը արածեցրել այդ դռերում և գիտեր, թե ուր է քշվում հոտը: Այդ ուղղութիւնը մի քանի հարյուր մետր այն կողմ երկաթուղին է: Եվ եթե հոտն այդպես շարունակի՝ մի քիչ հետո կհասնի երկաթուղուն և ոչխարների հուսահատ վազքի ու երկաթգծի ուղղութիւնը կդառնա մեկ: Հոտը ոչ թե կկտրի-կանցնի երկաթգիծը, այլ կշարունակի ուղղութիւնը՝ երկաթգծով: Փորձեց առաջ անցնել՝ ուղղութիւն տալ, երկաթուղուն զուգահեռ, թույլ շտալ, որ ոչխարները լցվեն գծերի արանքը: Շտապել էր հարկավոր. հա, հա, հոտի ընթացքն ու երկաթուղին ձուլվելու են: Փոթորիկը ունում էր գոգահովտում, բերում հեռու սարերի գոչգոչունը, թվում էր, թե սարերից հեղեղ է գալիս: Ձնաբուրքը ծեփում էր նրա դեմքը, նա աչքերը հաղիվ էր բացում, դեմքը աչ ու ձախ էր թեքվում շնչելու համար, շինելի օձիքը պահում էր բերանի մոտ և ուժ տալիս ծնկներին. պետք էր անգլուխ հոտից առաջ անցնել, ուղղութիւն տալ: Ահա և երկաթգիծը: Ռելսերը փայլփլեցին մշուշված հայացքի դիմաց և թվաց՝ լճակի հատակում է տեսնում ռելսերի ստվերները՝ շարդոտված, գիզգազ, շարժուն, կտրակցվող: Մահակը սկսեց թափահարել աչ ու ձախ, գոռգոռալ, ուղիղ դեպի ռելսերը քշող ոչխարների դիմաց վազվզեց ետ ու առաջ, բայց ոչխարները տապալեցին նրան ու քշեցին ռելսերի արանքով... ու ու՛ու...,— թվաց, թե գնացքի սուլոց է լսվում,— ու ու՛ու...,— և որտեղից որտեղ հիշեց նաև իրենց՝ Արագած կայարանի սլաքավար աղջկան: Աղջիկը ժպտաց նրան նույն բարի ու ներողամիտ ժպտով... Հովիվը փիլիբեց ռելսը, ոտքի ելավ, նշմարեց քշվող հոտը ու սկսեց վազել: Զգիտես ինչու, ավանի, Արագածի կողմից գնացքի շէր սպասում: Թե լինի, դիմացից է... Կգա, հոտը տակով կանի, կգնա: Մի բան պետք է անել: Ի՞նչ... Գիտեր միայն, որ պետք է վազել... Պետք է վաղի, հասնի հոտին, հոտից անցնի առաջ: Եվ գծերը լորտու պես փայլփլում, գալարուն փախչում էին

հայացքի տակից և այդ սառը փայլփլոցի միջից պեծպեծում էր սլաքավար աղջկա ժպիտը:

Սլաքավար աղջկան մի քանի անգամ տեսել էր: Առաջին անգամ՝ ձմեռնամուտին, երբ մորն էր ճանապարհում: Գնացք բարձրանալուց առաջ մայրը նորից խնդրեց, — Մնաց ջան, էլ չեմ ասի, մի հալալ կաթնակեր գտիր, բալա ջան, գոնե տունդ տաք կլինի, մեղք ես: — Մնողները հույսները կտրել էին՝ որդին գյուղ վերադարձող չէ: Գոնե՝ ամուսնանար: Մնացականը մինչև սլաքավարուհուն տեսնելը ամուսնանալու մասին լսել անգամ չէր ուզում. պատերազմ է, իր հասակակիցները արյուն-կրակի մեջ... Հա հիշում էր բանակի իր ընկերներին և ամեն անգամ մի տեսակ ամոթ էր զգում, որ ճակատ շհասավ, հրացան չկրակած, հիմար ձեւով վիրավորվեց, ետ դարձավ: Բայց սլաքավար աղջկան տեսնելուց հետո հաճախ էր կայարան գնում: Եվ երբ տեսնում էր՝ առանց մոտ գնալու ժպտում էր նրան, աղջիկը պատասխանում էր բարի ու ներողամիտ ժպիտով: Նրանք հասակակիցներ էին, բայց աղջկա ժպիտ ու հայացքում Մնացականը ոչ թե տասնինը-քսան տարեկան տղամարդ էր, այլ երեխա տղա: Մնացականը զգում էր դա, բայց չէր վիրավորվում, կարևորն այն էր, որ իր ժպիտներին աղջիկը պատասխանում է...

Գնացքի գծերը լորտու պես փայլփլում-փախչում էին հովվի հայացքի տակից և այդ սառը փայլփլոցի միջից կայծկլտում էր աղջկա ժպիտը: Հովիվը հիմա վազում էր հոտի առջևից, մահակը գլխավերևում թափահարելով, անորոշ կանչերով. նա հույս ուներ, որ եթե գնացք գա, մեքենավարը կնկատի իրեն... Եվ, չգիտես ինչու, մտքով չէր անցնում, թե գնացք կարող է նաև հակառակ կողմից լինի՝ ետեւից: Նա գիտեր, որ այդ կողմերում մի տեղ, երկաթուղին դիմացի ձորից խուսափում՝ թեքվում է: Եվ ամբողջ հույսը այդ շրջադարձն էր. այգտեղից հոտը պետք է դուրս բերել գծերի արանքից... գծերի արանքից...

Միայն մի անգամ համարձակվեց խոսել.

«Անունդ ի՞նչ է»

«Անունս ինչի՞դ է պետք»:

«Անունդ ասա, էլի, քեզ կարևոր բան եմ ուզում ասել»:

«Ի՞նչ միամիտ տղա ես, ա՛յ տղա», — և կշկշալով, սլաքավարի գլխարկի տակից մազերը թափահարելով գնաց արջիկը:

Ահա և երկաթուղու շրջադարձը... Նա շուռ եկավ, դիմագիր կանգնեց փոթորիկին ու քշվող հոտին, որ գծերի արանքով հոսում էր փրփուր կտրած հեղեղի պես և երկու ձեռքով ամուր բռնեց մահակն ու ամուր սեղմեց ատամները՝ կհարվածի, անխնա կհարվածի գլուխկախ այգ ոչխարներին: Առաջին անգամ նա շարացավ իր ճերմակ ոչխարների դեմ, որ այդպես կառչել են ձյունածածկի տակից դուրս պրծած՝ համատարած ճերմակի մեջ սևին տվող երկաթուղուն, սեղմվել են ոելսերի արանքում ու գալիս են: «Կխփեմ... դընչներին կխփեմ...»: — Երկու ձեռքով ամուր պահած մահակը գետնանց ու թափով ճոճեց մոտեցող հոտի ճակատին: Հանկարծակի դնչներին հարված զգացած հոտն առաջնորդող գլուխքարը ոչխարները ընկրկեցին, ոչխարները սեղմվեցին իրար, հոտի ճերմակ ու խիտ շղթան մեկեն ուռեց, նա թափով ճոճեց մահակը և լարվածությունից նրան նորից թվաց, թե գնացքի ազդանշան է լսում: Շուռ շեկավ՝ մի պահ ետ նայի, ամեն ինչ կորած է. հոտը տակով կանի իրեն ու կշարունակի իր վազքը գծերի արանքով: Ու՛՛ու... ողնաշարում սզում էր գնացքի ձայնը...

Սեղմված հոտը կողքից ճոթ տվեց դեպի ձորակը... Ուուու... ավելի որոշակի լսվեց գնացքի սուլոցը, դա արդեն պատրանք չէր, Մնացը լսեց նաև անիվների շկշկոցը, զգաց, որ ոելսերը զրնգում են, իսկ հոտը նոր-նոր գլուխը թեքել երկաթուղուց: Ուու... ու... ուու՛ու, — զայրացած ազդանշան էր տալիս մեքենավարը: Հովիվը շարունակում էր ճոճել մահակը, նա դեռ համոզված չէր, որ հոտը հաստատ փոխել է ուղղությունը: Հետո նա ուսի վրայով ետ նայեց: Գնացքը շատ մոտ էր, հարյուր-հարյուր քսան քայլի վրա: Նկատեց նաև, որ մեքենավարը գլուխը դուրս է հանել խցիկից և բռունցքը թափահարում է: Նորից հիշեց սլաքավար աղջկա ժպիտը և, շիմացավ ինչու, հայհոյեց մեքենավարին և որոշեց դուրս շփալ ճանապարհից, քանի դեռ վերջին ոչխարը չի ազատել երկաթուղին:



«Քող կանգնի...» — կանգնիր, — առանց նայելու գոռաց, շնայած ուսերի զրնգոցից զգում էր, որ գնացքը դանդաղեցրել է ընթացքը, հա, հա, կանգնելու է: Հետո նա լսեց քնացքի փնչոցն ու հայհոյանք.

— Ավանակ...

Արդեն կարող էր շուռ գալ: Եվ նա դարձավ, մահակն ուղղեց մեքենավարին և գոռաց սլառասխան հայհոյանքը: Ծեքենավարը արդեն դեմքը փախցրել էր փոթորիկից, փակել խցիկի պատուհանը, հովիվը դրանից ավելի զայրացավ, ապա էլի հիշեց սլաքավար աղջկան, որ քիչ հետո երևի կժպտա մեքենավարին, և նա կրկնեց հայհոյանքն ու մահակով թակեց խցիկի պատուհանը:

— Արագածի սլաքավարին կասես՝ փոթորիկը ճերմակ հոտը բռնեց, ճերմակ հոտը բռնեց, — գոռաց, բայց փոթորիկն ու գնացքի երկար սուչոցը կուլ տվեցին նրա ձայնը, և նա թքեց դեպի փակ խցիկն ու հեռացավ: Արդեն չէր շտապում. դիմացը ձորն էր և գիտեր, որ հիմա հոտը դեպի ձորն է բռնվում և այնտեղ դադար կառնի: Զգաց, որ շատ հոգնած է, ծնկները ծալվում են, մեկ ուզեց մեկնվել երեսն ի վար, մի քիչ հանգստանալ, բայց զսպեց ցանկությունը և քարշ եկավ հոտի ետևից...

...Գիշերվա կեսը վաղուց էր անցել: Դադարել էր փոթորիկը, խաղաղ, աստղազարդ ու ճրճքան գիշեր էր: Զորում ոչխարները բռնվել էին գլուխ-գլխի, շները խցկվել էին հոտի մեջ, ցրտից սեղմվել ոչխարներին: Երեկոյան, երբ փոթորիկը դադարեց, հովիվն ինքն էլ ոչխարների արանքում կուշ եկավ ու սպասեց: Հիմա արդեն կեսգիշերն անց էր՝ հույսը կտրել էր, թե կգտնեն իրեն և սպասում էր լույս առավոտին:

— Ումո՛ւդ...

Հանկարծ պարզ լսվեց գործընկերների կողմից կնքված իր անունը: Ճանաչեց նաև՝ ֆերմայի վարիչ Պասկոյի ձայնն էր: Բերանը բացեց պատասխանելու, բայց ձայն դուրս չեկավ, լեզուն չէր պտտվում:

— Ումուդ, Ումուո՛ւուդ...

Զորափից կանչում էր Պասկոն: Պատասխանել է պետք...

մահակով հարվածեց շներին մեկին, և ձմռան պարզկա ճրք-  
ճքան գիշերը լցվեց շան աղեկտուր կաղկանձով:

Հետո Պասկոն գրկել էր ջահել, վտիտ Ումուդին և ավա-  
նի ճամփով քշում էր ձին: Պասկոն անխնա մտրակում էր  
ձին և շուտ-շուտ ականջ դնում՝ շնչում է: Ապա նա զգաց,  
որ մինչև Արագած ձին քշելը անմտութուն է և ճամփի կե-  
սին Մնացականին իջեցրեց Բուղութլու կիսակայարանը...

Հովիվը մի ամբողջ օր անուշք էր, հետո երբ աչք բա-  
ցեց, մշուշված նայեց շուրջբոլորը, հիշեց և շնջաց.

— Հոտը որտե՞ղ է:

— Ամեն ինչ կարգին է,— պատասխանեց Պասկոն:

— Ոչխարներից մեկը սարի տակ ընկավ:

— Քեզ դուրբան, Ումուդ ջան:

— Ես գնացքի հետ լուր ղրկեցի,— հիշեց Մնացը,— տա-  
վարնի էր... Ասի՛ սլաքավարին կասես... էն աղջկան:

— էն լրբին... ես դրա...,— հայհոյեց Պասկոն,— երեկ  
նա գնացքի հետ փախել է, չկա, գոնե լուր տար՝ հետո...  
կիրբը... Ջուր տամ, Ումուդ:

— Չէ... Չեմ ուզում... Թող մի քիչ քնեմ:— Եվ շրջվեց  
ու փակեց աչքերը:

## 2

— Հաղթանակի օրը ինչքան փամփուշտ կար մոտս, կրա-  
կեցի:



Մի քանի օր էր հոտը ավանից հեռու չէր քշում. սիրտը  
չէր կտրվում ավանից. ամեն բոպե կարող է ռազիոն հաղոր-  
դել հաղթանակի լուրը. աշխարհի համար պարզ-պարզ է.  
մերոնք հաղթել են. ամեն բոպե կարող է պաշտոնական հա-  
ղորդում լինել: Այն ժամանակ Արագածի այգեգործական  
սովխոզը չկար և ոչ էլ՝ հարևան Արտենին: Ոչխարաբուծա-  
կան սովխոզի փոքրիկ ավանի շուրջբոլորը անապատ էր,  
գարուն էր, շուրում փափկել էր փուշն ու շոռանը. ծանր, սուղ  
ձմեռացումից հետո, հոտը կշտացնել էր պետք, բայց նա

չէք կարողանում հոտը քշել-հեռացնել ավտոնից: [www.g-pdf.com](http://www.g-pdf.com)  
Պասկոն դիտողութունն էր անում.

— Ումուդ, ա՛յ տղա, քեզ ի՞նչ է պատահել, ձմռանը հոտը քշում, տանում էիր եսիմ ուր, գարունն օրով խեղճ ոչ-խարները կապել ես էս քարերին:

— Մեծ լուրի եմ սպասում, Պասկո:

— Հասկացանք, ա՛յ տղա, էդքան համբերել ես, մի երկու ժամ էլ ուշ իմացիր:

— Հայ, հա՛այ... էս աշխարհի դինջը ե՞ս եմ:

Այդ օրեին ավագ հովիվ Գարսոն հիվանդ էր, էնպես՝ ոտքի վրա: Ուրիշ լուր բերող շուներ՝ ո՛չ կին, ո՛չ երեխա, և նա Գարսոյին ասել էր.

— Լուրն իմանալուն պես թե ձի շես նստել՝ հասել ինձ մոտ, ինձ քեզ օգնական շահավես:

Այդ առավոտ հոտը քշել էր երկաթուղու ուղղությամբ, գեպի Բուղութլու կիսակայարանը, շուտ-շուտ նայում էր երկաթգծի ուղղությամբ՝ աչ ու ձախ, և աչքերը կկոցում ավանի կողմը: Պայծառ, փափուկ օր էր. հայացքի դիմաց թրթռում էին գարնան գույները, և նրան այնպես էր թվում, թե կարմիր ու կապույտ ուլունքներ են թափվում անապատի վրա:

Իսկ Գարսոն միանգամից հայտնվեց՝ բլրակի կշտից: Ձին քառատրոփ գալիս էր, ձիավորը ձեռքը թափահարում էր գլխից վեր: Հովիվի աչքերի դիմաց գույների պարը շատացավ, ձին ու ձիավորը մի պահ անհայտացան հորիզոնից, հովիվը հաճելի գլխապտույտ զգաց, ապա սկսեց վազել և զգաց, որ գլորվում է, նստեց, կարծես երազի մեջ, տեսավ ձիավորը, ապա մի միտք կայծկլտաց ուղեղում, և նա հրացանը ուսից վար բերեց ու՝ թըրախկ... թըրախկ... թըրախկ... կրակեց: Հոտը խրտնեց, շների խառնիխուռն հաչոցին, շատ մոտիկից լսեց մեկի կանչը... Հետո նրանք գրկախառն թավալվում էին, ինչ-որ ասում իրար, գոռգոռում, շները գոմռում էին նրանց շուրջը շուրջը, հաչում... Բայց գույների սահող, կտրակցվող ժապավեններից բացի Մնացը ուրիշ ոչինչ չէր նկատում, միայն թե զգում էր, որ կարևոր, այգ պահի համար շատ կարևոր մի բան պետք է անի, ապա ականջներում զրնգացող հրացանի ձայնից հաս-

կացա՛մ... կրակել է ուզում: Մեկին առաջա՛մ երբ  
կից, առավ հրացանը... Բըրախի... Բըրախի... Բըրախի:  
Արձակեց մոտը եղած բոլոր փամփուշաները...

Դրանք կովի դաշտում շարձակած գնդակներն էին...

— Մոտդ փամփուշտ չկա՞, — չոր հարցրեց Գարսային,  
հետո, առանց պատասխանի սպասելու, հեռացավ, նստեց մի  
քարի, գլուխն առավ ափերի մեջ, և ավագ հովիվը տեսավ,  
որ իր օգնականի ուսերը ցնցվում են:

— Երեխա՞ ես, Ումուդ, — հետո նա ոտքի ելավ և առանց  
ընկերոջը նայելու ասաց.

— Ես գնում եմ:

— Ո՞ւր, — զարմացավ ընկերը:

— Գյուղ եմ ուզում գնալ: Մանթաշ... Երկու օրից  
կգամ: — Եվ շուտ եկավ, դեմքն արեց գյուղի ուղղությամբ  
և դռերով գնաց:

Պատերազմի առաջին օրը գյուղում ոռնում էր գույժը...  
Երկրորդ տարին է հեռացել էր Մանթաշից և նրա հիշողու-  
թյան մեջ՝ նույն ձայնն ու պատկերն էր... Գնում էր ուրա-  
խության ու տխրության արցունքներն իրա խառնած գյուղը  
տեսնելու:

3

— Երկու աղջիկ ունեի, բայց որ մեծ տղաս ծնվեց, էդ  
օր ուրիշ էր. սարերը աչքիս ոնց որ փոխվեցին:



Ոչ մի տեղ ուստա հաշոյին չեն դիմավորում: Դիմավո-  
րում են սարում. երեխաները՝ ծափ ու պարով, կթվորները՝  
հարցական հայացքով. «տեսնես, ում ինչ լուր է բերել ես-  
չոն», ոչխարից ետ մնացած շունը՝ պոչի շարժումով, ոտա-  
տակի թավշագորգն ու արևի կրթոտ համբույրներն էլ իրենց  
հերթին: Ու հաշոն շատ գոհ է դրանից, շոյված: Եվ որքան  
էլ քար ու քոս է ճամփին, մտամոլոր է ու վերձիգ, էլի սի-  
րով է համաձայնվում. «Գնացի, ախպեր»:

հաշոն հասավ հողիկների մոտ, կանգնեցրեց ավտոն, ու

դեռ վերջին ուրապտույտից դեմքին առած ժպիտով, ելավ խցիկից:

— Բարի օր, ժողովուրդ:

Պարզ է, թե «ժողովուրդը» ինչպես կպատասխանի:

— Եզրայր հաշիկ, հեշ ի՞նչ կա:

Ընդհանուր հարց տվեց մեկը, որ կոնկրետ ու առանձին-առանձին պատասխան ստանան:

— Աշխարհի կողմից խաղաղություն, մարդկանց կողմից ողջություն... Ամենքիզ բար եմ բերել:

— Նորություն բան չկա, եղբայր հաշիկ,— վարորդի պատասխանը կանանց չի բավարարել:

— Իմ ուզած մարզը չի երևում,— ժպտաց հաշոն,— ոչ-խարը որտե՞ղ եք կթելու,— բազմիմաստ ժպտաց:

— Էստեղ... Հրեն, հոտերը գալիս են: Դե ասա, եղբայր հաշիկ, մի բան գիտե՞ս:

Բայց վարորդը բերանից չթոցրեց լուրը՝ միայն տիրոջն է հանձնելու՝ և՛ մեծ նվերով. տղա-էրեխու աչքալուսանք է, հանաք-մասխարություն չէ:

Տարրեր ուղղություններով հոտերը մոտեցան օբաներին: Կթվորուհիներն ու երեխաները դուլներն առած շտապեցին, հովիվները շրջապատեցին հաշոյին: հաշոն ամենքին ձեռք տվեց, վերջում՝ Մնացին և բաց չթողեց ձեռքը:

— Մնաց, լավ աչքալուսանք ունես, ի՞նչ ես խոստանում:

Մնացականի սիրտը թպրտաց. նա կռահեց, բայց շուգեց առաջ անցնել:

— Մեծ աչքալուսանք է, մաղաբիշդ ասա,— համառեց վարորդը:

— Քեզ մի լավ կոստյում:

— Աչքդ լույս, տղա ես ունեցել,— բաշխեց հաշոն:

Հովիվ ընկերները իրար ձեռքից խլեցին Մնացին, կոշտ դռնչ ու շուրթերով սղալեցին նրա այրված ճակատը:

հաշոն նույն օրը իրիկնապահին վերադարձավ, իր հետ Արագած ավան տարավ նաև Մնացականի ճամփած անունը՝ Կարապետ: Հովիվ Մնացը վարորդի հետ կնոջը նամակ ճամփեց՝ համբույր ու ջանով և ներողություն էր խնդրել, որ ինքը հիմա չի կարող գալ. «էգուցվանից խուզք սկսում ենք»:

Արագածի աստղերը ցոլք առան, թափվեցին լուսնակա-

Թող լցված աղբյուրների մեջ, լուսինը հուլունք-հուլունք կաթկթաց ձորապռունկներից, հուլիկներում պլպլացին լուսները՝ փոքրիկ պատուհաններից հայացքների պես դուրս ելան, թրթռացին փափուկ լուսթյան մեջ: Վեր ու վարից հուլիկներին մոտ եկան հոտերը՝ մեղմ խշշոցով, ոչխարների գուլ բուլրով, մնչոցով, թաց շնչով: Գամփոնները բարձրացան փարախներից պատերին, հաֆ արին,— սոված ենք, հաց բերեք,— հովիվները ձայն տվին, ձայն առան...

— Մնաց... Մինչև ո՞ւր հասա՞ր:

— Գուռ քարի մո՞տ:

— Արոտ կա՞ր:

— Կա՞ր...:— Աղբրաձորն էլ իրիկնային իր զրույցն արավ ու շունչը պահեց:

Մնացականը մտավ հուլիկ, մահակն ու ուսապարկը գրեց դռան քով, դուրս եկավ, իր օգնականին ձայն տվեց.

— Սլո՞ո, ոչխարներիցս մեկը շոկի բեր:

— Վալլահ, իմ ոչխարից կբերեմ,— Սլոն գործնական մոտեցավ փարախին: Մնացը արգելեց, սեփական ոչխարներից մեկը ընտրեց, հանձնեց Սլոյին և սկսեց խարույկի պատրաստություն տեսնել:

Խարույկը բոցկլտում էր, պտտահողմի պես դալարում իրանը, լեզվանի բոցերը վիճում էին իրար հետ, միանում՝ դառնում երեխաներին, իսկ սարվոք երեխաները ծիծաղում էին հրե լեզուների վրա, թավաում, հայավարի բզրզում՝ ջղայնացնում էին խարույկին: Մնացը զուսպ ժպտում էր երեխաներին, նրանց մեջ որոնում իր որդուն: Այդ ժպիտը նրա դեմքին նոր էր՝ ապահով և ուժեղ, նա այդ շէր զգում: Գնալով բոցերը հոգնում էին, խարույկը նստում էր, փոքրանում, երեխաները մեծանում էին: Երեխաներին խարույկն էր հարկավոր, որ իրենց խաղով հոգնեցրին, դարձրին մարմրող կրակ, հեռացան, շարունակությունը թողնելով հովիվներին՝ Մնացին, Արմենակին, Սլոյին, Հակոբին, Գարսոյին, Սուտոյին, Շամիլին...

— Երգիր, Սլո ջան, Բերիվանենն ասա:

Գիշերվա լուռ-լուսթյան մեջ երգը հոսում-գնում-խառնվում էր աղբյուրների ջրերին: Հազար անգամ լսած երգը Մնացականը լսում էր ուշադիր, թվում էր, թե՛ առաջին ան-

գամ է ականջ պահում ընկերոջ հրգին: Մթնում ուրվագրծ-վող շրջակա սարերը ավելի բարձր, վեհ ու խորհրդավոր էին թվում, հրկնքի աստղերը շատ, ձորերի լուռությունը ավելի խորհրդավոր... Ամեն ինչ հրաշք էր աշխարհում... նրան թվում էր, թե նոր է տեսնում այդ սար ու ձորերը, նոր է լսում գիշերվա շշուկները, որոնք ավելի էին խորացնում մթածրար անդորրն ու լուռությունը...

Մնացականի մտքով շէր անցնում, որ այդ գիշեր ինքը աշխարհին նայում է նոր աշխարհ եկած որդու փոխարեն՝ դարմացած ու հիացած...:

## 4

— Էս հրանոթները որ կրակում են ամպերի վրա, շէ՞, էդ իմ գյուտն է:

— Ցա՛... — ընկերս խորը ժպտում է:

— Հավատա: Կարկտաբեր ամպերին կրակող էս հրանոթները դեռ չկային, ես էդ մասին մտածում էի:

— Ցա...

— Հավատա: Իմ մտածածը ավելի լավ էր... Զարեցին:



Ամառ էր. ֆերման դարձյալ ամառանոցում, Արագածի սարերում էր: Մթնշաղից հետո, երբ հոտը փարախն արեց, մտավ իր հողիկը ու նստեց թախտին, կինը տաշտով ջուր բերեց և հայտնեց սար հասած լուրը.

— Մնաց, երեկվա քո ասածը ճիշտ էր՝ կարկուտը տվել է:

Երեկ, հենց նույն ժամին, ոտքերն էլ ջրի մեջ, ասաց. «Կեսօրվա ամպերը տեսա՞ք, վայ թե մի փորձանք բերեցին մեր սովխոզների գլխին»:

— Ո՞վ ասաց:

— Խաչիկը, եկավ, գնաց:

Թաց ձեռքը մոտեցրեց գրպանին: Մխախոտի ծուխը սուղվեց, կեսը մոլորվեց, կեսը դուրս եկավ պարուրեց դեմքը, կծկացրեց կոպ ու աչք:



— Եա՞տ է վնասել:

— Ասում էր՝ հա:

Հետո անժպտուն հաց կերավ, անժպտուն վեր առավ կողալը, ելավ դուրս:

Քիշերը շունչը պահել էր: Դողոյի կես րեբան հաշոցը սար ու ձոր էր կտրում: Մլոն սուլում էր քրդական մի մեղեդի, մի գիշերահավթ ծղրտաց ու հազար քար ու կիրճ արձագանք առփին: Ե՛վ Դողոյի հաշոցն էր լուռ-լուռթչուն և Սլույի սուլոցը, և գիշերահավթի ճիչ-ծղրտոցը:

— Սլո, իմացա՞ր:

— Հա՛, վալլահ, իմացա:

Մնացականը մեկնվեց ընկերոջ կողքին, լռեց: Ուրիշ ժամանակ կասեր. «Բերիվանեն ասա, Սլո ջան»: Հիմա լռել էր և աչքերն ու երկինքը հասել էին իրար: Նոր բան էր ուզում հասկանալ երկնքի մասին:

— Այ մարդ, լուսնակն իր ճամփեն ունի, կերթա: Ուր աստղ կա՞ կա, ուր չկա, կապույտ է: Ցերեկն էլ աստղ չկա, լուսնակ չկա, արև չկա: Էս չի՞ երկինքը, պա՞րզ ու շիտակ երեվում է, էլի: Բա էդ ո՞նց է լինում. մեկ էլ տեսար երկինք ու գետին խառնվեցին իրար, ամպեր ելան, փոթորիկ եղավ, անձրև ու ձյուն եկավ, տո, էդ անտեր կարկուտը վրա տվեց... կարկուտը վրա տվեց... հետո էլի էն երկինքն է, էլի էն երկինքը արևով, լուսնակով, աստղերով: Ու ամեն օր նայո՞ւմ ես, նայում՝ էդքան սիրուն է մնում...

— Երկնքի օրենք էս ի՞նչ օրենք է, Սլո: Էսքան տարի բաց աչքով կնայենք, չենք հասկնա: Էդ կարկուտն ինչ է ախր... Բա մարդիկ թե ու թիկունք ջարդեն, աղի քրտինք թափեն, բար ստեղծեն, կարկուտը գա շփի տանի՞:

Հա՛, վալլահ, հա՛:

Մնացն էլի լռեց:

Իբր երկրի օրենքն ի՞նչ է: Ըհը, սարի գլխին թառած են, մի քսան-երեսուն քայլ այն կողմ ձոր է: Մեկ՝ անտառ, մեկ՝ ծով, մեկ էլ տեսար՝ դրո, ու ախ ես անում մի պուտ ջուր: Թալինի դռերը էդպես շէ՞ր. փուշ ու շոռան, ոչխարները ծարավից տրաքվում էին: Մարդիկ ջուր էլ բերեցին, այգի էլ տնկեցին, պտուղ են առնում... Մեկ էլ տեսար՝ կարկուտը տվեց-տարավ:

— Սլո, ծառ տնկած կա՞ս:

— Չէ, ջանքմ, ես՝ իմ կռպալ, էս ոչխար:

— Ես տնկել եմ. ծառ էլ, խազողի վաղ էլ: Այգեգործական սովխոզը նոր էր ստեղծվել, մի օր մեր դիրեկտորին ասի. թող արա էսօր գնամ ծառ տնկեմ, մտառ հանեմ էդ դռերից: Ասաց՝ մի շաբաթ գնա: Գնացի: Գիտե՞՞ն ինչ ջան ու տանջանքով են մարդիկ էդ ծառերը տնկել: Էլ քար հանել, էլ փուշ ու տատասկ վառել:

— Հա՛, վալլահ, հա՛:

Մնացականը ծխախոտ վառեց: Հայացքն ու ծուխը փաթաթվեցին իրար, բարձրացան երկինք: Թե ուզենան էդ կարկուտի գեմը շե՞ն առնի: Հ՞ը, շե՞ն կարող... Թե ճար լիներ, հիմա արել էին, էլի: Բայց... Հիմա ամեն ինչ էլ անում են, ախր: Մտածեն, մի բան դուրս կգա: Հնար լիներ. հենց օդի մեջ էդ անտեր կարկուտը դարձնեին ջուր: Անձրև՛, անձրև՛: Հը՞, չի՞ ստացվի: Էն ճառագայթներից— բանից բաց թողնեն օդի մեջ՝ հալեն, կորչի-գնա... Անձրև- անձրև... Կարկուտը դարձնեին անձրև:

— Սլո... Դու ասում ես էդ կարկուտի դեմն առնելու ճար չկա՞:

— Ի՛յա, մեղա քեզ աստված:

— Ի՞նչ մեղա, ուզենան...

— Վալլահ, դուզ են արել, որ քեզ դարձրել են կոմունիստ:

Հուլիկների ճպճպան աչքերը փակվեցին: Եվ Սլոն կռպերը բերեց իրար ու խանձված ճակատի վրա, կնճիռների մեջ մի մեղեդի մնաց՝ երազի նման: Աստղածորի հատակը լիզող, աստղերի հետ կատվախաղ անող կոհակները տարան գիշերվա կեսը, հետն էլ Մնացի մտքերը... Է՛, տարին քանի՞ անգամ կարկուտի տակ էր մնացել ու ամեն անգամ մտքում կռիվ տվել կարկուտ հնարողի հետ, բայց երբեք մտքով չէր անցել. «Սլո, յանի էս կարկուտի դեմն առնելու ճար չկա՞»: Հիմա բորբոքվել էր երևակայությունը, ու թվում էր, թե մի քիչ էլ «խելքին զոռ տա», մի հնար կգտնի: Ա՛յ թե կգրեր ուր որ պետք է, լավ էլ կգրեր, թե՛ ավ՛ մարդիկ, ես սարի շոքան էսքան բան մտածեցի, կարկուտը անձրև դարձնելու ճարը էսպե՛ս-էսպես գտա— բա էսքան ժամա-

նակ դուք ի՞նչ եք անում: Թե չէ ինչի նման է, մարդիկ աշխատեն, գլուխ ջարդեն... Վ՛այ ես քո ինչն եմ ասել: Մառու վազի վրա ճյուղ ու պտուղ թողած չի լինի: Ջարդել-րերել է ցած, ծեփել գետնին, հողն էլ ծակծկել: Առավոտյան շատողները կգան, կնստեն այգիների մոտ ու... Սրտները չի բռնի, որ գործի կպնեն: Մի բան էլ էդտեղ կտուժեն ու... նագուկ ծառերը ձեռից կերթան:

— Սլո, ա՛յ, Սլո:

Սլոն շարժվեց, թոնթորեց, շուռ եկավ մյուս կողքին:

Բայց... Բայց կարող է պատահի հեշ բան էլ չի եղել, հաշոն է, էլի, մեկը քսան արած փշել է, մի բան էլ կնանիքն են ավելացրել ու ա՛յ քեզ պալան-պալան աստժու կրակ... Մամ կտրածների խոսքերն էլ իրար չեն բռնում: Կպատահի, որ կարգին հարց ու փորձ էլ չեն արել և կարկուտ խոշո՞ր էր, մա՞նր էր, ինչքա՞ն ժամանակ է եկել, մինչև ո՞ւր է բռնել... Թե փախցրած մի աղջկա մասին լուր բերեր հուշոն, հոգին կհանեին. մինչև շալարգեին, թե էդ ժամանակ աղջկա հագին ի՞նչ գույնի շոր է եղել, բաց չէին թողնի... Մեկ էլ ե՞րբ կգա հաշոն... Դրա տունն էլ շեն. վեր է կացել գրռ, դրռ, դրռ հասել է էստեղ, շների ալյուրն էլ չի բերել, թե մոռացել եմ: Չելնի՞ էրթա: Համ աչք-աչքով կտեսնի, թե էդ անիծածի տված վնասը ինչքան է: Համ կասի՝ թե՛ էսպես-էսպես. ուզենան էն ճառագայթներով բանով կարկուտի հախից կգան, համ էլ ալյուրը կառնի կգա... Չերթա՞... ժամը քանի՞սն է:

Ժամացույց ուներ թևին, շնայեց, նայեց լուսնյակին ու Արջերի համաստեղություններին: Կեսգիշերն անց էր:

— Սլո՛... Սլո, տնաշեն, աչքերդ բաց, չկշտացա՞ր,— քաշեց թևից,— վեր ել:

Սլոն միանգամից նստեց, ձեռքը տարավ կոպակին:

— Մի խառնվի, բան չկա:

— Էլ ինչի՞ աստժու քուն կհարամես:

— Մտքիս կա ավան իջնեմ:

Ընկերը զարմացած նայեց:

— էրթամ տեսնեմ ինչ է կա-չկա... Արևմտոցին կդառնամ:

— Վալլահ, թու խեղճ կորել է:

...Ձիու աչքերի սև հայելում փայլ էր առնում, բեկբեկվում էր գիշերը: Ձիու սմբակների տակ գնդակոծվում էր գիշերվա լուսթյունը: Մնացը սուս ծխում էր, սանձը թողած ձիուն. ճամփեն կշուկի կերթա: Աչքերի դիմաց կայծկլտում էին աշխարհի լույսերը՝ ուղղություն ու ճամփի նման էին՝ կանչում, ձեռք էին պարզում, քաշում-տանում էին հովվին:

Իսկ ձիու սմբակների տակից գլորվող քարերը շնչխում էին ձորում կծկված մութը, և կածանից վեր, լեռների գրլխից, խռչալով իջնում էր ջրվեժ-արշալույսը:

Հովվիլը գնում էր իր գյուտը հանձնելու աշխարհին, միայն շփտեր, թե՛ ում է հայտնելու:

## 5

— 66 թվականի մարտին, որ պաշտոնական հաղորդագրություն եղավ ինձ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին, տղես զարմացած ինձ էր նայում, կողքերս ֆոֆոում ու էնպես հետաքրքիր ինձ էր նայում, էնպես թե՛ հերս հերոս է եղել ու ես շեմ իմացել:



Տզան վազում էր ավանի փողոցներով: Անցնող-դարձողները հետաքրքիր նայում էին սրտաճաք վազող տղային. հասակակիցները ձայն էին տալիս, — Կարո, ո՞ւր, — իսկ նա շէր նայում շուրջբոլորը, վազում էր: Կտրեց-պնցավ երկաթդիժը, գուրս եկավ ավանից ու սուրաց դեպի գոմերը:

Մնացը փարախում. նորածին գառներն էր կերակրում. մայր ոչխարներն ու նորածինները խառնվել էին, գառնում էին իրար ու կորցնում՝ մայում, Մնացը մի գառը հապցնում էր մորը, դառնում մյուսին, գլուխ բարձրացնելու ժամանակ լուներ և շնկատեց, թե տզան ինչպես թռավ ցանկապատն ու մտավ փարախը:

— Պա... — շնչակտուր ձայն տվեց տղան: Մնացը հանկարծակիի եկավ, բարձրացրեց գլուխը՝ ու տեսավ հևացող տղային:

— Պա,— շունչը կուլ տվեց,— ապախոն ասաց, որ դու...  
որ քեզ... ապախոն ասաց...— Էսքից կուլ տվեց թուքը, նրա  
ուղեղում մի բառ էր ֆոֆոում— հերոս, ողջ ճանապարհին  
ուղեղում պատեպատ էր խփվել, և նա հենց դրա համար էր  
վազել, հենց այդ բառը պետք է ասեր, բայց խոսքի մեջ  
հարմարացնել չէր կարողանում:

— ...ասաց, որ քեզ... դու հերոս ես...

Մնացը ականջներում զգաց երկար ու տաք մի զրնգոց,  
և նրան թվաց, թե առավոտվանից ինքը լսում էր այդ կանչը՝  
հեռվից, սարերի կողմից գալիս էր և հիմա տեղ հասավ: Նա  
անթարթ նայում էր տղային ու լսում զրնգոցը: Իսկ տղան  
շփոթված կանգնել էր ոչխարների արանքում և լայն բացած  
աչքերը հառել էր հորը: Մնացը հրեք տղայի աչքերում  
այդքան լրջություն ու հետաքրքրություն չէր տեսել: Նա ժպտ-  
տաց տղային և ձեռքով քաշեց իր ու որդու արանքում խառ-  
նըրտված ոչխարները, որ մտան նրան: Ամեն ինչ հաս-  
կանալի էր, գիտեր, որ իրեն հերոսի կոչման են ներկայաց-  
րել, էսօր-էգուց լինելու է հրամանագիրը:

— Ռազիոն ասաց... որ քեզ հերոսի... հերոսի բան...—  
տղան որոնում էր ռազիոյից լսած բառերը,— բան...

— Կոչում են շնորհել,— լրացրեց հայրը և գրկեց որդուն:  
Տղան մեկեն մղվեց հորը, ամուր գրկեց պարանոցը:

— Դու շատ ուժեղ ես, չէ՞, պա,— Կարոն ամուր սեղ-  
մում էր հոր պարանոցը... Հոր ուժն էր շափում: Մնացա-  
կանը ծիծաղեց:

— Չէ՞, պա:

— Հա՛, բալիկ ջան,— և փորձեց աղատել պարանոցը,  
բայց տղան ավելի ամուր սեղմեց: Նա այնքան կառչեց հոր  
պարանոցին, մինչև թևերը հոգնեցին...

Հետո ֆոֆոում էր հոր շուրջըրը, ուշադիր հետևում,  
թե հայրը ինչ է անում, փորձում էր ընդօրինակել... Երեխան  
հոր մեջ հերոսն էր որոնում, արտակաբզ մի բան, որ ուրիշ  
ոչ մեկի մոտ չկա...

— Որ հիմա գալլ գա, տեղն ու տեղը կսատկացնես, չէ .  
պա:

— Բա ինչ կանեմ՝ տեղն ու տեղը,— ժպտում էր Մնաց-  
ականը և աշխատում էր շուտ կերակրել գառները, շտա-

պելուց նորածինները շփոթում էր և մտքում մեղադրում էր  
իրեն. «Ինչո՞ւ եմ խառնվել իրար... Հիմա տղերքը տեսնեն,  
կծիծաղեն, կասեն՝ գլուխը կորցրել է»։ Մի երկու անգամ  
նայեց կից փարախների կողմ, ուզեցավ հայտնել, թե իրեն  
Սոցիալիստական աշխատանքի հերոսի կաշում են շնորհել,  
բայց զսպեց իրեն... «Իրիկունը կհավաքվենք, էլի»։

— Որ հարյուր գայլ գան, տեղն ու տեղը կստեղծացնես,  
չէ՞, պա...

— Հազար հատ թաղ գան,— ծիծաղեց և հասկացավ, որ  
երեխայի միամտությունը համար չի ծիծաղում, պարզապես  
ծիծաղելու կարիք ունի։

— Որ... որ... Դու ի՞նչ ուզեցանս կանես, չէ՞, պա։

— Հա՛, բա ոնց,— ավելի ղրնգուն ծիծաղեց։

— Դե էսօր մի հեծանիվ գնիր ինձ համար, պա։

Մնացականը միանգամից լրջացավ, շտկվեց, խորք նա-  
յեց որդուն, ապա մոտեցավ, շփեց խոիվ մաղերը...

— Կգնեմ, բալիկ ջան,— խոստացավ։

Հետո մի «Վիլիս» կանգնեց փարախի դռանը, սովխոզի  
ղեկավարները աղմուկով դուրս եկան։

— Ումո՞ւուգ...

Մնացականը քիչ սեղացրեց պատասխանը. ինչ-որ մտքե-  
րով տարված շոյում էր տղայի գանգուրները։

— Այ տղա, էդ ինչ շուտ մեծամտացար... Մաղարիչը  
մեր վրա է, մի վախեցիր։

Մնացականը ծպտաց և քայլեց նրանց ընդառաջ։

6

— Հեչ չեմ մոռանում արտասահմանցի էն ժուռնալիս-  
տին։ Խամ-խամ խոսում էր։

— Ո՞վ, ժուռնալիստը։

— Բա, արտասահմանից էր, չգիտեմ որ երկրից, համա-  
գումար էր եկել, բայց մեր կարգ ու կանոնից հեչ բան չէր  
հասկանում։



Դա Մոսկվայում էր, ԽՄԿԿ 24-րդ համագումարի օրերին: Սոցիալիստական աշխատանքի հերոս, հովիվ Մնացական Խաչատուրի Առաքելյանը Հայաստանից գնացած պատվիրակության կազմում էր:

Ընդմիջմանը, Համագումարների պալատի ճեմասրահում արտասահմանցի մի ժուռնալիստ, լուսանկարչական ապարատը ավտոմատի պես կրծքին կախած, բաց ծոցատետրն ու գրիչը ձեռքին կանգնեց պատգամավոր Առաքելյանի դիմաց ու ըլբլացրեց: Թարգմանիչը փոխանցեց հարցը:

— Ասում է որտեղացի ե՞ս, ի՞նչ ազգ ես:

— Ասա հայ եմ, Հայաստանից եմ, Հայաստանի՞ց:

— Հայաստանի՞ց... Դա որտե՞ղ է:

— Հայ-հու՞ւյ,— վիրավորվեց Առաքելյանը,— քո տունը շեն, ժուռնալիստ ես ու Հայաստանի տեղը չգիտես, քեզ հետ ի՞նչ խոսեմ:— Ասաց՝ ուղիղ արտասահմանցու աչքերին նայելով, վրդոված: Թարգմանիչը շէր ուզում պատասխանը նույնությամբ փոխանցել, բայց ժուռնալիստը խնդրեց քառքառ թարգմանել:

— Ներողություն... Ներողություն, պարոն... Ես հայերին գիտեմ, Հայաստանը չգիտեմ:

— Որ հայերին գիտես, ուրեմն Հայաստանն էլ գիտես, էլի,— պատասխանեց և հայերեն ավելացրեց,— շանորդի:

— Ի՞նչ ես աշխատում:

— Զոբան,— չոր պատասխանեց:

— Համագումար գալու համար որքա՞ն դուլար կս մուծել:

— Էս ի՞նչ է գլխից դուրս տալիս,— Առաքելյանը դարձավ թարգմանչին,— սրան ապա՝ մեզ մոտ բանվոր-ծառայողների իշխանություն է, կապիտալիստական երկիր չէ, ժուռնալիստ է ու էդքան չի՞ հասկանում: Ասա՝ հակառակը, պետությունն ինքն է մեզ փող տվել, որ համագումար գանք: Ըհը՛,— նա ձեռքը տարավ գրպանը, հանեց դրամն ու պահեց արտասահմանցի ժուռնալիստի աչքերի դիմաց,— կառավարության տված փողն է:

Ժուռնալիստը ժպտալով առավ դրամը, տնտղեց:



Մնացականը ափը զարկեց մյուս գրպանին:

— Էստեղ էլ կա: Ասա,— դիմեց թարգմանչին,— թե իրեն փող է հարկավոր, տամ:

— Այդպիսի բան չի կարելի,— խորհուրդ տվեց թարգմանիչը,— ձեր դրամը դրեք ձեր գրպանը:

— Բա ի՞նչ անեմ, խամ-խամ խոսում է:

— Այս համագումարում ամենաշատը ձեզ ի՞նչ է ուր գալիս,— շարունակեց ժուռնալիստը:

— Ամեն ինչ:

— Օրինակ:

— Էն որ Ամերիկային լավ քննադատեցին:

— Անձամբ քեզ Ամերիկան ի՞նչ վատ բան է արել,— փորձեց ժուռնալիստը:

— Ինձ ինչ կարող է անել, ես խորհրդային քաղաքացի եմ, ինձանից վախենում է, վիետնամցիների հոգին առավ: Թարգմանիչը բառ-բառ թարգմանեց:

— Օօօ,— արտասահմանցին կծեց շուրթերը, ապա ջնորհակալութուն հայտնեց ու հեռացավ: Իսկ թարգմանիչը աչքով արեց և Մնացականի ականջին շշնջաց:

— Մոլորե՛ց:

## 7

— Ցոթը լրացա՞վ,— Մնացը սղալում է շափրված ծնոտը,— շատ խոսեցինք. գոմեր պետք է գնամ:

— Մի օր էլ որ հիշես...

— Ի՞նչ հիշեմ, մեկն էլ հենց երեկ... Երեկ հարբել եմ... կյանքումս առաջին անգամ...



Հարբեց փորձի համար և մի քիչ էլ նպատակով: Երկու օր առաջ աշխատանքային ընկերներից մեկը հարբած կանգնեց գիմացը ու, ոչ մեկ, ոչ երկու՝

— Ումուդ ես, Մնաց ես, ինչ ես, իմ վեջը չի, ուզենամ քեզ փոշի կդարձնեմ, ա՛յ, էսպես կլցնեմ բուռս, Ֆֆֆըրը... կփչեմ...:

- Մնո, քեզ ի՞նչ վատութիւն եմ արել:
- Չոռ ու ցավ ես արել, ես քո... — հայհոյեց:
- Ամոթ է, մեծ մարդ ես, ա՛յ տղա:
- Այ տղան դու ես, ես քո...
- Թուո՛ւ... էդ ում ես թքում, ես սր թքեմ, մեղք լող կտաս, հարիֆ:

Մնացականը թողեց հեռացավ: Ընկերը գնալով ձայնը բարձրացնում էր՝ հիշոցներ էր հանոցնում հտեից, ջահելավարի ահ տալիս:

— Կանգնիր,— գոռում էր, տղամարդ ես՝ մի փախի:

«Ախմախ,— Մնացի պատասխանը մտքում էր,— առավոտյան կգաս ներողութիւն կխնդրես, մեղավոր կժպտաս, ես քեզ շե՛մ ճանաչում»:

Մնոն ինչքան խմում էր, վերջը դա էր՝ հայհոյում էր սրան-նրան, աղմկում, իսկ հաջորդ օրը մեղավոր ժպտում էր ու մեղանշում,— «խմած եմ եղել, շեմ հասկացել արածըս... Անտեր խմիչքը ում փորը ընկավ՝ էգպես է...»:

«Հաստա՛տ՝ էդպես է... Մի օր կփորձեմ...»,— հա որոշում էր Մնացականը, բայց քանի որ խմել չէր սիրում և ոչ էլ ազատ ժամանակ ուներ, մոռանում էր որոշումը և փորձի համար չէր հարբում: Բայց, ահա Մնոն նորից ստիպում է...

«Հերիք եղավ, էգուց պիտի խմեմ՝ հայհոյեմ էդ ախմախին»:— Թե չէ էդպես օյաղ-օյաղ հայհոյել չի կարող: Մնոն էլ համը հանեց: Այդքան հայհոյում է, անպատասխան թողնել չի կարելի: Անպայման կխմի ու՛ կհայհոյի: Ծվ, վերջապես, փորձել է հարկավոր՝ ի՞նչ բան է էդ հաբբելը: Քառասունհինգ տարեկան մարդ է, մի անդամ չի հարբել: Ամոթ է:

Հաջորդ առավոտյան Մնոն ժպտալով եկավ, ժպտալով բարևեց, Մնացականին՝ հատուկ:

— Երեկ քեզ բա՛ն եմ ասել, Ումուդ:

Փոխաբենը տղաները պատասխանեցին.

— էլ պակաս տե՛ղ ես թողել:

— Խմած էի, Ումուդ ջան, ներող կլինես, էդ անտեր խմիչքը...

— Ոչ մի խմած, ոչ մի հարբած,— կտրեց Մնացակա-

նը, — էսօք միտափե խմեչա ենք գնում, հայհոյելու հերթը  
իմս է, հերթը եղավ:

Տղաները ծիծաղեցին: Չէին հավատում, թե Մնացը,  
իրօք, խմելու կգնա:

Բայց այս անգամ նա իր սրտումը կատարեց. հարբեց  
փորձի համար և մի քիչ էլ նպատակով: Մնային հայհոյե-  
լու է:

...Հետո ավանի ճաշարանից ընկերները «քեֆով» դուրս  
եկան, Մնոն փողոցով մեկ գոռգոռում էր.

— Տո, դու ո՞վ ես, որ ինձ հետ սեզան ես նստում, որ  
ուզենամ...

Մնացականը կորցրել էր հավասարակշռությունը, օրոր-  
վում է, մշուշված հայացքով նայում ընկերոջ կողմը:

— Մնո... Ախպեր ջան, արի քեզ համբուրեմ, — և ժպտը  
բեղերի տակ հավաքած գնում էր ընկերոջը համբուրելու:

— Տո, դու ո՞վ ես, որ ինձ համբուրես, մուռտալ, կը-  
տամ..., — և հրում էր, — դե սատկիր...

Մնացականը գետինը ավիփեծելով վեր էր կենում և ձեռ-  
քերը գիրկ արած, ժպտալով գնում էր համբուրելու:

— Մնո ջան... ախպեր ջան... թող քեզ համբուրեմ...

— Գնա, քեզ Ումուդ ասողի..., — հայհոյում էր ու նս-  
րից հրում:

Փրը ցերեկ էր, փողոցով մարդիկ էին անցնում՝ բոլորը  
Մնացականին ծանոթ, զարմանում էին, որ Մնացականը  
հարբած է, մոտենում էին և դեռ չբարևած, Մնացականը փա-  
թաթվում էր:

— Վա՛յ ես քս ցավը տանեմ... չըմփ, — համբուրում  
էր, — էս ինչքան ժամանակ իրար շենք տեսել... Արի քեզ  
համբուրեմ... Չըլամփ...

Հետո թևատակերը մտած, տղաները նրան տուն տարան,  
ճանապարհին երգում էր ու երբ մշուշոտ հայացքի դիմաց  
նշմարվում էր մեկը, ոտքը կախ էր պցում՝

— էս ո՞վ է... Վա՛յ... Ինչքան ժամանակ շեմ տեսել, —  
և ճիգ էր թափում ազատվելու ընկերների ձեռքից, — թա-  
ղեք ես դրան համբուրեմ...

Աշխարհի քարտեզի մասին շխոսենք, Հայաստանի քարտեզի վրա էլ փնտրես, չես գտնի Կարմրաշենը: Ու թե Արփա-Սեան թունելի ուղղությանը գծելիս մատիտի ծայրը շքավեր Մարկոս բիձու տնաթերձ հողի ցանկապատին, ո՛չ թորիս Սկորիկովը կգտներ Վայոց ձորում խճճված, փոշոտ ճանապարհի գծիկը, ո՛չ շեռնագործ ինժեներ Տելիքս Դոյդոյանը, և ես գուցե այդպես էլ չիմանայի, որ Ազիզբեկովի շրջանում 50—60 ծխանոց մի գյուղ կա, որը դեռ երեք տարի առաջ ծկլկում էր փողոցով անցնող օտարականի հտևից, իսկ հիմա, եթե օրը ցերեկով ինքնաթիռ իջնի սարերից մեկի գլխին՝ աչք չի ճպի, կասի թունելի համար... ատոմային ումբ է բերել:

— Քեռի թունել ոնց գնամ:

— Ոնց ուզում ես, գնա,— ծառի տակ թափված տերևներն է հավաքում, պատասխանում է, չի նայում:



Հագա թունելագործի արտահագուստ, սաղավարտ դրեցի, ուզեցի հայելի լիներ, որ նայելի ինձ՝ ոտից գլուխ, շկար՝ սովերիս նայեցի, ուզեցի, որ մեր լուսանկարիչ Պողոսը ներկա լիներ...

Տեղամասի պետի տեղակալ Յուրիկ Մկրտչյանի հետ մտա թունել, աչքերս ճպճպացրի, քայլեցի հարյուր քառասունութ մետր, մի քիչ թրշվեցի, մի քիչ վախեցա ու ահագին զարմացած, արևերես ելա:

Յուրիկի նման սոված «կոտորվում էի»: Պետի տեղակալի հետ նստեցի ինքնաթափի խցիկը, հասա գյուղ, Յուրիկի նման ախորժակով կերա, նրա հետ մտա վագոն գրասենյակ, ժպտալով ծանոթացա տեղամասի պետի հետ: Նա կանչել տվեց էլեկտրիկ Կարոյին, գոռաց վրան, ձեռքը խփեց գրասենյանին, կանգնած գոռաց, իսկ Կարոն ժպտաց, ես էլ հեռու: Պատուհանից նայեց այն ուղղությամբ, ուր հավանաբար, մեխանիկ Կիսելը կլիներ, մատը թափ տվեց: Ցուցամատի

ահագնացած ստվերը տարուբերվեց պատուհանից դուրս, մթնշաղով լցված հորիզոնում ու մեխվեց սեղանին.

— Ֆելիքս, «նարյադները» բեր, դիր այստեղ:

Հերթափոխի վարպետ Ֆելիքս Դոյդոյանը «նարյադները» դրեց մատնացույց արված տեղը...

— Անցած ամսվա պլան-կատարողականը...

Սա աշխուժացա. սեղմեցի երկաթյա ինքնահոսի կարմիր նշանը: Ֆելիքսի սև հոնքերի տակից քմծիծաղ կաթեց թվերի վրա դրված ցուցամատին ու իմ երկաթյա ինքնահոսի կարմիր ծայրին:

— Ֆելիքս, ընկերը կգիշերի քեզ մոտ:

Նաև դա էր հանձնարարություն՝ հերթափոխի վարպետ Ֆելիքս Դոյդոյանին:

Ու Ֆելիքսի հյուրն եմ:

Նստած ենք սեղանի մոտ. դեմ-դիմաց: Սեղանի վրա լաքոտ սփռոց կա, հացի չորացած փշրանքներով ափսե, պահածոյի դատարկ, անլվա տուփ, թուղթ, մատիտ, ուսգերմաներեն բառարան, չգիտեմ ինչ ու ինչ և աներես մի ճանճ. տեսել է սուփրի անպակաս առատությունը, որոշել է այս ձմռանը չքնել: Ճանճը ես եմ նկատել, Ֆելիքսը՝ չէ: Ահա բզզոցով մտնում է աչքը, իսկ նա քշում է, ինչպես դեմքը պարուրած ծխախոտի ծուխը ու շարունակում: Նկարում է, գծում, որ հասկանամ:

— Չհասկացա:

— Տե՛ս, նորից եմ գծում:

Թունելագործություն եմ սովորում, Արփա-Սևանի կոնկրետ օրինակով:

— Բայց գիտե՞ս, որ սոված մնացինք:

Սա գրերն ու գծագրերը քաշում եմ դեմս, ջանում եմ մինչև վերջ հասկանալ, մտածում եմ նաև եղած ֆորմուլները անգիր անելու մասին, որպեսզի քաղաք վերադառնալուց հետո ժուռնալիստ ընկերներին զարմացնեմ: Խոսք կբացեմ Արփա-Սևանից և թունելագործության մասին ունեցած իմ բոլոր գիտելիքները, շրխկ-շրխկ, իրար հետևից կթափեմ: Կասեմ՝ թունելագործության մեջ այսպիսի օրենք գոյություն ունի՝ պայթեցումից առաջ կազմվում է հորատանցքերի անձնագիր, նշվում հորատանցքերի տեղն ու քանակը, խո-

բուժյունը: Վերջը, ամեն ինչը տեղը-տեղին: Ինչի՞ է պետք դա: Որպեսզի ուժանակի ազդեցութեան համաշափությունն լինի պայթեցվող ժակերեանի վրա, թափվող ապարը հավաքվի կենտրոնում, բարձելու համար դիրքով և ստացվի հարթ ПОТОЛОК, ТО ЕСТЬ, (այդպես էլ կասեմ) հարթ առաստաղ ու պատ: Հետևապես նաև՝ պայթեցման նախանշված ցիկլ: Իսկ Կարմրաշենի տեղամասում անձնագիր, բան, չկա:

Հետո, որպես ապարթարձիչ, օգտագործվում է ՊՂՄ— 5 մեքենան: Ճիշտ է, «Ճարպիկ» մեքենա է, բայց ինչ-որ շափով դարն ապրած արդեն, որովհետև ասպարեզի վրա կա ՊՊՄ— 4-ը:

Մի ուրիշ հանգամանք. իշնում ես հորան թե չէ, ընկնում ես տեղատարափի տակ: 192 մետր, քիչ չէ՝ անձրևի տակ, գեռ թունել շհասած թրջվում ես: Չորս, հինգ տարի այդպե՞ս պիտի մնա, հնարավոր չէ՞ մի բան անել: Կա՞ հնարավորութեան: Հորանի պատերին ամրացնել երեք ջրորս օղակ և վերջ: Դա նաև մի ուրիշ օգուտ կունենա. գիտեք, չէ՞, հորատման ժամանակ օգտագործվում է նաև ջուր՝ դրսից մղվում, թունել է գալիս, երբեմն էլ կտրվում է (մղիչն է փշացել, շփտես, թե ինչ է եղել), առիթ դառնում պարապուրդի: Իսկ հորանի պատերից հավաքված ջուրը վա՞յ թե կտրվող չէ. ո՛չ մղիչ կա, ո՛չ վասյա, ուրեմն՝ թող հավաքվի ու օգտագործվի հորատման նպատակով: Ճիշտ չե՞մ ասում:

Այստեղ Ալբերտը (մեր տղաներից է) էլ չի համբերի. կնճիռները կհավաքի ճակատին, կկանգնի՞ քայլը կիսատ թողած, կասի.

- Դրանք դու որտեղի՞ց գիտես:
- Դե՛, գիտեմ, էլի:
- Վատ չէ՞... նաև քո ասած ջրակաթերի մեջ պոեզիա կա: էյնշտեյնը...

Որտեղից որտեղ եզրեր կբերի, կհասցնի իրար, բայց կողքանց ու հարցական կնայի էլի. «որտեղի՞ց գիտես»: Դե ինչ կա որ, կարելի է ասել նաև, կարևորը իմանալն է. կամ կարգացել եմ, կամ մի տեղից լսել:

— Կարմրաշենի տեղամասում պոլիտեխնիկի լեռնային ֆակուլտետն ավարտած մի ընկեր ունեմ՝ Ֆելիքսը, նա է ասել: Ուզում է հորատման աշխատանքների անձնագիր կազ-

միլ թուրք հերթափոխների համար (այն էլ առանց վարձատրութեան), ձեռք են թափ տալիս. «Գրքային բաներ ես ասում»: Խոսք է բացում ապարբարձիչ նոր մեքենայի, շրորս օղակների մասին, ժպտում. «Շատ ես ումանտիկ, ա՛յ Ֆելիքս, քեզ ինչ ասում են, էն արա»: Ուզում է...

— Ողջույն այդ տղային, ես նրա մասին պիտի գրեմ, պետք է պահել տղային, նա մեր մարզն է,— հենց տրամվայի գծերի արանքում քայլը կես արած՝ Ալբերտը կկանգնի ու կհայտարարի բարձրաձայն:

— Վա՛յ, Արո, Աբո...



— Ինչո՞ւ ես ծիծաղում:

Ֆելիքսն է շեմին կանգնած: Հաց է բերել, երկու տուփ պահածո, օղի: Հացը՝ փոփց, պահածոները՝ Մարտինենց տնից, օղին... Պատահական մի դուռ բացել է. «Օղի շունե՞ք»: Ինչու չէ, դաշտի գյուղերի օղու վարպետները կարմրաշենցիների հեա բարեկամացել են. տիկ ու տակառով օղի են բերում: Բա թողնեն թունելագործները գուրկ մնա՞ն:

Ափսեում եղած հացի փշրանքները Ֆելիքսը խնամքով փաթաթում, դնում է սենյակի անկյունը: Հարևանի հավերի համար է: Չվերի տերն էլի ինքն ու Ատոմն են: Հարևանուհին կգա, դուռը կծեծի, կասի. «էս տասը ձուն վերցրեք, շուտ արեք, էն թուլեն գլխի է, ճնճնալով հետևիցս գալիս է»: Դրամը կդնեն թասի մեջ, կտան հարևանուհուն, ձվերը կխաշեն, կբերեն «թուլին» էլ, կկռվեցնեն ձվերը, կուտեն, հետո Ատոմը բանաստեղծություն կգրի հավերի ու «թուլի» մասին:

Խմում ենք և ափսոսում, թե ինչու մինչև Կարմրաշեն հասնելը, էն ճամփաողորներում, տկի բերանը չի բացվել տիրոջից թաքուն: Հետո Ֆելիքսը ափսս է փնտրում: Կա՛, լվացված՝ չկա:

— Է՛,— ձեռքը թափ է տալիս,— մի ամիս չէ՛, երկուսը չէ՛, մի տարի էլ չէ՛. ես՝ այստեղ, կինս ու երեխաս՝ Ծրեանում, այսպես չի լինի: Ուզում եմ բերել: Կինս տնտեսագետ է, խոստացել են աշխատանքի տեղավորել, գուցե իրենց խոստման տերը լինեն, բայց...



Բայց, ախր, կարևոր մի բան կա, որ կաշկանդում է Կինը միշտ բարձր է տեսել իրեն, ուժեղ, այնպես է թվում նրան, թե ոչ մի արգելք չի կարող կանգնել ամուսնու ճանապարհին: Չի՛ կարող և վերջ. Ճելիքսը ուժեղ է, միշտ է ապացուցել: Հանգի՛ստ: Երկուսին գումարել է երկու, ստացել է ճշտված մի թիվ ու կանգնել մի կո՞ղմ: Չէ՛: Կոխվ է արել ամբողջ կյանքում՝ տո՛, փողոցի էն խուլիգաններից սկսած, մինչև գիտահետադոտական ինստիտուտի ճերմակ մագերով մարդու հետ: Եվ քիթն ու պոռոչն արյունոտելով, բաց աչքերով գիշերներ լուսացնելով՝ հաղթել է: Ճիշտ ու ճշմարիտ է եղել, ախր: Հիմա էլ է ճիշտ: Ի՞նչ է, լեռնային գործը չի հասկանում, կյանքից կտրված առաջարկություններ է անում: Չէ՛: Բայց ինչո՞ւ չի ստացվում: Ընդունենք այս հարցը կյուդմիլան է տալիս: Դե, չի ստացվում, էլի: Եկ այսպես շոր-շոր պատասխանիր, շուռ տուր երեսդ ու՝ քո նկատմամբ անսահման հավատով լցված մարդու աչքերում մնա այն պատվանդանի վրա, ինչ եղել ես: Չե՛ս մնա:

— Է՛,— ձեռքը թափ է տալիս,— չեմ հասկանում, ո՞րն է ճիշտ, ղգացմունքայի՞ն լինել, թե՞ անտարբեր: Գուցե վերջի՞նը, որը ինձանից պահանջում են:

Բայց, ախր, սառը, անտարբեր լինել, նշանակում է շտեմնել, արհամարհել մարդուն: Այդ դեպքում դու էլ ես մարդ, և կմտածես, որ մեկն էլ քեզ է արհամարհում: Մանր ղգացում: Չլինել անտարբեր, նշանակում է ունենալ հույո, որ մի ուրիշն էլ քեզ է նկատում, գնահատում է մի քիչ, մի վայրկյան, մի րոպե, կես ժամ գցում տրամադրությունը, երբ դու ես տխուր: Վա՛տ է: Միայն այս դեպքում կարելի է ապրել:

— Խմենք, հա՛, մի բաժակ էլ: Մինչև հերթափոխի ժամը գա՛՝ ազդեցությունը կանցնի...

Եթե այդպես է, ուրեմն ինչո՞ւ մարդ պետք է ստիպի իրեն՝ ձեռք բարձրացնել սեփական ղգացմունքի վրա, սեփական սունդուակից հարսնաշորը գողանա, տանի շուկա, մուր քսի պատուհանի ապակիներին, որ արևի շողերը չմտնեն ներս, տո՛, չգիտեմ ինչ ու ինչ անի և չգիտեմ հանուն ինչի:

Տասը օր է, օրը տասը անգամ հիշում է. հեռախոսով խոսում էր տնեցիներին հետ, վերջում երեքամյա աղջիկը կպել էր լսափողին ու շէր պոկվում: «Պա՛»,— ասում է, շա-

րունակութիւնը շնչելն է՝ կարոտի ծանր շունչ: Իսկ ժամանակը լրացել է: Դեհ՝ լսափողը: Սյուզաննայի ականջը լցնի մետաղի շրխկոցով: Դեհ՝ եկ ու այդպես արա: Հիմա հեռախոսավարուհիներից մեկը մեջ կընկնի, ու կբաժանվեն ինքն ու աղջիկը:

«Սյուզաննա, լսափողը վար դիր, բալիկս»:

«Չէ՛»:

«Տղա ջան, մի շտապիր, խոսիր, խոսիր»,— փոստի աշխատողն է գիծ մտել, որի մասին պահ առաջ ինչ էր մտածում: Որտեղի՞ց է գալիս մարդու նկատմամբ հավատի պակասը: Թքած, աշխարհի բոլոր մարդիկ կարողանային տեղն ու տեղը հակառակն ապացուցել, ինչպես այդ հեռախոսավարուհին:

«Հինգ րոպե էլ խոսիր, կես ժամ, մի ժամ էլ խոսիր, շմանջատի»,— զգացել է զուգահեռ լարերով գնացող-եկող կարոտը:

Կուզե՞ք հեռախոսավարուհուն մեղադրեք օրինազանցության մեջ: Ինչ կա որ, կարելի է, միայն թե օրենսգիրքը թեատակին դատավոր լինի: Փառք աստծո, ինչքան ասեք կա:

— Չխմե՞նք,— Ֆելիքսի աչքերի մեջ կարգ ու կանոնով չթորված օդու մրուր կա,— Ատումն այստեղ լինեք, կասեր՝ ընկեր ինձենեք, Իվանը քեզանից ի՞նչ օրինակ կվերցնի... Ոչի՞նչ, այսօր Իվանը ինձ կենրի, բացվել եմ:

Մի երկու ամիս առաջ հերթափոխի բրիգադիր Բորիս Սկորիկովին թույլատրեց մի 5—6 օրով գնալ տուն՝ Դոնեցկ: Մարդ է, չէ՞ որ կարոտ ունի, այն էլ թունելագործի, բազմապատկված՝ ամեն վայրկյան սաղավարտի շուրջ ֆոռացող վտանգով: Ճանապարհեց, պայմանավորվեց բրիգադի անդամների հետ՝ բացակա շնշանակել Սկորիկովին: Դեհ՝ մարդ է, թող տուն գնալ-գալը հանգիստ նստի հոգուն: Թե չէ աշխատավարձի օրը, մեկ էլ տեսար, ընկավ տրամադրութիւնը, ափսոսաց բացակա օրերի համար: Բրիգադի անդամները ուրախությամբ համաձայնեցին. Բորիսին նշանակել ներկա: Վերադասում իմացան, ժպտացին. «հա՛, դո՛ւ էլ ես ուզում բերանդ քաղցրացնել, Ֆելիքս, ոչի՞նչ, կամաց-կամաց հասունանում ես...»: Ստիպված՝ նշանակեց բացակա,

Թող բրիգադի անդամները զարմանան, Թող տրտեղան. Բո-  
րիս Սկորիկովը թունելից դուրս է եկել, նստել է գնացք,  
ուրեմն օրենքով պետք է ստանա բացակա: Վե՛րջ:

— Լսիր,— Տելիքսի հոնքերի արանքում կնճիոնները իրար  
շալակ են ելել,— վերջապես ե՞րբ ենք վստահելու մար-  
դուն,— այնպես է նայում ինձ, կարծես ես պետք է որոշեմ,  
թե երբվանի՞ց վստահել մարդուն,— եթե այդպես է. «Հրա-  
մայում եմ էգուցվանից...»:— Իսկ դու գիտես, որ հավատալ,  
վստահել մարդուն, նշանակում է նրան դնել մեծ, շատ մեծ  
պարտքի տակ,— Տելիքսի տաք աչքերը կռիվ են անում ինձ  
հետ,— ասեմ հիմա...



Գիշեր է: Որտեղի՞ց գիտես, թե գիշեր է, թունելի գիշերն  
ու ցերեկը ո՞րն է: Հա՛, հորան իջնելուց առաջ բժախնդրո-  
րեն նայեցի ժամացույցիս, կարծես Տելիքսի փոխարեն ես  
էի հերթափոխը աշխատանքի տանում: Գիշերվա տասներ-  
կուսն էր:

Տելիքսի փեշից շեմ պոկվում:

— Անուններն ասա,— գոռում եմ ականջի տակ: Ես իմ  
ձայնը շեմ լսում, չգիտեմ, Տելիքսը լսե՞լ է, թե չէ, գլխով է  
անում, բայց միայն այդքանը: Քայլում է, ես՝ ետևից: Օդի  
ռետինն խողովակը պայթել է: Տը՛շը՛... Մաղկի շրշյուն,  
մեղվի բզզոց օդն էլ զայրույթ ունի, այն էլ ինչպիսի՞: Նա-  
խորդ հերթափոխը պայթեցում է կատարել. վագոնիկների  
ռելսերից մեկի կենտրոնից շորս թիղ ջարդվել, թռել է: Բա՛,  
երկաթյա ռելսն էլ կարող է ջարդվել: Եռակցող ու չգիտեմ  
եռանջատող ապարատով շեն կտրել, է՛, ջարդվել է: Ուժե՛ր  
կան աշխարհում: Հորատիչներից մեկը լուվել, մնացել է  
ապարի մեջ, ո՛չ ետ, ո՛չ առաջ: Վա՛, ոտքս վրա շեկավ, էն  
մոայլ դեմքով ոուսը հիմա ինձ հայհոյում է: է, ո՞րը մոայլ  
չէ, Տելիքսն էլ հետները: Քիչ առաջ այդպես չէր, քիչ առաջ  
այնտեղ, դրսում, ոչ մեկը այդպես լուրջ ու լրջախոհ, այդ-  
պես մոայլ չէր: Երևի ես էլ խստահայաց եմ ու գլխի շեմ:  
Երևի հանքաշխարհում այդպես պետք է լինի:

Իսկ մեկը փայլեցնում է ատամները, պողպատյա ատամ-  
ները: (Գուցե նրա լրջությունն էլ այդպես է արտահայտ-

վում)։ Անմիջապես ճանաչում եմ՝ Վլադիմիր Միխեն է։ Սենյակում Ֆելիքսը նրան այդպես էլ բնութագրեց. «Այսքանից հետո դու կարծում ես ինձ այստեղ կապող քի՞չ բան կա,— և առաջինը՝ ատամների մասին,— Վլադիմիր Միխենը պողպատյա ատամներով մի այնպիսի հարմոնիկ ժպիտ է նվագում, որ քեֆդ դալիս է։ Ազնիվ խոսք, նա արտակարգ ժպիտ ունի։ Երբեմն «նարյադները» տալիս եմ, որ ինքը գրի։ Ինչո՞ւ եմ տալիս, որովհետև զգում եմ, որ այդ պահին նա ինքն իր մեջ սկսում է բարձրանալ։ Գեղեցիկ գրելու ճիգով թվերն ու տառերը քանդակում է։ Կամ կենդանի բեզուզիլն։ Եթե թունելագործի արձան է պետք քանդակել, որպես նախատիպ կարելի է ընտրել կենդանին։ Իսկ Ատո՞մը։ Տո, հենց իր հարևանի թուլան... Եվ վերջապես, ես լեռնագործ ինժեներ եմ, իսկ այստեղով Արփա-Սևան թունելը պետք է անցնի»։

Մեկը կոպիտ քաշում է թևիցս, և լամպերի փոշոտված լույսի միջից շեղ նայում. «Փորձանք շես, այ մարգ, հեռու գնա»։ Ֆելիքսը նկատում է, ժպտում՝ ջրում ընկերոջ կոստյումը, բռնում թև։

— Գնա հանգստացի, հա՞։

Ջի ուզում ասել, թե խանգարում ես։

Դուրս եմ գալիս, ականջներիցս թափում թունելի աղմուկը, թունելագործի զգեստները հանում եմ, հագնում իմը, ձեռքերս խոթում գրպանս ու քայլում հանգիստ։ Լուսնի պատկերն եմ որոնում։ Մոռացել եմ թունելն էլ, Ֆելիքսին էլ, Սկորիկովի իրարանցումն ու Միխենի պողպատյա ատամների հարմոնիան։ Միայն երբեմն թևիս վրա ցավ եմ զգում... կոպիտ հրեց։

Մեկ լուսինը ինձ թվում է որպես երդիկ, մեկ՝ ջրաղացաքար, որ մորս ուզած մանր ալյուրն է թափում, մեկ... Եվ մեկեն, շգիտեմ ինչպես, գլխի եմ ընկնում, որ լուսինն այդքան սպիտակ, ճեփ-ճերմակ, թափանցիկ, շայց ստվեր ունի, այն էլ՝ սև։

Այդ գիշերովա և այդ օրվա լուսնի ամենախրական ընկալումը երևի գա էր։

Ինքնաթափը վնգվնգում է: Թափքում հարվող ցեմենտից

— էլանք, հա՛, շարդ տանեմ,— Գառնիկը կրքոտ խաբում է: Ամեն օր երթ է անում, ամեն օր, ճանապարհի այս հատվածում, խաբում է մեքենային. «էլանք, հա՛...»:

Ինքնաթափը ծիծաղելիորեն թեթևաուլիկ է դարձել: Հետաքրքիր է, այս անմիս ու անարյուն մեքենան տիրոջ տնազն է անում և զարմանալիորեն նման:

— Գառնի՛կ, ավտոդ շոգոքորթում է:

— Ճարն ինչ:

Մտածում եմ Գառնիկին ու իր ավտոյին ճարահատ արած փոշեթափախ ճանապարհի մասին: Ախր, ճանապարհն էլ իր ճամփան ունի: Շունչ ու շնչավոր է: Եվ այնքան է հոգնած, որքան ճամփորդը: Օրինակ, այսպիսի տեղանքով հայացքը միայն կարող էր մաղցել, այս ճանապարհը ո՞նց է բարձրացել: Գնում է՝ սայթաքում, գնում է՝ սայթաքում է, կառչում մի մասրենուց, կուռը տալիս մի քարի, էլի գնում՝ հեկհե, փոշի շնչելով: Հետո սարի գոգնոցին արևկող արած, հեքիաթ պատմող շենում՝ մի քիչ շունչ է առնում, մի քիչ խըլվլացնում շենի ծանրացած կոպերը, անցնում է, ու կիրճին ցույց տալիս բլբլացող լեզուն:

Ուրեմն, դադրած ճամփի վերջը կիրճի լեզուն է՝ մի շորս տարի առաջ չկար, և կիրճում ուղտաոտ ամպերի ճերմակ լուսվունն էր կաթկթում:

Կիրճում եռակցված երկաթածողերով բարձրացած մի բուրդ կա՞ մի քանի «թուփ» ազրոշիֆերով զարուլված: Բուրդից ~~անում է~~ զրնգ ու զրնգոց:

Չորս տարի առաջ, երբ չի եղել բուրդը, եղել է փայտյա խաչածև մի ցուցանակ՝ «Արփա Սևան, հորան Ռ »: Յուցանակը մի կողմ դրելու օրը՝ մոտակա գյուղը պարս է տվել, դժժացել կիրճում: Բա չիմանա՞, թե ոնց են սկսում հարանի շինարարությունը: Զգիտեմ քանի պարան հոր պիտի փորվի գուցե հենց առաջին թզի վրա չօւր է դուրս գալու Թ՛, բայց պետք է: Կարող է կարող է հող է դուրս գալու, հող, ~~պարս~~ սուռ, անբար հող: Փետք է, պե՛տք

— Ժողովո՞ւրդ... — սկսել է մայրաքաղաքից եկածը:

Հետո, երբ սովոր ափերի հատուկենտ մաշված չրխկոցի արձագանքը քարերի վրա շփշփացել է կիրճում, ալիքվող պարսի կենտրոնում կանգնած են մնացել միայն սաղավարտակիր մարդիկ:

Քանդել են, դուրս է եկել մի քիչ հող: Կա՞վ է:

Քանդել են, քար է դուրս եկել: Է՛, կիրճի քարերը քիչ էին, էլի՛:

Հորատել են՝ ապար:

Հարյուր մետր ընդերք են իջել՝ ապար:

Շարունակել են՝ ապար:

Հիմա Արփային ընդառաջ են գնում, դեմ կանգնողը ապարն է, դեպի Սևան են գնում՝ ապարն է: Ապարն էլ հո ապար չի՝ փշուր-փշուր, կտոր-կտոր կապույտ երկինք: Ի՞նչ է, կիրճի սաղավարտակիրները, երբ հանկարծ անհետանում են, ընդե՞րքն են իջնում, թե՞ բարձրանում երկինք. փորում, շարունակում հարդագողի ճամփան, ցած թափում երկնքի կապույտ փշուրները:

Եվ կիրճում քանդակվել է մի խաչ. մի ծայրը ձգվում է Արփա, մյուսը՝ Սևան, մեկը թաղված է խո՞ր ընդերքում, հասել է Երկիր մոլորակի առանցքը, մյուսը ուղղված է երկինք:

— Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ...

Հող ու ջուր արարողների աղոթքն է մաղվում կիրճում: Կիրճում մի վագոնիկ ապար էլ ավելացավ:

Մոտ հարյուր տարի առաջ, Ֆրանսիացիները եկել են Հայաստան, շափշփել, հոտոտել, հասել են Ղափան, կանգնել լերկ մի սարի մոտ: Փորփրել են, հանել այսպիսի ապար, թափել: Փորփրել են, տարել շերտ-շերտ պղինձ, ապարը թափել:

Թե տարած պղինձը ինչ են արել, չգիտեմ, բայց թափած ապարը քայքայվել, դարձել է հող. ղափանցիները ցորեն են ցանում:

Զեր հորն օղորմի, ինչո՞ւ ավելի շատ պղինձ չեք հանել. ղափանցիները կարգին հող կունենային: Ինչո՞ւ Վայոց ձորում էլ, հենց Արփայի մոտերքը, Կեչուտի սարերում, չեք որոնել՝ պղինձ, արծաթ, ոսկի: Որոնած լինեիք, գտած, կրած

լինեիք իշարեո-իշարեո սսկի, արծաթ, պղինձ: Հիմա գուցե կունենայիք մի քանի քաջ թունել և անպայման՝ մի քանի արտ հող:

— Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ...

Զուր ու հող արարողների աղոթքն է մաղվում կիրճում: Մի... մի... մի եղունգածայր թունել քացվեց: Կիրճում մի վազոնիկ տպար էլ ավելացավ. հարյուր տարի հետո կգտնես մի պտղունց հող...

Զը՛նգ, զը՛նգ... արծագանքում է կիրճը, կիրճից ընդերքի խոնավ հոտն է գալիս, ջրաղացի ավրառան հոտն ես առնում:

Կիրճի ճամփա-լեղվին խլվում է մի մարդ, գլխին փափախ ունի, դեմը աշխարհի գլուխկախ կենդանին է. ճաճոան ուսլակին լծված: էս ի՞նչ է, քեռի, ջրաղա՞ց ես եկել, աղո՞ւն ես բերել, ալյո՞ւր պետք է տանեա: էգ էշը որտեղի՞ց քեզ, էգ սայլակը որտեղի՞ց, ո՞նց ես պահել էշն ու էշի ուսլակը: Կյանք ունենաս, քեռի՛, դու մեր ջրաղացպան լուսահոգի Ղազարի շունչն ես, կլոճ էլ կունենաս: Գալիս, կանգնում է հողի կուտակի մոտ, «մատնաքաշ» կոստյումով ծածկում է էշի քրտնած մեջքը, ձեռքն առնում բաճը:

— Քեռի, ի՞նչ ես անում,— Վասյան ձեռքերը կանթած կանգնել է:

— Ի՞նչ ես ասում, է՛,— հող է լցնում սայլակը:

— Քեռի՛,— Վասյան պոկ շի գալիս, մտտը կպցնում է հողին, ձեռքերով է խոսում,— ո՞ւր ես տանում, ի՞նչ պետք է անես:

— Հա՛,— ծերունին գլխի է ընկնում,— գողանում եմ, գողանո՞ւմ,— գոռում է, որ Վասյան հատկանա:— Խոռո՞շ, խլե՛ք,— ասում ու սպառում է իմացած ուտերենը:

Վասյան շը՛րխկ-շը՛րխկ ծիծաղում է, նայում է հողին, էշին, սայլակին, մարդուն, շըրխկ-շըրխկ ծիծաղում է:

— Շո՞ւն, շանորդի՛,— շեղ նայում է ծերունին:

— Թուգան՞շ:

— Գնա՛, գնա՛,— նեղսրտած քշում է ձեռքով,— հիմա էլ էշին կպավ:— էդպես է,— նայում է հեռացող Վասյայի հեակից,— կուշտը սովածին բես է բերում: Հողը ո՞ւր ես տանում,— քրթմնջում է ու դժգոհ հայացքը կանգնեցնում վրաս,— հա՞յ ես:



Գլխով հմ անում, հայավարի ժպտում հմ, և իմ աչքերի կապույտ գույնը փոխվում է:

— Չլինի՞ մտքումդ դու էլ ես ծիծաղում:

— Ե՛ս... Ես գաղթականի տղա հմ:

— Հա՞,— բահը գցում է մի կողմ:— Նստի՛ր, երկրացու տղա՛,— հողի կույտի վրա տեղ է անում ինձ,— մարագ հմ պատրաստել, ծածկի հող հմ տանում:

Նայում հմ Աբրահամ քեռու ցելված դեմքին, և ինձ թվում է, որ մեր առաջին հանդիպումը չէ: Որտե՞ղ ենք հանդիպել: Հը՞... Հետո հիշում հմ: Չէ՛, չենք հանդիպել, պարզապես նմանեցնում հմ էջմիածնեցի Վահրամին, որին անցած ամառանն էի հանդիպել: Վահրամը բահն առած նախ իր ստվերն էր բզկտում, որը շան լակոտի պես փաթաթվել էր ոտքերին ու պոկ չէր գալիս, և ապա՝ կտրում էր հողը:

«Շոգ է,— ասաց,— Սևան գնացած կլինեիր... Շոգ է,— կրկնեց, հայացքով ցույց տալով այգուն կուրծք տված-ելած առուն:— Սևանից մինչև այստեղ է հասել, հալվել է... Շոգ է,— հանեց թաց թաշկինակը:— Ասում են Սևանի ջուրը շատ է պակասել... Բա էս վազերի հալը ո՞նց կլինի, կչորանան, ախր»:

Ես նայում էի «հալված» առվի տափ եկած կոհակներին և մտածում, որ այդ առուն պորտալար է:

Հենց ինքը՝ առվին ջուր բերող Հրազդանը գետ չէ, մի ծոմոված պորտալար է, Սևանը՝ Վահրամի ստվերի տակ կուչ եկած վաղին կապող:

Բա ի՞նչ, գետերն իրենց կարգ ու կանոնն ունեն. որտեղից սկսվում են, թող սկսվեն. միայն թե գետում, թափվում են ծով: Մի ժամանակ Հրազդանը գետ է եղել: Ե՞րբ: Դե, ժամանակ, ժամանակ առաջ, երբ Արարատյան հովիտը չի եղել, նույն տեղում եղել է ծով՝ անունով... անունով կարծեմ Տեսաթ: Բա էդ ծովը ո՞ւր գնաց: Չհանգամը: Կա՞ է, որ չկա: Հիմա մեր օջախը հողե հասակ պիտի ունենա՞ր, թե՞ չէ, Վահրամը վաղ պիտի մշակե՞ր:

Վերջը, Հրազդանը ծոմոված պորտալար է, Սևանը՝ մայր, հովիտը՝ որդին: Չէ՛, Արարատյան հովիտն է մայր, Սևանը՝ որդին: Չէ՛... Դե, երկուսն էլ մեկ են՝ մեր մի թառ

ջուրն ու մի թիզ հողը հավասարապես պետք են ու պետքա-  
կան:

— Տղես էլ է էստեղ աշխատում,— էշ ու սայլակի տեր  
Աբրահամ քեռին կտրում է միտքս:

— Հա՛:— Չգիտեմ ինչու, ինձ թվում էր, թե նա հավերին  
կուտ տվող մի պառավ պիտի ունենար, միայն այդքանը:  
Թունելագործ տղա ունի: Լավ է: Մի հինգ-վեց տարի առաջ  
Գևորգը դաշտից տուն է եկել, հետն էլ գինակոշվելու ծանու-  
ցագիրը: Գնացել է բանակ, ծառայել, վերադարձել է, ձեռ է  
քաշել դաշտի բանուգործից: Աչք է տվել հարևանի տղային,  
թե՛ խամ ու խոպան պիտի գնամ: Հայրը մեջ է ընկել: Ա՛յ  
բալամ, ասել է, մեր հարևանի տղայի երեսի մեռոնն արդեն  
կորել է. մի կին էստեղ ունի, մեկն՝ էնտեղ: Գնում է՝ գյուղի  
կիսն ու երեխաներն են շանչ անում, գալիս է, այնտեղի կիսն  
է զույգ ոտը դնում մի մաշիկի մեջ, թե՛ կամ մնա, կամ  
հետդ գալիս եմ: Մի օր կգնա ու էլ ետ չի գա: Բերածն էլ  
ի՞նչ է: Հե՛շ: Գալու իրիկունը հարևան-բարեկամ մի երկու  
թաս աչքալուսանք է խմացնում, առավոտյան զարթնում,  
ամաշում է նայի կնոջն ու երեխաներին:

— Ասի, ա՛յ բալամ, էդ խամ ու խոպան գնալն անպայ-  
ման գնացքո՞վ է, կոխոզ շես ուզում, էս քեզ քլունգ, էս էլ  
քեզ խամուխոպան: Շնորհակա՛լ եմ, լսեց:



Կիրճում կանգնում է մի կապույտ «Վուզա»:

— Ըհը՛, Բաբկեն Բարսեղովիչը:

— Վա՛հ, Աբրահամ քեռի, դու որտեղից ես սովորել պե-  
տերին այդպես կոչել, հո «Արմենիա» ոեստորանի սրածայր  
բեղերով դոնապա՞հը շես:

— Երկրացու տղա, թունելի պետը քեզ ծանո՞թ է, ավտո  
ուղի, հող տանեմ. էս կաշկով բան դուրս չի գա:

Պետին շրջապատել են: Այդքան որտեղի՞ց հավաքվեցին:  
Աբտոն ամենամոտն է կանգնել՝ տեղակալ է: «Օրենքով»,  
Արտոյից մի քիչ հեռու, Մարատն ու Մանվելը պետք է  
կանգնած լինեն. ինժեներ տղաներ են, հերթափոխերի պե-  
տեր, բայց հեռու են պահել իրենց: Չեղա՞վ, այդպես չի կա-  
րելի, երեք-չորս տարի կյանքի հետ ճակատ-ճակատի տալը

բավական չէ հասկանալու համար, որ պետին մոտ-մոտ կանգնել է պետք: Եվ Բաբկեն Բարսեղովիչը մատը կնյաղի վրա է թափ տալիս, հայացքը՝ նրանց:

— Թունելում լամպերը ինչո՞ւ են պակաս, հը՞,— կիր-  
ճում մի սեղան էլ չկա բռունցքը խփի,— իմացիր, հա՛, պոչդ  
կխուզեմ:

Իսկ դուք, Մանվել և Մարատ, ինչո՞ւ եք հեռու կանգնել, իբր ի՞նչ եք ապացուցում: Կփափկեք, պետին մոտ-մոտ կանգնելու համար իրարից առաջ կանցնեք, սպասե՛ք դեռ: Ամեն մեկդ մի հերթափոխի պետ եք, ինչո՞ւ ժամանակին չեք հայտնել, որ թունելում լամպեր ու չգիտեմ ինչ զահրու-  
մար է պակասում: Մինչև իրիկուն փիլիսոփայում եք, լեռնա-  
յին գործում նորություններ եք ուզում մտցնել: Բավական է, փակեք այդ լեկցիաներն ու գրքերը, վերջ տվեք հաշվարկ-  
ներին:

— Գործ արեք, գո՛րծ,— և նա դժգոհ շուռ է տալիս երե-  
սը: Պահեստապետ Նաստյա մորաքույրն է ընկնում նրա  
հայացքի տակ:— Հլա մի մո՛տ արի...

— Քեո՛ի՛, պետը ջղային մարդ է, ավտո չեմ ուղի,— հու-  
սախաբ եմ անում:

— Չէ՛, ա՛յ բալամ,— հերքում է կարծիքս,— ջղային չէ՛,  
էստեղից ոտը քաշեց, կծիծաղի, քեֆ կանի:

Բաբկեն Բարսեղովիչը նստում է «Վոլգան», ջղային պոկ-  
վում տեղից, ետևից տանելով հայացքների խուրձը:

— էս տարի առավ,— խոսքը «Վոլգայի» մասին է:

Ախր դու որտեղի՞ց գիտես, քեո՛ի՛, ինչո՞ւ գիտես, քո  
իմանալուց ի՞նչ օգուտ... Գու սայլակդ լցրու հողով, բաճ-  
կոնդ բարձկանի մեջքից առ քո թիկունքին, հողը տար, լցրու  
մարագիդ վրա ու միամի՛տ քեզ համար նստիր շեմիդ: Ջղա-  
րա փաթաթիր, ծուխ ու խոհեք խառնիր իրար, թող սահմա-  
նե-սահման անցնեն, հալվեն, գնան...

Չէ՞, հորս երկրացին պետի մասին ուրիշ բան էլ գիտե:  
Որտեղից որտեղ աչքերի մեջ ծնծղում է ջահել օրերի ժպի-  
տը, թեքվում է ականջիս, շնչում... Հետո ոահմանափակում  
բարձրաձայն.

— Բա՛, ջահելություն է... Իմը թը՛րոտ...

Արևի հետ կիրճ եմ մտել, արևը արդեն տասը պարան ճամփա է կտրել, իսկ ես դեռ Արտոյին եմ սպասում:

Լրագրող ընկերոջիցս երկտող էլ ունեմ Արտո Մարկոսյանի անունով, թե՛ «Արտո ջան, ընկերս ձեզ մոտ գործուղում է գալիս, լավ կնայես: Բարևներով Լևոն Ա.» (Հետաքրքիր է, գործուղում գնալուց նույնիսկ, մինչև տեղ հասնելը, ծանոթ-մանոթ ենք ճարած լինում): Արտոն թունելից դուրս եկավ պետի պահանջով, նա իր «գործուղումը» ավարտեց, գնաց, հիմա էլ տեղակալն է զայրացած. էլի պետք է սպասեմ:

— Եթե մեկնումեկին մի բան պատահած լիներ, ես քեզ ոչ թե դատի կտայի, այլ տեղնուտեղը կսպանեի, հասկանո՞ւմ ես, կսպանեի:

Վալյան, իրոք, մեղավոր է: Կարմրանդուկն գ մատը մի վայրկյան շուտ է մոտեցրել կարմիր կոճակին. մի պահ շուտ է եղել թունել վերադարձող վագոնիկի ազդանշանը և...

— Ես չլինեի, Սիմոնը չկա՛ր, — նորոն քսվում է պետի տեղակալին, ցույց տալիս քերծված ու սևացած սրունքը:

— Մինչև իրիկուն աչքերդ ֆոֆոացնում ես, — Արտոն չի խաղաղվում, նամանավանդ որ Վալյան գլուխն էլ չի կախում, մեղքն էլ չի ընդունում, գեռ բողոքում է.

— Ես չեմ եկել այստեղ, որ վիրավորեք:

— Դե գնա՛... վիրավորվողի՛ս տես, — շրխկոցով ծխախոտ է վառում:

— Բայց ես չլինեի, Սիմոնը...

— Լավ դե, հասկացանք, — կտրում է Արտոն, և նորոն կաղին տալով հեռանում է:

Չէ՛, գուցե օրերով սպասեմ, բայց Մարկոսյանին արգտնեմ խաղաղ տրամադրության մեջ:

Բարևում եմ և փոխանցում Լևոնի բարևը:

— Լևոնն ո՞վ է, — Արտոն հոնքամիջերը քերում է իրար: — Հա՛:

Հոգնել են լրագրողներից. գալիս ձիկ են անում, գնում, մեկ էլ տեսար ճոճուան մի ակնարկ լույս տեսավ՝ «Հերոսները անմահ են» կամ նման վերնագրով:

— Արտո Գրիգորեիչ,— Ռայան է, ձեռքերը շալվարի գրպանը խոթած, ինչ-որ մեկի ստվերի հետ կռվելով, պետի տեղակալի մոտ բողոքի է գալիս:

Պահանջներն ու գանգատները խաշաձևվում են: Ո՞ւմ ինչ գործն է, թե Արտոն տասը ժամ առաջ է տանից դուրս եկել ու մի տասը անգամ թունել իջել, բարձրացել, չգիտեմ ինչի համար տասը անգամ զայրացել է, տասը անգամ փորձել է պոկվել, գնալ մի կտոր հաց ուտելու, բայց չի ստացվել:

Հորանի մոտից մինչև Կնյազի մոտ, այսինքն՝ քսանքսանհինգ քայլ, հասնում ենք մի ժամում: Հիմա էլ Կնյազը, էլեկտրիկների բրիգադավարը, փեթի գործ անող է: Ողջ սիստեմը գործի դնող լարերը.

— Թքել, կպցրել ես, ա՛յ մարդ, էդպես չի կարելի:

Կնյազը, չգիտես ինչու, ժպտում է, նրա կողքին կանգնած մարմնեղը երկու լարի վրա նվագող բառեր է ասում. Կնյազին թվում է, թե դրանք իր օգտին են, իսկ Արտոն կարծում է, թե նա իր միտքն է շարունակում, նամանավանդ՝ հայացքով լրիվ համաձայն է:

— Գործդ շատ դժվար է, Արտո,— ասում եմ համոզված:

— Գնանք մի բան ուտենք,— ձեռքը թափ է տալիս, ավտո է որոնում:— Սուտ դիպլոմները դրել են գրպանները...— մտքում էլի շարունակում է, թե ինչ՝ չգիտեմ, շեմ հասկանում նաև, թե ինչու է այդքան հաճախ կռվում «դիպլոմավորների» հետ:

— Արտո Գրիգորեիչ, ձեզ ներքևում կանչում են:

...Արտոյի կարմիր ու լիքը դեմքից թունելագործի մոայլությունը հալվում է ափսեից բարձրացող գոլորշու մեջ: Կինը երկրորդ ափսե է լցնում առանց հարցնելու, երրորդն է լցնում առանց հարցնելու:

— Զգիտեմ, թե մեկ էլ ե՛րբ կհաջողացնեմ հաց ուտել,— ժպտում է:

Մի հիմնարկությունում, ընդմիջման ժամին թեյի բաժակների շուրջը խմբվածներից, թեյի հետ նաև շրթնաներկերը կույ տվողներից մեկը երբևէ դիտողություն կանի դուռը թափ բացած Արտոյին. «Ի՛նչ անբաղաբավարի եք, չեք տեսնո՞ւմ»:— Հետո ոտից գլուխ կշափի այդ «անկուլտուրական»,

առնական գյուղացուն ու մտքով հազար ու մի մեղապարտ բաներ կանցկացնի:

Օջախի սուփրեն ջրացան է անում պաշտոնական հարաբերութիւնները: Ես արդեն գործուղում եկած անձնավորութիւնը շեմ, և ոչ էլ Արտոն՝ տեղամասի պետի տեղակալ:

— Ինստիտուտը ե՞րբ ես ավարտել,— հարցնում եմ:

— Լեոնային տեխնիկումն եմ ավարտել: Անցած տարի փորձեցի պոլիտեխնիկի հեռական ընդունվել, շատացվեց...

Եվ հոգսի քող է իջնում դեմքին: Զղջում եմ տվածս հարցի համար և փորձում կորցնել հետքը:

— Արտադրութիւնը շատ բան տված կլինի:

— Ի՞նչ խոսք,— պայծառանում է,— շեմ տեսնում, էլի, դիպլոմավորներին... Այս տարի նորից եմ փորձելու, անպայման պետք է ընդունվեմ...



Մանվելի հերթափոխն է: Քիչ առաջ տասը-տասներկու տարրեր գլխարկ կար, տասը-տասներկու տարրեր շալվար և գլխարկ ու շալվարով ավելի էր ընդգծվում, որ ավտոյի թափքում տասը-տասներկու տարրեր ու տարրեր մարդ կա: Հիմա բոլորը նույն զգեստն ունեն, նույն սաղավարտը, սաղավարտների տակ փայլող նույն լրջացած աչքերը: Հորանի մոտ խմբված սպասում են, որ ներսի հերթափոխը դուրս գա, իրենք իջնեն:

Սպասում ու ծխում են: Բոլորն են ծխում, Մանվելն էլ: Ինչ-որ նմանութիւն եմ տեսնում նրանց միջև և դա՛ ոչ զգեստ-սաղավարտի: Այդ պահին հարյուրի հետ կվիճեի, կապացուցեի, որ Կոլյան ու Վարազդատը իրենց սև ու կապույտ աչքերով, շիկավուն ու սև մազերով շատ են նման:

Մանվելը նայում է հագիս թունելագործի զգեստներին, ծպտում:

— Զի սազում,— ասում է,— այ, Սարոյանին շատ էր սազում:

— Սարոյանն ո՞վ է:

— Վիլյամ Սարոյանի քեռին, անցած տարի այստեղ էր

եկեկ: Ասաց «Թիվ 70-ին» հազի՛վ թե ավարտեք շինարարու-  
թյունը, դժվա՛ր թե...

— Իսկ քո կարծիքով Սարոյանի երկմտանքը, իրո՞ք, տեղին է:

— Զգիտեմ ինչ ասեմ, շինարարության այսօրվա տեմ-  
այը ինձ չի գոհացնում: Մեր աշխատանքային պրակտիկա-  
յում երբեմն, նույնիսկ, պարզունակ, այս հսկա շինարարու-  
թյան պահանջները չբավարարող, իսկական լեռնագործու-  
թյունից ահագի՛ն հեռու «սկզբունքներ» են առաջ գալիս:  
Մարատն ու ես երբ խոսում ենք, Բարկեն Բարսեղովիչը  
ասում է. «Վերջ տվեք, փակեք ձեր գրքերն ու տետրերը,  
գործ արեք, գո՛րծ»: Իսկ տեղակալը՝ Մարկոսյանը կարծում  
է, թե իր պոստը գրավելու միտք ունենք և առիթ բաց չի  
թողնում «դիպլոմավոր դատարկագործներ» անվանելու  
մեզ: Բայց ինձ պաշտոն պետք չէ՛, ես դրա համար չէ, որ  
եկեկ եմ այստեղ, ինձ պետք է, որ թունելի շինարարությունը  
մի օր շուտ ավարտվի:

Մանվելը նոր ծխախոտ է հանում, լուցկին մի ձեռքից  
մյուսն է տեղափոխում և գրպաններում որոնում լուցկի, հե-  
տո գլխի է ընկնում, որոնածը՝ ձեռքում է:

— Ինձ պետք չեն կարգադրություններ, այսօրվա հնա-  
ցած ապարքարձիչի փոխարեն արտադրություն մտած նոր  
ապարքարձիչ է պետք: Ինձ պետք չէ գոռալ հորատող Օւլովի  
վրա, պահանջել, թե աշխատի, նա առանց այդ էլ աշխա-  
տում է, պետք է, որ ճիշտ տեղը ցույց տան. այստեղ ծակիր:  
Դրա համար էլ մասնագիտական հաշվարկ է հարկավոր,  
որին կարևորություն տվող շկա: Ինձ պետք է գործով ապ-  
րող, արածի կարևորությունը հասկացող մարդ, իսկ նա,  
գարնան հետ, խամ ու խոպան է չվում... Ինձ պետք է...  
է՛,— Մանվելը ձեռքը թափ է տալիս,— երևի իզուր էլ խո-  
սում եմ:

Հերթափոխում տեղաշարժ է եղել, Թորգոմին ու Թաթար  
Վովային փոխարինել են երկու ուրիշ թունելագործներ: Դա  
Մանվելին դուր չի գալիս:

— Երկուսին էլ շատ եմ սիրում,— ասում է Մանվելը,—  
ալեկոծ հոգու տեր տղաներ են:

Երկու ամիս առաջ Վովան հանկարծակի անհետանում է:



Վա՛հ, սուսուփուս ո՞ւր գնաց: Տղաները հազարումի ենթադրություններ են անում, կատակով ու լուրջ: Մեկը թե՛ Վովան կարճիկ Ջոյայի ձեռքից է փախել: Մյուսը լուրջ հերքում է. Ուրալում սիրած ունի, հենց իրենց հարևանի աղջիկը, գնացալ է նշանվի, գաւ Տասը օր հետո Վովան վերադառնում է: Ալացիկ հասակը մի քիչ ճկվել է, ճակատի երկու բարակ գծերը դարձել են իսկական կնճիոներ, պարզ աչքերի մեջ ամպ կաւ: Եվ այդպես ավելի գեղեցիկ ու գրավիչ է:

«Ո՞ւր էիր, Վո՛վա, ի՞նչ է պատահել»:

Մխում է ու լռում: Ջոյայի տաք ժպիտներին պատասխանում է շար հայացքով, անհամուժուն է անում՝ վիրավորում է. «Գնա, — ասում է, — ես քեզ ճանաչում եմ»: Քունել է մտնում, լեռնագործի մոայլությունը մի ուրիշ գույնի մոայլության ստվերի տակ թողած: Հորատիչը դեմ է անում ապարին և ատամսեղմումով մի ցավ է ճգմում:

«Ի՞նչ է պատահել, ինձ շե՛ս ասի, Վովա», — Մանվելն է փորձել:

«Քեզ կասեմ... դու ինձ կհասկանաս... Ղրիմ էի գնացել, Ջանկոյ, ծնողներիս ծննդավայրը»:

Երկար որոնել է պապենական տունը, չի գտել: Խմել է: Որոնել: Չի գտել: Խմել է, գնացել գերեզմանոց, դատարկել սիրտը, թողել, եկել է:

— Այդ օրվանից ավելի շատ սիրեցի Վովային. մարդ իր մորթուց դուրս մարմին ու աշխարհ պետք է ունենա, — ասում է Մանվելը: — Օրվա մեջ թեկուզ մի պահ անհանգիստ պետք է լինես, զգաս, որ ներսումդ մի բան է խլրտում, որ ամենօրյա բանուգործիդ հետ, կերած-խմածիդ հետ կապ չունի:

Հետաքրքիր է կյանքը: Ինչպե՞ս են ոլորվում ճամփաները, ինչպե՞ս են խաչվում ու բաժանվում: Ո՞վ է հասկանում: Թորգոմն ու Մանվելն էլ կարող էին շհանգիպել, շճանաչել իրար: Մանվելը այդպես էլ կարող էր շիմանալ, որ աշխարհում Թորգոմ անունով մի տղա կա, վարորդ է եղել, վանկ ու հանգով ոտանավոր է գրում: Թորգոմը կարող էր շիմանալ, որ աշխարհում Մանվել անունով մի ինժեներ կա, բանաստեղծություններ է գրում ու օրվա մեջ գոնե մի անգամ

ասում, «Ամենայն հաճույքով Չարենցին սուրճ մատուցող կլինեի»:

Բայց հանդիպել են: Լա՞վ է, թե՞ վատ, չգիտեմ: Եթե Թորգոմը ավտոն չվթարեր, եթե ամենամոտ ընկերոջ երեսան...:

«Ես չեմ բողոքում, Թորգոմին մի՛ բանտարկեք», — դատարանում իր խոսքն է ասել ընկերը:

«Իսկ ես ինձ չեմ ներում»:

«Ձեր ընկերական խաղերը նշանակութուն չունեն, օրենսգիրք կա...», — այս էլ դատավորի որոշածը:

— Ինչպե՞ս է որոշել. գնա՞լ, թե՞...:

— Երևի մնա: Եվ գիտես ինչո՞ւ. դժվարանում է հանդիպել ընկերոջը:

Ուրեմն, հերթափոխի կազմում փոփոխություն է եղել: Թորգոմին ու թաթար Վովային փոխարինածներից ցածրահասակը՝ հայ է, սազավարտի տակից թաղիքի փափախ ունի գլխին:

— Քոլո, — կողքին կանգնածը բամփում է, — վախենում ես գլուխդ մրսի՞:

— Քոլոյի մերը շմեռնի, իր հաշիվը գիտի, գործ չունես: Միծաղում են: Հախուհաշվով ժպտում է նաև Քոլոն:

— Ես սրան առավոտյան հերթափոխում էլ տեսել եմ, — ասում եմ Մանվելին:

— Գուցե, ստուգենք հիմա: Քոլո՛, էսօր որևէ հերթափոխի հետ աշխատե՞լ ես:

— Բա ինչ եմ արել. մի հերթափոխ լրիվ, մեկը՝ կիսատ, հիմա էլ երեք ժամ կաշխատեմ, կլինի կլոր երկու հերթափոխ:

— Ուրեմն՝ գնա՛, հանգստացի՛ր:

— Էղա՞վ, — վիզը ծռում է, — նախ՝ էսօրվանից քո հերթափոխի անդամն եմ, հետո էլ, չե՞ս ուզում, որ ես շուտ վերջացնեմ գործս:

Հա՛, Քոլոն էլ է աղատագրկված. նրա համար թունելում անցկացրած մի ժամը՝ կալանաժամերից չգիտեմ քանիսը ուսերից գլորել է նշանակում:

Հերթափոխի մյուս նոր անդամը ոուս է, լայն դեմքի վրա քերձվածքների թարմ հետքեր կան:

— Կարող եմ անսխալ ասել, թե ինչ է պատահել, — ասում է Մանվելը, — խմել, գլորվել է: Հետաքրքիր է, չէ՞. թունելում կոճվ է տալիս քար ու ապարի հետ, ոչինչ չի պատահում, դուրս է գալիս, խմում մի երկու րաժակ ու՝ խընդրեմ:

Երիտասարդը խոշորոսկր է, երկար ոտուձեռքով, կոշտ ու կոպիտ: Դեմքը ուռած է, զգում եմ, որ քերծվածքները մրսում ու ցավում են:

— Իզուր է եկել աշխատանքի, — ասում եմ: Մանվելը ժպտում է.

— Ետ պահել շես կարող, օրավարձից զրկվել չի կամենա: Ուզում ե՞ս փորձեմ, — ընկնում է թևը, — գուցե հանգրստանալո՞ւ կգնայիր:

— Դե, չէ՞, — թափ է տալիս ձեռքը, — ոչինչ էլ չկա, — ժպտում է, հետո թթամատով միջնամատի ծայրի երեք կրակոց է արձակում կոկորդի ելուստին և մի խոսուն շարժումով հասկացնում, որ գլորվել է:

— Ինչպե՞ս կռահեցիր պատահածը:

— Դրա համար գուշակ լինել պետք չէ. գիտեմ, որ սիրում է խմել: Կնոջ հետ րաժակ րաժակի են խփում, խմում են, հետո երգելով դուրս են գալիս... Այստեղ են ամուսնացել և շատ հետաքրքիր ձևով:

Առաջին օրը, ոտքը դեռ թունել չդրած, Անատոլին մըտնում է Բաղդասար ամուսուն, կես լիտր խմում է, կես լիտր դնում գրպանը, օրորվելով դուրս գալիս:

«Թանկագի՛նս, — կանչում է ձեռքերը գրպանում քայլող Տոնկային, — որտե՞ղ կարելի է տեսնել խաղեինին: — Ապա մոտենում է Տոնկային, ցույց տալիս շշի ծայրը, — ուզո՞ւմ ես»:

«Գնա՛նք ինձ մոտ», — առաջարկում է Տոնկան:

Անատոլին առավոտյան արթնանում է և կրկնում երեկվա անպատասխան մնացած հարցը.

«Նազեինին որտե՞ղ կարելի է հանդիպել, Տո՛նկա, աշխատել եմ ուզում»:

«Դե, դա հանգիստ գործ է»:

«Նո՞ւ, ինչպե՞ս են վարձատրում»:

«Վատ չէ»:

Հետո ծխում է մի «Բելամոր», հաշվում անկյունի դատարկ շշերը, նայում Տոնկայի ցորենքիստ մագերին ու միանգամից.

«Հսի՛ր, Տո՛նկա, ե՛կ ամուսնանանք»:

«Ի՞նչ է, կատա՞կ ես անում»:

«Դե չէ՛, շո՛ւղակ, լուրջ եմ ասում»:

Եվ ամուսնանում են:

Զը՛նգ, զը՛նգ...

Հերթափոխի ազդանշան է: Զրնգուն ալիքը շարժում է Մանվելի հերթափոխը: Մեկը ձեռքն առած սաղավարտն է դնում գլխին, մյուսը՝ ջրի պղտոր կաթիլներով օծված բաճկոնն է կոծկում: Քոլոն նետում է ծխախոտը ու երկու ձեռքով սաղավարտը ավելի հարմար նստեցնում թաղիքե գդակին, Մանվելը ժամացույցին է նայում:

— Կես ժամ ուշ ենք իջնում, տղե՛րք:

Հերթափոխը հանձնող թունելագործների արտահագուստները լվացված են, թաց են ու փայլուն: Տասը էլեկտրալամպ կա հորանի վրա խուփ դրված կոնաձև «վրանում» և տասը բուռ լույս է փշրվել Երվանդի թիկունքին: Փշրվում է, լող է տալիս կաշվե բաճկոնի սև հայելու մեջ: Երվանդը հանում է բաճկոնը, և թիկունքի բուռ-բուռ լույսերը հավաքվում են նրա ծխախոտի ծայրին ու բոցկլտում:

Հերթափոխն ընդունողները ծխախոտները նետում են, հերթափոխը հանձնողները՝ վառում: Այնտեղ, թունելախորշում էլ կարելի է ծխել, և ծխում են, բայց դուրսն ուրիշ է: Երվանդը հանել է թունելագործի զգեստները, սաղավարտը, մի ոտը առաջ, մեկը՝ ետ կանգնել, կախել գլուխը, խոնարհվել է խոնավ մատների արանքն առած ծխախոտի վրա. Աչքերի փայլը ծխախոտածայրի կրակ է դարձել, հայացքը՝ ծուխ: Հաճույքով է ծխում: Մխելուց կուրծքն է ուռչում, ճրոռում են թոքերը, փչելուց՝ որովայնն է փոս ընկնում: Մինչև վերջ կծխի, նոր կշարժվի տեղից:

Թունելախորշում նա այդ պահի կարոտը հա զգացել է:

...Թունելում երկինք չկա: Բա ի՞նչ կա: Ի՞նչ, Ես գլուխս բարձրացնում եմ, և ջրի մի պղտոր կաթիլ ճլտում է աչքիս մեջ: Ոչ ոք չի նկատում: Իսկ ինձ շա՞տ են նկատում: Այնտեղ, վերևում հերթափոխի անդամներից ամեն մեկը մի

քանի անգամ խուզարկու շափեց ինձ, ամեն մեկը մի բան մտածեց, յուրովի որոշեց իմ ով լինելը և հենց այնտեղ, վերևում, ես նրանց համար դադարեցի գոյություն ունենալուց: Իսկ թունելում՝ շկամ ու շկամ: Բազրատի ու Վալերիի համար կա մի-մի հորատիչ ու ճակատ-ճակատի՝ ընդերքի պնդապար ճակատը, որի վրա մի-մի կնճիռ բացելու համար տեղնուտեղը տասը-տասը կնճիռ պետք է բարդեն ճակատներին: Անատոլին այնպես է բռնել ապարբարձիչի բռնակները, ինչպես կրոներ ցուլի պողերից: Եվ այնպես է լարված ու պրրկված, ինչպես ցլամարտիկը: Եթե մի պողը բաց թողեց, թարթեց մի աչքը՝ պրծա՛վ, պարտված է: Նա ուրում է ցուլ-մեքենայի պարանոցն ու, հենց իր ուսի վրայով, ապարների մեծ ու փոքր կտորները շրխկ-շրխկում են վագոնիկի մեջ:

Կուլյայի համար թունելախորշում՝ հենց իր, Քոլոյի, Մանվելի, մեկնումեկի գլխին կախված մի կտոր ապար կա, պայթեցումից հետո թուլացած, բայց չընկած, սպառնալից երերացող մի կտոր՝ մի բնցքաշափ, մի գլխաշափ, մի գիրկ: Ապարակտորը լինգ ու բահով ցած պիտի բերի ու ճարպկորեն խուլյս տա:

— Զգո՛ւյշ, Կուլյա,— ահով ասում եմ, բայց չգիտեմ, թե որտեղից դուրս եկած ձայնս ականջս էլ չի ընկնում:— Արա՛, զգո՛ւյշ,— ավելի բարձր եմ ասում: Ես մոռացել եմ, որ նա ուս է, մոռացել եմ, որ մենք անժանոթներ ենք:

— Է՛յ, Քոլո, էդ անտերի Ֆշշոցը կտրի:

Ո՞վ է լսողը: Ես ո՞վ եմ, ինչացո՞ւ եմ:

Քոլոն ծնկել է ջրի խողովակի մոտ, շուկ ու փալասով փորձում է կտրել ջրի շիթն ու Ֆշշոցը: Ատամները կրճտացնում է, շուրթերը շարժում: Գիտեմ, որ հայհոյում է, անպայման հայհոյում՝ ծակված խողովակին, թունելով մեկ աղմկող ջրի շիթին, գուցե՝ դատավորին... Ի՞նչ իմանամ: Վերջապես, կտրում է ջրի շիթը և հանդարտ ու երկար մետաղալար է փաթաթում փալասին: Կարելի է այլևս շփաթաթել, պետք չէ:

— Լա՛վ, բավական է,— Մանվելի փոխարեն «պետություն» եմ անում: Զէ՛, Քոլոն մետաղալար է կպցնում ու կապում, և հիմա արդեն շուրթերը փնջվել են՝ իր համար սուլում է: Ինչ իմանաս թե ինչ: Գուցե սուլոցը ականջին էլ

չի հասնում, բայց ինքը գիտի, թե որն է սուլում, գիտի, թե գլուխը որտեղ պետք է օրորի, մեղեդու վերջը որտեղ է: Իսկ վերջը չկա. Քոլոն իզուր տեղը մետաղալար է կցում, կապում, իր համար սուլում է:

— Դե հերի՛ք է,— չեմ համբերում: Հետո տրորում եմ կաթիլոտված աչքս, տոտիկ-տոտիկ անում: Հորիզոնը մի կաթ ջրի նման ծվարել է կոպերիս տակ:

Ապարի մի կտոր եմ գցում վագոնիկը: Գցում եմ երկրորդը, երրորդը և հասկանում, որ թունելում իմ այդ պահի (և ընդհանրապես) ներկայության օգուտը միայն ու միայն դա էր՝ վագոնիկ նետած ապարի մի կտորը: Ուրիշ ո՛չ մի բան:

— Քոլոն չի երևում,— Մանվելը գոռում է ականջիս տակ:— Հարկավոր է պարզել:

Դուրս ենք ելնում: Հորանի խուփ-վրանի տակ էլ չկա: Վրանից դուրս էլ չկա: Բա ո՞ւր է: Կիրճում լուռ-լուռթյուն է: Լուռթյունն ինքն էլ է քնել: Չես ասի, հենց մեր կանգնած տեղում, ընդերքում, մարդիկ կան, իրարանցում կա՝ լուսնից մինչև գետին հասնող գիշերն ու աշխարհը լցնող: Ապա կիրճում բազմապատկվում է զրնգոցը, նշան է թե՛ երկրում, գետնի վրա եղած-չեղածին գիշերով ավելանում է մի վագոնիկ ապար, որից նիրհող լուռթյան ականջը լցվում է խշշոցով: Աշխարհի գիշերը նորից է գառնում քնած գիշերահավթ: Հետո...

Կանցնի մի հիստերիկ ճիշ ծվեն-ձվեն է լինում սակված մթության մեջ:

Ճիշը ծիծաղի է փոխվում:

Լուսինը ամպի տակից լողում է, քմծիծաղ թափում:

Շտապում ենք ճիշ-ծիծաղի ուղղությամբ:

Քոլոն առանց սազավարտի է, առանց թաղիքե գլխարկի, կողքի մեկնված: Աչքերում մշուշն է ծխում: Տենդոտ մշուշի ու ատամների տակ ճխլված ժպտի դիմաց՝ բաղնիքի հնոցապահ Վիկտորյան է:

Քիչ առաջվա ճիշուծիծաղի բզկտված արձագանքը ետ է եկել, կախվել աղջկա կիսաբաց շուրթերից, թրթռում է աչքերի մեջ:

— Քոլո, ի՞նչ ես անում:


Մանվելի ձայնից Քոլոն ցնցվում է:

— Հե՛շ:

— Մտածո՞ւմ ես արածիդ մասին, Քոլո:

— Լավ, է՛, նաչալնիկ ջան, անեծք մի արա, էդպիսի բան չի լինի: Չէ՞, Վիկտորյա:

Վիկտորյան ծիծաղում է, Քոլոն ելնում, ծածկում է թաղիքն փափախը, դնում սաղավարտը:



Երկինքը մորս աչքերի նման մշուշվել է, մորս աչքերի նման խոնարհվել, մորս աչքերի նման խոնավ է, և թաց է գետինը: Երկինքը բյուր ու բարակ մատներով խաղում է ադամամութով քողարկված երկրի հետ: Թվում է, թե ադամամութը չէ, մայրամուտից հետո է: (Օրվա վերջն ու սկիզբը ինչքա՞ն նման են): Թվում է, թե մաղմղուն անձրևի նվազը չէ՝ ոտքերիս տակ, ականջներիս մեջ, գլխիս վերև, հոգուս մեջ, այլ իրիկնապահ է: Աշխարհի վրայից հնձվել են արևի վերջին շողերը, մայրս նստել է շեմին, դնում է:

Մանվելի հերթափոխը թունելից դուրս է եկել, ավտոյի է սպասում: Ապրեշումն մի լուռություն կա աշխարհի վրա: Զսպված մի լուռություն կա՝ ներշնչումի պահի պես, որ հետո պիտի ճիշ դառնա: Աչքերս կիսախուփ են: Հոգնածությունից է, անքնությունից: Չէ՛, մորս անուշ դնդնոցից նինջ է գալիս: Գիտեմ, որ սսկված խմբում բոլորն էլ ծանրակոպ են, հոգնած աչքաթարթումով նինջ են քշում: Այդ պահին նրանցից ամեն մեկը ճոճվող օրորոցում պառկած մի մանուկ էր՝ ականջում մոր կամ տատի մարմրող օրորոցայինը: Ո՛չ Անատոլին էր քսանութ տարեկան, ո՛չ Օուլվը՝ հիսուն, ո՛չ Կոլյան էր նոսրացած մազերով, ո՛չ Բագրատը՝ ճերմակած բունքերով, այդ պահին բոլորը մի տարիքի էին՝ երեխա էին, լցված օրորոցայիններով ու երազներով:

Ավտոն գալիս է:

— Արի շնտենք, քայլենք,— առաջարկում է Մանվելը: Եվ համր ու հանդարտ քայլում ենք:

Քայլ-քայլ թափվում է նինջը, և մենք արդեն օրորոցայինի տակ տարուբերվող նույն մանուկները չենք: Տարբեր



մարդիկ ենք՝ մեր տարիքներով, հոգսուցավով, խոհերով ու ապրումներով: Բայց ադամամուխը մորս դնդնոցով է լցված էլի, և մենք, ինչ էլ լինի, շար բաների մասին մտածել չենք կարող:

— Շատ եմ սիրում անձրևի տակ քայլել, — ասում է Մանվելը, — այսպես բարակ անձրև լինի, անտառում լինես:

— Մենա՞կ:

— Մենմենակ, անտառի հետ, — մի քիչ լուռ է, հետո, — դու սխալ հարց տվեցիր. անտառում մենակ լինել չես կարող. հազար-հազար շունչուշնչավոր կա այնտեղ, ծառերն էլ հետը: Եվ ընդհանրապես ո՛չ ոք, ո՛չ մի տեղ մենակ չի կարող լինել, ուզենա էլ՝ չի կարող: Մարդը մենակ է մնում, երբ չի մտածում, ասենք, քնած ժամանակ, այն էլ երբ երազների մեջ չէ:

Ես ուզում եմ տեսնել Մանվելի դեմքը: Համոզված եմ, որ աչքերը տաք կլինեն, մի քիչ կարմրած: Եվ դա ոչ անբընությունից, ոչ հոգնածությունից: Նայում եմ, երևում է միայն սպիտակուցների փայլը:

Մի քանի օր առաջ էլի այսպիսի անձրև է եղել, նա էլի չի նստել ավտո. ոտատակ է առել կիրճից ավան տանող ճանապարհը: Տեղամասի պետ Բաբկեն Բարսեղովիչը իր «Վոլգայով» եկել, կանգնել է կողքին:

— Ա՛յ տղա, — բամբ-բամբ ձայնել է, — խելքդ հացի հե՞տ ես կերել. կմրսես, կսատկես: Նստիր:

Հրաժարվել է:

— Ա՛յ քեզ գլո՛ւխ, — ծիծաղել է պետը:

Իսկ այդ պահին աշխարհը Մանվելի համար եղել է կապույտ երազ: Ու երազ աշխարհից բացակա՝ պետը, բացակա՝ սվաղված ժպիտները, հեգնոտ ժպիտները, ճիշտն ու սուտը, լացն ու մերժումը, և՛ ձեռքմեկնումը, և՛ հուսախաբություն, և՛ ոգևորություն... ամեն, ամե՛ն ինչ: Այդ պահին ինքն է եղել ու անձրևը, ինքը և՛ անձրևակաթիլներով իրար եկած երկինքն ու երկիրը: Ինքը եղել է անձրևաթել՝ ամպերից հողը մանվող կամ գետնից երկինք համբառնող: Զի ունեցել ո՛չ անուն՝ Մանվել, ո՛չ բոյ ու կշիռ:

Այդպիսին է եղել պահը:

— Գլո՛ւխ,— մեկ էլ ավանում է կրկնել պետը,— կմըրսեսս, կսատկեսս:

Մանվելը ժպտում է: Կիրճի ադամամութը արդեն հավում է անձրևակաթիլների մեջ, ու երևում է նրա ժպիտը:

— Ուզում եմ մի բան ասել, մի ուժեղ բան, մի նոր բան, թե ինչ, չգիտեմ:— Անձրևը արշալույսի հետ լցվել է հոգու մեջ, աննյութեղեն ալիքները պատեպատ են խփվում, և Մանվելը փափկել է, Մանվելը առանց կոճակ ու զգեստի է, անկեղև է, ինչպես անձրևի կաթիլը: Բան է ուզում ասել: Ի՞նչ: Զգիտեմ: Նո՛ր բան: Իսկ ի՞նչ պետք է ասի, որ լինի նոր: Ի՞նչ նոր խոսք, ի՞նչ նոր երգ:

Ազնիվ խոսք, աշխարհում նոր ոչինչ չկա. ամեն ինչ կրկնողություն է: Թվացող ամենանորը, ի՞նչ իմանաս, երբ է ասվել, ինչ իմանաս ո՞վ է ասել: Ասվել ու մոռացվել է: Գուցե ասվել է անձայն՝ մեկը մտածել է, բայց բառ չի դարձել, գուցե ասվել է երազի մեջ: Եվ մտքատերն ու երազատերը իրենք էլ չեն հասկացել, որ իրենցից մի բան պոկվեց, գնաց:

Այդ թվացող նորը երբևէ գուցե ճիշ է դարձել մեկի շուրթերին, ճիշ՝ աշխարհի ականջին: Դրա համար այդ մարդը դարձել է աշխարհով մեկ, հետո ինքը թողել գնացել է Երկրից, բայց իր ճիշը մնացել է աշխարհի ականջում: Հետո, ժամանակ, ժամանակ հետո, այդ ճիշն էլ Երկրից պոկվել, գնացել է տիրոջը գտնելու, թափառել է տիեզերքում, թափառել է, չի գտել, ապա եկել է մի ժամանակ՝ երկրի վրա քայլել է մի ուրիշը՝ նման տիեզերքում թափառող ճշատիրոջը և պոկված-գնացած այդ երգն ու բառը իջել, կաթացել, ծվարել է այդ մի ուրիշի հոգու մեջ: Եվ քանի որ աշխարհը նորից պետք է ունեցել, կարոտել է իր հին երգին, սա էլ բերան է բացել ու... Թվացել է, թե նո՛ր բան ասաց:

Դրանք, այդ նորերը, ոչ ոք իր մաշկի տակից չի հանում, գետնի վրա են. մի ծառից կախված, թափված մի ձորի մեջ, քամու ու ջրի հետ քշվում են, ճզմվում են մի քարի տակ, տո, չգիտեմ ուր են, ուր են, ինչպես են ու ինչ ձևի: Տիեզերքը պոկկե-պոկուկ լցված է: Եվ դրանց առաջինը նա է նկատում, ով շատ է լցված տիեզերքով, շատ է մոտ բնությանը:

Ես իմ ապուպապ նախամարդու շափ մո՛տ եմ բնությանը

նր: Չէ՛: Ուրե՛մն: Այսօրվա ու վաղվա բոլոր նոր բաները նախամարդու անբառ աղաղակի մեջ են եղել, նրա խենթ երակի արյան մի գնդիկի մեջ: Այդ անբառ աղմուկի հետ՝ լցվել են տիեզերքն ու թափառում են, որոնում՝ աղմուկը բառուխոսք դարձած մարդկանց:

Այսօրվա ու վաղվա բոլոր նոր բաները այդ գիծ արյան մի գնդիկի հետ մսխալ հող է դարձել՝ ծիլ տալու համար:

Ազնիվ խոսք, աշխարհի համար ամենանորը նախամարդու անբառ աղաղակն է եղել, վայրատենդ աչքերի սրտաճաք ու կարմիր հայացքը:

Մանվելը նոր բան չի գտնում: Երևի այդ պահի համար պետք չէր, երևի այդ պահին անձրևի մի կաթիլի հետ տիեզերքում թափառող մի երգ, նոր, հենց նոր կաթաց նրա հոգու մեջ. պիտի մի քիչ ծվարի, տաքանա, հետո... Հետո նա կասի այդ նորը: Իսկ քանի որ մի բան ուզում էր ասել, ստիպված, սկսեց արտասանել սեփական ստեղծագործություններից մեկը՝ «Լինե՞լ, թե չլինեի»: Տողետող չի հիշում. պատմում է:

Եթե քո ծնունդով մի մարդ-արարածի, որին մայր են կոչում, տվել ես աշխարհի ցավերը, ուրեմն, թեկուզ մորդ երկունքի ցավերի համար.

— Պետք է, պետք է լինել:

Եթե քայլելու համար ոտքեր ունես, տեսնել-լսելու համար՝ աչք ու ականջ, եթե խոսել գիտես և սայթաքելիս՝ զույգ երկար ձեռքերով կառչել մի բանից.

— Ինչո՞ւ չլինել:

Եթե փողոցում մուրացիկ կա՝ շես տեսնում, մեկի աչքերի ժպիտը, մյուսի խոնավությունը շես տեսնում, ականջներդ գոց են ճիչ ու ծիծաղի դեմ:

— Էլ ինչո՞ւ լինել:

Շուրթերիդ ժպիտը եթե միայն քոնն է, քո սեփականը, աչքերիդ խոնավությունը միայն քո մարմնի ու հոգու ցավից է, թե կյանքում ո՛չ մեկի ժպիտը չի անցել դեմքիդ, ո՛չ մեկի սրտի ցավից մի կաթ արցունք չի կախվել քո կոպերից.

— Էլ ինչո՞ւ լինել:

Եթե հոգնածության մեջ հանգիստ ես գտնում, ինչպես արևմտոցի մեջ՝ արևածագը: Եթե ճանապարհդ անցնում ես

առանց տրտնջալու: Եթե քնելուց առաջ մեծ պարտքատեր չես, ուրեմն.

— Լինել:

— Լինել:

— Լինել:

Մանվելը պատմում-արտասանում է բանաստեղծությունն ու նայում ինձ:

— Ո՞նց էր:

— Եսի՛մ... Նոր բան չես ասել:

— Դե՛, կոչումով բանաստեղծները թող նոր բան ասեն, ես ինժեներ եմ և ինձ համար եմ գրում:

Օրը բացվում էր, և բացվող օրվա հետ ես հասցրել էի վիրավորել մի մարդու: Ստացվում էր այնպես, որ Մանվելի «Լինե՛լ, թե չլինել» ոտանավորի մեջ՝ իմ մասին էլ կար: Ստացվում էր այնպես, որ Մանվելի ստեղծագործությունը նոր էր ու նոր: Ստացվում էր այնպես, որ աշխարհում եղած-չեղած բառ ու խոսքից, երգերից ո՛չ մեկը, ո՛չ մեկը հին չէ՛, մաշված չէ՛, ասված չէ՛: Դրանք ծնվում են հենց օրվա հետ, բացվող աչքուշուրթերի հետ: Դրանք գիշերը հնանում են հաշորդ ադամամութից նորանալու համար: Վերջը, չգիտեմ: Երբեմն մարդու թվում է, թե ամեն ինչ հասկացել է և ամենն էլ՝ ճիշտ, հետո էլ, տեսար, հասկացած ճիշտը դառնում է սխալ, սխալը՝ ճիշտ:

Չգիտեմ, չեմ հասկանում:

— Մանվել,— ասում եմ,— քո բանաստեղծությունը էս բացվող առավոտի պես նոր էր: Բացի այդ, դու ամեն օր նոր բան ես ասում: Թունելում, ժամում հարյուր անգամ կրկնվող ազդանշան-զանգերը իրար նման չեն, կիրճում, ժամում չգիտեմ քանի անգամ, ամեն վազոնիկից դատարկվող ապարի խշշոցը երկրի համար նորություն է...

— Ես դրանք գիտեմ,— ընդհատում է,— եթե չիմանամ, որ այս պահին, այսօր՝ երեկվանը չեմ, կդադարեմ գոյություն ունենալուց: Անցած օրը, իր էության մեջ, ապրել եմ արդեն և դա կրկնվել չի կարող, հնարավոր չէ:

Անխոս քայլում ենք: Բայց զգում եմ, գոց շուրթերով մնալը արդեն լուրջություն չէ, որովհետև օրը բացվել է, (իսկ նորաբաց օրը՝ աշխարհի ետ գնացող, բացվող կոպերի տա-

կից պոկված հայացքն է), որովհետև Մանվելն ու ես մտածում ենք:

Նայում եմ թևերը կրծքին ծալած, գլուխը կախ քայլող Մանվելին, փորձում կռահել մտքերը: Ինչ իմանաս, թե ինչ է մտածում. խոհերը հո մարմին շունե՞ն: Բայց... գուցեև ունեն: Ինչ իմանաս: Կեսգիշերից մաղմղող անձրևը՝ գիշերը անքուն մնացած, երազներով քնած մարդկանց երազը չի՞ եղել, իսկ հիմա էլ, որ սաստկանում է, տեղատարափի է փոխվում՝ քնից արթնացած աշխարհի խոհերի ցանքը չէ՞:

Երևի այդպես է:

Օրը բացվել է: Օրը դատարկ չպիտի մնա, պոնկե-պոուենկ լցվելու համար ամեն մեկից մի բան պետք է պոկի և, Մանվելից չգիտեմ, թե ինչ, ինձնից մտքեր է պոկում, որոնք ինչքան սենտիմենտալ են, նույնքան էլ սառը և լուրջ:

Մտածում եմ, որ Երկիր մոլորակին այսօր, այս պահին Տիեզերքի հետ կապող գուցե այս անձրևն է, չլինե՞ր՝ Երկիրը երևի ուղեծիր դուրս գար:

Մանվելին, ումը, ումը, ումը... Հայաստան մի աշխարհի՞ Երկրի հետ կապողը չգիտեմ ինչն է, ինչը, և մեր ջուրն ու հողը իրար միացնող պորտալար Հրազդանն է, նաև աստղերի թվով մեր երազները, որոնցից մեկը մարմնավորվող այն երազն է, որ մեր աշխարհի արգանդում, հողն ու ջուրը միացնող մի նոր պորտալար է արարվում՝ Արփա—Սևան թունելը:

Այդպես է, ամեն մեկը՝ աշխարհի հայացք առավոտների հետ կապող իր պորտալարն ունի:

Բարկեն Բարսեղովիչը հիմա կարթնանա, նորից կփակի կոպերը, բայց կհիշի, որ երեկոյան կերուխումից հետո շշի մեջ դեռ կոնյակ է մնում և նորից կբացի աչքերը: Խմեց կոնյակը, կհիշի, որ մեկին զանգել, ինչ-որ պայմանավորվել է պետք, հեռախոսն էլ, ահա, անկյունում սպասում է: Հետո, դուրս գալ է պետք, ահա «Վոլգան» պատուհանից էլ է երեվում: Հետո... վերջը, նրան առավոտի ու օրվա հետ կապող ահագի՛ն բաներ կան, կտրվող ու կապվող ահագի՛ն պորտալարեր:

Արտո Մարկոսյանը այս տարի պոլիտեխնիկի հեռակայի ճամար ընդունելության քննություններ է հանձնելու իսկ

մինչև քարձրագույն գիպլում ձեռք բերելը, աշխատել, կաշ-  
վից դուրս գալ է պետք, պետք է այդ «չեղած թղթի կտորի»  
բացը լցնել. թե չէ տեղամասում Մարատի ու Մանվելի պես  
գիպլումավոր տղաներ կան, իրենից մի աստիճան ետ կանգ-  
նած, մեկ էլ տեսար բռնեցին թևը, թե՛ ախպեր ջան, արի  
տեղներս փոխենք:

Անատոլին մտնում է թունել, հորատիչի ցնցումները  
ներվ ու մկաններով մանրամասն գրանցում է: Դե, ոչի՛նչ,  
վեց ժամ չէ՞, թունելից դուրս կգա, կմտնի բաղնիք, հետո  
կնստի ավտո, կհասնի տուն, ուրախ կդիմի Տոնկային. «Օղի  
կա՞... Բորչչ կա՞... Լա՛վ է, շուգակ, էլ ինչո՞ւ է տրամադրու-  
թյունդ ընկած»: Եվ Տոնկան նորից կհիշի, որ էդ մեռած  
Վալյան իրենից գեղեցիկ է. Աշոտը նրան աչքով է անում,  
իրեն՝ չէ: Կհիշի նաև, որ վարորդ Գառնիկն էլ իրեն է ժլպ-  
տում ու... Կժպտա Անատոլին:

Հիմա Քոլոն քնած է: Արթնացավ, կհիշի, որ անցած օր-  
վանից մի հերթափոխ լրիվ, մեկը կիսատ, Մանվելից էլ կես  
հերթափոխ իր հաշվին գրանցվել է: Ուրեմն, երկու հերթա-  
փոխ: Սա դատավորի որոշած ժամկետից քանի՞ օր է թա-  
փում... Լա՛վ է: Ժպտալով կհիշի նաև, որ գիշերը... Վիկ-  
տորյան սկզբում ճվճվաց, հետո ծիծաղեց: Դրանցից ճիշտն  
ու սուտը ո՞րն էր: Միծաղն էր ճիշտ: Ուրեմն... Միանգամից  
ոտքի կկանգնի, կսուլի ու ոտք ու սուլոցով կձուլվի կես  
եղած օրվա հետ:

Իսկ ի՞նձ... Ինձ այս թաց առավոտի հետ կապող ի՞նչ  
պորտալար կա: Է՛հ, հերն էլ անիծած, երևի անձրևի խոչո-  
ցին հյուսվող այս խոհերն են:

1967 թ

## ՁԵՌՔԵՐԸ

Պահիր նամակները: Նամակի հետ ժամանակն ես ծրա-  
րում, հուշեր, դեմքեր: Պահիր, մի օր ցանկություն կունենաս  
ընթերցելու, վերապրելու ապրածդ: Կամ թե՛ պատահակա-  
նորեն կընկնի ձեռքդ և այդպես կսեղմվի սիրտդ, որից և՛  
ցավ կզգաս, և՛ ուրախություն:

Գրքերիս արանքում երևաց կապույտ մի ծրար: Կապույտ

ծրաք՝ դեղին շրարշով: Մի շերմ ալիք անցավ սրտովս, որի մեջ նաև մի նուրբ, դուրեկան թախիժ կար: (Հետաքրքիր է, ինչո՞ւ է թախիժը մարդու դուր դալիս, հպարտության պես մի բան ես զգում դրանից, ես օրինակ, այդպես եմ): Նայում եմ հասցեին: Հա՛, Մանուկի նամակը... Գրված է մատիտով: Թղթի հակառակ կողմը՝ սողոսկող ափ, գրելուց շատ է սեղմել մատիտը:

«Բարև: Հասանք տեղ: Շորերս փոխել են: Սալդատի շորերը վրես շեն նստում, սապոդները սեղմում են: Գիտես, էլի, կոշտ ու կռագիտ եմ...»: Այստեղ մատիտի ծայրը ջարդվել է, պարզ երևում է՝ թուղթը ծակվել է, «Մ»-ն ազավազվել:

«Շարքի հեռ կարգին չեմ դնում: Հրամանատարն ասում է՝ սարի արջ ես, քայլել չգիտես: Ուր է, է՛, դիրք փորելու չեն տանում...»:

Մատիտի ծայրը ջարդվել է:

«Կիմանար, թե սվ է սարի արջը: Ամոթ չլինի ասել, սոված եմ մնում: Բաժինից բացի ինչքան ուզեմ, կուտեմ, բայց ամոթ է: Հին սալդատներից մեկը հենց առաջին օրը մեղ ասաց. տղե՛ք, հայի պատիվը գետնով շտաք, շնորհքով եղեք: Վերջը: Բարև վարպետ Անդրոյին, տղերքին: 25-ին նոյեմբերի 1955 թ.: Լսիր, կյանքումս առաջին անգամ նամակ գրեցի: Շատ դժվար բան է»:

Պատասխան նամակում, հիշում եմ, այսպիսի մի բան էի գրել. «Ա՛յ տղա, դու մատիտն էլ, երևի, բահի ու քլունգի նման երկու ձեռքով ես բռնում և թափով բերում թղթին: Շենքի հիմք չես փորում, ախպեր ջան: Աջ ձեռքիդ բութ և ցուցամատով կամաց վերցրու մատիտը...» «խրատել» էի և վերջում ավելացրել՝ «ծիծաղ»:

Այլևս պատասխան չստացա Մանուկից: Նեղացե՞լ էր ինձանից: Չէ՛: Դեռ այն ժամանակ ես մի «հայտնագործութուն» արեցի, անկախ ինձանից, հանկարծակի: Այսպես պատահեց. քար էի տալիս վարպետ Անդրանիկին: Պարանոցիս շղերը պրկվել էին: Վարպետը քարը համարյա խլեց ձեռքիցս և հարցրեց.

— Մանուկից պատասխան չստացա՞ր:



Հասկացա, թե ինչու հիշեց Մանուկին: Ախր անխիղճ բուրբուրովին չէր դժվարանում, թեկուզ ամենամեծ քարը վարպետին հասցնելու ժամանակ:

— Չէ՛, — ասացի, — չի էլ գրի:

— Ինչո՞ւ:

— Ասե՞մ ինչու, — դադար տվեցի, ես ամենևին էլ չէի մտածել այդ մասին, բայց հենց այդ ժամանակ ցանկանում էի երևալ խելոք, որպեսզի պարանոցիս պրկված ջղերի տեղը դուրս գա: Մեկ էլ մի տեսակ (մանավանդ այդ պահին) նախանձ ունեի Մանուկի նկատմամբ: Գիտեի, որ վարպետը գնահատում է նրան: — Որովհետև, — շարունակեցի ես, — մարդիկ կան, որոնք կյանքի հետ հաղորդակից են, խոսում են համարյա միայն ձեռքերի միջոցով: Եվ մենք նրանց ոչ թե լեզվով ենք ճանաչում, այլ ձեռքերով: Կարճ ասած, մարդիկ կան, որոնց լեզուն ձեռքերն են, — փիլիսոփայեցի ես, — իսկ նամակը, գիտես հո, ձեռքի գործ չէ:

Վարպետ Անդրանիկը հետաքրքիր նայեց ինձ, և ես զգացի, որ ասածս դուր է եկել նրան:

— Է՛, հիմա լա՞վ է, թե՞ վատ:

— Լավ-վատ: Ես Մանուկին եմ ասում:

— Մանուկի՛ն եմ ասում, — հեզեց վարպետը, — քո հաշվով վատն ես ասում, էլի՛: Ձեռքերով է խոսում: Էրեզ, մյուս օր միասին էինք աշխատում: Քո փոխարեն էլ էր բանում. իրեն էլ: Քեզ պես մի տասի գործ էր անում, հեշ ցույց էլ չէր տալիս: Նամակ չի կարող գրե՛լ: Է՛, ես էլ չեմ կարող. հետո՞...:

Ես գլուխս կախեցի ու զղջացի ասածիս համար, շնայած գիտեի, որ ես ճիշտ եմ: Ավելի շատ նախանձ զգացի Մանուկի նկատմամբ և որոշեցի. «Եթե նամակ էլ գրի, չեմ պատասխանելու»:

...Պահեք նամակները: Նրանց հետ հիշողություններ են ծրարվում: Հիմա առջև մի կապույտ ծրար կա՝ ժամանակը դեղին է մաղել վրան: Նայում եմ երկար, և ծրարը աչքերիս գիմաց դառնում է լուսանկար: Խնչքան ուզում եմ լուսանկարի մարդուն տեսնեմ զինվորի զգեստներով, չի ստացվում: Ինչքան ուզում եմ մինչև կոկորդը կոճկված օձիք տեսնել, երևում է բաց մի օձիք, վերին կոճակները պոկված մի վեր-

նաշապիկ: Փնտրում եմ զինվորի գլխարկ, երևում է բաց մի գլուխ՝ սև, ավելի շատ խոնված, քան գանգուր մազերով: Ես ի՞նչ մեղավոր եմ, միշտ այգայես եմ տեսել Մանուկին:

Նայում եմ երկար, և երկու ձեռքով ծածկում լուսանկարը: Երկու ամի՝ սովխոզի դարբնոցում ծեծված, կիսատ մնացած երկու բաճ, սովխոզից գուրս եկող, այգիների մեջ ձգվող ծուռտիկ ճամփաներ: Երկու ձեռք ծածկում է լուսանկարը: Ես ի՞նչ մեղավոր եմ, որ առջևս Մանուկի նամակն է, որ գիշերվա կեսին բորբոքված երևակայութունս նամակի փոխարեն դիմացս է կանգնեցրել նրա լուսանկարը, որ նրա մասին 10 տարի առաջ «փիլիսոփայել» եմ. մարդիկ կան, որոնք կյանքի հետ հաղորդակից են դառնում համարյա միայն ձեռքերի միջոցով:

Երկու ձեռք:

Հիմք են փորել, պատի վրա քար են դրել, մի ավան է կանգնել երկինք մխրճված երկու լեռների արանքում՝ Մասիսների դիմաց, Արագածի նժարի վրա... Եվ մարդիկ կրնքել են. Թալին, Արագած ավան: Առաջ այստեղ ոչի՞նչ չի եղել: Դե եկ ու ասա՝ չէ: Չես կարող. պեղեին՝ մի կործանված հիմք, հող դարձած մի մատյան, կավ դարձած թոնրի մի կտոր դուրս կգար... Բայց անապատ էին կոչում:

Երկու ձեռք:

Քլունգը իջել է ապառաժին՝ կայծեր են շաղ եկել: Ավելի թափով է իջել, ու բացվել է մի ճամփա, ջրի ճամփա: Զրի՞: Աբյունատար երակ է բացվել անապատի համր ու քար սրտի նախախորշում: Մարդը բնության արմանախն է, բնությունում շկա մի բան, որի նման պատկերը մարդու մարմնի վրա չգտնես: Հավատացեք, այդպես է: Ասում ենք ծով աչքեր: Աչքերին ասում ենք նաև մութ գիշեր... Հիմա դիմացս անշարժացած այս ձեռքերի կապտափայլ երակները գիտե՞ք թե ինչքան նման են Թալինի դռերում ոլոր-մոլոր ձգվող բետոնապատ ջրատարներին, առուններին:

Սրկու ձեռք:

Խանձվել են, երբ հրդեհվել է անապատի փուշը, պրկվել են, երբ խոնավ մի փոս է բացվել ծիրանենու համար (որը հայկական ծագում ունի), խաղողի որթի համար, որը պանդրխտությունից տուն դարձող հայի պես համբուրում է հողը:

Ծնկած աղոթող ծերունու դողդոջ ձեռքերի պես հավել են հողին, նաև՝ իջել բռունցքի պես: Այդ ձեռքերը, կոշտ ու կոպիտ այդ մատները շատ նման են մեր քարքարոտ հողին կառչած հողի ընդերքը պեղող ծիրանենու արմատներին:

Ծրկու ձեռք:

Ծրքեմն արմունկը շրխկացել է սեղանին, և ձեռքը դարձել է սլաք: «Համաձայն եմ»: Այսպես հրթիռներն են ուղեծիր վերցնում: Ծրքեմն ձեռքերը բռունցք են դարձել. «Զե՛մ ուզում, չե՛, ումբերի բացած փոսի մեջ ծառ չեն տնկում, խաղողի որթ չեն տնկում: Զե՛մ ուզում, որ իմ կառուցած շենքերի, իմ տնկած ծառերի ստվերներն աղավաղվեն... Ծս հայ եմ, ավեր շատ եմ տեսել: Ծս մարդ եմ, սպանել չեմ կարող»:

Ծրկու ձեռքեր:

Մանկան թաթը կորչում է ափի մեջ: Ափը՝ բուն, թաթիկը աղվամազով պատված ծիծեռնակի ձագ: Ափը՝ զրահ, թաթիկը վահանի տակ թպրտացող սիրտ: Ափը՝ արևի առաջին շողերը առած, մի քիչ դեղնած ու կարմրած ծիրան, թաթիկը՝ դեղնաշագանակագույն կորիզ:

Ծրկու ձեռքեր:

Քանդակվել են աչքերիս առջև: Մանուկ Սահակյանի ձեռքերն են: Սահակյանի՞: Սահակյա՛ն... Շատ կարևոր է: Ազգանունը լսում է ամիսը երկու անգամ աշխատավարձը ստանալու օրերին: Արագածի այգեգործական սովխոզում շատերը չգիտեն նրա ազգանունը, բայց բոլորք գիտեն, որ նա... «Բուլդոզեր» Մանուկն է:

Ծրքեմն մեն մի բառ մարդու համար կենսագրություն է դառնում, մի բառով մարդ ստանում է կյանքի վկայագիր: Օ, հզոր մականուն է...

Պահիր նամակները: Նամակի հետ պատմություններն են ծրարում: Եթե շիհներ այս նամակը, այսօր ես չէի հիշի Մանուկին, վարպետ Անդրանիկին, որի ձեռքին ես մի օր քար եմ հասցրել, պարանոցիս ջղերը պրկվել են և թուլությունս կոծկելու համար «հայտնագործություն» եմ արել. «Մարդիկ կան, որոնց լեզուն ձեռքերն են»: Հիմա, երբ մտածում եմ, զգում եմ, որ այն ժամանակ էլ ճիշտ եմ եղել ես: Իսկ որ

որմնադիրը վիրավորական մի բան նկատեց այդ խոսքերի մեջ՝ ուղղված երբեմնի իր ամենալավ օգնականին, պարզապես նրա համար, որ վարպետին քար քարձրացնող ավելի էր պետք, քան նամակ գրող, քար քարձրացնողին ավելի էր գնահատում նամակ գրողից: Վարպետ Անդրանիկը առաջին հերթին ինքն իրեն էր գնահատում, ճանաչում իր արժանապատվութունը, ինչպես լինում են բոլոր օրինավոր մարդիկ:

1965թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Ակնարկագրի աշխարհը . . . . .	3
Քեզ վերևից շպտաք է նայել . . . . .	7
Ցանկանում եմ, որ դուք նման լինեք ձեր հորը . . . . .	10
Կանաչ վիթխարի ընկունեզու տակ . . . . .	14
Անձրևի մասին . . . . .	30
Մայրական կապով . . . . .	34
Մխասյունները . . . . .	37
Անվախճան գիշերում ուղեկցող լույսը . . . . .	44
Նրա ձեռքերում դանակը կյանք է . . . . .	48
Մի բաժակ թեյ . . . . .	52
Միրանի ծառ . . . . .	55
Խոսքով քեռու այգին . . . . .	59
Իր ճամփան գտած մարդը . . . . .	63
Հորովելին ու կալի երգին վերջ չկա . . . . .	67
Կյանքին դաջված ոտնահետքեր . . . . .	69
Լեռների որդեգիրները . . . . .	72
Հետքեր հողի վրա . . . . .	78
Քարնան հյուրընկալները . . . . .	86
Հովվական մեղեդի . . . . .	94
Լեռնային քայլերգ . . . . .	94
Նոր շին անապատում . . . . .	99
Անապատից քաղցրություն քամող մարդիկ . . . . .	103
Եվ ամառն է այդ ձեռքերում . . . . .	108
Կանաչափ առվի երթը . . . . .	111
Շուրթեր օրհնանքի և ճմարտարառ . . . . .	114
Տաք ձեռքերով մարդիկ . . . . .	118
Հպարտ ժողովուրդ ենք . . . . .	122
Դո՛ւ նայիր, դու... . . . .	125
«Անանուն» գրողմանիչներով . . . . .	130
Խիզախների առաջին տունը . . . . .	135
Նոր կաղնուտը . . . . .	138

Հանգրվաններ . . . . .	143
Ղարիբ... Հայաստան... . . . . .	148
Հեռներ թամբող մարդը . . . . .	147
Արագածի բացված գրկում . . . . .	181
Սելավի նրբերանգ գոտին . . . . .	153
Կատարում եմ Հայկուշ մայրիկի պատվերը . . . . .	155
Ամեն մարդ աշխարհում իր անկյունն ունի . . . . .	159
Ոսկեվաղի դուստրը . . . . .	161
Ճանապարհը սրտով է անցնում . . . . .	164
Հայի պեռ հին է երգը հայոց . . . . .	166
Կյանքի ոլորաններով . . . . .	169
Գարնանը կհանդիպեն... . . . . .	172
Պատվանդանները . . . . .	174
Հսրթ հրկնքի տակ, մայր հողի վրա . . . . .	177
Բարև, հորեղբայր Ջավեն . . . . .	180
Դու ճիշտ ես, Աշոտ . . . . .	182
Արաքս, գիժ Արաքս . . . . .	187
Փոթորիկ . . . . .	193
Անթեղված ոգի . . . . .	198
Արարատյան դաշտ . . . . .	202
Ապարան . . . . .	204
Քալին . . . . .	208
Քարակերտ . . . . .	211
Ընծայագիր . . . . .	220
Անհանգիստ մարգու դիմանկարը . . . . .	248
Պորտալար . . . . .	256
Ջեռքերը . . . . .	279

Գրական-գեղարվեստական հրատարակչություն  
Մուշեղ Հովհի Գալշոյան  
Քեզ վերեվի՞՞ զՊԵՏՔ Է ՆԱՅԻՆ  
Ժողովածու

Литературно-художественное издание  
Мушег Овсепович Галшоян  
НЕЛЬЗЯ НА ТЕБЯ 'СМОТРЕТЬ СВЫСОКА  
Сборник  
Ереван, издательство «Наирн»  
На армянском языке

Խմբ. վարիչ՝ Հ. Ք. Կարնիկյան  
Խմբագիր՝ Է. Գ. Մարգարյան  
Նկարիչ՝ Ս. Գ. Սաֆյան  
Գեղ. խմբագիր՝ Զ. Ն. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Գ. Ավագյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան



ИБ № 6612

Հանձնված է շարվածքի 12. 04. 90: Ստորագրված է տպագրության 5. 00. 00: Փորձատ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 15,12 պայմ. տպ. մամ., 12,00 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30 000: Պատվեր՝ 159: Գինը՝ 1 ա. 30 կոպ.:

«Նաիրի» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:

Издательство «Наири», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայաստանի հանրապետության հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полнграфкомбинат нм Акопа Мегاپарта Госкомитета Республики Армении по делам издательств, полиграфин и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.

